90

ՀԱՅԿԱԶԵՍՅԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍ



ՊԷՅՐՈՒԹ, 1992

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՑԿԱԶԵԱՆ ԳՈՂԷՋԻ ՀԱՑԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆԻ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՒԱԼՍ

ՀԱՏՈՐ ԺԲ.

ՊԷՅՐՈՒԹ, 1992

2013

PUBLISHED BY THE ARMENIAN DEPARTMENT OF HAIGAZIAN COLLEGE

HAIGAZIAN

ARMENOLOGICAL REVIEW

VOLUME 12

BEIRUT, 1992

5

ԺԲ. ՀԱՏՈՐԸ

«Հայկազեան Հայագիտական Հանդէս»ի այս 12-րդ հատորը լոյս կը տեսնէ զինուորապէս խաղաղած Լիբանանի մը մէջ: Բայց աւա՛ղ, լիբանանեան յարաբերաբար անդորր այս տարին կը հակադրուի Հայաստանի մէջ տիրող տագնապալի կացութեան:

Մեր խօսքը մանրամասնելով կրթական ու մշակութային մարզին, ցաւով կ'ափսոսանք Հայագիտութեան, Գրականութեան եւ Գեղարուեստի մարզերէն ներս հայ մտաւորականութեան գրեթէ ամբողջ վիճակը եւ Խորհրդային Միութեան ներ-պայթումին հետեւանքով՝ Հայրենի Պետութեան անզօրութիւնը՝ ամենց նեցուկ կանգնելու:

Տագնապալից օրերու որպէս անմիջական հետեւանք, արդէն կասած է ստեղծագործութիւններու, ուսումնասիրական արտադրութիւններու նախորդ թափը հայրենի կրթական հաստատութիւններուն եւ անհատներուն մօտ: Ապա ընթացք առած է մտաւորականութեան եւ արուեստագէտներու արտահոսը դէպի աւելի բարեբաստիկ կարծուած հայ գաղութները, ուր կը փորձեն հեւ ի հեւ ապարէզ գտնել:

Բանի եւ Միտքի Մշակներուն կրած վայրագ արժեզրկումը՝ բիրտ իրականութեանց կողմէ, մեծապէս կը մտահոգէ Սփիւռքի մշակութային հաստատութիւններն ու մտաւորականութիւնը, զանոնք մղելով՝ իրենց կարո-

ղութեան սահմաններուն մէջ, սատար հանդիսանալու անհատներուն եւ հաստատութիւններուն:

Հայկազեան Համալսարանական Գոլէճի պատասխանատուները, այս նպատակադրութիւններէն դրդուած, արդէն իսկ հիմնած են Երեւանի մէջ իրենց հարազատ երկրորդ Հայկազեան Համալսարանական Գոլէճ մը: Ապա հայաստանցի ուսանողներ առած են իրենց պէյրութեան յարկին տակ: Հուսկ լոյս կ'ընծայեն «Հայկազեան Հայագիտական Հանդէս»ի այս 12-րդ հատորը, վառ պահելու համար մշակոյթի ջահը գէթ սփիւռքեան կեդրոններուն մէջ:

Այս հատորը իր բովանդակութեան լրջութեամբ, նիւթերու այլազանութեամբ եւ Սփիւռք-Հայաստան իրարու զօդող աշխատակիցներուն շնորհիւ, կը յուսայ մնալ Հայ Մշակոյթը իր անցեալին ու իր ապագային կապող որակաւոր հրատարակութիւն մը:

Հայկազեան Համալսարանական Գոլէճի Տնօրէնութիւնն ու «Հայկազեան Հայագիտական Հանդէս»ի խմբագրութիւնը կը ցանկան այս հատորը ձօնել Վեր. Յովհաննէս Խրլոբեանի մշակութային, հայագիտական ու դաստիարակչական վաստակին, իր ծննդեան 100-ամեակին որպէս յարգանքի տուրք:

Պէյրութ, 25 Նոյեմբեր 1992 **ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Դոկտ. Արշալոյս Հ. Թօփալեան
Դոկտ. Լեւոն Վարդան
Պրն. Ժիրայր Դանիէլեան

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ

Հայր Անդրանիկ Վրդ. Կոռանեան

THE 12TH VOLUME

This «Haigazian Armenological Review»'s 12th volume gets published in a militarily pacified Lebanon. Unfortunately though, Lebanon's comparatively serene last year is in contrast with the crisis-ridden situation in Armenia.

Referring to the educational and cultural scene, we deplore the sorry state in which have befallen the intellectuals of Armenia working in the fields of Armenology, Literature and Fine Arts, and, due to the implosion of the former Soviet Union, the incapacity of the Armenian authorities to back them up.

The immediate result of this regrettable situation is that the impetus of creative endeavours and massive studies has come to a halt on both the individual and collective levels, and this has been followed by a migratory trend among Armenia's intellectuals and artists, who seek refuge in the supposedly more hopeful Armenian Diaspora and try to establish new careers there.

The violent devaluation induced to these Cultivators of Word & Mind by harsh realities has become a major worry for the Diaspora's intellectuals and cultural establishments, forcing them to extend a helping hand, within the limits of their possibilities, to establishments and individuals in Armenia.

Moved by these circumstances, those responsible for Haigazian University College have already established yet another Haigazian University College in Yerevan, in addi-

tion to which Beirut's Haigazian has hosted students from Armenia. Finally, this 12th volume of the «Haigazian Armenological Review» is being published, so as the torch of culture might at least stay lit in the different centers of the Armenian Diaspora.

With the seriousness of its content, and the variety of its subjects, added to the fact that collaborators from both Armenia and the Diaspora have brought their contribution to its publication — thus welding the two together — this volume hopes to achieve the quality of bridging the past of Armenian culture to its future.

The Directorate of Haigazian University College and the editorial staff of the «Haigazian Armenological Review» wish to offer this volume as a tribute to Rev. Hovhannes Kherlopian's work in the areas of culture, armenology & education, on the occasion of the 100th anniversary of his birthday.

Beirut, 25 November 1992 **THE EDITOR**

EDITORIAL STAFF
Dr. Arshalouys H. Topalian
Dr. Levon Vartan
Mr. Jirair Tanielian

EDITOR IN CHIEF
Father Antranig Granian



ՎԵՐ. ՏԻԳՐԱՆ Ճ. ԽՐԼՈՒԵԱՆ

(1891–1968)

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ

1.

Եթէ ապրէր՝ հիմա տարիով մը եւս ձգած պիտի ըլլար ծը-նընդեան իր հարիւրամեակը: Եթէ ապրէր՝ այժմ կեանքի իր օրերուն վրան աւելցուցած պիտի ըլլար քառորդ դար մը եւս: Արդարեւ՝ գրե-թէ քառորդ դար մը եղաւ անոր անվերադարձ մեկնումին, ու տակաւին կան մարդեր՝ որոնք կը յիշեն զայն ի ժամու եւ ի տարաժամու:

Կը յիշե՛ն, կը խօսի՛ն անոր մասին, մերթ յարգանքի ու սիրոյ քանի մը խօսք դուրս կու տան իրենց շրթներէն, ու երբեմն՝ հին ու-սանողի ու բարեկամի իրենց բառ ու բանին կ'ընդխաւնեն քանի մը չեչտ զուարթախոհութեան: Այսուհանդերձ՝ անոնց բոլորն ալ զայն կը յիշեն բարութեամբ, գուրգուրանքով եւ ակնածանքով, որովհե-տեւ իրենց համար անիկա մի՛չտ ալ եղաւ Գատուելին, գլխագիր ու ընդգծուած Գատուելին, որուն խօսքն ունէր կշիռ, եւ հեռահաս զա-տողութիւն՝ բովանդակութիւնն այդ խօսքին, որուն ժպիտն էր ան-դորրը ծիածանին, եւ աչքերուն նայուածքը՝ խորերը, չա՛տ խորերը թափանցող ճառագայթը միտքին, հոգիին ու սիրտին: «Ցաւիտենա-կան երիտասարդն էր Գատուելին, համակ խանդ ու եռանդ[1]: Իր յաղթանդամ ու պատկառազդու արտաքինը, անկնճիռ դէմքը եւ ան-սովոր փայլք մը ճառագայթող աչքերը մեզի կը յիշեցնէին մչտադա-լար կաղնին, որ ստեղծուած է տոկալու բոլոր անակնկալներու դէմ եւ իր հովանիին տակ պաշտպանելու նորաբոյս թուփերը: Ձիշդ այս-պէս, ու երբեք տարբեր չէր գոյր ոեւէ մէկը, որ, դպրոցի բակին մէջ

կամ դուրսը, յանկարծ կը զգար անոր ծանր ձեռքը իր ուսին, ու կը լըսէր անոր առողջ ու խանդավառ ձայնը: Եւ միշտ բան մը ունէր ըսելիք Գաւուելին, քելադրութիւն մը, դիտողութիւն մը, երբեմն քաջալերական խօսք մը կամ խրատ մը, ու կը քալէր կ'երթար, վերջին անգամ մը եւս ուսիդ վրայ զգացնելով իր ձեռքին ծանրութիւնը»[2]:

Ճի՛շդ էր Գասունին ուսանողի իր յուշերուն մէջ: Գաւուելին մի՛շտ ալ բան մը ունէր ըսելիք, քելադրելիք եւ հաղորդելիք: Ունէր եւ ունեցա՛ւ, ու երբեք իրեն չպահեց իր խօսքը, իր ըսելիքը: «Ոյժ ունէին անոր խօսքն ու գրիչը»՝ պիտի հաստատէր իր մտերիմ բարեկամներէն մէկը յետագային. «հայկական տաքուկ ոգիով ջերմացած ոյժ մը, որ միացած անոր ժպիտին՝ խանդավառութիւն կը ստեղծէր ու կ'առինքնէր իր ունկնդիրներն ու ընթերցողները»[3], որոնք, ամէն բանէ առաջ, մի՛շտ ալ փորձեցին իրմէ ներս տեսնել հայ մարդը, հայ մտաւորականը, հայ ուսուցիչը, եւ մանաւանդ՝ հայ բարեկամը, փորձեցին՝ սակայն հազի՛ւ թէ եղան զայն ճանչնալու պէս, փորձեցին՝ սակայն անոնց երբեք ալ չյաջուեցաւ իջնել խորն անոր հոգիին, յառաջանալ բաւիղներէն ներս անոր ներքին մեհեաններուն, գտնել ինչ որ պահ էր դրուած անոնցմէ ներս եւ բերել լոյսին, որովհետեւ, հակառակ ոմանց ճիգին ու փափաքին, անոնցը չանցաւ ծանօթութեան մը սահմաններէն անդին, իսկ այդ ծանօթութիւնը մի՛շտ ալ մնաց սահմանափակուած՝ ծուռ կամ ուղիղ բազմաթիւ սահմանագծումներով, եւ քիչեր, իսկապէս չա՛տ քիչեր գիտցան, թէ անիկա «ազնուական, խոնարհութեան եւ մտաւորական պարկեշտութեան ներշնչող եւ հեռուհեռէ քիչ աչքի հանդիպող բազմակողմանի մշակ մըն էր: Հովիւ, ուսուցիչ, խմբագիր, հեղինակ, պատմագիր, բանասէր — չարունակ աշխատող, խանդավառ, լաւատես, հոգիներու եւ միտքերու մշակ էր — մշակոյթի մարդ: Իր կոչումին գիտակից եւ գործին հաւատարիմ Աստուծոյ ծառայ մը»[4]: Աւելին՝ «տիպար եւ առաքինի մարդ, իր հոգեւոր կոչումին գիտակից անձնդիր հովիւ, խիզախ եւ ճշմարտախօս բեմբասաց, մաքուր եւ անկաշառ հայրենասէր, բարեգործութեան եւ բարեգործականի հաւատաւոր հետեւորդ[5], վերջապէս անձնուէր ու գիտակից կրթական մշակ՝ ահա՛ ցցուն յատկանիշները մարդու մը»[6], որ Գաւուելին էր: Կան տակաւին ուրիշներ, որոնք անսակարկ կերպով կը յայտարարեն, թէ մեծ էր անիկա եւ «բազմավաստակ մշակ [մը]... որ ընտրած էր տառապանքի, անտեսումի ճանապարհը՝ դաստիարակի ուղին:

«Անոր մեծութիւնը մասնակիէն, ժամանակաւորէն անդին տեսնելն ու համոզուած մարդու կորովով իր տեսակէտները պաշտպանելն էր անշուշտ՝ ամբողջ կէս դար եւ աւելի:

«Իր մեծութիւնը խոր գիտելիքներ ամբարելուն մէջ չէր այն-

քան՝ որքան իր ունեցածը նորոգուած եւ թարմ վիճակի մէջ, կենդանի ոճով մը աշակերտներուն փոխանցելուն մէջ։

«Անոր մեծութիւնը իր ունեցածը ամբողջութեամբ տալ կարենալու որոշումին մէջ է[ր]։ Եթէ մեծ մասնագէտ մը չեղաւ՝ սակայն բացատրեց եւ սիրցուց մատենագիրները իր շրջապատէն ներս։

«Եթէ մեծ պատմաբան մը չեղաւ՝ սակայն աշակերտին առջեւ դրաւ մեծութիւններու սքանչելի վաստակը։

«Եթէ մեծ քարոզիչ մը չեղաւ՝ սակայն գործնական կեանքի մէջ խղճի տէր ըլլալը թելադրեց։ Ու ան ցանեց բուռ-բուռ, ցանեց ո՛չ թէ աշնան մը բերքին լոկ սպասելով՝ այլ սերունդի մը գոյատեւման հնարաւորութեան ուժեղացումը տեսնելու հեռանկարով»[7]։

Բաղդատականներու սա շարքէն անդին մնաց մէկ ճշմարտութիւն սակայն։ Վերապատուելին հաւատաց մարդկային արժէքներուն, եւ երբեք մտահան չըրաւ, որ անհրաժեշտ էր լոյսին հանել այդ արժէքները, այսինքն, ինչպէս որ կը վկայէ իր ժամանակակիցներէն եւ հասակակիցներէն մէկը՝ «որպէս ուսուցիչ եւ որպէս հոգեւոր գործիչ՝ անոր կեանքին նպատակն եղաւ մարդ կերտել, հայ մարդ պատրաստել։ Ու յաջողեցաւ»[8], որովհետեւ «եթէ գրի առնուէին իր ամբողջական քարոզները, դասախօսութիւնները, բանախօսութիւնները, ամուսնութեանց առիթով իր խրատականները ընտանեկան բոյնի կազմութեան շուրջ՝ անոնք անկորնչելի [եւ] պատկառազդու հատորներ պիտի կազմէին իր արտադրած գրութիւններուն հետ։ Բարոյական արժէքներու մեծ վարդապետ էր Վեր. Տիգրան Պոլոքեան[ը]»[9], ահա թէ ինչո՞ւ համար իր ժամանակակիցներէն ոմանք իրմէ ներս տեսան «հոեւոր քարոզիչ մը Աստուծոյ խօսքին եւ քաջակորով հովիւ մը,

«նոր սերունդին քրիստոնէական եւ տոհմային դաստիարակութեան նուիրուած կրթական մշակ մը, համայիչ դասախօս մը, հմուտ խմբագիր մը եւ հեղինակ [մը, եւ]

«...Անվերապահ եւ անշահախնդիր հայրենասէր մը, նոյն ատեն ընտանիքի գորովագութ հայր [մը], համակրելի ազգական [մը], անկեղծ բարեկամ [մը] եւ հաճելի դրացի [մը]», որ ունէր «տեսիլք եւ հաւատք, համոզում եւ վճռակամութիւն, անաչառ դատողութիւն եւ քաջութիւն, գուրգուրանք եւ նուիրում, եւ ազնուականութիւն։

«Քաջութեան եւ անվեհեր հոգիի ապացոյցները տուաւ ան առաւելաբար Այնթապի հերոսամարտին եւ Սանճագի պարպումին ատեն։ Սանճագէն հեռացող վերջին առաջնորդը հանդիսացաւ ան»[10]։

Իրաւ էր վերջին սա հաստատումն այդքան՝ որքան որ իրաւ էր առաջինը։ Արդարեւ՝ 1 Ապրիլ 1920–ին Այնթապի մէջ բռնկած հայ-

Թրքական բախումները յառաջ քաշեցին նաեւ Պատուելին: Ուսուցիչ էր այն ատեն եւ դասարանի մէջ: «1920 Ապրիլ 1, Հինգշաբթի օր... լսուեցաւ սուր պայթիւնը փամփուշտի մը... փակուած էր ելքի դուռը: Մեր խիզախ դասատուն, Պր. Տ. Մրլորեան[ը], կռնակը փակ դրան տուած եւ երկու թեւերը պարզած՝ կ'որոտար.

«— Դուրս ելլել բացարձակ կերպով արգիլուած է:

«Եւ երբ այդ բառերը կ'արտասանէր՝ կարծես աչքերէն կրակ կը ժայթքէր:

«Արթուն հովիւ: Ան կը դոզար մեր կեանքերուն վրայ...»[11]:

Վկայութիւնը կու գայ Պատուելիին նախկին աշակերտներէն՝ Աստուր Գազանճեանէն:

Մարդը եւ հայը՝ առաջին իսկ հերթին: Սակայն աստուածայի՞նը՝ պիտի հարց տային ոմանք: Սակայն Պատուելին մի՛չտ ալ հաւատաց թէ անոնցմէ ներս առկայ էր անիկա, թէ կարելի չէր, եւ ոչ ալ անպայման անհրաժեշտ, որոնել, դուրսէն փնտռել բան մը որ ներսն էր արդէն: Հո՛ն էր աստուածայինը, հո՛ն էր ազնիւը եւ հոն՝ դրականը, խոնարհը, պարկեշտը, էականը, խորհրդաւորն ու սքանչելին, ահա թէ ինչո՞ւ համար մարդը, եւ անոր հետ հա՛յը նաեւ, արարեալի իրենց վէմէն կը կենային մատ մը վեր, ոչ՝ գլո՛ւխ մը բարձր, եւ անմիջական մօտիկը իրենց Արարիչին: Պատուելին այսպէս ճանչցաւ մարդը, եւ անոր հետ՝ հա՛յը նաեւ, ու երբ որեւէ առիթով ինքզինք գտաւ անօրինակութեանն առջեւ մարդկային բնութեան եւ բնաւորութեան՝ տխրօրէն ժպտեցաւ մեկուսի ու մնաց լուռ, եւ երբեք ալ չհարցուց ոեւէ մէկուն, թէ ինչո՞ւ էր այդպէս՝ չա՛տ լաւ գիտնալով որ կեանքին ընթացքն էր որ պիտի մարդն ընէր անհատ, անհատը՝ հայ, եւ հայը՝ տէրն իր հողին ու պատմութեան, գիրին ու մշակոյթին, հոգիին եւ իմացական արժէքներուն, հոգեկան ու բարոյական սկզբունքներուն, եւ մանաւանդ՝ իր ճակատագիրին, եւ այս մէկը՝ հակառա՛կ որ, Վեր. Ահարոնեանին իսկ հաստատումով, Պատուելին «կը պատկանի սերունդի մը, որ դժբախտութիւնը ունեցած է ապրելու մեր պատմութեան ամենէն դաժան չրջաններէն մէկուն մէջ: Որպէս երիտասարդ՝ ան ականատես եղած է մեր անագորոյն հակառակորդին ցեղասպանութեան ծրագրին անարդ գործադրութեան: Ան տեսած է մեր դարաւոր եկեղեցիներու[ն] քանդումը, անհամար վարժարաններու[ն] հրկիզումը, մեր մշակոյթի օրկաններուն փլուզումը, հազարաւոր ու տասնեակ հազարաւոր ընտանիքներու[ն] ու հայրենակիցներու[ն] տեղահան ու աստանդական զանգուածները, եւ մեր ազգային ամբողջական կառոյցին աւերակները: Եւ ան, հազիւ ճողոպրած մահուան ճիրաններէն ու արհաւիրքէն՝ ինքզինք բոլորանուէր

կ'ընծայէ ազգային վերականգնումի գործին՝ ուխտելով սէր առ Աստուած, եւ սէր՝ հայ ազգին։

«...Ան իր ինքնուրոյն պերճախօսութեամբ ու հրահրով սիրուած ու գնահատուած քարոզիչն էր։ Ան համոզուած էր թէ ազգային վերականգնումի առաջին պայմանն էր հոգեւոր վերականգնումը. առանց հոգեւոր վերականգնումի ուրիշ տեսակ վերականգնում կարելի չէր։

«Վեր. Տ. Խրլոբեան իր ուսուցչական եւ քրիստոնէական ծառայութիւնը ի սպաս դրաւ ազգային վերականգնումի։ Որպէս հայ գրականութեան, հայ լեզուի, հայ մշակոյթի դասախօս՝ ան վեր կ'առնէր այն արժէքները որ[ոնք] մեզ որպէս ազգ կանգուն պահած էին եւ կրնան պահել։ Ան սիրահարն էր հայ գրականութեան եւ հայ պատմութեան եւ լեզուի[ն]...։

«Որպէս խմբագիր եւ հրապարակագիր՝ Վեր. Տ. Խրլոբեան ազդու արտայայտութեամբ վեր կ'առնէր կրօնական, բարոյական, ընկերային եւ ազգային հրատապ հարցերը առանց քաշուելու քննադատելու ինչ որ պախարակելի էր եւ քաջաբար ցոյց տալու ճշմարտութիւնը եւ ազգօգուտը առանց աչ կամ ձախ թեքելու։

«Վեր. Տ. Խրլոբեան, Վեր. [եղիա] Քասունիի կողքին, Հայ Աւետ[արանական] Շարժման պատմաբանը եւ օրէնսգէտն էր։ Ան արտադրած է Հունձք եւ Ոսկեմատեան արժէքաւոր երկու հատորները, ուր Հայ Աւետ[արանական] Շարժման հիմնական պատմագիծերը իր յայտ կու գան իրենց հարազատ գոյներով։ Ան ունէր տակաւին շատ բան այս ուղղութեամբ գրի առնելու եւ տալու հայ ազգին»[13]։

2.

Իրաւ է Վեր. Յովհաննէս Ահարոնեանն իր հաստատումներուն մէջ, սակայն ոչ-ամբողջական՝ ոչ թէ Պատուելիին գրելիքներուն հաշուոյն, որոնք այդպէ՛ս ալ չգրուեցան երբեք, այլ նոյնիսկ՝ գրածներուն եւ հրատարակածներուն, ահա թէ ինչո՛ւ համար այժմ անհրաժեշտ կը նկատեմ հոս տալ կարգ մը տուեալներ՝ ամբողջական ընծայելու համար գէթ հեղինակային, գրական, պատմագրական եւ խմբագրական դիմագիծը Վեր. Տիգրան Խրլոբեանին։ Իրականութեան մէջ՝ Պատուելին գրական, պատմագրական եւ հրապարակագրական կեանքն սկսաւ շատ աւելի առաջ քան հրատարակութիւնը Հունձքին, որ հայ ընթերցողի սեղանին հասաւ 1948-ին եւ Ոսկեմատեանի զոյգ հատորներուն, որոնք կիւթեմպերկի գլանէն անցան միայն 1950-ին եւ 1951-ին յաջորդաբար։ Այս երկու գործերէն առաջ կային գրիչի, միտքի եւ սիրտի այլ գործեր եւս, որոնք, ըստ Պատուելիին մտերիմ-

ներէն՝ Հալէպի Կրթասիրաց Վարժարաններու երկարամեայ տնօրէն Գրիգոր Պողարեանի՝ կը ներկայացնէին այլ պատկեր։ «Բացի Նոր Աւետարերէն, որ Սուրիա-Լիբանանի Հայ Աւետ[արանական] Միութեան պաշտօնաթերթն էր եւ կը հրատարակուէր Հալէպ»՝ կը գրէ անիկա, Վեր. Խրլոբեան խմբագրած է հետեւեալ գիրքերը.—

«1. Հունձքը (1947)[14], յոբելենական հատոր մը՝ նուիրուած Փրոֆ. Լեւոն Լեւոնեանի[15]։

«2. Ոսկեմատեան (1950 եւ 1951), երկու ծաւալուն հատորներ՝ նուիրուած Հայ Աւետ[արանական] Եկեղեցիի հաստատման հարիւրամեակին, որպէս Պատմութիւն Հայ Աւետ[արանական] Շարժման (1846–1946)։

«3. Աւետարեր Մատենաշար (1949–1950), չորս պրակ, որպէս պարբերաթերթ»[16]։

Պողարեանը ոչ մէկ բան կը խօսի Նոր Աւետարերի մասին՝ բացի էջատակի փոքր ծանօթագրութիւնէ մը, որուն համաձայն՝ անիկա «Հայերէն եւ հայատառ Թրքերէն բաժիններ ունէր։ Լոյս տեսած է 1927էն 1934, որպէս կիսամսեայ հանդէս»[17]։ Այլ աղբիւր մը, իր կարգին, կու տայ աւելի մանրամասնութիւններ այս երկշաբաթաթերթին մասին։ Ըստ անոր՝ «Նոր Աւետարեր։ Կրօնաբարոյական, կրթական, գիտական երկշաբաթաթերթ [էր]։ Հրատ[արակութիւն՝] Հայ Աւետարանական Միութեան, Հալէպ։ 1927–1934։ Հալէպ, Ա. տարի, Ա. Թիւը լոյս տեսած է 1927 Նոյեմբեր 5ին։ 16–20 էջ, 25 × 19 սմ.։ Տպ. «Գոլէճ»։ Արտօնատէր՝ Վեր. կարապետ Ց. Ցարութիւնեան, պատ[ասխանատու] տնօրէն՝ Տիգրան Ճ. Խրլոբեան։ 1934–ի ամառը, արտօնատիրոջ մահէն ետք, թերթն ալ կը դադրի։

«Ե. տարուան — 1932, միացեալ Թիւ 22, 23 եւ 24 խմբագրականէն կը տեղեկանանք որ թերթին հրատարակութենէն տարի մը ետք, (1928) հայերէնին միացած է հայատառ Թրքերէն բաժին մըն ալ, 8 էջ»[18]։

Ըստ այս աղբիւրին՝ Պատուելին պատասխանատու տնօրէնն էր երկշաբաթաթերթին, մինչդեռ պարբերաթերթի ճակատին արձանագրուած կը գտնենք «պատասխանատու խմբագիր՝ Տ. Ճ. Խրլոբեան»։ Ըստ կարգ մը տուեալներու՝ հայերէն թէ հայատառ Թրքերէն՝ Նոր Աւետարերն իր առաջին տարին լոյս տեսաւ 26 Թիւ, 1929–1933 տարիներուն՝ տարեկան 24 Թիւ, իսկ 1934–ին՝ միայն 11 Թիւ, եւ ապա դադրեցաւ[19]։

Նոր Աւետարերի[20] հրատարակութենէն քանի մը տարի ետք, սակայն, Պատուելին լոյսին տուաւ իր Բարոյավէպերը[21], որպէս առաջին Թիւը նորահաստատ Նոր Աւետարեր մատենաշարին, որ, այդպէս ալ, չունեցաւ իր շարունակութիւնը, գուցէ անոր համար որ

Պատուելիին խմբագրական աշխատանքները եւ կրօնական պարտաւորութիւնները շատ ալ ժամանակ չձգեցին իրեն զբաղելու համար գործով մը, որուն ամբողջական հաւատացող մը մնաց անիկա կեանքին իր բոլոր տեւողութեան: Ապա պէտք չէ մտահան ընել երեսունական թուականներուն Հալէպի մէջ տիրող աւետարանական եւ համայնքային թոհուբոհը, որուն ընթացքին կատարելի բազմաթիւ բաներ տրուեցան մոռացութեան: Իսկ պէտք չէ մոռնալ նաեւ, որ հակառակ որ չշարունակուեցաւ նոր Աւետարեր մատենաշարը՝ սակայն Պատուելիին չկասեցաւ գրելէ, խմբագրելէ եւ հրատարակելէ: Իրաւ ալ՝ այս շրջանին կարելի է Պատուելիին ստորագրութեան հանդիպիլ Նիւ Եորքի Հայաստանի Կոչնակին, Հալէպի Եփրատին եւ Պէյրութի Ջանասէրին մէջ:

Քասնիճգամեայ Հունձքն, սակայն, ունեցաւ բոլորովին այլ բնոյթ, եւ գուցէ անիկա եղաւ առաջիններէն հայ իրականութեան մէջ գնահատանքի արժանի նկատուած անձի մը ողջութեանն իսկ անոր կեանքին ու գործին նուիրուած իբր հատոր: Արդարեւ, ինչպէս Պատուելին կը գրէր անոր յառաջաբանին մէջ, «Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետ[արանական] Եկեղեցիներու Միութիւնը, 1946-ի ամառը տեղի ունեցող իր տարեկան ժողովին մէջ, նկատի առնելով Փրոֆ. Լ. Ց. Լեւոնեանի իբր նուիրեալ երկարամեայ քրիստոնէական գործիչ, եւ մանաւանդ իբր քանհինգամեայ մեծարդիւն աստուածաբանական ուսուցիչ գնահատելի ծառայութիւնները, որոշեց յօրելեանը հանդիսաւորապէս տօնել Միութեան անունով եւ հովանաւորութեամբ, եւ անմիջապէս առ այդ ծրագիր մը մշակելու եւ զայն գործադրելու համար ընտրեց... [մարմին մը]: Այս մարմինը[22] Միութեան Վարիչ Մարմինին հաւանութեան ենթարկեց իր ծրագիրը, որ կը բովանդակէր.—

«ա. Ցօբելինական հանդիսութիւններ,

«բ. Լեւոնեան Ուսանողական հիմնադրամի գոյացում, [եւ]

«գ. Ցօբելինական հատորի մը հրատարակութիւն:

«...Ցօբելինական հատորին թելադրուած նախնական ծաւալը սահմանեցանք բաւական ընդարձակել, եւ տպագրութեան չրջանն ալ երկարել, որպէսզի աշխատակցիլ փափաքող սաներու կարենանք գոհացում տալ[23]:

«Գիտակից ենք թէ գործս անթերի չէ: Անոր առաջին մասը, մանաւանդ, հապճեպով կատարուեցաւ, որպէս[զի] հերու ամառուան սկիզբը «Հունձքը»[ն] հրատարակուի[24]:

Հակառակ թերութիւններու այս գիտակցութեան՝ խմբագիր Պատուելին Հունձքն բաժնեց քանի մը մասի, որոնց առաջինն եղաւ ակնարկ մը Մերձաւոր Արեւելքի մէջ գոյութեան կոչուած աստուա-

ծաքանական հաստատութիւններու՝ եւ կրեց «Ներածական» ընդհանուր խորագիրէն ետք՝ «Աւետարանական| Աս|տուա|ծաքանական Հաստատութիւններ Մերձաւոր Արեւելքի մէջ»՝ ենթախորագիրը: Այս հատուածով տալէ ետք ընդհանուր ակնարկ մը ուսումին եւ հին ու նոր դպրոցներուն մասին՝ գուցէ առաջին անգամն ըլլալով էր որ Պատուելին իրարայաջորդ կերպով լուսարձակի տակ առաւ Աւետարանական աստուածաբանական ճեմարաններն ու վարժարանները[25]:

Հատորին երկրորդ մասն ընդգրկեց աշխատակցութիւնները, յօդուածները եւ ուսումնասիրութիւնները կրօնական եւ աշխարհիկ տասնեօթը աշխատակիցի[26], որոնցմով հեղինակները քննարկեցին կրօնական եւ բանասիրական, ազգային եւ միջազգային, մարդկային եւ աստուածաբանական, բարոյական եւ ընկերային հարցեր: Հատորին այս երկրորդ մասն ընդարձակագոյնն էր տրուած բոլոր հատուածներուն եւ գուցէ ամենէն հետաքրքրականն իր այլազանութեամբ. իսկ Հունգարիին երրորդ մասն ամբողջութեամբ յատկացուած մնաց Ցոբելիարին նուիրուած հանդիսութիւններուն, որոնց հիմնականը տեղի ունեցաւ 16 Մարտ 1948–ին՝ Պէյրութի Անգլօ–Ամերիկեան Եկեղեցիին մէջ, ուր, որպէս առենապետը Ցոբելինական Յանձնախումբին՝ Վեր. Խրլոբեան կատարեց «բացման խօսքը»[27]: Այս հատուածին մէջ, սակայն, Պատուելիին գրիչին կը պատկանի ընդարձակ ուսումնասիրութիւն մը, որով անիկա կատարեց մէկ գնահատանքը Ցոբելիարի կեանքին ու գործին[28]: Հատորի վերջին մասով խմբագիր–հեղինակը տուաւ կենսագրականներն ու ինքնակենսագրականները Աթենքի Կրօնական Վարժարանին, Պէյրութի Կրօնական Գործիչներու դպրոցին եւ Պէյրութի Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական Ճեմարանի շրջանաւարտներուն[29]:

Ցոբելինական Հունգարէն տարի մը ետքն էր որ Պէյրութի մէջ լոյս տեսնելու սկսաւ Աւետարեր Մատենաշարը՝ որպէս Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Հրատարակութիւն եւ որուն խմբագրական կազմի անդամներն էին Փրոֆ. Լութֆի Լեւոնեանը, եւ Վեր. Վեր. Յովհաննէս Աբգարեանը, Յովհաննէս Ահարոնեանն ու Տիգրան Ճ. Խրլոբեանը: Վերջինը պատասխանատու խմբագիրն էր պարբերագիրքին:

Վերապատուելի Տիգրան Խրլոբեանի հիմնական գործն եղաւ, սակայն, հրատարակութիւնը Ոսկեմատեան ընդհանուր վերնագիրով ծանօթ այն գոյգ մը հատորներուն՝ որոնց եթէ առաջինը մկրտուեցաւ Պատմութիւն Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետ|արանական| Միութեան՝ երկրորդին տրուեցաւ Համապատկեր ժամանակակից Հայ Աւետարանական Եկեղեցւոյ խորագիրը: Ըստ գոյգ մը այս հատոր-

ներու տիտղոսաթերթերու տուեալներուն՝ Պատուելին «երկասիրեց» առաջին հատորը գործին, մինչ «պատրաստեց» երկրորդն անոր: Ինչպէ՛ս որ ալ ըլլար հեղինակութեան ձեւն անոնց՝ անոնք եղան հրատարակութիւնը Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Միութեան, լոյսին տուեցան 1950-ին եւ 1951-ին յաջորդաբար, եւ նուիրուեցան «Հայ[աստանեայ]ց Աւետ[արանական] Եկեղեցւոյ Հաստատութեան Հարիւրամեակի[ն], 1846-1946»՝ ինչպէս կը նշէ արձանագրութիւն մը այս զոյգ հատորները բացող գունաւոր խորաններուն վրայ[30]:

Դիւրին չեղաւ այդ գործը՝ մանաւանդ որպէս ծրագրում եւ իրագործում, որովհետեւ, ինչպէս Պատուելին իսկ կը հաստատէ իր ցառաջաբանով՝ գծուած ծրագիրին համաձայն Ոսկեմատեանը պիտի առնչուէր լո՛ւկ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան գաշտին եւ անոր եկեղեցիներուն գործունէութեան, սակայն այլ տեղ անիկա չուշացաւ յայտնելու թէ սկզբնական երկու հարիւր էջանի գործի մը ծրագիրը 1948-ի գարնան սկիզբը երբ արդէն մամուլին էր յանձնուեր «Ոսկեմատեանի առաջին մասը»՝ անհրաժեշտ նկատուեցաւ ընդլայնել եւ կարգ մը փոփոխութիւն մտցնել անկէ ներս: Շուտով, սակայն, Ֆրանսայի Հայ Աւետարանական Ընկերութիւնն ու Միացեալ Նահանգներու Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը կազմող Արեւելեան եւ Արեւմտեան Ափերու Միութիւններն ալ ընդգրկուեցան ծրագիրէն ներս, որմէ ետք ներս առնուեցան տակաւին եկեղեցիները Եգիպտոսի, Իրանի, Կիպրոսի, Պոլսոյ եւ Հարաւային Ամերիկայի:

Ոսկեմատեանի առաջին հատորի վերջաբանով խոր ու համապարփակ վերլուծում մը չէր որ կատարեց Պատուելին· ընդհակառակը, անորն եղաւ լոկ մէկ նշումը կարգ մը երեւոյթներու եւ անոնց դրսեւորումին, որոնց անիկա վերահասու դարձաւ գործի ընդարձակ պատումի ընթացքին:

Ոսկեմատեանի երկրորդ հատորն ուրիշ էր սակայն՝ որպէս յղացք եւ իրագործում: «...Այս երկրորդ հատորը Համապատկեր կոչեցինք» կը գրէ Վեր· Տիգրան Մրլոբեանն անոր Նախաբանին մէջ, եւ նոյնհետայն կը պատճառաբանէ թէ ինք նպատակադրած էր «լրիւ ներկայացնել աշխարհի ամէն կողմը ցրուած Հայ Աւետարանականութիւնը»[31]: Իրականութեան մէջ՝ որպէս երրորդ հատոր՝ անիկա կը կրէր Համապատկեր ժամանակակից Հայ Աւետ[արանական] Եկեղեցւոյ խորագիրը եւ կը ներկայացնէր «վիճակագրական եւ պատմական ծանօթութիւններով, կենսագրական ուրուագիծերով եւ նկարներով» հարուստ գործ մը: Այսուհանդերձ՝ հակառակ հատորին տրուած սա Համապատկեր տորոգումին՝ Պատուելիին համար կարելի չեղաւ տալ համապարփակ գործ մը՝ պարզ այն պատճառով որ անկէ

դուրս մնացին Աւետարանական եկեղեցիները Հայաստանին, Ազգապէչճանին, Վրաստանին եւ Պուլկարիոյ, իսկ «կարգ մը պարագաներու եւ քիչ թիւով անհատ եկեղեցիներու մասին ակնկալուածէն չատ քիչ նիւթեր մեզի հասան, եւ սակաւաթիւ եկեղեցիներ ալ միայն լրութեամբ պատասխանեցին մեր խնդրանքներուն»[32]:

Ըսի թէ ուրիշ էին յղացքն ու իրագործումն այս գործին: Ըսի՞ սակայն թէ հիմնական երկու մասերէ բաղկացած այս հատորին առաջինով Վերապատիւ Հեղինակը տուաւ «կենսագրական ուրուագիծերը» ապրող 88 (էջ 3–81 եւ 428–433) եւ մահացած 38 (էջ 82–156) հայ աւետարանական գործիչներու, ուրուագիծեր՝ որոնք իւրապէս ալ կը մնան ուրուագծային՝ հակառակ որ լուսարձակի տակ առնուող կան բազմաթիւ դէմքեր որոնք անհրաժեշտ էր որ ենթարկուէին աւելի խոր եւ ամբողջական վերբերումի, վերլուծումի եւ արժեւորումի: Ցաւակ է, որ գործը ժամկէտին հասցնելու արտօրանքը ի նպաստ չեղաւ Պատուելիին, եւ տրուող կենսագրական գիծերը մնացին չոր եւ յաճախ տուին անհրաժեշտը միայն, մինչդեռ, կը հաւատամ որ, աւետարանական այս 126 դէմքերու եւ գործիչներու մէջ անպայման կային, եւ կան տակաւին, բազմաթիւներ, որոնք արժանի էին աւելիին:

Համապատկերին երկրորդ մասը, սակայն, ունեցաւ առաջինէն բոլորովին տարբեր բնոյթ: Կարգ մը նկարներու օժանդակութեամբ տալէ ետք հակիրճ մէկ պատմութիւնը Մերձաւոր Արեւելքի Աւետարանական Միութեան, անոր տարեկան համաժողովներուն, Քրիստոնէական Ջանից Ընկերակցութեան եւ կրօնական դաստիարակութեան համագումարներուն, եւ Հայ Աւետարանական Եկեղեցիի Հարիւրամեակի տօնակատարութիւններուն՝ Պատուելին փորձեց տալ ամփոփ մէկ պատումը աշխարհացրիւ Հայ Աւետարանական Եկեղեցիներուն եւ անոնց առընթերակից զանազան կրօնական, դաստիարակչական եւ օժանդակ կազմակերպութիւններուն եւ մարմիններուն՝ մի՛չտ ալ առատօրէն նպաստաւորուելով փաստագրային հանգամանքէն իրեն տրամադրուած լուսանկարներուն: Արդարեւ՝ Համապատկերին միայն ա՛յս բաժինին մէջ առկայ 288 էջերուն 176ը տրամադրուած են լուսանկարներու: Այս հատուածով Պատուելին փորձեց վերակազմել ընդհանուր մէկ պատկերը Հայ Աւետարանական եկեղեցիին, որուն բերնութագրումին եկան օգնելու ընդարձակ կամ հակիրճ տեղեկանքները Պէյլանի, Ալեքսանտրեթի եւ Պոլսոյ՝ վեց, Սուրիոյ՝ ութը, Լիբանանի՝ վեց, Կիպրոսի՝ երկու, Ցունաստանի՝ հինգ, Եգիպտոսի՝ մէկ, Պարսկաստանի՝ ութը, Ֆրանսայի՝ քսան, Միացեալ Նահանգներու՝ քսան, եւ Հարաւային Ամերիկայի՝ երկու, ընդհանուր գումար՝ 78 մեծ ու փոքր եկեղեցիներուն: Այս բոլորին մէջ միայն Ֆրանսայի չրջանակին պատմութիւնն էր, որ այս հատորին խմբագրութեան հա-

սաւ խմբագրութեամբը Փարիզի Բանբերին[33], մնացեալ պատումներէն ոմանք քաղուեցան ու կառուցուեցան Պատուելիին առաքուած նամակներէն եւ անոնց տուեալներով, իսկ մնացեալներն ալ՝ անոր հասցէագրուած վիճակագրական եւ ծանօթագրական թուղթերէն[34]:

Դիւրին չեղաւ աշխատանքն ա՛յս բաժինին ալ՝ ինչպէս որ անիկա դիւրին եւ հեզասահ չէր եղած առաջինին պարագային: Հո՛ս ալ Պատուելիին մնաց դուրս իր աշխատանքին նիւթերէն եւ գործը ներկայացուց «վիճակագրական եւ պատմական ծանօթութիւններով», եւ այնպէս՝ ինչպէս որ զանազան եկեղեցիներու առաջնորդներն ու դեկավար մարմինները կ՛ուզէին որ ներկայացուած ըլլային իրենց եկեղեցիներն ու հաւաքականութիւնները: Հո՛ս ալ Պատուելիին չքննեց ու չքննադատեց, չդատեց ու չվերլուծեց, չխորացաւ եւ չհասաւ եզրակացութիւններու, եւ վճիռի ու վճռումի մազէն չանցո՛ւց որեւէ եկեղեցիի գործ ու գործելակերպ: Լո՛կ ներկայացուց զանոնք ու անցաւ: Լա՞ւ ըրաւ այսպէս ընելով թէ վատ՝ չմտահոգուեցաւ բնաւ: Զուգե՛ց ալ գուցէ: Որովհետեւ անիկա մի՛չտ ալ հաւատաց թէ պատմութիւնն արձանագրութիւնն էր տուեալներու, վիճակներու, իրականութիւններու եւ փաստագրումի, իսկ այդ բոլորին միայն մէկ թուումն մասանցն էր որ հասեր էր իրեն, որով կարելի չէր գրել քննական պատմութիւն: Գուցէ այս գիտակցութիւնն էր միակ պատճառը, որ մղեց Պատուելիին յայտարարելու թէ ինք «պատրաստեց», լո՛կ «պատրաստեց» գործը:

«Պատրաստեց» թէ «երկասիրեց», խմբագրեց թէ գրեց՝ այժմ սեղանի վրայ են գոյգ մը հատորները Ոսկեմատեանին, միհատորեակը Քսանիհինգամեայ Հունձքին, եօթը տարիներու հաւաքածոները հայերէն թէ հայատառ թրքերէն Նոր Աւետաբերին եւ չորս պրակները Աւետաբեր Մատենաշարին, որոնք իրաւունք կու տան յայտարարելու, թէ սիրտի եւ միտքի, իմացականութեան եւ գիտութեան, ուսումնասիրութիւններու եւ վերլուծումներու մարդն եղաւ Վեր. Տիգրան Որլոբեանը, որուն կեանքն ամբողջութեամբ նուիրուեցաւ հայուն, հայ մարդուն, անոր պատմութեան եւ հոգ ու քարին, անոր հայրենի իրականութեան ու մշակոյթին, հոգեկան հարստութիւններուն եւ իմացական կարողութիւններուն, եւ բարոյական լինելութեան եւ Աստծոյն: Վահէ-Վահեանի իսկ վկայութեամբ՝ «Բնութիւնը պարգեւեր էր իրեն ճանկագին չնորհներ միտքի ու սիրտի: Վեր. Տիգրան Որլոբեանը աճեցուց այդ չնորհները անդուլ ջանադրութեամբ եւ ընծայաբերեց զանոնք իր չրջապատին՝ անմնացորդ նուիրումով: Ուսուցիչ էր ինք սրտագէտ ու բանիբուն, հոգեւոր լուսամիտ ու հովիւ, հաստատ համոզումներու տէր հրապարակագիր, ազգային հասարա-

կական խանդավառ գործիչ, ընտանիքի սիրագորով հայր ու ճշմարիտ բարեկամ։

«Ազգ, հայրենիք, մշակոյթ ու եկեղեցի՝ չորս սիւներն էին գաղափարի իր տաճարին, որուն ներշնչեալ ու ներշնչող քուրմը մնաց ինք՝ մինչեւ վախճանը բազմավաստակ իր կեանքին»[35]։

3.

Բազմավաստակ ու բեղուն կեանք մը եղաւ Վեր. Տիգրան Խըրլօբեանինը, տառապանքի ու զոհողութեան կեանք մը նաեւ, եւ կեանք մը որ օր մը, հեռաւոր օր մը, սկսաւ հեռաւոր ալ Այնթափի մէջ, «1891-ի Հոկտեմբերի[ն] սկիզբը։ Իր ուսումը կը սկսի Հալէպ[36], ապա 1898-էն ետք, կը շարունակէ գայն Անթէպի Գայաճըգ թաղի Ա-ւետ[արանական] եկեղեցւոյ դպրոցը։ 1907-ին կը մտնէ Անթէպի Ա-ւետ[արանական] Գոլէճը[37]։ Ուսումը տարի մը ընդհատելով՝ 1910-[19]11-ին ուսուցչութեամբ կը զբաղի վերոյիշեալ եկեղեցիի նախակրթարանին մէջ։ 1913-ին գոլէճական ուսումը կ'աւարտէ[38]։ 1913-[19]14-ին անօրէն ուսուցիչ [է] Քիլիսի Հայ Աւետ[արանական] եկեղեցիի նախակրթարանին [մէջ]։ 1914-[19]15, ուսանող է Մարաշի Ատուաձաբանական ճեմարանին մէջ։ 1915-[19]18 զինուոր է, նախ մի քանի ամիս Թուրք բանակին մէջ, ապա մինչեւ զինադադար իբր թարգման քարտուղար գերման բանակին մէջ[39]։ 1918-[1923], ու-սուցիչ է նախ Անթէպ, ապա Հալէպ՝ 1923-[19]25, քարոզիչ-ուսուցիչ՝ Գալատուրան եւ Քեսապ։ 1925-[19]27, ուսանող է Աթէնք, Կրօնա-կան Վարժարանին մէջ։ 1927-[19]34, պատասխանատու խմբագիր՝ Սուրիոյ եւ Լիբանանի Հայ Աւետ[արանական] Միութեան պաշտօնա-թերթին՝ Նոր Աւետարերի[ն], միեւնոյն ատեն օգնական հովիւ Վեր. Կ[արապետ] Ցարութիւնեանի, եւ 1927-[19]28-ին ալ հին եւ նոր հա-յերէն լեզուի եւ գրականութեան դասախօս՝ Հալէպ Գոլէճի[ն] մէջ[40]։ 1935-[19]39, հոգեւոր հովիւ Գրիգոր Խանի Հայ Աւետ[արա-նական] եկեղեցիին։ 1939, Հոգեգալուստի կիրակին կը ձեռնադրուի Մերձ[աւոր] Արեւելքի Հայ Աւետ[արանական] Միութեան կողմէ Հա-լէպ, Իմմանուէլ Հայ Աւետ[արանական] եկեղեցիի[ն] մէջ։ 1939-[19]47, հոգեւոր հովիւ Նահատակաց Հայ Աւետ[արանական] եկե-ղեցւոյ, Հալէպ։ 1947-ին կը հրաւիրուի Աւետ[արանական] Միու-թեան հրատարակչական գործին պատասխանատուութիւնը ստանձ-նելու։ Խմբագրած եւ հրատարակած է Հուշմը[ն], յոբելինական հատոր մը՝ նուիրուած Փրոֆ. Լ. Լեւոնեանի[ն]. խմբագրած եւ հր-ատարակած է 1949-[19]50-ի միջոցին Աւետարեր մատենաշարի չորս թիւերը։ Միեւնոյն ատեն հայերէն լեզուի եւ գրականութեան դասեր

տուած է Հայ Աւետ|արանական| Կրթական Հաստատութեան եւ Հայ Աւետ|արանական| Գոլէճի|ն| մէջ, Պէյրութ[41]: Ժամանակին մեծ մասը յատկացուցած է Ոսկեմատեանի երկասիրութեան եւ հրատարակութեան՝ վերջին երկու տարիներու միջոցին»[42]:

Թուումն մասանց մըն է Համապատկերինը, որ խիտ է չա՛տ: Իրականութեան մէջ՝ ինչպէս կը յայտնէ Վեր. Տիգրան Ճ. Խլոբեանի ծննդեան հարիւրամեակի յոբելինական հանդիսութեան յայտագիր մը[43] Միացեալ Նահանգներու Փասատինա քաղաքին մէջ՝ Քալիֆորնիա՝ «Նա եղել է Սուրիայի եւ Լիբանանի Հայ Աւետարանական Եկեղեցիների Միութեան Սահմանադրութեան խմբագիրներից մէկը, Աւետարանականութեան պատմութեան եւ տեսութեան հետազօտողը, վարակիչ քարոզիչը, կիրակնօրեայ դպրոցների կազմակերպիչը եւ անվերապահ ծառան Յիսուս Քրիստոսի: Նրա քարոզները համակել են ինչպէս մտաւորականին՝ այնպէս ալ աշխատաւորին, ինչպէս տարեցին՝ այնպէս ալ պատանուն: Նա ամէն կերպ ձգտել է քրիստոնէավայել եւ համագործակցական կապեր ստեղծել բոլոր հայ յարանուանութիւնների միջեւ՝ յատուկ յարգանք վերապահելով Մայր Եկեղեցու նկատմամբ»[44]:

«Որպէս կրթական մշակ՝ Վեր. Տ. Ճ. Խլոբեանն իր զգալի աւանդն ունի սփիւռքահայ դպրոցի կազմակերպման գործում ինչպէս Այնթէպում (1920–[19|21) այնպէս էլ Քիլիսում (1913–1914), Հալէպում (1921–1923), ժողովրդական դպրոց (1922–1923, 1927–1934), Մանչերու Բարձրագոյն Վարժարան — Ալեփօ Գոլէճ —, հայախօս ասորիներու դպրոց (1929–1931), Տավուտիէ[45] Թաղամասի դպրոց (1940–1942), Ուսումնասիրաց-Լեւոնեան Վարժարան (1945–1947), Քեսապի շրջանում (յատկապէս Գալատուրանում, 1923–1925), Գըրըգ-Խանում (1934–1938) եւ Պէյրութում (Հայ Աւետարանական Գոլէճ, Ուսուցչանոց, 1947–1949): Նա հիմնադիրներից է սփիւռքի անդրանիկ համալսարանի՝ Հայկազեան Գոլէճի: Նա ուշագրաւ մանկավարժական յօդուածներ է տորագրել ինչպէս սփիւռքահայ՝ այնպէս էլ հայրենի մամուլում:

«Որպէս հայագէտ՝ Վեր. Տ. Ճ. Խլոբեան|ը| հետազօտել է հայ կրօնական չարժումների պատմութիւնը (Հեթանոսական, Առաքելական, Պաւղիկեան, Թոնգրակեան, Աւետարանական), սփիւռքահայ դպրոցի պատմութիւնը, սփիւռքի քաղաքական-մշակութային կառոյցը եւ հայ գրականութեան որոշ հարցեր: Նա հիմնադիր-վարիչն է|ր| Պէյրութի Հայկազեան Գոլէճի հայագիտական ամպիոնի (1955–1968) եւ նրա հայագիտական մատենադարանի, որը կրում է նրա անունը: Նա երկար տարիներ Հալէպում եւ Պէյրութում դասաւանդել է հայագիտական նիւթեր՝ յատկապէս գրաբար, արդի հայերէն, հա-

յոց պատմութիւն, հայ եկեղեցւոյ, դպրոցի, գրականութեան եւ մատենագիտութեան պատմութիւն: Նա մեծ համառութեամբ ժողովրդականացրել է հայագիտութեան նորագոյն նուաճումները եւ նրա միջոցով առողջ ազգային հպարտութիւն արմատաւորուել է ժողովրդի գիտակցութեան մէջ:

«Որպէս հայ մամուլի հրատարակչական գործի երախտաւոր՝ Վեր. Տ. Ճ. Խլոբեան[ը] խմբագրել է Նոր Աւետարեր (1927–1934) երկշաբաթեայ հանդէսը, Աւետարեր պարբերականը (1949–1950), եւ բազմաթիւ յօդուածներ է գրել սփիւռքահայ հայատառ եւ անգլիատառ մամուլում: 1947–1952 [թուականներին] նա եղել է Հայ Աւետարանական Միութեան հրատարակչական գործի պատասխանատուն: Նրա երկարամեայ ուսումնասիրութիւնների արդիւնքն է Ոսկեմատեան երկհատորեայ մենագրութիւնը (1950–1952): Նա մաս կազմել է Այնթեպի հայոց պատմութեան նուիրուած Տօքթ. Գ. Սարաֆեանի հրատարակած հատորների խմբագրական մարմնի[46]: Խմբագրել է Հուշք ժողովածուն[47] եւ Բարոյավէպեր մանկապատանեկան պատմուածքների հաւաքածոն (1931): Մամուլում հրապարակուած նրա յօդուածները կը լցնեն մի քանի ստուար հատորներ: Նրա հրապարակումներն աչքի են ընկել իրենց արտայայտած գաղափարների ինքնատիպութեամբ, նորութեամբ, խորութեամբ, ազգային խորքով ու քրիստոնէական ոգով: Նրա ոճը պարզ է, ազդու, լակոնական եւ հիւթեղ:

«Որպէս հասարակական գործիչ՝ Վեր. Տ. Ճ. Խլոբեանի կարգախօսը եղել է «Ճանուն Քրիստոսի, ազգի, եւ մարդկութեան»[48]: Նա գործօն կերպով մասնակցել է բռնազաւթուած գաղթականների[ն] օգնելու գործին եւ Սուրիայի գաղութի կազմակերպման, Այնթէպի ինքնապաշտպանութեան պայքարին, Մանճագի հայութեան դատի[ն][49] եւ հայ պահանջատիրութեան պաշտպանութեան, հայ քաղաքական կեանքում միասնութեան հաստատման[50], սփիւռք-հայրենիք կապերի ամրապնդման[51], ներգաղթի կազմակերպման[52] եւ հայ ժողովուրդի յարաբերութիւնները այլ ազգերի ու պետութիւնների հետ բարելաւելու գործին: Սփիւռք-հայրենիք կապերի ամրապնդման մէջ Վեր. Խլոբեան[ն] առանձնացրել է հայապահպանման, Հայաստանի ազատագրման նպաստելու եւ հայ ազգին միասնութիւնը ամրապնդելու հնարաւորութիւնները[53]: Նա ներգաղթը դիտել է որպէս հակաճուղոգական, Հայաստանի հզօրացման եւ նրա ինքնուրոյնութեան հնարաւորութիւնը զօրացնող ուժ: Ներգաղթը համարել է ղոհեր ննթադրող՝ բայց անհրաժեշտ գործողութիւն[54]:

«...Վերապատուելիին կեանքը եղել է մի պատարագ Աստուծոյ եւ ազգի»:

Իրա՛ւ էր, պատարագ մը եւ զոհաբերում մը, կեանք մը որ լի էր տրտմութեամբ, այսուհանդերձ՝ յոյսո՛վ նաեւ: Դրական մարդն էր Պատուելին, որ սակայն մի՛չտ ալ չրջապատուած մնաց բացասական երեւոյթներովը մեր կեանքին: «Իր մեծ տրտմութիւնն էին մեր հակամարտ ընդհարումները, անխնայ մեր վատնումը ուժի եւ նիւթական միջոցներու՝ զիրար ջլատող պայքարի մէջ»՝ կ'եզրակացնէ Վահէ-Վահեանը: «Բայց չէ՛ր երբեք յոռետես՝ մեր ժողովուրդին բնաւորութեան մասին: Ան իրական դատումով իմաստասէրի մը, մեր կեանքին տգեղ երեւոյթները կը վերագրէր մեր վտարանդի հատուածին պարտադրուած անմարդկային պայմաններուն ու կը հաւատար թէ չէին ներկայացներ անոնք բախտորոշ գիծերը հայ նկարագիրին: Ունէր հաստատ համոզումը թէ անոնք պիտի մաքրուէին, երբ փոխուէին մեր կեցութեան պայմանները, երբ զաղրէինք ամէն հովի ենթակայ Սփիւռք ըլլալէ:

«Մինչեւ հասնիլը երջանիկ այդ օրերուն, նուազագոյն կորուստով վերապրումի հնարաւորութիւնը կը տեսնէր փրկարար ուժին մէջ մեր մշակոյթին — լեզուին, գրականութեան, արուեստներուն եւ եկեղեցիին: Ահա թէ ինչո՞ւ նուիրեալ սպասարկուն էր ինք հայ մշակոյթին եւ տարածիչը անոր բարիքներուն[55]:

«Օրէ օր մաշող Սփիւռքի խորացուցած տրտմութեան մէջ, իր միխիթարութիւնն էր պայծառ իրականութիւնը մեր աճող ու զօրացող հայրենիքին...»[56]:

Իրաւ եւ ճի՛շդ դատում, եւ իրաւ ու ճիշդ վճիռ: Իրականութեան մէջ՝ հայրենի հող ու քարին, բառ ու բանին, ժողովուրդին ու հաւաքականութեան իրականութիւնն էր որ տարբեր ընծայեց զինք եւ յաճախ դրաւ հակադիր դիրքերու վրայ իր ժամանակակիցներէն, ու մանաւանդ՝ դասակիցներէն ու գործակիցներէն ոմանց, որոնք գտան զինք ուրիշ, մերթ աւետարանական կրօնական առաջնորդի մը անհաշտ դիրքի մը վրայ, եւ նոյնիսկ՝ երբեմն անընդունելի: Այսուհանդերձ՝ անիկա «կա՛ր երէկ, կը գտնուէր մեզի հետ, կը խօսէր բոլորին, կը ժպտէր ամենուն, կը յուսադրէր, կը խրատէր, կը վիճէր, չէր սակարկեր, չէր այպաններ, չէր քննադատեր· բարի հովիւն էր անիկա, Աւետարանին մարդը, հայութեան հաւատացողը, եւ որպէս այդպիսին՝ կ'ապրէր, կը մտածէր, կը ճշդէր, կը վստահեցնէր, կը յուսադրէր, եւ այս այսպէս՝ որովհետեւ այդպէ՛ս էր ընկալած իմաստը կեանքին, այդպէ՛ս էր հասկցած պարտաւորութիւնները, որոնք իրեն էին անպայման, ու մնացին այդպէս ալ մինչեւ վերջին հեւքն իր չունչին:

«Եւ, սակայն, այդպէս չըմբռնեցին կեանքը մարդեր, այդպէս չհասկցան զինք մարդեր: Մերթ մօտեցան իրեն, երբ ի նպաստ իրենց

էր այդ քայլը: Խօսեցան իրեն հետ, երբ կրնային օգտուիլ իրմէ: Բարեւեցին, երբ չահ մը կար քաղուելիք, եւ, սակայն, բամբասեցին, երբ բացակայէր ինք: Բայց այսօր, իր մեկնումէն ետք, ահա՛ւասիկ, մեծցաւ, մեծցա՛ւ անիկա, աճեցաւ, բազմացաւ, ու դարձաւ մեծ եւ ա՛յլ էակ, մեծ եւ ուրի՛շ մարդ:

«Մահը գեղեցկացուց զինք, մեծցուց, լուսաւորեց, իմաստաւորեց, չքեղցո՛ւց նաեւ զայն, որ մերժեց պատիւները մեծութեան, փառաբանանքն իր պարտաւորութիւններուն, գովերգումն իր կատարած պարտականութիւններուն: Մշակն էր միտքի եւ սիրտի, ու սակարկեց ո՛չ մէկուն հետ կարելիութիւններն իր միտքին ու սիրտին: Քալեց առանձին, մնաց առանձին, ու տառապեցաւ առանձ/ն: Տուաւ ինչ որ ունէր, ինչ որ կրնար, եւ ստացաւ քիչ, չա՛տ չատ քիչ այդ բոլորին փոխան, երբ կ'ապրէր ու կը տեւէր, երբ կը քալէր կեանքի գնացքն ի վեր, եւ, սակայն, ստացաւ չատ՝ իր մեկնելէն ետք միայն:

«...Եւ, սակայն, մահը գեղեցկացուց զինք, եւ նոյնհետայն դադրեցան հաշիւները, քէները եւ նախանձները, չքացան սակարկութիւնները, փոքրացումները եւ մերժումները, քանդուեցան բաժանումները, խրամատները եւ կոտորակումները, եւ եղաւ խաղաղութիւն, եւ այդ բոլորէն ետք՝ [մարդեր] ըսին չա՛տ բան, գրեցին չա՛տ բան, խօսեցան չա՛տ բան:

«Արդարօրէն եւ իրաւացի կերպով:

«Բայց ա՛լ պէտք չունէր անոնց, որովհետեւ մահով գեղեցկացողը մա՛րդ մըն էր լոկ, որ գիտցաւ սիրել կեանքը, սիրել մարդերը, սիրել անոնց տկարութիւնները, մտահոգութիւնները, անոնց տար առօրեան, յոյսերն ու յուսախաբութիւնները, եւ այդ բոլորէն վեր՝ անոնց մարդութիւնը:

«Որովհետեւ Վերապատուելի Տիգրան Խրլոբեան մա՛րդ մըն էր»[57]:

Այդպէս, միա՛յն այդպէս: Մահը գեղեցկացուց մեծ մեռեալը, եւ մարդեր չտապեցին, եկան իրարու մօտ, համախմբուեցան, կազմակերպուեցան եւ կազմակերպեցին թաղումն անոր, որուն անակնկալ մահը տեղի էր ունեցեր 23 Նոյեմբեր 1968–ին Շաբաթ առաւօտեան՝ իր բնակարանին մէջ[58]:

Ու երբ թարմ էր ցաւը տակաւին, եւ մարդեր գերզգայուն՝ զգաստարին եւ իրականութեան դէմ մահին ու մահացողին՝ Հայկազեան Գոլէճի տնօրէնութիւնը փութաց հաղորդելու հայ ժողովուրդին, թէ «Հայ մշակոյթի երախտաւոր արժանայիշատակ Վեր. Տիգրան Ճ. Խրլոբեանի յիշատակը յաւերժացնող ձեռնարկներ մշակելու համար

կազմուած է յատուկ յանձնաժողով [մը]՝ Գոլէճի նախագահ Տոքթ. Ժ[իլպեր] Պիլեզիկեանի գլխաւորութեամբ:

«Յանձնաժողովը որոշած է՝

«1. Հրատարակել Վեր. Տիգրան Ճ. Խլոռեանի ձօնուած նկարագարդ յուշամատեան մը: Առ այդ կը խնդրուի ներքեւի հասցէով ամենակարճ ժամանակամիջոցին յանձնաժողովիս դրկել Վեր. Տ. Ճ. Խլոռեանին վերաբերող յուշեր, անոր կեանքին ու գործունէութեան հետ առնչութիւն ունեցող վաւերաթուղթեր ու նկարներ[59]:

«2. Կազմակերպել հայագիտական շաբաթ՝ նուիրուած Վեր. Տիգրան Ճ. Խլոռեանի յիշատակին, 1969 թուականի Մարտ ամսուան ընթացքին:

«3. Խնդրել Վեր. Տիգրան Ճ. Խլոռեանի յիշատակին նուիրուած ձեռնարկներուն մասնակցութիւն բերել ցանկացող բոլոր կազմակերպութիւններէն գործակցիլ կազմուած յանձնաժողովին հետ եւ ներկայացնել իրենց առաջարկները:

«4. Խնդրել բոլոր անոնցմէ, որոնք Վեր. Տիգրան Ճ. Խլոռեանի յիշատակին Հայկազեան Գոլէճի հայագիտական մատենադարանին նուիրատուութիւններ կ'ընեն, հեռաձայնով տեղեկացնել իրենց հասցէները՝ դիւրացնելու համար գանձումը»[60]:

Այդքան, միա՛յն այդքան: Հոն էր կոչը, հոն էր հրաւէրը գործակցութեան նաեւ, սակայն այժմ կայ ոչ մէկ փաստ ցոյց տալու համար թէ կատարուեցաւ հրատարակութիւնը «նկարազարդ յուշամատեան»ին, կազմակերպուեցաւ «հայագիտական շաբաթ», կամ Վեր. Տիգրան Խլոռեանի յիշատակին նուիրուած որեւէ «ձեռնարկ»: Այդ կոչին հրատարակութենէն ետք քառորդ դար մը եւ ոչ մէկը չարժեցաւ իր տեղէն: Գուցէ անոր համար, որ Պէյրութէն եւ Հայկազեան Գոլէճէն մեկնեցաւ «Յանձնաժողով»ին նախագահը՝ Տոքթ. Ժիլպեր Պիլեզիկեանը, եւ իրեն հետ ալ տարաւ ամէն ինչ, ծրագրելի ամէն բան, եւ կազմակերպելի ամէն ձեռնարկ, բացի մէկ բանէ — Հայկազեան Գոլէճի հայագիտական մատենադարանի անունէն, որ հիմա կոչուեցաւ Վեր. Տիգրան Ճ. Խլոռեանի անունով, որուն որպէս գրաւական ու փաստ՝ յուշատախտակ մը դեռեզուեցաւ մատենադարանի մուտքին եւ հանգուցեալին մեծադիր նկարը՝ մուտքէն ներս:

4.

Այժմ սեղանիս վրայ կը գտնուին Միացեալ Նահանգներէն ստացուած լուսապատճէնները հայերէն եւ անգլերէն թուղթերու տրցակի մը: Անոնց հետ է նաեւ լուսապատճէնը Պաուելիին ծննդեան հարիւրամեակի նշումի յայտագիրին: Խճողուած, արդարեւ չատ խը-

ճողուած յայտագիր մըն է անիկա, որ իր խօսքի եւ արտայայտութեան, երգի ու նուագի, եւ ամէնքի ու յուշապատումի առատութեամբ տեսակ մը բողոք է բոլոր «յատուկ յանձնաժողովներուն եւ անոնց նախագահներուն եւ ատենապետներուն լռութեան եւ անչարժութեան դէմ նետուած: Այս թուղթերէն խօսող սիրելի բոլոր դէմքերն ալ սակայն կը կատարեն աւուր պատշաճի քանի մը խօսք եւ երկկն ու անոր պատկանող մարդերն ու գործերը կը դիտեն հեռուէն: Ճիշդ է, որ յաճախ սիրտի խօսքեր են անոնցը, տաք եւ զգայուն, երբ ոմանցը ընդհանրութիւններ են միայն: Այս թուղթերուն մէջ կը գտնուի խօսքը Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան վարիչ-տնօրէնին՝ Վեր. Մովսէս Գ. Ճանպազեանին: Ըստ 22 Նոյեմբեր 1991 թուակիր այս թուղթին՝ «Աստուծոյ հաւատարիմ ծառայ մըն էր Վեր. Տիգրան Խրլոբեանը, աւետարանական պերճախօս կրօնական մը, եւ իրաւ հայ հայրենասէր մը, որ նմանը չունեցող ծառայութիւններ մատոյց հայ հաւաքականութիւններուն՝ ընդհանրապէս, եւ Հայ Աւետարանական Եկեղեցիին՝ մասնաւորապէս: Շատ են իր աշխատանքներն ու իրագործումները նշուելու համար այսպիսի կարճ խօսքի մը ընթացքին: Աւետարանի ներշնչեալ քարոզիչ մըն էր անիկա, մեծ պատմաբան մը, բեղուն գրիչ մը, ներհուն խմբագիր մը, յարգուած բանասէր մը եւ մեծապէս գնահատուած դաստիարակ մը: Բոլոր այս գործունէութիւններուն անիկա մի՛չտ ալ ընդխառնեց իր կրքոտ սէրը հանդէպ հայ ժողովուրդին, եւ իր խոր յանձնառութիւնը հանդէպ քրիստոնէական սկզբունքներուն:

«...Վեր. Խրլոբեանի հիմնական գործերէն մէկն եղաւ, որպէս հայ աւետարանական առաջնորդ, հետապնդումը իր եկեղեցիին եւ համայնքին տրուած հայկականութեան նորոգուած բովանդակութեան: Եւ այս Աւետարանական Եկեղեցիին առջեւ անիկա տեւօրէն բարձր պահեց իր յանձնառութիւնը հայ մշակոյթին եւ հոգեկան ժառանգութեան հանդէպ, բան մը որ հաւատարիմ է Հայ Աւետարանական Շարժումի սկզբնապատճառներուն: Այս մէկը նպաստեց որ սիրալիր յարաբերութիւն եւ համագործակցութիւն յառաջանայ Միջին Արեւելքի Հայ Աւետարանական եւ Առաքելական Եկեղեցիներու եւ համայնքներու միջեւ:

«Վեր. Խրլոբեանի մնայուն այլ գործերէն եղան յառաջմղիչ իր ճիգերը Հայկազեան Գոլէճի հաստատումի մէջ՝ Պէյրութ, Լիբանան, եւ իր կեդրոնական դերը՝ որպէս հիմնադիրն անոր Հայագիտական Ուսմանց Կեդրոնին»[61]:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան անունով Դոկտ. Բերկրուհի Նաճարեանը որ շատ հին եւ սերտ զգացումներով էր կապուած Պատուելիին՝ կը գրէր իր 18 Նոյեմբեր 1991 թուակի-

րով, թէ «ահաւասիկ անուն մը, որ իր ուրոյն տեղը ունի Միջին Արեւելքի եւ մասնաւորապէս Սուրիոյ եւ Լիբանանի հայ գաղութներու պատմութեան մէջ՝ իբրեւ անբասիր հոգեւորական, կրթական մշակ, խմբագիր, բանասէր, բայց մանաւանդ ազգային լայն տեսլականի տէր գործիչ, որուն գործունէութեան դաշտը կը տարածուէր նաեւ հայկական չրջանակէն դուրս՝ իր գոնուած հաւաքականութեան ընդհանուր բարօրութեան սատարելու իր ճիգին մէջ:

«Մեծ եղած է անոր ներդրումը Հալէպի հայ գաղութի[ն] եւ ի մասնաւորի աւետարանական համայնքի[ն] կազմակերպման մէջ: Եւ ինչ որ ամենէն բնորոշիչ գիծը եղած է իրեն համար՝ աւետարանական վարդապետութեան ներգաչնակ ընդելուզումն է հայ ազգային նկարագրի[ն] հետ, պարագայ մը՝ որ դժբախտաբար ուրիշներու մօտ նկատուած է անհամատեղելի կամ առնուազն ստորադասելի:

«Եւ երջանկայիշատակ Վերապատուելին տարբեր չէր կրնար ըլլալ, որովհետեւ անոր սիրտը կը տրոփէր իր ժողովուրդին ճակատագրով: Ահա թէ ինչո՞ւ ան իր քաջարի մասնակցութիւնը կը բերէր Այնթապի ինքնապաշտպանութեան, Ալեքսանտրեթի եւ Քեսապի հայոց իրաւունքներու պաշտպանութեան, Բ. պատերազմի աւարտին ներգաղթի կազմակերպման, պարզապէս թուած ըլլալու համար մի քանին իր կատարածներէն:

«Բ. պատերազմէն ետք, Գէյրութի մէջ ծաւալած իր հայագիտական ու դաստիարակական գործունէութիւնը նոր որակ մը սահմանուած էր բերելու գաղութահայ կեանքին, ամրապնդելով հիմերը նորահաստատ Հայկազեան Գոլէճին, որուն հայագիտական գրադարանը արժանավայել ու արդար կերպով կը կրէ անունը Վերապատուելիին»[62]:

Ըստ Թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անճելըսի չրջանային վարչութեան ներկայացուցիչ Գէորգ Քէօչքերեանի՝ Պատուելին նմոյշն էր իրաւ հայկականութեան, մինչդեռ Միութեան կեդրոնական Վարչութեան առենապետ Տոքթ. Քեշիշեանին իսկ խօսքերով՝ «Վերապատուելիին կեանքն ու գործը անկասկած որ պատկառելի են եւ ներչնչող՝ նորահաս սերունդներուն համար: Մեծ եղեռնէն ճողոպրած գաղթական, խուճապահար հայ խլեակները Միջին Արեւելքի արաբական ասպնջական երկիրներուն մէջ պէտք էր պատսպարել, բալասաներ. հարկ էր կազմակերպել նորաստեղծ հայկական գաղութները. պէտք էր հասնիլ գաղթականներու ֆիզիքական, կրթական, կրօնական եւ մշակութային կարիքներուն:

«Պատմական այդ առաքելութեան գլուխն էր ահաւասիկ Վերապատուելի Տրլոքեան[ը]:

«Մենք կ'ողջունենք իր մէջ անսակարկ [եւ] հայրենասէր ա-

ռաջնորդը, լայնախոհ եւ լայնասիրտ կրօնականը, պարկեշտ եւ ճըշմարիտ մտաւորականը, վաստակաւոր հասարակական գործիչը, առաքինութիւններ արդարեւ՝ առանց որոնց գաղթաշխարհի հայութիւնը վազուց պիտի կորսուած ըլլար քիչ մը ամէն տեղ»[63]:

Միացեալ Նահանգներու Արեւմտեան Ափի Համազգային Մշակութային Ընկերակցութեան ներկայացուցիչ Ճորճ Աբելեանին համաձայն՝ «երբ Հայաստան կը հեծէր սովետական լուծին ներքեւ, հայկական սփիւռքը կը փորձէր բալասանել հայկական ցեղասպանութենէն ստացած իր վէրքերը, եւ հայութիւնը կը տապալէր տարբաղադրութեան ճիրաններուն մէջ ինկած՝ Վեր. Տիգրան Խրլոբեանը, քանի մը մտաւորականներու հետ, գործնապէս կը մասնակցէր կանգուն պահել կրօնական, մշակութային, կրթական, գրական ու քաղաքական աւանդութիւնները հայուն, եւ գործօն կերպով բաժին կը վերցնէր սփիւռքի համայնքները կազմակերպելու աշխատանքին մէջ: Ծիրաւի՝ անիկա ջահակիրներէն մէկն էր հայրենասիրութեան, լաւատեսութեան եւ ստեղծագործ կեանքի հանդէպ հաւատքի»:

Քալիֆորնիոյ շրջանի Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետ Գաբրիէլ Մոլոյեանն իր կարգին հաստատեց թէ Վեր. Տիգրան Խրլոբեանը ամբողջական կերպով նուիրուած մարդն էր իր ընտանիքին եւ ժողովուրդին, հայ դպրոցին ու եկեղեցիին, եւ հայկական ակադեմական ու կրօնական կեանքի զարգացման: Մոլոյեանը պատուելիէն ներս գտաւ տեսիլքի, մե՛ծ տեսիլքի մարդը[64]:

Միացեալ Նահանգներու Միջիկըն–Տիրպորնի Համալսարանի Հայկական Հետազօտութեան Կեդրոնի հիմնադիր, տնօրէն եւ այժմ նախագահ՝ Տենիս Փափազեանի համար Վեր. Տիգրան Խրլոբեանը անուանի հայ դաստիարակն էր, որ մանաւանդ հռչակուած էր «իր կանխատեսութեան եւ նուիրուածութեան համար՝ ինչպէս Հայկազեան Գոլէճի հայագիտական մասնաճիւղի հաստատումին՝ նոյնպէս նաեւ անոր հայագիտական մատենադարանին, որ այժմ կը կրէ Տիգրան Խրլոբեան մատենադարան անունը:

«Մեզմէ անոնք որոնք կը պարապին դաստիարակչական գործով՝ կ'անդրադառնան թէ որքա՛ն նուրբ ու թանկագին են ուսումն ու դաստիարակութիւնն ընդհանրապէս, եւ որքա՛ն նուրբ ու թանկագին են հայկական ուսումները մասնաւորապէս: Հետեւաբար՝ ծայր աստիճան կարեւոր է ճանչնալ ու գնահատել մեր նախորդները՝ երբ մենք կը շարունակենք կատարել [դաստիարակի] մեր սրբազան պարտականութիւնը:

«Անոնք գործնք կը պատուենք՝ կ'արտայայտեն մե՛ր արժանիքներն ու նախընտրութիւնները: Պատուել Տիգրան Խրլոբեանը, ուրեմն, ամբողջական կերպով պատուել է երկար շարքը մեր մշակոյ-

թին հայ գիտնականներուն, ստեղծագործողներուն եւ պահապաններուն՝ սկսելով Մեսրոպ Մաշտոցէն հասնելու համար մեր ներկային։

«...Տիգրան Խրլոբեանը ազնիւ ու կարեւոր մարդ մըն [է] հայագիտական ուսումներու անդաստանէն ներս, մէկը՝ որ իր կեանքը զոհաբերեց հայ ժողովուրդի դաստիարակութեան»[65]։

Մանուկ Եանկի համար որ առենապետն է Հայկական Ուսումներու եւ Հետազօտութեան Ազգային Ընկերակցութեան վարիչ մարմինին՝ Վեր. Տիգրան Խրլոբեանի կատարած հայագիտական աշխատանքը կը զօդուէր եւ անբաժանելի մէկ մասը կը կազմէր հայկական ուսումներու եւ հետազօտութիւններու համաշխարհային եւ մանաւանդ Միացեալ Նահանգներու մէջ առկայ չարժումին։ Ըստ անոր՝ «Վեր. Խրլոբեանի եզակի դերը Հայկազեան Գոլէճէն ներս հայկական ուսումներու յառաջմղումին մէջ պէտք է ընդունիլ որպէս մէկ մասը հայկական ուսումներու համաշխարհային չարժումին, որ արմատաւորուեցաւ ու ծաղկեցաւ այս երկրին[66] մէջ Հայկական Ուսումներու եւ Հետազօտութիւններու Ազգային Ընկերակցութեան ջանքերով։ Անոր նպաստը հայագիտութեան — գուցէ իր այլ գործերուն որեւէ մէկէն աւելի — պիտի նպաստէ սփիւռքի մէջ հայութեան անմահութեան...»[67]։

Փասատենայի մէջ կայացած հարիւրամեակի հանդիսութեան գլխաւոր բանախօսն էր Ամերիկայի Միջազգային Գոլէճի նախագահ Կարպիս Տէր Եղիայեանը, որ իր խօսքին մէջ վեր հանեց կեանքի իմաստասիրութիւնը Վեր. Տիգրան Խրլոբեանին՝ այնպէս ինչպէս որ անիկա կը դրսեւորուէր անոր գործին ու մտածումներուն մէջ եւ այն պատգամը որ անոր կեանքը կը հաղորդէր արդի հայ մարդուն։ Ըստ Տէր Եղիայեանին՝ Պատուելին ո՛չ միայն ջահակիրն էր ու գիտնականը որ կ'երաշխաւորէր տեւականացումը հայկական առկայ արժէքներուն՝ այլ նաեւ ստեղծագործ մարդն էր անիկա, կերտիչը նոր արժէքներու եւ զարգացնողը հայ աւանդութիւններու։ Բանախօսը պնդեց թէ Վեր. Խրլոբեանի կեանքին տեւողութիւնը չէր սահմանուեր անոր ապրած 78 տարիներով՝ այլ գումարովը այն տարիներուն զորոնք անիկա նուիրեց հայ եկեղեցիին, հայ դաստիարակութեան, հայ հանրային կեանքին եւ հայկական ուսումներուն։ Աւելին՝ յոբելինական սա հանդիսութիւնը կազմակերպուած էր ոչ թէ դրուատելու համար անհատ մը՝ այլ նաեւ օգնելու մեզ մեզի աւելի լաւ կեանքի մը համար մեր մղած պայքարին մէջ՝ օրինակ վերցնելով կեանքն ու միտքերը Պատուելիին։ Ըստ բանախօսին՝ կար ժառանգականութեան կապ մը ընդմէջ Պէյրութի Հայկազեան Գոլէճին որուն հիմնադրութեան մէջ մեծ դեր խաղաց Վեր. Տիգրան Խրլոբեանը, եւ Ամերիկահայ Միջազգային Գոլէճին։ Առաջինը հանդիսացաւ ներչնչումի մեծ ազբիւր մը

ԱՄԳ–ի դեկավարներուն, դասախօսական կազմին, պաշտօնէութեան եւ ուսանողութեան համար[68]:

Ի վերայ այսր ամենայնի՝ յոբելինական հանդիսութիւնը կազմակերպողներուն յղուած գիրով մը կարպիս Տէր Եղիայեանը կը յայտնէր տակաւին, թէ «մենք կ'ողջունենք իր մէջ նուիրեալ այն քրիստոնեան, որ զանազան երկիրներու մէջ ստանձնեց առաջնորդութիւնը բազմաթիւ եկեղեցիներու եւ անձնդիր աշխատեցաւ աշխարհի վրայ Աստուծոյ Թագաւորութեան յառաջացումին,

«...Ներշնչող [այն] դաստիարակը, որ իբր տնօրէն, ուսուցիչ եւ խորհրդատու՝ ծառայեց Միջին Արեւելքի զանազան վարժարաններուն մէջ [եւ] ուր պատրաստեց հայ դեկավարներ որպէս ապագայի առաջնորդ,

«...Փայլուն [այն] գիտնականը, որ որպէս մէկը Պէյրութի Հայկազեան Գոլէճի եւ այդ հաստատութեան մատենադարանի հիմնադիրներէն՝ կենսական դեր խաղաց հայկական ուսումներու համալսարանական մակարդակով հաստատումին մէջ,

«...Բազմատաղանդ [այն] խմբագիրն ու գրողը, որուն կարծիքներն ու հրատարակութիւնները հիմնական եւ կենսականօրէն կարեւոր հարցերու շուրջ՝ հետք ձգեցին ու ձեւաւորեցին միտքերը սփիւռքի բոլոր հայերուն,

«...Տեսլապաշտ [այն] հայրենասէրը, որ հաւատաց մեր հայրենիքի բախտին եւ հայ ժողովուրդի վերապրումին մէջ Հայաստանի կարեւորութեան: Նոյնիսկ երբ երկիրը կը տքար ճնշումի լուծին ներքեւ՝ անիկա թիկունք կանգնեցաւ եզակի այն դերին, զոր Հայաստան կրնար եւ պարտ էր որ խաղար տեւականացումին մէջ հարուստ մեր ժառանգին, անիկա հաւատաց իր հայրենիքի աւելի եւս պայծառ ապագային...,

«...Հայ ժողովուրդի մէջ միացնող [այն] ուժը, որ որպէս առաջնորդ մը Հայ Աւետարանական Եկեղեցիի՝ տուաւ երաշխիքն ու իր կեանքի ընթացքին օրինակ հանդիսացաւ միասնականութեան կարեւորութեան հայ կրօնական ու քաղաքական բոլոր խմբաւորումներու միջեւ,

3. D. B., Updike, *Printing types : their history, forms, and use*. A study in survivals. Vols. I-II. Cambridge, 1922; *see* «Type and type forms of the fifteenth century in Germany», pp. 58-59.

4. Proctor Robert, *An index of the early printed books in the British Museum from the invention of printing to the year 1500*, London, 1888.
Catalogue of books printed in the XVth century now in the British Museum, Part I, *Xylographica and books printed in types at Mainz, Strassburg, Hamburg and Cologne*, London, 1908.

5. W. H., Davis Hugh, *Catalogue of a collection of early German books in the library of C. Fairfax Murray*, London, 1913. *see* Vol. I, pp. 168-184.

6. Clair Colin, *A history of European printing*, Academic press, London, 1976.

7. Clair Colin, *A chronology of printing*, London, 1969.

8. Gevorg Abgaryan, *Hayoc' tpagir aybubenê 500 tarekan ê* [The printed Armenian alphabet is 500 years old], *Hayrenik'i Tzayn* 22nd January, 1986.

ՊԵՐՆԱՐԴ ՅՈՆ ՊՐԷՅՏԵՆՊԱԽԻ *ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ Ի ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐՆԸ* ԵՒ ԱՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՑԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

(Ամփոփում)

Դկ. ՎՐԷԺ ՆԵՐՍԷՍԵԱՆ

Հոս տրուող յօդուածը կը բաղկանայ երեք մասերէ, որոնց առաջինով կը տրուի Պերնարտ Յոն Պրէյտենպախի դէպի Երուսաղէմ ուխտագնացութեան պատմութիւնը: Պրէյտենպախն իր ուխտագնացութեան ձեռնարկեց 25 Ապրիլ 1483–ին երկու ուխտակիցներու ընկերակցութեամբ եւ տուն դարձաւ միայն 1484–ի Յունուարին: Հոս Մայնցի մէջ, որուն աւագերէցն էր անիկա՝ տոմինիկեան կրօնաւոր Մարթին Րոթի օգնութեամբ գրեց իր ճամբորդութեան պատմութիւնը: Հատորը լոյս տեսաւ 1486–ին, եւ յաջորդ երեքուկէս տասնամեակի ընթացքին անիկա ունեցաւ 12 տպագրութիւն, որոնցմէ երեքը՝ լատիներէն, երեքը՝ գերմաներէն, մէկը՝ փլամաներէն, չորսը՝ ֆրանսերէն եւ մէկն ալ՝ սպաներէն լեզուներով: Բոլորն ալ պատկերազարդուած են այցելուած վայրերու, անօրինակ եւ անծանօթ կենդանիներու, այլազան ժողովուրդներու զգեստի եւ զանազան լեզուներու այբուբենի գծանկարներով եւ տախտակներով: Այս բոլորին մէջ հետաքրքրական կը մնան հայերէն լեզուի այբուբենի տախտակն ու գործին այն հատուածը, որ կը խօսի հայուն եւ անոր կրօնական ու ընկերային առօրեային մասին: Վերջին այս վկայութիւնը, առաջին անգամն ըլլալով, կը տրուի անգլերէն թարգմանութեամբ, զոր հեղինակը կը կատարէ գերմաներէն եւ լատիներէն հրատարակութիւններու հետեւողութեամբ:

Յօդուածին երկրորդ մասը կը խօսի պաւարացի Յոհան Շիլթպերկերի գործին մասին, որ լոյս տեսաւ 1473–ին՝ *Յոհան Շիլթպերկերի Գերեվարութիւնը եւ ճամբորդութիւնները* վերնագիրով: Այս գիրքին թիւ 13, 62, 63, 64, 65 եւ 66 գլուխները կը խօսին հայութեան, անոր ժամանակակից պատմութեան եւ լեզուին մասին: Ցստակ է հայութեան հանդէպ տածած համակրանքը Շիլթպերկերի: Անիկա կը վկայէ թէ «ես մի՛շտ ալ ապրած եմ հայերուն հետ, որովհետեւ անոնք շատ սիրալիր են գերմաններուն հանդէպ. եւ որո՛վհետեւ գերման մըն էի ես՝ անոնք շատ ազնիւ կերպով վարուեցան ինծի հետ. աւելին՝ ինծի սորվեցուցին իրենց Հայր Մերը եւ լեզուն…»:

Յօդուածին երրորդ եւ վերջին մասով Ներսէսեանը կու տայ մէկ շարքը՝ 12 հնատիպ գիրքերու, որոնք կը բացակային հեղինակին Catalogue of Early Armenian Books, 1512-1850, (London, 1980) գործէն, եւ որոնք կը խօսին հայութեան, հայերէն լեզուի եւ տէրունական աղօթքի մասին, եւ կու տան այդ աղօթքը լատինատառ հայերէնով:

ՀԵՏԱՊՆԴԵԼՈՎ ԴԱՆԻԷԼԵԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐԸ

(շար. եւ վերջ)

ԱՆԴՐԱՆԻԿ ՎՐԴ. ԿԻԱՆԵԱՆ

ՄԵՍՐՈՊԻ ԴԵՐԸ ԳՐՈՑ ԳԻՒՏԻՆ ՄԷՋ

Հայ Գիրերուն Գիւտը իր մէջ կը ներփակէ երկու անջատ գիւտեր, անջատ՝ ժամանակով եւ տարողութեամբ: Առաջինը՝ Դանիէլեան նշանագրերուն երեւումն է Ասորի եպիսկոպոսի մը մօտ: Երկրորդը՝ հայ ձայնաւորներուն ստեղծումն է Մեսրոպի ձեռքով: Վերջին գիւտը եկաւ ամբողջացնել առաջինը:

Նախորդ էջերով, խօսեցանք առաջին գիւտին մասին: Այժմ վերլուծելու ենք երկրորդ գիւտին պարագաները. ո՛ւր, ինչպէս եւ ո՛ր ձեռքով կատարուիլը, հիմնուելով երեք մատենագիրներուն վկայութեան վրայ, ըստ մեր որդեգրած գործընթացին:

Սկսինք մէջբերել Մ. Խորենացիի վկայութիւնը Մեսրոպի դերին մասին:

ԽՈՐԵՆԱՑԻ

Մեսրոպ, երկու տարուայ փորձարկութենէ ետք, երբ չօշափեց Դանիէլեան նշանագրերուն անբաւարարութիւնը «հայկական տառերուն հնգենները ստոյգ հոլովելու» հարցով, կարծեց ատիկա դար-

մանել Նոյնինքն Դանիէլի միջոցով: Կը խորհէր, Թէ մի գուցէ Հաբէլ լրիւ չէր ըմբռնած Դանիէլին կողմէ տրուած բացատրութիւնները: Ուստի անձամբ գնաց անոր մօտ: Բայց երեւան եկաւ որ Դանիէլ իր ամբողջ իմացածը արդէն փոխանցած էր Հայերուն:

Այնուհետեւ, կը պատմէ Խորենացին, Մեսրոպ Դանիէլեան գիրերը դարմանելու նպատակով՝ ձեռնարկեց ուրիշ միջոցներու եւ դիմեց յոյն մասնագէտներու ճարտարութեան: Այդ օրերուն Եդեսիայի մէջ համբաւ չահած էր Պատտոն անունով յոյն գրիչ մը, «իշխան դիւանի»: Այս վերջինին հնարքները երբ ապարդիւն մնացին, Մեսրոպ (համակերպուած բայց ո՛չ յուսալքուած), թողուց Եդեսիան ու անցաւ Սամոս(ատ):

Հոն կը գտնուէր հռչակաւոր «հելլենական գրիչ» մը՝ յոյն Հռոփանոսը: Անիկա զանազան փորձեր ընելէ ետք՝ երբ չյաջողեցաւ գոհացնել Մեսրոպի պահանջքը, այն ատեն Մեսրոպ՝ «անչահ մնացեալ» մարդկային օժանդակութենէն, ազօթքի դիմեց: Ու իր «հոգիին աչքերով» տեսաւ Պատմութեան մէջ առաջին անգամ հայերէն գրող Ձեռքը: Այս Տեսիլքը «ոչ միայն երեւութացաւ այլ եւ հանգամանիւ ամենայն, որպէս յամաւ ինչ, ի միտս նորա հաւաքեցաւ: Եւ յարուցեալ յաղօթից, եւստեղծ զնշանագիրս մեր, հանդերձ Հռոփանոսիւ կերպագծեալ զգիրն Մեսրոպայ առնեն պատրաստ, փոխադրելով զհայերէն աբուբայսն ըստ անսայթաքութեան սիւղոբայից հելլենացւոց»:

Կորիւն եւ Խորենացի տարբեր տուեալներ ունին Մեսրոպի եղեսական հանգրուանին մասին: Ըստ Կորիւնի, Մեսրոպ Հայ Գիրերու Գիւտը կատարեց Եդեսիա, ապա Սամոսատ անցաւ Հռոփանոսը փընտռելու: Մինչդեռ ըստ Խորենացիին, Եդեսիա քաղաքը Մեսրոպի համար ամուլ հանգրուան մը եղաւ: Ամէն ինչ (տեսիլք, կերպաւորում նոր այբուբենին) տեղի ունեցաւ Սամոսատի մէջ: Խորենացին Կորիւնէն նուազ թեքնիք մանրամասնութիւններ ունի Մեսրոպի կատարած աշխատանքին մասին ու աւելի հրաշապատում բնոյթ տուած է իր պատմութիւնին: Միայն Խորենացիին մօտ կը գտնուի «Տեսիլք»ը որ զարձած է աստուածային Յայտնութիւն. «Ոչ ի քուն երազ եւ ոչ յարթնութեան տեսիլ»: «Պիտոյից Գիրք»ի դեղագիտական կանոններուն հիման վրայ, Խորենացի կարծէք յօրինած է «հերոսերգութիւն» մը իր Վարդապետին մասին, ուր «բարբարոսները» (յոյն Պղատոններն ու Հռոփանոսները) կը պարտուին ու յաղթանակի դափնեպսակը կը տրուի հայ ախոյեանին՝ Մեսրոպի:

Այժմ քննենք Խորենացիի պատմական բնագրին թեքնիք տուեալները ըմբռնելու համար Մեսրոպի տարած աշխատանքին իսկութիւնը, որ կարգ մը բանասէրներու մօտ՝ չփոթուած է յոյն Հռոփանոսին հետ:

Ստեղծ — «ստեղծանել» բայը անչուշտ յոչնչէ ստեղծումի իմաստասիրական արդի առումը չունի Խորենացիին մօտ: Կորիւն ըսած էր «ծնաւ», Խորենացի կ'ըսէ «ստեղծեց», այսինքն հեղինակեց: Բայց ի՞նչ կերպի ստեղծումով· «կերպաձեւելով» ու «փոխադրելով»:

Կերպաձեւեալ — Բայը կազմուած է կերպ ու ձեւ բառերէն: Երկուքն ալ կը թելադրեն գիրերուն վրայ կատարուած արտաքին տարազում, գրչագրական զգեստաւորում, ինչպէս կ'ակնկալուէր «գրիչ»է մը:

«Կերպաձեւողը» պէտք է Հռոփանոսն ըլլար, քանի որ ան էր «գրիչ»ը: Սակայն Խորենացին նախապատուութիւնը տուած է Մեսրոպին: Արդարեւ, քերականօրէն, «կերպաձեւողը» չի կրնար Հռոփանոսը ըլլալ: Գրաբարի մէջ, դերբայաձեւ (կերպաձեւեալ) բային տէրբային կա՛մ ուղղական հոլով է, աւելի վայելչօրէն սեռական, մերթ ալ տրական, բայց երբե՛ք գործիական հոլով: Արդ «Հռոփանոսիւ» գործիական է, ուստի քերականօրէն չի վերաբերիր «կերպաձեւեալ» բային: Նման պարագային, Գրաբարը պիտի նախընտրէր ըսել «Հանդերձ Հռոփանոսիւ կերպաձեւելով զգիրն»: Մրթին ոճ մը ասիկա, զոր այլ տեղ գործածուած կը գտնենք, մանաւանդ Հելլենական Դպրոցին մօտ: Խորենացիէն մեզի հասած բնագիրը իր դասական սեռականով հասած է· «կերպաձեւեալ Մեսրոպայ», որ կը նշանակէ «Մեսրոպ կերպաձեւեց գիրերը», բայց «Հռոփանոսի հետ միատեղ»:

Ուրիշներ նոյն նախադասութիւնը տարբեր կերպով կը կազմեն· Հռոփանոսը մասնակից կը դարձնեն նաեւ «ստեղծել» բային· «Մեսրոպ Հռոփանոսի հետ ստեղծեց եւ կերպաձեւեց հայ գիրերը»: Հռոփանոս, որպէս «կերպաձեւումի» մասնագէտ, որպէս «գրիչ», իր միա՛յն արհեստը կրնար կիրարկել Մեսրոպի կողմէ արդէն «ստեղծուած» հայ գիրերուն վրայ: Խորենացին անգամ, իր կարճ ու կուռ նախադասութեան մէջ՝ երկու անգամ զետեղած է Մեսրոպի անունը, կարծէք կանխելու համար նման չփոթութիւն մը:

Ամէն պարագային, «կերպարաձեւել» բայը միայն արտաքին ձեւաւորումի գործ կը թելադրէ: Բայց Մեսրոպ աւելին կատարեց·

Փոխադրելով — Փոխ-ա-դրել, փոխանակել, փոխառնութիւն կատարել, բան մը փոխարինել՝ զայն ուրիշին տալով կամ ուրիշէն առնելով, մեր պարագային՝ յունականէն: Այս փոխառութիւնը կատարուեցաւ «աթուբայ»ներուն հիման վրայ:

Աթուբայ — Ասորական բառ է, որ կը նշանակէ «կապ, յօդ»: Ան հակադրուելով յունական «սիւղոբայ» բառին՝ միանգամայն առընչուած է անոր հետ, որովհետեւ երկուքն ալ այբուբենական տարբերութիւններու արտայայտութիւնն են: Թէ՛ աթուբան թէ՛ սիւղոբան

առընչուած են բառեր հեգելու, վանկակապեր չարադրելու ներքին աշխատանքի մը հետ, որ խարսխուած է ձայնաւորի դերին վրայ:

Խորենացիի մօտ «յունական սիստեմ որդեգրելը»՝ արդեօք միմիայն ձայնաւո՞ր որդեգրել էր: Արդեօք նոյն առիթով Մեսրոպ նաեւ բազաձայններուն մէջ ալ յեղաշրջում մը չկատարե՞ց, գրելակերպի կամ այլ մարզերու առընչութեամբ: Ցոյն գրիչը արդեօք Դանիէլեան բազաձայնաւոր այբուբենին արտաքին ձեւաւորումի՞ն վրայ ալ աշխատանք տարաւ, անոնց սեպ կամ չեղ թեքում տուաւ, գուցէ նաեւ սեմական ձեւով նախապէս աջէն ձախ գրուող այդ այբուբենը՝ ձախէն աջ գրել տուաւ, մեր ներկայ գրելակերպին պէս:

Մեսրոպի ու Հռոփանոսի կատարած ամբողջական գործին մասին ամբողջական պատասխան մը ունենալու համար, հարկ էր տեղեակ ըլլալ կատարուած այս «փոխատուութեան» նախորդ եզերքուն մասին: Հարկ էր գիտնալ, թէ Դանիէլեան նշանագրերը, Մեսրոպի ու Հռոփանոսի միջամտութենէն առաջ, ի՞նչ դասաւորում ունէին:

Խորենացին ուրիշ ցուցմունք չունի այս մասին, բացի մեզի:

ՓԱՐՊԵՑԻ

Փարպեցիի բնագիրը՝ ձեռագրային հարազատումի կարիքն ունի: Վենետիկեան հրատարակութիւնը, Գիրերու Գիւտին մասին՝ պատմումի երկու տարբերակ կը կրէ, որոնցմէ մին՝ յար ու նման է Խորենացիին էջերուն հետ, իսկ երկրորդը՝ Փարպեցիինն է: Թիֆլիսի հրատարակութիւնը (1904) միայն այս վերջինն ունի: Սակայն նոյնիսկ Թիֆլիսի հրատարակութիւնը կրած է բնագրային խախտում:

Մեզի հասած ստուգաբանելի բնագրին մէջ, Փարպեցի ո՛չ Եդեսիան յիշատակած է, ո՛չ Սամոսատը, ո՛չ ալ տեսիլքը: Փարպեցիի համար Գիրերու Գիւտը Հայաստանի մէջ տեղի ունեցած է, զուտ ազգային արտադրութիւն է, որուն մէջ չկայ ո՛չ Պղատոն, ո՛չ Հռոփանոս, ո՛չ ալ կը խօսուի հայ նշանագրերուն արտաքին տարազաւորումին մասին: Հայոց միակ աշխատանքը կայացած է ընթերցումի անյայտութիւն ապահովել այդ նշանագրերուն: Ս. Սահակ, Մեսրոպ ու քահանայից խմբակ մը, որ «մերձեալ (էր) ի յունարէն հեգենայսն», Հայոց Այբուբենը մէջտեղ բերին ու յաջորդ գլուխին մէջ՝ արդէն իսկ ձեռնարկեցին Աստուածաշունչի թարգմանութեան:

Քննենք հայ խմբակին կատարած գործը:

Սահակ իր մասնակցութիւնը առաջարկած էր հետեւեալ խօսքերով. «Ուր տկարանայք ի կարգել զհեգենայսն, բերեալ առ իս ուղղեմ զայն»: Իսկ Մեսրոպ իր խմբակով «հանդիպեցուցանէր գհայերէն աթուրայսն ըստ կարգման սիլովբայից յունաց, ստէպ հարցմամբ

եւ ուսանելով ի Ս. Կաթողիկոսէն Իսահակայ զաբուբայիցն կաղափար, ըստ անսայթաքութեան յունին»:

Քննենք Փարպեցիին բայերուն արտայայտած գործողութիւնները:

Կարգել — *«Կարգադրութիւն գրենոյս, կարգել զգիր գրենոյն, կարգել զհեգենայսն, ըստ կարգման սիլովբայից յունաց» զանազան ասոյթներու մէջ կրկնուող նոյն «կարգ» բառին մէջէն՝ Փարպեցի կ'ուզէ արտայայտել Մեսրոպի խմբակին կատարած ներքին աշխատանքը:*

«Կարգ» բառը, որ Փարպեցիի մօտ՝ մտած է քանի մը համանուն բառերու կազմումին մէջ, չունի չարքի կամ յաջորդականութեան իմաստ, այս պարագային: Անոր տարողութիւնը աւելի վեր է յաջորդականութեան կամ չարքի գաղափարէն: «Կարգ» կը նշանակէ կանոն, օրէնք, սահման: Այդ իմաստով ըսուած է կարգ Ս. Պսակի, կարգ Ձեռնադրութեան, կարգ Գիշերային ժամերգութեան, եւն.: «Կարգադրութիւն գրենոյս» Փարպեցիի մօտ կը նշանակէ կանոնաւորում այն ինչին, որ գրենիի կը վերաբերի: «Գրենին» ձայնաւորներն ու բաղաձայնները վերծանելու կարգ-կանոնն է՝ հայ այբուբենէն ներս:

«Կարգել» նոյն բայը Խորենացին վերագրած էր Հաբէլին (կամ Դանիէլին). «Կարգեալ ըստ ձեւոյ օրինակի յունականին»: Կորիւն եւս նոյն բայը գործածելով՝ զայն վերագրած էր Մեսրոպին. «Կարգեալ յօրինէր սիւղոբայիւք կապօք»: «Կարգել» բայը որո՛ւ ալ վերագրենք, ան առընչուած կը մնայ նոյն հարցին հետ. յունական դրութեան, որ ըսել է ձայնաւորային դրութեան հետ:

Ուղղել — *Այս բառը միայն Փարպեցին ունի. «Ուղղել հեգենայից յօրինուածս, ուղղել զկարգ հեգենայից, ուղղաձայնութիւն հեգենայից»: Ի՞նչ է տարբերութիւնը «կարգել» եւ «ուղղել» բայերուն:*

«Ուղղել»ին բայարմատն է «ուղիղ», որ կը նշանակէ անչեղ, անսխալ. «ոչ լինէին բաւական ի վճարել անսխալ ուղղակի», կը բացատրէ Փարպեցին Մեսրոպի անյաջող փորձերը: Կը համապատասխանէ Կորիւնի ու Խորենացիի գործածած «անսայթաք» բառին: «Կարգել» բայով նախապէս հաստատուած կանոնը՝ «ուղղել» բայով՝ անսխալ, անվրէպ կը դառնայ, ուղիղ գծուած ճանապարհին պէս անսայթաք:

«Ուղղաձայնութիւն» բառը կը յայտնէ անսայթաքութեան մարզը. ձայնաւորները: «Ուղղաձայնութիւն» բառին տարողութիւնը հընչումներու ճշդութեան մասին է, ձայնաւոր ու բաղաձայն իրարու

չաղկապելու օրէնքին մասին է, չաղկապումի միջոցին ստեղծուող չփոթութեան եւ անստուգութեան մասին է:

Գիրերը ուղիղ հնչելու հարց չէ: Այլապէս Ս. Սահակ ի՞նչ առաւելութիւն պիտի ունենար բառերը Մեսրոպէն աւելի ճիշդ հնչելու մարզին մէջ, հոն ուր Ս. Սահակ կը գոչէր· «եթէ հեգենաները կարգելու զժուարութիւն ունենաք, ինծի բերէք որ ես ուղղեմ զանոնք»: Հարցը՝ ձայնաւորներուն մնայուն հնչունային արժէք տալու մասին էր: Օրինակով բացատրենք· ւ գիրը մերթ պիտի կարդացուի վ (արեւ), մերթ պիտի հնչուի իւն (արիւն)· ե գիրը «երես» բառին սկիզբը իէ պիտի հնչուի, իսկ բառին մէջ է: Այս գործողութիւնը կոչուած է «ուղղաձայնութիւն» կամ «ուղղել հեգենայից յօրինուածս»: Հարցը դարձեալ վանկային էր, որուն լուծումը դարձեալ յունական եղաւ, իսկ փոխառութեան միջոցը՝ «հանդիպեցուցանել»ը:

Հանդիպեցուցանել — Այս բայը հոմանիշ է Խորենացիի «փոխադրել» բային հետ: Երկու պատմագիրներուն մօտ նախադասութիւնը բառացիօրէն նոյնն է բացի իրենց բայերէն:

Հանդէպ — Դէմ առ դէմ, դէմ դէմի:

Հանդիպիմ — Դէմ առ դէմ գտնուիլ կամ դրուիլ:

Հանդիպեցուցանեմ — Դիտումնաւոր կերպով ու գիտակցաբար դէմ առ դէմ դնել կամ բերել, նպատակայարմար արդիւնքի մը սիրոյն: Փարպեցիի պարագային, այս հանդիպեցումը՝ հայերէնի «աթուաթայ»ներուն պատչաճեցումն է յունական «սիլովբա»ներուն հետ, որոնց առաւելութիւնը՝ ձայնաւորներն էին:

Զհայերէն աթուաթայս — Դանիէլեան գիրերը կը կոչուին «հայերէն աթուաթայ» եւ անգամ մը եւս կը հակադրուին յունականին հետ: Նկատեցիք արդէն, թէ Փարպեցին չըսաւ «հանդիպեցուցանէր զհայերէն աթուաթայս ընդ սիլովբայից յունաց»: Փարպեցին ըսաւ «ըստ կարգման սիլովբայից յունաց»· սիստեմ սիստեմի դէմ, անձայնաւոր դրութիւնը ձայնաւոր դրութեան դէմ:

Գաղափար կամ կաղապար — Մենք ըսինք սիստեմ, դրութիւն: Փարպեցին ըսաւ «գաղափար» կամ «կաղապար», որ կը նշանակէ օրինակ, նմոյշ: Աթուաթաներուն «կաղապար»ը կամ կառոյցը՝ խախուտ դրութիւն էր, մինչ յունական կաղապարը անսայթաք էր: Հայկական խմբակը, իր աշխատանքներուն աւարտին, այդ անսայթաքութիւնը մերը դարձուց ու անցաւ թարգմանական գործին:

ԿՈՐԻՒՆ

Կորիւնի մօտ Հայ Գիրերուն Գիւտը՝ աշխատանքային ու աշխարհագրական երկու տարբեր հանգրուաններ ունի: Առաջինը՝ Եդեսիա, երկրորդը՝ Սամոսատ:

Ա) Եդեսական Հանգրուան

Եդեսիոյ մէջ է, որ «ամենապարգեւ Աստուծոյ կողմէ Մեսրոպին վիճակուեցաւ ծնիլ հայ նշանագրերը»։ «Ու անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ եւ կարգեալ յօրինէր սիւդորայիւֆ եւ կաթոֆ»։

Այս նախադասութեան մէջ խտացուած է Մեսրոպի եդեսական աշխատանքը։ Սա, ըստ Կորիւնի, առանձին կատարուած հսկայ նուաճում մըն էր արդէն, այնքան որ Հռոփանոսի մօտ չանցած, Մեսրոպ արդէն «նշանակած, անուանած եւ կարգած յօրինած» էր հայ այբուբենը։ Այժմ մօտէն ծանօթանանք Մեսրոպի կատարած աշխատանքին, իր բառերուն մէջէն։

Նշանակեց — *Խօսքէն գիրի անցուց, հնչումներուն գրաւոր նշաններ սահմանեց։ Հայ լեզուին ձայները, վանկերը ականջի ճամբով զատորոշելէ ետք, անոնցմէ իւրաքանչիւրին արտաքին ձայնանշան կամ նշանագիր վերապահեց։ Մեսրոպի «վաղվաղակի» ուրուագծած այս նախարտակ գիրերը կամ սեւագրութիւնները հետագային ձեւաւորում պիտի առնէին Հռոփանոսի միջոցով, Սամոսատի մէջ։ Մինչայդ՝ անոնք ծառայեցին Մեսրոպի անձնական փնտռտուքներուն ու գործածութեան որպէս աշխատանքի խարիսխ։*

Մաչտոց այս աշխատանքը կատարեց այն տառերուն համար, որոնք գրաւոր նշան կամ գիր չունէին տակաւին։ Դանիէլեան նշանագրերը արդէն գիր ու նշան էին։ Որո՞նց համար ուրեմն նոր գիրեր յօրինեց։ Անոնց համար, որոնք չկային Դանիէլեան այբուբենին մէջ. ձայնաւորներուն։

Անուանեց — *Իւրաքանչիւր տառին՝ հնչիւնային անուն մը տուաւ, հնչիւն մը արտայայտող անուն։ Ձենք գիտեր թէ, օրինակի համար, Մեսրոպ հայերէնի «Ա» ձայնաւորը բնորոշելէ ետք, զայն Այփա՞, Այէ՞փ կամ Ա՞յբ անուանակոչեց։ Բայց անոնք ուղղագրական անուն մը ստացան։*

Կարգեց — *Այս գործողութիւնը, ինչպէս տեսանք Փարպեցիի ու Խորենացիի մօտ, կը վերաբերի հայ աթուրեաններուն եւ յոյն սիւդոքաներուն ամուսնութեան։ Արդարեւ, անձայնաւոր այբուբենային դրութեան մը մէջ՝ առաջին անգամ ձայնաւորներ ներմուծելը պէտք էր յեղաշրջէր նշանագրերուն նախապէս ունեցած դասաւորումը ու շաղկապումը։ Պէտք էր նոր կարգաւորում մը պահանջէր։*

Անգամ մը եւս չնչեենք, թէ «կարգել» հոս չի նշանակեր այբուբենային կարգ որոշել. ի՞նչ արժէք կամ անհրաժեշտութիւն պիտի ներկայացնէր ասիկա, գործին այդ հանգրուանին: «Կարգել»ը ա՛յս էր. բաղաձայն-ձայնաւորի փոխադարձ յարաբերութիւնը՝ կարգապահութեան ու կարգ-կանոնի ենթարկել եւ այս կարգ-կանոնին չնորհիւ՝ ուղիղ վանկաւորում ու անսայթաք ընթերցում ապահովել էր: Ու ձայնաւորի եւ բաղաձայնի այս գեղեցիկ ամուսնութեան չնորհիւ՝ գործը պիտի դառնար «յօրինում»:

Յօրինեց — *կը նշանակէ մարդկային կիրք միտքէն ծնած՝ տրամաբանուած եւ համաչափ ստեղծում մը կատարեց:*

Եւ այսպէս՝ Եդեսական հանգրուանը վերջ գտաւ, ըստ կորիւնի: Անոր չնորհիւ՝ հայ ձայնաւորները գտնուեցան ու բաղաձայններուն հետ ամուսնանալով ամբողջացուցին Հայ Այբուբենի «յօրինուածը»: Մեսրոպ այս աշխատանքը հարկադրաբար կատարեց իր յղացած ու թուղթի վրայ գրի առած նոր նշանագրերով, իր անձնական գործածութեան համար՝ առժամեայ նշանագրերով: Այժմ կը մնար այս նախարտակ այբուբենին տալ գիտական տարազաւորում: Ուստի դիմեց Սամոսատ, Հռոփանոսի:

Բ) Սամոսատեան Հանգրուան

Թէ Մեսրոպ ո՞ր մէկ գործին համար Հռոփանոսի դիմեց, թող խօսի կորիւն.

«Ի նմին բաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրացն — զկարճն եւ զերկայնն, զառանձինն եւ զկրկնաւորն — միանգամայն յօրինեալ եւ յանկուցեալ՝ ի թարգմանութիւն դառնայինն»:

Հռոփանոս, «Հելլենական դպրութեան» այս «գրիչ»ը, իր բարձրը արուեստին նպաստը բերաւ Հայոց այբուբենին ձեւաւորման մէջ: Գրչագիտութիւնը՝ ընդօրինակումի ու ծաղկումի արուեստ մը չէր սոսկ, այլ այդ շրջանին զարգացած իսկական գիտութիւն մը: Հռոփանոսի արուեստը ատակ էր իրեն անծանօթ որեւէ լեզուին կամ այբուբենին հնչումները բնորոշել ու անոնց յարմարող նոր տառեր ստեղծել: Կարող էր նաեւ առաջարկուած նշանագրերուն նմանութեամբ՝ նոր գիրեր կազապարել, ձեւաւորել կամ պատչաճեցնել:

Մեսրոպի յարմարցուցած նշանագրերուն (որոնք գուցէ ձեւականօրէն ներկայ չեն մեր այժմեան այբուբենին մէջ) պէտք էր այժմ գիտական տարազ մը տալ. տարազ մը, որ համապատասխանէր Դանիէլեան գիրերուն արտաքին ձեւին ու գծագրութեան: Եթէ անոնց

յունական համապատասխանը կար, անոնց նմանցնել: Եթէ չկար, նորը հնարել կամ յարմարցնել հրապարակի վրայ գտնուող բանուկ տառատեսակի մը հետ: Ահաւկա էր Հռոփանոսի արհեստը. գիտութիւն եւ ճաշակ միանգամայն:

Հռոփանոս աւելի խոր ու գիտական աշխատանք մըն ալ կատարեց Մեսրոպի հետ. յոյն գիտնականը բնորոշեց հայկական ձայնաւորներուն ու վանկակապերուն հնչունային գիտական արժէքը (կարճն ու երկարը, նուրբն ու կրկնաւորը). արտայայտութիւններ, որոնք միայն Կորիւնի մօտ յիշուած են եւ աւելիով կը մատնանշեն Մեսրոպի յօրինած նոր տառերուն ձայնաւորներ ըլլալու հանգամանքը, կոչուած նաեւ «ընտրութիւն նշանագաց»:

Մեսրոպ ու Հռոփանոս, ձեռք ձեռքի տուած, հայերէն լեզուին հնչունային բոլոր նրբութիւնները զանազանեցին, բնորոշեցին ու դասաւորեցին: Հայ Լեզուին բոլոր հնչիւնները կազապարուեցան եւ համապատասխան գիր ստացան: Հայ Լեզուն վերլուծուեցաւ գիտական տուեալներով: Նման աշխատանք մը Հայ Գիրերուն հանդէպ, ո՛չ ոք, ո՛չ իսկ Դանիէլ ասորին կատարած էր Հայոց Պատմութեան մէջ, Մեսրոպէն առաջ: Ահա թէ ինչու ան կոչուած է Մեսրոպեան Այբուբեն:

Այս աշխատանքը — կրկնաւորը, նուրբը եւն. որոշելը — անշուշտ միայն 7 ձայնաւորներուն չէր վերաբերեր, միայն ձայնաւորով՝ այբուբեն չի ստացուիր, այլ կ'ենթադրէր Դանիէլեան նշանագրերը ամբողջ:

ԴԱՆԻԷԼԵԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐՈՒՆ ԹԵՐՈՒԹԻՒՆԸ ՁԱՅՆԱՒՈՐՆԵՐՈՒ ՊԱԿԱՍՆ ԷՐ

Թէեւ այս հարցին անցողակի քանիցս անդրադարձանք, սակայն նիւթին կարեւորութեան պատճառով՝ հարկ է այժմ առանձինն խօսիլ այդ մասին:

Դանիէլեան նշանագրերը Միջագետքի մէջ յայտնուելուն պէս, Հայոց եկեղեցին ու Հայ Արքունիքը, ճեղքելով բաժանեալ Հայաստանին վրայ իշխող Ցունաց ու Պարսից քաղաքական հակադիր իրաւասութիւններուն ցանցը, փութացին այդ նշանագրերը Հայաստան բերել ու հայ դպրոցներէն ներս անոնց գործարկումին իսկոյն ձեռնարկել:

Այս պատմական անցուդարձերը, փորձի յատկացուած երկու տարիներուն յարաբերաբար երկար պայմանաժամը մեզ կը մղեն կատարելու երկու անդրադարձում.

– ա.) Դանիէլեան նշանագրերը յաջողելու չատ մեծ հաւանականութիւն մը ունէին: Եթէ յաջողութեան այդ յոյսը չըլլար, անոնք չքուած կ'ըլլային երկու տարուայ փորձի չրջանէն չատ աւելի առաջ, փոխանակ զուր տեղ ժամանակ վատնելու: Հաւանականութեան մեծ տոկոսին պատճառով՝ փորձի երկու տարիներ չատկացուեցան անոնց:

– բ.) Անոնց թաքուն թերութիւնը միանգամայն այնքա՛ն կենսական էր, որ ի հեճուկս կատարուած նախորդ «չարմարեցումներուն», հակառակ Մեսրոպի չամառ կամքին ու հանճարին, հակառակ հայ գիր ունենալու ստիպեցուցիչ հանգամանքներուն, Հայերը հարկադրուեցան կասեցնել անոնց դասաւանդումը հայ դպրոցներէն ներս: Դանիէլ ասորիին խնամքով պահած «հայկական նշանագրերուն» մէջ չատ կենսական այդ պակասը ո՞րն էր:

Մեր երեք պատմագիրներն ալ զանոնք կը բնորոշեն որպէս «անբաւարար»: Բայց ո՞ր մարզին մէջ կամ ի՞նչ բանի նկատմամբ «անբաւարար»: Մեր երեք մատենագիրներն ալ կ'ակնարկեն վանկ կապելու, ճչգրիտ հնչելու նոյն հարցերուն:

Կորիւն կ'ըսէ.— «Զեն բաւական ողջ ածել զսիւղոբայս եւ զկապս հայերէն լեզուի»: Խորենացին կը չարէ.— «Գիտացին ոչ լինել բաւական այսու նշանագրօք ստոյգ հոլովել զհեղենայ բառից հայկականաց հագներգաբար»: Իսկ Փարպեցին, իր խաթարուած բնագրով, բառացիօրէն Խորենացին կը կրկնէ:

– Ըստ Խորենացիի, Դանիէլեան նշանագրերուն անբաւարարութիւնը կը կայանար անոնց անզօրութեան մէջ «ստոյգ հոլովել հագներգաբար զհեղենայ բառից հայկականաց»: Այս թերութենէն չառաջ կու գար ընթերցումի «սայթաքում», զոր Մեսրոպ դարմանեց «փոխադրելով զհայերէն աթութայսն ըստ անսայթաքութեան սիւղորբայից հելլենացւոց»:

«Աթութեան» ասորական ծագում ունի ոչ միայն որպէս բառ եւ իմաստ, այլ նաեւ որպէս անձայնաւոր այբուբեն: Այս պատճառով՝ մեր պատմագիրները զայն հակադրած են յունական այբուբենին, ասոր ձայնաւոր սիստեմին եւ այդ ասորական բառով՝ ակնարկած են Դանիէլեան հայ գիրերուն, որոնք նմանապէս անձայնաւոր ըլլալու էին: Ցունական ու ասորական սիստեմները իրարու կը հակադրուէին ոչ միայն որպէս լեզու, այլ նաեւ որպէս ձայնաւոր–անձայնաւոր այբուբեններ: Ըստ Խորենացիի «փոխադրել» բայի նշանակութեան, Մեսրոպ հանեց Դանիէլեան գիրերը իրենց անձայնաւոր սիստեմէն եւ մտցուց յունական ձայնաւոր դրութեան մէջ: Ասիկա կարեւոր ու նոր կողմնորոշում մըն էր մեր Պատմութեան համար, որուն չնորհիւ՝

Դանիէլեան այբուբենը դարձաւ «Մեսրոպեան Այբուբեն», իւրացնելով յունական այբուբենին անսայթաքութիւնը, որուն կը ձգտէր Մաշտոց:

– Փարպեցի կը մէջբերէ Ս. Սահակի Մեսրոպին ուղղած այս յորդորը. «Ուր տկարանայք ի կարգել զհեթենայան, բերեալ առ իս ուղղեմ զայն»: Իսկ Մեսրոպ, գիրերու չնորհքը ի վերուստ ստանալէ ետք, «հանդիպեցուցանէր զհայերէն աթութեայն ըստ կարգման սիլովբայիցն յունաց», «ըստ անսայթաքութեան յունին», կը շարունակէ Փարպեցի: Մեսրոպ չորդեգրեց յունական «սիլովբա»ն, շլթեց հայկական պակասաւոր աթութեանները, այլ յունականը պատչաճեցուց հայկականին, արժեւորեց ու «արծարծեց» Դանիէլեան գիրերը:

Պատչաճեցնելով իւրացնելու մեր գարաւոր այս հոգեբանութիւնը հետագային եւս գործադրած ենք՝ եկեղեցական, ծիսական, ճարտարապետական, մշակոյթի եւ կեանքի այլ մարզերուն մէջ ալ:

Երեք մատենագիրներուն մօտ գտնուող «սիւղոբայ-կապ, աթութայ, սիլովբայ, հեգենայ, հազներգաբար, անսայթաքութիւն» զանազան բացատրութիւնները՝ Դանիէլեան նշանագրերուն նո՛յն թերութիւնը կը մատնանշեն, միանգամայն ցոյց տալով մեզի Մեսրոպի կատարած պրպտումներուն մարզը, որ ձայնահնչունային պակաս է:

Այս այլազան ասոյթներն ու բացատրութիւնները՝ ուղղակի կամ անուղղակի առընչուած են հնչունային եւ վանկակապային հարցերուն հետ, որոնց հիմնական բանալին՝ ձայնաւորն է, ինչպէս ծանօթ է լեզուագիտութեան մասնագէտներուն:

Բառ մը կը տառադարձուի իր վանկերով, վանկին կորիզն է ձայնաւորը: Ձայնաւոր ու վանկ՝ ուղիղ ընթերցումի անթացուպերն են, հիմքը՝ լեզուի անսայթաքութեան: Ընթերցումի լեզուական սայթաքումները առընչուած են ձայնաւոր-վանկային հանգոյցներուն եւ բաղաձայններու յարաբերութեան: Այսօր իսկ, այն այբուբենները որոնք ձայնաւոր չունին, ինչպէս սեմական լեզուները, սայթաքումի հակամէտ են: Եւ որովհետեւ Դանիէլեան նշանագրերը ունէին անձայնաւոր նշանագրերու դրութիւնը, այս պատճառով Մեսրոպի փորձերը սայթաքեցան «սիւղոբաներու եւ կապերու» մարզէն ներս:

Խորենացիի «Հայոց Պատմութեան» կարգ մը ձեռագրեր, Գիրերու Գիւտը նկարագրելու առեն, բացայայտօրէն 7 ձայնաւորները նշանակած են որպէս Մեսրոպի Գիւտին առարկան: Սոյն ձեռագրերը նկարագրելով Մեսրոպի Տեսիլքը կ'ըսեն, թէ թաթ մը երեւցաւ, որ «գրէր ի վերայ վիմին Ա-Ե-Է-Ը-Ի-Ո»: Մի միայն ձայնաւորները: Այս ձեռագրերը նոյնիսկ եթէ հարազատ չնկատուին, առ նուազն արտայատութիւնը կը մնան աւանդութեան մը որ այս ձեւով կը դրսե-

ուրէր մեր նախնեաց ըմբռնումը՝ Մեսրոպի կատարած իսկական դերին մասին։

Ա. Առարկութիւն

Կ՚ըսեն.— «Դանիէլեան անբաւարար նշանագրերը դուք նոյնացուցիք հայ մեհենագրերուն հետ։ Ասիկա եթէ ճիշդ է, ուրեմն կը նշանակէ, թէ հուրմերը կրցած էին գործածել այդ անբաւարար նշանագրերը, մինչ Մեսրոպ՝ ոչ։ Այս տարբերութենէն կը հաղեմ երկու եզրակացութիւն.

– Կա՛մ հայ մեհենագրերը չե՛ն նոյնանար Դանիէլեան նշանագրերուն հետ, կը տարբերին իրարմէ, հակառակ ձեր տեսութեան։

– Կա՛մ ալ հայ մեհենագրերուն լեզուն հայերէն չէր, հակառակ ձեր տեսութեան։

Երրո՛րդ ենթադրութիւն մըն ալ մեր կողմէն առէյցննենք եւ ըսենք.— Կա՛մ ալ հայ մեհենագրերը եւս Դանիէլեան նշանագրերուն թերութիւնը ունէին։

Արդարեւ Հայ Արքունիքը, հին ժամանակներէն ի վեր, անտեսած էր հայ մեհենագրերուն գործածութիւնը։ Ան նախընտրած էր գործածել օտար լեզուներ. յունարէնն ու պարսկերէնը (ոչ սակայն անձայնաւոր տառերէնը)։ Եթէ մեհենագրերը բաւարար ու անսայթաք ըլլային, ինչո՞ւ հայ արքա ները չգործածէին զանոնք։

Մեսրոպ եւս ինքզինքին հարց տուած պիտի ըլլայ, թէ ի՞նչպէս հայ քուրմերը յաջողած էին նոյն նշանագրերը իրմէ առաջ գործածել։ Քուրմերու կողմէ այս նախընթաց գործածումը՝ Մեսրոպը մղեց (ո՛չ միայն Մեսրոպը, այլ Սահակն ու Վռամշապուհը) կոյր վստահութեամբ զանոնք նախափորձի ենթարկելու, հակառակ ձայնաւորներուն չգոյութեան։ Կոյր վստահութիւն ըսինք, կրնայինք ըսել նաեւ անխոհեմութիւն՝ ամբողջ ազգ մը դնելով սխալ ակնկալութեան մը ճամբուն վրայ։ Բայց նախընթաց գործածութեան մը գոյութիւնը՝ արդարացումն է Մեսրոպի ինքնավստահութեան, միանգամայն փաստն է մեհենագրերուն նոյնութեան՝ Դանիէլի գիրերուն հետ։

Հայ քուրմերը բաւականացան այդ անձայնաւոր այբուբենով, որովհետեւ զայն ժառանգած էին վաղնջական ժամանակներէն, ուր աւելի կատարեալ նշանագրերու կարելիութիւնը չունէին։ Քուրմերը գործածեցին ինչ որ ունէին։ Դանիէլեան նշանագրերը ուրիշին կողմէ նախապէս գործածուած էին ու հետագային՝ լքուած («թաղուած») էին, գուցէ նոյն անբաւարարութեան պատճառով։ Երկար դարեր ըն-

տելացած էին այդ անբաւարար նշանագրերուն եւ յարմարած էին անոնց: Դարերու գործածութիւնը սրբագնացուցած ու կերպով մը անձեռնմխելի դարձուցած էր այդ գիրերը եւ այս պատճառով եւս՝ «հայկական» հռչակած էր զանոնք դարաշրջանի մը մէջ, ուր մինչայդ ուրիշներու մօտ նշանագրերը յեղաշրջում կրած էին գուցէ:

Մեսրոպ քուրմերուն այս կաչկանդուածութիւնը չունէր: Ան իր շրջանին համար՝ «20-րդ դարու մարդ» էր (ներկայ ասոյթով): Քուրմերը չէին կրնար ձերբազատուիլ իրենց վաղնջական այբուբենէն, բայց ո՛չ Մեսրոպ: Ան ականատես էր Հայաստանի հողին վրայ կանգնած յունարէն կամ լատիներէն անթերի արձանագրութիւններուն՝ հոյակապ կոթողներու վրայ: Այդ օտար նշանագրերուն բարի նախանձէն մղուած՝ ան կատարեալին պիտի ձգտէր: Կատարեալի մղձաւանջը գինք հասցուց 36 տառերով մեր ներկայ Այբուբենին:

Մեր Այբուբենին յարաբերաբար ուշ շրջանի մէջ ծնիլը՝ մեզի հսկայ առաւելութիւն մը պարգեւեց՝ կը կարծենք: Այժմեան արեւմտեան գլխաւոր այբուբենները, որոնք ծագումով մերինէն աւելի հին են, աւելի մօտ ալ են թերի այբուբեններուն: Ցունական ու Հռոմէական այբուբենները բաւարարեցին Յոյնն ու Հռոմէացին: Բայց զանոնք հետագային որդեգրող արեւմտեան երկիրները հարկադրուեցան նախկին 26 տառերուն կողքին՝ աւելցնել նոր կրկնաւորներ ու նոր հնչումներ:

Բ. Առարկութիւն

Կ'ըսեն.— Այբուբենի մը մէջ ձայնաւորներու չգոյութիւնը ակնբախ եւ աչառու թերութիւն մըն է: Եթէ Դանիէլեան նշանագրերուն թերութիւնը ձայնաւորի պակասն ըլլար, հարկ կա՞ր այդ խոշոր թերութեան մասին անդրադառնալու համար երկու տարի յատկացնել: Դանիէլեան նշանագրերուն թերութիւնը ձայնաւորները չէին: Մեսրոպ Դանիէլեան նշանագրերը ամբողջովին լրեց ու նորը հնարեց:

– Ցունարէն, պարսկերէն ու ասորերէն գրել ու կարդալ գիտցող Մեսրոպ մը՝ բնական է, թէ անմիջապէս նկատած պիտի ըլլար ձայնաւորներուն բացակայութիւնը: Հարէլ եւս նախապէս գինք «տեղեկացուցած» էր այդ նշանագրերուն էութեան մասին: Հակառակ այս բոլորին, Մեսրոպ դարձեալ փորձեց երկու տարի գիտակցաբար կիրարկել այդ անձայնաւոր նշանագրերը:

Փորձեց, որովհետեւ այդ նշանագրերը, թէեւ թերի, սակայն նախընթաց մը ունենալու առաւելութիւնն ունէին, ինչպէս ըսինք՝ նախորդ առարկութեան պատասխանելով: Փորձեց, որովհետեւ դրա-

ցի Աստրիներն ալ անձայնաւոր այբուբեն կը գործածէին եւ հակառակ այս իրողութեան՝ բազմարժէք գրականութիւն ու մշակոյթ կերտած էին, մեզմէ առաջ: Թարգմանած էին Աստուածաշունչը, տուած էին մեծանուն Հայրապետներ, զարգացուցած էին ծէս ու պաշտամունք, ոգոդած էին Հայաստանը իրենց անձայնաւոր նշանագրերով: Նոյնն է պարագան Արաբներուն ալ: Ինչո՞ւ նոյնը պիտի չգօրէր նաեւ Դանիէլեան անձայնաւոր նշանագրերուն պարագային: Այլուստ, Դանիէլ աստրի մը իր նշանագրերը արդէն «յարմարցուցած» էր հայերէն լեզուին, ըստ Խորենացիի վիճելի վարկածին: Մեսրոպ մը առաւել եւս կրնար յուսալ՝ զանոնք քիչ մը եւս յարմարեցնելով՝ գործածելի դարձնել, «արծարծել, ի կիր արկանել»:

Եւ ա՛յս է, որ Մեսրոպ իրագործեց ի վերջոյ:

ԴԱՆԻԷԼԵԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐԸ ՆԵՐԿԱՅԻՍ ԿԸ ԳՏՆՈՒԻՆ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻՆ ՄԷՋ

Երեք մատենագիրներուն էջերուն ընթերցումէն քաղած մեր առաջին եզրակացութիւնը՝ Դանիէլեան նշանագրերուն անբաւարարութիւնը եղաւ: Այս անբաւարարութիւնը բացատրեցինք ձայնաւորներուն չգոյութեամբ:

Երեք պատմագիրներուն վկայութիւններէն քաղած մեր երկրորդ եզրակացութիւնը պիտի ըսէ, թէ Մեսրոպի գործը ամբողջացումի գործ էր, կատարուած՝ Դանիէլեան նշանագրերուն վրայ: Ո՛չ Կորիւն, ո՛չ Փարպեցին, ո՛չ ալ Խորենացին յայտարարած են, թէ Դանիէլեան նշանագրերը լքուեցան կամ թափուեցան Մեսրոպի կողմէ: Հետեւաբար, Դանիէլեան նշանագրերը ներկայ են մեր այժմեան այբուբենին մէջ:

Ըստ Կորիւնի՝ Դանիէլեան նշանագրերը երկու տարի գործածելէ ետք, Հայերը անդրադարձան, թէ անոնք «չեն բաւական ողջ ածել զսիւղորայս զկապս հայերէն լեզուին»:

«Ողջ ածել», այսինքն լման գոհացնել: Դանիէլեան նշանագրերը չէին կրցած ամբողջական գոհացում տալ, հետեւաբար՝ մասամբ մը գոհացուցած էին հայ լեզուին պահանջները: Բան մը գոհացուցած էին, բան մը ոչ, եւ այս չգոհացնող տարրը՝ չէզոքացուցած էր մնացեալը, գուցէ ոչ այնքան իր քանակով՝ որքան իր որակով ու կարեւորութեամբ, օրինակ՝ ձայնաւորի սակաւաթիւ տառերուն չգոյութեամբ:

Ըստ Կորիւնին, հայերէն լեզուն ամբողջաձայն գրուելու համար՝ «սիւղոբայ եւ կապեր» կը պահանջէր, որոնք աւա՛ղ չկային Դանիէլին բերած նշանագրերուն մէջ, որոնք եթէ գոյութիւն ունենային՝ Դանիէլեան այբուբենը բաւարար պիտի դառնար հայերէնը ուղիղ ու ամբողջական գրելու: Դանիէլեան գիրերը ուրիշ թերութիւն չունէին: Պակասը ամբողջացնելու պարագային, մնացեալ գիրերը ընդունելի էին: Մեսրոպ անոնց թերութիւնը դարմանելուն պէս, Դանիէլեան այբուբենը բաւարար դարձաւ «ողջ» (լրիւ) արտայայտելու ինչ որ նախապէս անբաւարարօրէն կ'արտայայտէր անսայթաք գրառումի գծով:

Կը կարծենք, թէ անիմաստ է լքել տուն մը, երբ անոր գրան բանալին կորսնցուցած ենք: Ձունեցածին համար ունեցածն ալ լքելը՝ մեզի պիտի յիշեցնէր առակին ա՛յն համակրելի կենդանին, որ ստուերի մը համար՝ բերնին պատառն ալ բաց տուաւ:

Մեսրոպ ինչո՞ւ լքէր ամբողջական այբուբեն մը, երբ անոր պակսող տարրերը կարելի էր ամբողջացնել, մանաւանդ երկու տարիներու նախափորձերուն չնորհիւ՝ զանոնք արժեւորելու գաղտնիքը հասկնալէ ետք: Այսուհետեւ Մեսրոպ իր ժամանակն ու կեանքը յատկացուց այդ այբուբենին լուծում մը գտնելու համար, եւ ոչ թէ այբուբեն մը թափելու ու անոր դէմ ուրիշ այբուբեն մը հնարելու համար: Այս չոայլութիւնը չտեսանք մեր երեք մատենագիրներուն մօտ:

– Կորիւն կ'ըսէ, թէ Մեսրոպ «հայրական չափուն ծնեալ ծնունդըս, նորոգ եւ սքանչելի սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին»: Մեսրոպ Մաշտոց «հայրական որդեծնութեամբ՝ ծնաւ հայերէն լեզուին նշանագրերը իր նորոգ եւ սքանչելի սուրբ աջով»:

Նորոգ աջ — Մնաւ, վերապրեցուց հայերէն նշանագրերը՝ զանոնք նորոգելով եւ ոչ թէ նոր այբուբեն մը ստեղծելով: Նախադասութեան «նորոգ» ածականը այս միտքը կ'արտայայտէ: Սխալ է ոմանց մօտ «նորոգ»ի տեղ «նոր» գործածելը եւ զայն «նոր ծնունդներ» ասոյթով բացատրելը, որովհետեւ «նոր» ու «նորոգ» չունին նոյն իմաստը: Ապա քերականօրէն՝ «նորոգ՝ կը վերաբերի «աջ»ին, չի կրնար որակել «ծնունդս» գոյականը: Այս պատճառով, Կորիւնի բնագրին մէջ «նորոգ» ածականը դիրք գրաւած է «սուրբ եւ սքանչելի» եզակի ածականներուն չարքին, որոնք կը վերաբերին «աջ» գոյականին եւ ո՛չ թէ «ծնունդս»ին:

«Մնանիլ ծնունդս» դիմագուրկ բայ է, ուր կարելի չէ «ծնունդըս» բառը անջատել իր «ծնանիլ» բայէն, ինչպէս որ Գրաբարին մէջ չենք անջատեր «երգել երգս, պարել պարս, տեղ տեղալ» բայական ա-

սացուածքները: Ուստի Կորիւնի բնագիրը կարդացուելու է «նորոգ աչովն» եւ ոչ «նորոգ ծնունդս» կամ «նորոգ նշանագիրս» մեկնաբանութեամբ:

Այս այսպէս ըլլալով, քերականական այս քիչ մը տագտկալի բայց անհրաժեշտ ճչդումէն ետք, մենք պիտի պահպաննենք բնագրին հարազատութիւնը եւ զայն թարգմանենք հետեւեալ ձեւով. Մեսրոպ ծնաւ հայերէն լեզուին նշանագրերը՝ «իր նորոգիչ եւ սքանչելի սուրբ աչով»:

– Նորոգ ու նոր՝ նոյն իմաստը չունին, ինչպէս ըսինք: Նորը՝ հինին մերժումն է մինչ նորոգը՝ նախորդը կ'արժեւորէ: Ամէն նո՝ նորոգ չէ: Նորոգը կ'ենթադրէ հնութիւն մը, որ կը վերապրի վերանորոգուելով: Նորոգ՝ արմատն է նորոգելու: Նորոգելը կ'ենթադրէ նախկին գոյութեան մը շարունակումը՝ շղթայում մը նախկինին եւ գալիքին միջեւ, անցեալին եւ ներկային միջեւ: Այլապէս՝ նորոգում պիտի չկոչուի, այլ ստեղծում:

Մեսրոպի աչքը «նորոգ»իչ աչ կոչած է Կորիւն, թէեւ մեզի համար Մեսրոպի այդ նորոգիչ գործը, դէպքերու բերումով, իսկական ստեղծումի մը չափ կենսական եղաւ: Առանց Մեսրոպին կատարած այդ նորոգման, Դանիէլեան այբուբենը պիտի չարունակէր մնալ անգործածելի, մոռցուած՝ Պատմութեան կամ Դանիէլի գիւղին մէկ անկիւնը:

Գոյութիւն ունեցող կարելիութիւն մը որպէս մեկնակէտ գործածել, զայն պահպանելով «նորոգել»ը ու կատարելագործելը, ահա՛ ըստ Կորիւնի Մեսրոպի իրագործածը: Դանիէլեան նշանագրերը ո՛չ թափեց, ո՛չ ալ լքեց, այլ նորոգեց:

Ըստ ՓԱՐՊԵՑԻին, Աստուած ներչնչեց Մեսրոպը «կարգել զվաղնջուց գրեալ շարագիրս տարիցն, զորս ոչ ուրուք էր հոգացեալ արկանել ի կիր»: *Ոչ ոքի մտքէն անցած էր, «ոչ ոք հոգացած էր վաղնջական ժամանակներէն մնացած այդ գիրերը կիրարկել»:*

Փարպեցիի «արկանել ի կիր» բայը համապատասխան է Կորիւնի «արծարծել» բային: «Արկանել ի կիր» կը նշանակէ կիրարկել, գործածել, օգտագործել բան մը, որ կար նախապէս, եւ ո՛չ թէ թափել: Փարպեցի իսկապէս զարմացած է, որ ո՛չ ոք Մեսրոպէն առաջ հոգ ըրած էր օգտագործելու (ո՛չ թէ նոր ստեղծելու) Դանիէլեան նշանագրերը: Աստուա՛ծ է, որ այս միտքը «արթնցուց» Մեսրոպի մէջ: Աստուածային «չնորհքն» է, որ Մեսրոպի աչքերը բացաւ, ի՞նչ ընելու: Այդ վաղնջական գիրերը «կարգելով» օգտագործելո՞ւ, «արծարծելո՞ւ», վերակենդանացնելո՞ւ թէ ի վերջոյ... դուրս թափելու:

Փարպեցին, որ այս տողերը գրելու պահուն՝ իր փետուրը Մեսրոպի «կարգած» այբուբենին մէջ կը թաթխէր, գիտէր թէ ինք այդ վաղնջական գիրերը կը գործածէր: Հակառակ պարագային՝ հայհոյա՛նք պիտի ըլլար խօսիլ աստուածային միջամտութեան մը մասին ու նմանապէս անհեթեթ՝ փառաբանել Աստուած ու Մեսրոպը՝ յաղթանակի մը համար, որ տեղի չունեցաւ կամ գիրերու կիրարկումին համար, որոնք չկիրարկուեցան, մանաւանդ թէ... թափուեցան:

ԽՈՐԵՆԱՑԻՆ կը պատմէ, թէ Մեսրոպ Դանիէլեան գիրերուն ձախողանքին լուծում մը գտնելու համար՝ անձամբ Միջագետք գնաց Դանիէլ ասորիին մօտ: Մեսրոպ հաւանաբար ուրիշ ուղղութեամբ գացած ըլլար, եթէ նոր այբուբեն մը յօրինելու դիտաւորութիւնը ունեցած ըլլար: Մեսրոպ յամառօրէն կառչած մնաց այդ գիրերը կրկին գործածելու իր գաղափարին, հակառակ արձանագրած իր նախորդ ձախողութիւններուն: Ու Դանիէլեան նշանագրերուն հետքերն են, որոնք յունասէր Մեսրոպը մղեցին դէպի ասորական եղեսիան:

Մեր երեք մատենագիրներն ալ Գիւտին մասին իրենց վկայութիւնը դէպքերէն տարինե՛ր ու տարինե՛ր ետք չարադրեցին: Ուստի որպէս հետագայ պատմագիրներ՝ տեղեակ ըլլալու էին Դանիէլեան նշանագրերուն իսկական ճակատագրին մասին. արդեօք թափուեցա՞ն թէ պահպանուեցան: Արդ Դանիէլեան նշանագրերուն գիւտը՝ անոնց կողմէ նկարագրուած է որպէս Գիրք Մննդոց մը, խանդավառ ու չբնորհապարտ դրուատիքով: Փարպեցիի մօտ, Դանիէլեան նշանագրերուն Մեսրոպի ձեռքը հասնիլը պատկերացուած է որպէս բախտորոշ հանգրուան, ճակատագրական դէպք: Ինչո՞ւ այս յուզումնավառ վերյիշումը նշանագրերու հանդէպ, եթէ Մեսրոպ պիտի չօգտագործէր զանոնք, եթէ պէսպէս անյաջող փորձերէն ետք, պիտի լքուէին անոնք:

Մեր երեք պատմագիրներն ալ յարգա՛նք ունին Դանիէլ Ասորի եպիսկոպոսին հանդէպ, դարու մը մէջ՝ ուր յոյն-ասորի հակամարտութիւնը Հայաստանի բեմին վրայ հասած էր քաղաքական, կրօնական, մշակութային պայքարի ծայրայեղ աստիճանին, որուն զոհը եղած էին այս երեք մատենագիրներն ալ, իրենց ժամանակին: Փարպեցին, որ կ'երազէր օր մ'առաջ ձերբազատուիլ «ասորական տանջանքէն», Դանիէլը կը կոչէ «սքանչելի եպիսկոպոս», որուն կը ձայնակցին Կորիւնն ու Խորենացին: Ինչո՞ւ համար այս մեծարանքը. որովհետեւ Դանիէլի անունը կրող նշանագրերը պահպանուեցան մեր ներկայ այբուբենին մէջ:

ՎԵՐՋԱԲԱՆ

Դ. գարի կէսերուն «յանկարծ ուրեմն» յայտնուած Դանիէլեան նշանագրերուն դէպի անցեալն ու դէպի ներկան տանող հետքերը հետապնդելով, մենք եկանք յանգեցանք կարգ մը եզրակացութիւններու, զորս քաղեցինք Կորիւնի, Փարպեցիի եւ Խորենացիի բնագիրներուն ուսումնասիրութիւններէն։

«Վաղնջական ժամանակներէ»ն վերապրած ու «հայկական նշանագրեր» ճանչցուած Դանիէլեան գիրերը, առաջին հերթին, պատկանած են մեր հեթանոսական անցեալին եւ հայ քուրմերուն կողմէ գործածուած են մէհենագրութեանց մէջ։

Այս վաղնջական այբուբենը հայ քուրմերը իրենք չհնարեցին, այլ զանոնք ժառանգեցին «յայլոց դպրութեանց»։ Այս «միւսները», Դանիէլեան նշանագրերը գործածելէ ետք, չի գիտցուիր ի՛նչ պատճառով, զանոնք լքեցին, գուցէ ձայնաւորով ճոխացած աւելի կատարեալ այբուբեն մը գտնելնուն համար։ Դանիէլեան նշանագրերը, հետեւաբար, չեն հնարուած ո՛չ Դանիէլ ասորի եպիսկոպոսին եւ ո՛չ ալ անոր ժամանակակից անձի մը կողմէ։ Այդ կորած նշանագրերը գտնուած են Դանիէլ ասորիի ձեռքով եդեսական դիւաններէն, ուր անոնք հասած են հայ դեռատի քրմազարմերուն միջոցով, երբ անոնք Գրիգոր Լուսաւորչի կողմէ եղեսիա ղրկուեցան դաստիարակուելու քրիստոնէութեան մէջ, որպէս ապագայ պաշտօնեաները նոր կրօնին։

Այսպէս արկածախնդրական անցեալի մը պատկանած ու Գրիգոր Լուսաւորչի կողմէ անհետացումի դատապարտուած այս «հայկական նշանագրերը», ահա՛ Դ. գարի կէսերուն՝ կրկին անգամ մակերես կուգան Դանիէլեան նշանագրեր անունին տակ, ապրելու համար երկրորդ արկածախնդրական փորձառութիւն մը՝ այս անգամ քրիստոնեայ Հայաստանի մէջ։ Դոնէն վռնտուած՝ պատուհանէն վերադարձող այս նշանագրերը այս անգամ վերջնականապէս կը հաստատուին, շնորհիւ Ս. Մեսրոպի տարած յամառ աշխատանքներուն։

Դանիէլեան նաւաբեկեալ նշանագրերը կրկին անգամ նաւ առնելու համար, Մեսրոպ կեանքին մեծագոյն պատասխանատուութիւնը ստանձնեց։ Ան սիրեց այդ «հայ նշանագրերը», հաւատաց անոնց վերարժեւորուելու կարելիութեան ու փորձեց զանոնք «վերարծարծել» հայ դպրոցներէն ներս՝ այնպէս ինչպէս որ էին, հում վիճակի մէջ, առանց փոփոխութեան։ Բայց երբ Դանիէլեան նշանագրերը մունջ մնացին, Մեսրոպ վճռեց ամէն գնով անոնց «անբաւարարութիւնը» դարմանել, զանոնք օժտելով ձայնաւոր տառերով։

Բայց բանից դուրս եկաւ, որ Մեսրոպի միայն ամբողջացումի ծրագիրը դարձաւ հիմնական կողմնորոշում, ամբողջական վերատե-

սում, յեղաշրջում: Դանիէլեան նշանագրերը նոր արեւելում ստացան: Դուրս եկան ստորական անձայնաւոր այբուբենի մը «աթուէթայական» դրութենէն ու անցան յունական դրութեան: Հարկ եղաւ դիմել յոյն «գրիչ»ներու մասնագիտութեան: Անոնք գրաճեւեցին ու միատարազ գեղստաւորեցին հայ այբուբենը: Այս արտաքին գրչագրական աշխատանքին միացուցին նաեւ ներքին վանկակապային սահմանումներ, որոնք անհրաժեշտ ու հրամայական դարձան երբ անձայնաւոր դրութենէ մը ձայնաւոր դրութեան անցնիլ ուզեցին:

Այս զանազան աշխատանքներն ու կերպարանափոխումները նկարագրուած են երեք մատենագիրներուն մօտ, որոնց պատմումը ու բառապաշարը, հակառակ կարգ մը տարբերակներուն, մեզի փոխանցեցին նոյն իրականութիւնը, համաձայն գտնուեցան հիմնական տուեալներուն շուրջ, զորս քաղելով՝ մեր ընթերցողներուն ներկայացուցինք այս համառօտ էջերուն մէջ:

Դանիէլեան նշանագրերուն ոգիսականը սկսաւ հայ հեթանոսական շրջանէն՝ մեհենագրութենէն: Ապա քրիստոնեայ մկրտուելով՝ որդեգրուեցաւ հայ ազգին կողմէ: Ու այսօր կը գտնուի մեր Այբուբենին մէջ, շնորհիւ Սահակներու, Մեսրոպներու, անոնց աշակերտական հոյլին ու Հռոփանոսներու անքուն գիշերներուն, ջերմ աղօթքներուն ու միաձուլուած ջանքերուն:

Եթէ Մեսրոպ չըլլար, Դանիէլեան նշանագրերը պիտի մնային պարզ Դանիէլեա՛ն նշանագրեր, մինչեւ որ օր մը անհետանային Միջագետքի աւազներուն մէջ:

Մեզմէ իւրաքանչիւրին կը մնայ այսօր պատկերացնել, թէ Հայոց Պատմութիւնը ի՛նչ պիտի արձանագրէր Մեսրոպի անուան դիմաց, եթէ Դանիէլեան նշանագրերը չյայտնուէին:

Կամ ի՛նչ պիտի վիճակուէր մեր Մշակոյթին ու մեր գոյութեան՝ առանց Դանիէլեան նշանագրերու գիւտին եւ Մեսրոպի վերանորոգ ջիններ:

25 Օգոստոս 1992 Ա. Կ.

PURSUING THE ARMENIAN CHARACTERS : ALPHABET AND DISCOVERY (Summary)

Father ANTRANIG GRANIAN

This is the second installment of an article published earlier in the *Haigazian Armenological Review*, vol. XI, 1991, pp. 147-179, and brings the study to its logical culmination.

In this extensive study Father Granian successfully proves that the Danielian characters were exactly the same characters that the Armenian pagan priests of the antiquity used before the advent of Christianity. Christian authorities had prohibited the use of these letters in an attempt to reduce the influence of paganism in Armenia and had replaced them instead by the Hellenic alphabet.

All Daniel did was safeguard these fugitive letters until the day Mesrob Mashdotz recognized them as being the original letters in the ancient Armenian alphabet, the very existence of which had been forgotten.

But this alphabet lacked vowels and was no more capable of expressing the heavy load of intonations the Armenian people had absorbed from a millenia of cultural existence. Furthermore, the fact that it was put out of circulation definitely obstructed its healthy progress.

On the other hand, Mashdotz was more than aware of the disadvantages of not having a private alphabet. It was a time, when the Armenians confronted the danger of assimilation in both Byzantine and Assyrian cultures as a result of their cultural impact on Armenia, specially due to the use of their languages. An impact that would, in the long run, definitely endanger the very existence of the Armenian nation.

Under the circumstances, due to the incessant urgency of having an Armenian alphabet, Mashdotz had no other choice, but to revert back to the very roots of the Armenian language — the Danielian characters — and add vowels to this alphabet. This is what he eventually succeeded to bring about and thus recreated an Armenian alphabetical system of 36 letters that has remained unchanged from 451 A.D. on, and has not only infinitely helped to preserve the Armenian identity, but has also secured a distinct personality to it.

By delving in the comparative study of the three historico-linguistic authorities of the 5th century A.D. — Gorun, Moses Khorenatzi and Ghazar Parbetzi — Father Granian has successfully defended the premises he has set forward at the outset of his article, namely : 1) That the Danielian characters were actually the letters of the original Armenian alphabet of the pre-Christian era. 2) That, therefore, the modern Armenian is the direct offshoot and continuation of the ancient Armenian and that, hence, the Armenian alphabet is not transplanted from elsewhere as was suspected.

Father Granian's motivation behind undertaking such a vast investigation seems to be his deep belief in the notion that a distinct language is a cultural preservative, and that a people's willingness to keep its language intact from foreign influences is the guarantee for its continued existence as a distinct entity.

ՏԻՎԻԹ ԿՈՉՈՒԱԾ ԹԱՓԾՈՒ ԳՐՉԱԿԱԼ ԿԱՂԱՄԱՐՆԵՐ ՀԱՅԵՐԷՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

ՊԵՐՃ Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Ա.

[*Տաղ գրչակալ կաղամարի՝ տիվիթի մասին*[1]]

Դիվիթ[2], *դու ի՞նչ ես մրոտել,*
Մակեար[3] *քու տէրն ես կարօտել,*
Լուս չունիմ, չիմ կարել գրել,
Հեռացիր ինծանից, դիվիթ։

Քեզի հետըս կը կրէի,
Թուրքճայ թէ հայճայ[4] *գրէի,*
Ղալամըս քորանար[5]*, սրէի,*
Հեռացիր ինծանից, դիվիթ։

Վացուն տարի քովս կեցար,
Պեվախիլ[6] *ինծմէ հեռացար,*
Դու ինծի ի՞նչպէս մոռացար,
Եատ էդար[7] *ինծանից, դիվիթ։*

Քու անունդ ալ էր կաղամպար[8]*,*
Օգնիչ էիր ինծի համար,

Ինձի էիր չամչ ու զամար[9],
Եաա էղար ինձանից, դիվիր:

Ես քու ամակ[10] *չեմ մոռանար,*
Զուգեցի քեզմէ հեռանալ,
Միտք չէի էնել[11] *կուրանալ,*
Եաա էղար ինձանից, դիվիր:

Օսքանն էր անուանի նօտար,
Հեռացար ու եղար օտար,
Աստուած աչուըներուս լուս տար,
Գործածէ քիզի, դիվիր:


Սեղանին մէջ չեմ տենուլ հաց,
Աչխարհն ինձի խաւար մնաց,
Աչուրնուս լուան որ գնաց,
Բարով մնաս, սիրուն դիվիր:

Դիվիթա որ թայնայ մտաւ[12],
Անճոռնին ալ մէյտան գտաւ[13],
Ինձի պիտի ճերմակ կտաւ[14],
Բարով մնաս, սիրուն դիվիր:

Տաղիս հեղինակն է Ոսկան Քէհեայ Խանդաձորձին, որ եղած է երկարակեաց: Հաւանաբար ծնած է 1780-ին: Իր հայ-կաթողիկէ հաւատամքին համար 1827-ին կ'աքսորուի ծննդավայրէն: Թուրքերը կը ձերբակալեն եւ կը կալանաւորեն զայն 1839-ին: Տեսողութիւնը կը տկարանայ իր կեանքի վերջին տարիներուն, որմէ քիչ ետք կը զրկուի բոլորովին: Վերոյիշեալ տաղը զոր այլ տաղերու հետ Մատթէոս Վրդ. Հաճեան հրատարակած է Թիֆլիս՝ 1904-ին՝ կարապի երգն է Ոսկան Քէհեային:

Տիվիթի մասին ձեռքի տակ ունինք գովաստանական այլ ձօն մը եւս, որ փորագրուած է գրչակալի մը նեղ նիստերէն մէկուն վրայ: Խառն բարբառային են շարահիւսութիւնն ու լեզուն: Ձօնը կը յիշատակէ կաղամարը նաչխող Ղալէմքեար[15] *Աւետիսին անունը:*

Ագնիւ կաղամար[16]
Հուսվածոյ նկար
Եւ վայելչաչար,
Ինծ պարգեւացար



Տիվիթ կաղամար պատրաստ գրելու

Մեր հաւաքածոյէն մաս մը



Սուրանուդ պառծար[17],
երեք հարիւր հազար
եւ քարսուն երքար,
Սորին գրչարար
Աւետիս Ղալէմքեար։

Եւգինէ Մուշեղեանի հաստատումով՝ տաղը փորագրուած է էջմիածինի թանգարանի թիւ 59/2361 եւ ոսկեջրուած կաղամարին վրայ։ Թուականն է 1796, իսկ կաղամարը ձուլող վարպետին անունն է ԳԷՈՐՔ[18]։

Բ.

Հայաստանի Պետական Թանգարանն այժմ ունի ոսկեջրած եւ միեւնոյն վարպետի գործ լոկ չորս տիվիթ-կաղամարներ, որոնց հնագոյնը կը կրէ 1794 տարեթիւը։ Կու տանք անոր նկարագրութիւնը։

Թիւ 55/2539, Նոր Նախիջեւան, Ռ Մ Գ [1794]· արձանագրութիւն՝ «Ի վայելումն Վարդ պարոնի որդի Պապիկին, Թ· Ռ Մ Գ–ին [1794]· կաղամարին վրայ փակագիր է գրուած վարպետին անունը եւ կը կազմէ ԳԷՈՐՔ[19]։

Սկզբնաղբիւրները այս կաղամարը կը յիշեն տիվիտ, տիվիթ կամ դիվիթ բառերով։ Խարբերդի հարաւակողմն ինկող Բարջանճ կամ Փերջենճ գիւղին նուիրուած իր հատորին մէջ[20] Մանուկ Մերոնը կը գրէ, թէ տիվիտը «արդյրէ հաստ թիթեղէ ձեռակերտուած՝ կամ ձուլածոյ էր, փորագրութեամբ զարդարուած։ Կոթի նման երկայն, տասը մատի չափ գրչակալ մը եւ թանաքակալ գլուխ մը իրարու փակցուած։ Գլուխն ու կոթը ունէին խփոցներ[21]՝ գրիչ, մելան գոց պահելու համար։ Գործածուած մելանը սեւ եւ թանձր էր· արաբական խէժ եւ կտուածքի ձէթի խս[22] իրար հետ՝ ջրով եփուած· որ գիւղը կը չինուէր։

«Թազա[23] գրուածքներ չորցնելու համար՝ ծծուն թուղթի տեղ կը ցանէին ճերմակ աւազի բարակ փոշի, որ դուրսէն կը գնուէր։

«Տաճիկներու[24] գրիչները խամիշէ[25] էին։ Խոճան[26] միայն կրնար խամիշները գրելու յարմար ձեւով տաշել»։

Փոլատեանն իր կարգին կը յայտնէ, թէ «աշակերտները տիվիթը գօտիներուն զարկած, գրքերու եւ տետրակներու կապոցն ալ ձեռքերուն՝ դպրատուն կ'երթային»[27]։

Ըստ տուեալներու՝ տիվիթն ամբողջական գրչակալն էր. եղէգէ գրիչը կը կոչուէր խալամ[28], զոր տաշելու համար խոճան կը գործածէր չախու[29] մը:

Այս արուեստեան թանաքամաններու մասին ես ալ ունիմ յուշեր: 1914–1915 թուականներուն դպրոցներուն մէջ տակաւին կը գործածուէր այսօրուան իմաստով այդ տեսիլ սեթը[30], զոր աշակերտները կը կրէին իրենց գօտիին կամ շարվալի[31] ուչխուրին[32] վրան անցուցած: Խողովակաձեւ կաղամարին ծայրերէն մէկը կը կրէր մելանի փոքրիկ արկղիկը, որ չէր ձգեր որ գօտիէն վար սահէր գրչակալ խողովակը: Մելանը որ ընդհանրապէս սեւ էր՝ կը գնէինք գրավաճառէն հինգ գնդիկը հինգ փարայի: Իւրաքանչիւր գնդիկ որ ունէր երեք սիսեռի մեծութիւն՝ բաւական էր թանաքակալ արկղիկին մէջ գտնուող ծծումբը յագեցնելու: Այս մէկ հատիկ գնդիկով աշակերտ մը կրնար ապահովել իր մելանի պաշարը՝ մէկ շաբաթ գրելու համար: Թանաքը կը պատրաստէինք մելանի կարծր հատիկը նախապէս քարով մը ճզմելով եւ մանրելով եւ ապա քիչ մը տաք ջուրի մէջ հալեցնելով:

Գրիչ–եղէգը կը գնէինք գրավաճառէն կամ ադդարէն[33], եւ ունէր մօտ կէս սմ. ոլորակ բարակութիւն եւ 40–50 սմ. երկարութիւն: Քիչ քէ չատ խելահաս պատանին կրնար իր գրիչները[34] պատրաստել նրբածայր կամ հաստ ծայրամասերով: Բնականաբար ծայրերը քիչ մը չեղակի կտրուելու էին, որպէսզի ունենային արաբերէն գրելու յարմարութիւն: Կարելի էր տարբեր կտրուածքով մը հայերէն ալ գրել այդ եղէգներով:


Այդ շրջանին մեծ հայրս որ կը գրէր եղէգով՝ ա տառը կը գրէր միացած եւ չեղագիր՝ երեք կէտերով: Եթէ քննէք հայերէն հին նամակ մը՝ պիտի տեսնէք որ անիկա գրուած չէ եւրոպական սրածայր գրչածայրով, այլ՝ եղէգով:

Եղէգնեայ գրիչները կը պատրաստուէին նախ որոշելով անոնց երկարութիւնը ըստ գրչակալի երկարութեան: Ապա խիստ սուր ժիլիով մը[35] չեղակի կը կտրուէր եղէգը անոր արմատին տակէն: Շեղակի կտրուած մասը կը կոկուէր դանակով՝ ստանալու համար պահանջուած ձեւը: Հուսկ ուրեմն անոր մէջէն կը հանուէր եղէգնային եւ բուսական մասը:

Որպէսզի գիրերն ըլլային հաստ կամ բարակ՝ եղէգին քթածայրը ուշադրութեամբ կը ճեղքէին՝ մերօրեայ եւրոպական գրիչներու ծայրամասերուն նման:

Եղէգին լաւագոյնն էր սրճագոյնը, որ հաւանաբար կը ներքածուէր Հնդկաստանէն:

Թանաքը առաւել կամ նուազ նօսրութեամբ պատրաստելէն ետք՝ գրչակալ երկար խողովակին մէջ կը ներմուծէինք փեռեկ-



Պարզ եւ ծաղկաւոր գիշամաններ



տուած ու գգգուած մեռաքսեայ քծուար մը, որուն վրայ կը թափէինք մելանը որ անմիջապէս կը ծծուէր անկէ: Աւ այդ՝ անկարելի էր որ մելանը թափէր կաղամարէն դուրս: Ահա թէ ինչո՞ւ մելանը երբեք չէր թափեր գրչակալներէն, երբ անոնք կախուած կը մնային մեր գօտիներէն: Գրելու համար կը բանայիր գրչակալը եւ անկէ դուրս հանելով նախընտրած եղէգնեայ գրիչդ՝ ծայրը կը թաթխէիր կաղամարի քծուարին, ուրկէ անիկա կը թրջուէր մելանով: Այժմ անիկա պատրաստ էր գրելու համար: Այս գործողութեան համար ժողովուրդը յօրիներ էր գողտրիկ հանելուկ մը, որ, եթէ չի զաւաճաներ յիշողութիւնս, ունէր հետեւեալ կառոյցը·

Ի՞ՆՉ Է ՍԱ

Արաբի տղուն
Գլուխը կտրեցին,
Սրտիկը հանեցին,
Գինի խմցուցին՝
Խօսիլ սկսաւ:

Պատասխան՝ *Եղէգնեայ գրիչ*

Այս թափծու գրչակալները զորոնք մեր գօտիներէն անցուցած դպրոց կ'երթայինք՝ երբեմն կը ծառայէին ռազմական գործողութեանց: Թազային մանկապատանեկան կռիւներու ընթացքին կը կրտրէինք իրարու ճամբաները եւ նոյնհետայն կը սկսէին բախումները· ահաւասիկ այս վերջիններուն առեն էր որ ի միջի այլոց կը գործածէինք մեր գօտիներէն կախուած գրչամանները: Քանի՛ քանի գլուխ են պատռած այդ գրչակալները եւ քանի՛ անգամ տուն եմ վերադարձեր գլուխս պատռտած եւ լսած մօրս անէծքները: Ընդհանրապէս յաղթականն կու գայինն այն խումբերը, որոնց գերազանց էր թիւը տիվիթներուն:

Պէտք է ըսել, որ թափծու այս գրչակալները կը գործածէին միմիայն դպրոցականները, եւ որոնց մեզի ծանօթ հնագոյնը կը կրէ 1794 թուականը: Մե՛նք եւս վերոյիշեալ վարպետէն ունինք գրչակալ մը, որ կը կրէ փակագրեալ ԳէՈՐԲ անունը: Ունինք նաեւ հնագիտական մեր հաւաքածոյին մէջ անթուակիր՝ այլ փակագրեալ կամ կրճատեալ անուններով փոքր թիւ մը կաղամարներու, որոնք կը կարծենք թէ կրնան պատկանիլ Գէորգ Վարպետի ժամանակաշրջանին:

Անթեպական թափծու գրչակալներու մեզի ծանօթ հնագոյնը կու գայ 1806 թուականէն, որմէ ետք բոլոր կաղամարները թափծու են այլեւս, եւ կարելի է զանոնք հեշտիւ զանազանել Իսթամպուլի


կոչուած եւ ոչ-թափօրու կաղամարներէն: Մեր ծանօթ բարեկամներուն եւ սուրիական ու լիբանանեան թանգարաններու ազգագրական հաւաքածոներուն մէջ գտնուող հայատառ կամ այլալեզու կնիքներուն ունեցած թուականները չեն անցնիր 1805–1806-էն անդին:

Ամերիկայէն զարեհ պոուկեանն իր մետաղեայ իրերու ցուցադրութեան ցանկատետրին մէջ կը հրատարակէ թափօրու կաղամար մը եւ կը յայտնէ թէ անիկա կը պատկանի գրիչ Անդրէաս Աբգարին եւ չինուած է 1666 թուականին՝ առանց սակայն տալու տիվիթը չինող վարպետին անունը: Բայց նման թափօրու կաղամարներ գոյութիւն չեն ունեցած 1636 թուականին: Աճառեանի մօտ ալ կը պակսի անունը նման գրիչի մը: Հայաստանի պետական թանգարանին պատկանող մէկէ աւելի կաղամարներ կը կրեն 1794–1796 թուականները: Ուրեմն որքան ատեն որ տիվիթը չինող վարպետի անուան ընկերակցող 1794 թուականը կանխող տարբեր թուականներու չենք հանդիպիր՝ հնագոյն թուական կրող կաղամարները մի՛չտ ալ պիտի մնան Երեւանի պետական թանգարանի հաւաքածոյին ունեցածները:

1984–ի Յունիսին Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութիւնը հարկադրաբար պատճառաբանեց իր հակառակութիւնը Հայկական Ցեղասպանութեան հետ առընչուող բանաձեւերուն Քանկրես ներկայացուելուն: Պետական Քարտուղարութիւնը երեք պատճառներով մերժեց ընդունիլ Թուրքերուն կողմէ հայերուն վրայ կատարուած ջարդը որպէս ցեղասպանութիւն: Այսպէս, առաջին՝ Պետական Քարտուղարութիւնը «ո՛չ մէկ արժէք կը տեսնէ 1915–ի դէպքերուն բնորոշման մէջ». երկրորդ՝ բանաձեւերը «ժխտական հետեւանքներ պիտի ունենան Մ[իացեալ] Նահանգներ–Թուրքիա յարաբերութիւններուն մէջ». եւ երրորդ՝ բանաձեւերու վաւերացումը պիտի դիտուի իբրեւ տեղատուութիւն ահաբեկչական արարքներու առջեւ, եւ ահաբեկիչ խումբեր «կրնան օգտագործել այսպիսի բանաձեւեր՝ ըսելով թէ իրենց պայքարն սկսած է արդիւնաւորուիլ»[34]:

Պետական փոխ քարտուղար Ռիչըրտ Պըրթին էր որ բերանացի կերպով տուաւ այս պատճառաբանութիւնները, որովհետեւ կառա-

վարութիւնը հրաժարեր էր գրաւոր բացատրութիւն մը տալէ Ներկայացուցչական Տան բանաձեւ թիւ 171–ի մասին: Բացատրութիւնը պահանջուեր էր ներկայացուցիչ Համիլթընէ, որ նախագահն էր Եւրոպայի եւ Միջին Արեւելքի Ցարաբերութեանց Ենթայանձնախումբին եւ յայտնօրէն համաձայն չէր Պետական Քարտուղարութեան տեսակէտներուն:

2 Օգոստոս 1984–ին ԱՄՆի Հայ Դատի Յանձնախումբը նամակներ յղեց Նախագահ Ռիկընին եւ պետական քարտուղար Ճորճ Շուլցին եւ ջրեց Պետական Քարտուղարութեան պատճառաբանութիւնները ընդդէմ ցեղասպանութեան յիշատակման բանաձեւերուն, եւ խստօրէն քննադատեց Պետական Քարտուղարութիւնը որ Պըրթի բերնով յայտներ էր թէ յիշատակի բանաձեւերուն վաւերացումը կրնար նաեւ թարգմանուիլ «զգայնութիւն եւ հետաքրքրութիւն Հայկական Հարցի նկատմամբ»: Յանձնախումբը քննադատեց Պետական Քարտուղարութիւնը «որ վախ ազդող միջոցներու կը դիմէ, որպէսզի հայ–ամերիկեան կազմակերպութիւններու քաղաքական գործունէութեանց վրայ սառեցնող ազդեցութիւն ունենայ»[35]:

1984–ի Ապրիլին Պետական Քարտուղարութիւնը փորձեց համոզել ներկայացուցիչ Քոէլհոն որ ետ քաշէր իր բանաձեւը: Բանաձեւի ձախողութենէն ետք Քոէլհօ փոխեց բանաձեւին թուականը 1984–էն 1985–ի, որպէսզի Ցիշատակումի Օրը զուգադիպէր Հայկական Ցեղասպանութեան 70–ամեակին, որմէ ետք անիկա կարողացաւ բանաձեւը քուէարկելու արտօնութիւն մը ձեռք բերել օրէնքի մը տակ որ չէր պահանջեր ներկայացուցիչներու ամբողջական միաձայնութիւնը: Միւս կողմէ՝ Հայկական Համագումարը կազմեց յանձնաժողով մը հայ մտաւորականներէ եւ մասնագէտներէ, որ աշխատէր ԱՄՆի Ցեղասպանութեան Ոգեկոչման Խորհուրդին հետ Հայկական Ցեղասպանութեան բաժին մը յատկացնելու ծրագրին վրայ եւ դիւրութիւններ ստեղծէր Ուաշինկթընի Ցեղասպանութեան Ոգեկոչման Թանգարանին մէջ ուսումնասիրութիւններ կատարողներուն: Յանձնաժողովին նախագահ նշանակուեցաւ Պերի Ջորթեանը, որ նախապէս Վիեթնամի մէջ գործած ամերիկեան բարձրաստիճան պաշտօնատար մըն էր:

Հայկական բանաձեւին դէմ կարծիք յայտնեց ամերիկեան մեծագոհիկ թերթ մը՝ Ուոլ Սթրիթ Ձըրնըլը 2 Հոկտեմբեր 1984–ին լոյսին տրուած «Ասալայի օրը» խորագրեալ իր առաջնորդող յօդուածով, ուր ի միջի այլոց կ'ըսէր անիկա, թէ «Արեւելեան Թուրքիոյ Նահոյի ռազմախարիսխները ճիշդ այն չրջանին մէջ զոր ԱՍԱԼԱ կ'ուզէ «ազատագրել»՝ անհրաժեշտ են արեւմտեան պաշտպանութեան համար ընդդէմ Միջին Արեւելքի մէջ սովետական յարձակումի մը:

«[ԱՄՆի Քանկրեսին] քննութեան ներկայացուած երկու օրինագիծեր նպատակ ունին Առաջին Աշխարհամարտի ընթացքին Արեւելեան Թուրքիոյ մէջ մեծաթիւ հայ մեռելներու յիշատակումը: Կասկած չկայ թէ հայկական ճնշումը պատմութեան ահռելի մէկ գլուխն էր եւ թերեւս թուրքերը իրենց յանցանքը ուրանալնուն մէջ քիչ մը շատ յամառած են: Սակայն անիկա միայն մէկ մասն էր ընդհանուր ողբերգութեան մը, որ չուրջ 15 միլիոն կեանքեր խլեց: Ձայն այժմ, 70 տարի ետք, Քանկրեսին առջեւ հանել՝ կրնայ վհատանձն արարք մը ըլլալ ամերիկահայերու հանդէպ, բայց ան հազիւ թէ յարմար նշան մըն է Միացեալ Նահանգներու թշնամիներուն»:

Ապա անդրադառնալով մինչ այդ բանաձեւերուն արձանագրած յաջողութեան ներկայացուցչական Տան եւ Սերակոյտի Արտաքին Յարաբերութեանց Յանձնախումբին մօտ՝ Ճըրնըլն այն միտքը կը յայտնէր թէ անոնք քաղաքական խորք ունին, եւ կ'աւելցնէր որ «Թուրքերը հասկնալիօրէն չուարած, մտահոգուած եւ տակնուվրայ եղած են: Սերակոյտի օրինագիծը յստակորոշ կերպով կ'ըսէ թէ «ո՛չ թէ ներկայ Թրքական Հանրապետութիւնը՝ այլ Օսմանեան կայսրութիւնն է պատասխանատուն հայերու սպանութեանց համար»: Հետեւաբար՝ Թուրքերը թերեւս չափազանց ուժգնութեամբ մը հակազդեցին սոյն վաւերացումի սպառնալիքին: Բայց ահաբեկչութենէն աւելի քան տասնամեակ մը ետք՝ անոնց պէտք է ներուի եթէ կասկածին որ այս որոշումները մաս կը կազմեն աւելի լայն քաղաքական ծրագրի մը Թուրքիան բաժնելու Արեւմուտքէն»[36]:

Իրաց այս վիճակին մէջ էր, որ 14 Նոյեմբեր 1984-ին յայտարարուեցաւ, թէ Միացեալ Նահանգներու պաշտպանութեան փոխ նախարար Ռիչըրտ Փըրլ կրկին կը գտնուէր Անգարա, ուր մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարած էր, թէ «Թուրքիոյ արեւելքը կը ներկայացնէ լայն ու դժուար պաշտպանելի շրջան մը: Շատ կարեւոր [քանակով] ուժեր կան Թրքական սահմանին միւս կողմը եւ լաւ չէ այսպիսի բաց հողամաս մը», եւ ապա աւելցուցած էր թէ Մուշի ու Պաթմանի օդային ռազմախարիսխները, որոնց համար ԱՄՆ 30 միլիոն եւ Թուրքիա 15 միլիոն տոլար էին յատկացուցեր՝ պիտի ստեղծէին ապահովութեան հաւասարակշռութիւն մը «աշխարհի այս շատ կարեւոր շրջանին մէջ, քանի [որ] սովետական սպառնալիքը ոչինչով պակաս էր»[37]:

Վերի պատկերացումի ծիրէն ներս սկսաւ դիտուիլ Հայկական Ցեղասպանութեան Յիշատակումի Օրուան մեղմացած բանաձեւը, զոր ամերիկահայ գաղութը եւ հայանպաստ դիրքորոշում ունեցող ներկայացուցիչներ կը հետապնդէին Մեծ Եղեռնի 70-ամեակի սեմին:

21 Փետրուար 1985–ին ԱՄՆի պաշտպանութեան նախարար Քեսփըր Ուայնպըրկըրը յայտարարեց Ներկայացուցչական Տան Արտաքին Գործերու Յանձնաժողովի նիստին թէ «նման բանաձեւեր անպատեհ հետեւութիւններ կրնան ունենալ եւ կը ծառայեն հայկական ահաբեկչութիւնը քաջալերելու։ ... Այս բանաձեւը դժուարութեանց դէմ յանդիման կրնայ դնել Միացեալ Նահանգները եւ ձգտումի պատճառ դառնալ մեր եւ կենսական դաշնակիցի մը միջեւ»[38]։

ԱՄՆի Նախագահ Ռիկըն եւս ճնշում բանեցուց։ Թրքական ձիւմհիւրիէք թերթի 24 Մարտ 1985–ի թիւին մէջ լոյս տեսաւ Նախագահ Ռիկընի մէկ հարցազրոյցը, ուր նախագահը յստակօրէն կը յայտնէր թէ պիտի ընդդիմանար Ամերիկեան Քանկրեսին կողմէ Հայկական ցեղասպանութեան ճիչատակումի Օրուան բանաձեւին, որ «թէ քուէարկուէր օրինաւոր մեծամասնութեամբ մը՝ պիտի ղրկուէր իրեն վաւերացման համար»[39]։ Ռիկընի այս յայտարարութենէն ետք էր որ Թուրքիոյ վարչապետ Թուրկութ Էօզալը այցելեց Ուաշինկթըն 1985–ի Ապրիլին։

Ռիկընի այս դիրքորոշումին ի տես՝ ընդվզում մը յառաջացաւ ամերիկահայոց մէջ եւ կարգ մը ներկայացուցիչներու մօտ։ Այդ վերջիններէն՝ Ռիչըրտ Լեհման յայտարարեց թէ ինքզինք նախատեսած կը զգար երբ ԱՄՆի նախագահը համաձայն կը գտնուէր ԱՄՆի ամբողջ տարածքին «Ազգային Հեմպըրկըրի Օր» մը հաստատելու եւ նշելու՝ սակայն կը մերժէր ճանչնալ Ապրիլ 24–ը՝ «Մարդուն Հանդէպ Մարդուն Անմարդկայնութեան Օր» հռչակելու առաջարկը[40]։

Իր կարգին Նիւ Եորք Թայմզ օրաթերթը «Հայաստանի ցաւերը» խորագրեալ եւ «հաւասարակշռեալ» խմբագրականի մը մէջ առարկեց Մեծ Եղեռնի առընչութեամբ Պետական Քարտուղարութեան մօտ «ենթադրեալ» բառի գործածութեան, ու եզրակացուց թէ «Հայաստանի ցաւերը արժանի են աւելիին»[41], մինչ Պոստըն Կլոպն իր խմբագրականներէն մէկով կ'եզրակացնէր, թէ «պետական նկատումներով Ուայնպըրկըրն ու Ռիկընը խեղաթիւրեցին ցեղասպանութեան զոհերը։ Ամերիկացի ժողովուրդը պարտի ներողութիւն խնդրել հայերէն՝ ամերիկացի պաշտօնատարներու անզգամութեան համար»[42]։

Ի վերջոյ՝ Մեծ Եղեռնի 70–ամեակի հայկական համագաղութային նշումներէն ետք՝ 3 Յունիս 1985–ին քուէարկութեան դրուեցաւ Ներկայացուցչական Տան անդամներէն Թոնի Փոլհոյի առաջարկած բանաձեւը, որ կը պահանջէր 24 Ապրիլ 1985–ը յայտարարել Ցիչատակումի Օր «1915–էն մինչեւ 1923 Թուրքիոյ կողմէ գործադրուած Ցեղասպանութեան»։ ԱՄՆի Ներկայացուցչական Տան մէջ բանաձեւն ստացաւ 233 ձայն ընդդէմ 180–ի։ Թէեւ քուէարկողներուն մեծամասնութիւնը քուէարկեց ի նպաստ հայանպաստ բանաձեւին՝

Նախագահ Ռիկընի, պաշտպանութեան եւ պետական քարտուղարութեան ճնշումներուն ներքեւ դէմ քուէարկողներուն թիւը հասաւ 180-ի, իսկ որդեգրուելու համար բանաձեւը պէտք ունէր ձայներու երկու-երրորդի մեծամասնութեան: Այսպէ՛ս ձախողեցաւ Թոնի Քոէլհոյի բանաձեւն ալ[43]:

Մ.Ա.Կի Մարդկային Իրաւանց «Խորհրդանշական Կանխարգիլման եւ Փոքրամասնութեանց Պաշտպանութեան» ենթայանձնախումբին 38-րդ տարեշրջանին ենթայանձնախումբի մասնաւոր զեկուցաբեր Պենճամին Ուիթեքըրի ցեղասպանութեան յատուկ տեղեկագրի քննարկման առեն Ամ.Նի պատուիրակ Ճան Քերի փորձեց մեղմացնել տարօրինակ տեղեկագրին հայկական հատուածին: 21 Օգոստոս 1985-ի նիստին որ տեղի ունեցաւ ժընեւի մէջ՝ անիկա յայտնեց, թէ «հայկական ջարդերը... յայնօրէն մեկնաբանուած են բազմաթիւ գործերու մէջ: Նուազագոյն կասկածը չկայ, որ մեծ թիւով մարդիկ մեռած են: Սակայն ցեղասպանութիւնը ջարդի մասնաւոր ձեւ մըն է տակաւին եւ հարցին թեթեւ կերպով պէտք չէ մօտենալ»[44]: Օգոստոս 30-ի նիստին Ճան Քերի առաջարկեց բարեփոխել հայոց վերաբերող պարբերութիւնը: Ան այդ՝ նիստին առենագրութիւնը կ'ըսէ թէ «զառնալով յատկապէս Հայոց ջարդի հարցին, այն տեսակէտը յայտնուեցաւ թէ ճշմարիտ ջարդեր իսկապէս ցեղասպանութիւն կը համարուին՝ ինչպէս վաւերաթուղթերով հաստատուած են 1919-ի Օսմանեան Զինուորական Առեանէն, ականատեսներու տեղեկագրէն եւ պաշտօնական արխիւներէն: Այս տեսակէտին առարկելով՝ զանազան մասնակիցներ վիճեցան թէ Հայոց ջարդի որակումը որպէս ցեղասպանութիւն անհրաժեշտ էր որ տեղեկագրին մէջ աւելի լաւ ապացուցուէր վաւերաթուղթերով, եւ ենթադրութիւնները թէ կարգ մը փաստաթուղթեր կեղծուած էին [եւ] որոնք ճանչցուած էին տեղեկագրին մէջ՝ պէտք էր որ վերլուծուէին»[45]:

Ի վերջոյ, սակայն, երբ Պենճամին Ուիթեքըրի տեղեկագիրը, որուն 24-րդ յօդուածը փոխարիներ էր 1973-ի տեղեկագրին 30-րդ յօդուածը եւ կը հաստատէր թէ «նացիներու արարքը, դժբախտաբար, 20-րդ դարու ցեղասպանութեան միակ պարագան չէ, այլ կրնանք յիշել նաեւ... հայերուն ջարդը Օսմանեան Թուրքիոյ կողմէ՝ 1915-1916-ին...»՝ դրուեցաւ քուէարկութեան՝ Ամ.Նը մաս կը կազմէր 14 Քեր քուէարկողներուն ընդդէմ մէկի եւ չորս ձեռնպահներու[46]:

Ի տես Հայկական Ցեղասպանութեան ճանաչումին Ամ.Նի, Արեւմտեան Եւրոպայի եւ Խորհրդային Միութեան մէջ տարուող յաջող ջանքերուն, կամ յայտարարութիւններուն եւ իրագործումներուն՝ խուճապահար Թուրք պետութիւնն ու քաղաքական կուսակցութիւնները նախագգուշացում եւ քննադատութիւն ուղղեցին վերոյիշեալ-

ներուն: Թուրքիոյ վարչապետ Թուրկութ Էօզալ յայտարարեց, որ եթէ Հայկական Ցեղասպանութեան Ճիչատակումի բանաձեւերը վաւերացուին ԱՄՆի Քանկրեսին կողմէ՝ այդ մէկը «կրնայ ժխտական հետեւանքներ ունենալ երկկողմանի յարաբերութեանց վրայ»[47], իսկ արտաքին գործոց նախարար Վահիտ Հալիֆօղլուն աւելցուց իր կողմէն՝ թէ «յուսանք որ [Ներկայացուցչական] Տունը չի կրկներ իր սխալը»[48], մինչ Թրքական քաղաքական կուսակցութիւնները միասնաբար նամակ մը յղեցին Ամերիկեան Ներկայացուցչական Տան նախագահ Թոմըս Օ'Նիլին՝ իրենց ընդվզումը յայտնելով «ենթադրեալ ցեղասպանութեան յիշատակումի բանաձեւին հանդէպ՝ չեչտելով թէ «Թուրքիոյ եւ Միացեալ Նահանգներու միջեւ գոյութիւն ունեցող բարեկամական յարաբերութիւնները կրնան խորապէս ազդուիլ» եթէ 24 Ապրիլը հռչակուի «Մարդուն Անմարդկայնութիւնը Մարդուն դէմ»ի զոհերուն նուիրուած օր: Նամակին պատճէնը յանձնուեցաւ Անգարայի մօտ ամերիկեան դեսպան Ռոպըրթ Շիրաուս-Հիւիին[49]:

Ամերիկահայութիւնը եւ անոր հետ գործակցող ներկայացուցիչները ջանք չխնայեցին հայկական բանաձեւերու յաջողութեան համար: 10 Նոյեմբեր 1985-ին Լոս Անճելըսի մէջ կայացած համահաւաքի մը առթիւ, որ կազմակերպուած էր ի նպաստ Սիմոն Վիզընթալ կեդրոնին եւ ուր ներկայ էին 2000-է աւելի անձեր՝ Քալիֆորնիոյ կառավարիչ Ճորճ Տէօքմեճեանը յիշեց Հայկական Ցեղասպանութիւնը եւ այդ առիթով կրկնեց Հիթլերի խօսքերը: Հոն յայտարարուեցաւ թէ Հանդուրժողութեան Թանգարան մը պիտի չինուէր Լոս Անճելըսի մէջ՝ 20 միլիոն տոլար ծախքով եւ ուր տեղ պիտի յատկացուէր Հայկական Ցեղասպանութեան պատկերացումին[50]:

Այսուհանդերձ՝ ճնշումն աւելցաւ բանաձեւ թիւ 192-ի դէմ: Իր 25 Նոյեմբեր 1985 թուակիր նամակով պետական քարտուղար Շուլց զգուշացուց Քանկրեսի ղեկավարները թէ Հայկական Ցեղասպանութեան ոգեկոչումը «կրնայ դժուարացնել ահաբեկչութեան դէմ մեր մղած պայքարը, ինչպէս նաեւ մեծապէս վնասել թուրք-ամերիկեան յարաբերութեանց»: Հազիւ շաբաթ մը եաք, 2 Դեկտեմբերին, Թուրքիոյ ԱՄՆի մօտ դեսպան Շիւքրիւ Էլէքմաղը չտապ հեռագիր մը ղրկեց Ներկայացուցչական Տան կանոնագրային Յանձնախումբին՝ որով դատապարտեց թիւ 192 բանաձեւը, քանի որ, ըստ իրեն, անիկա հիմնուած կը մնար «սխալ մեկնակէտի մը վրայ, երբ հայերը կը նկատէ 1915-ին գործուած ցեղասպանութեան զոհերը»: Սակայն, հակառակ բոլոր այս ճնշումներուն, իր 3 Դեկտեմբերի նիստին՝ կանոնագրային Յանձնախումբը 4-ի դէմ 8 քուէով նախ որոշեց օրակարգի վրայ դնել թիւ 192 բանաձեւը եւ ապա՝ երկու-երրորդի մեծամասնութիւնը

պայման չսեպել բանաձեւի որդեգրումին համար: Այսուհանդերձ ճնշումներն անվրդով չարունակուեցան[51]:

Դեկտեմբերի սկիզբն եղած Թրքական նախագահութեան ընտրութիւններէն ետք եւ պետական մակարդակի բարձրագոյն այլազան ճնշումներու հետեւանքով՝ քուէարկութեան չդրուեցաւ թիւ 192 բանաձեւը որպէս «ոչ-հրատապ եւ անտեղի» հարց եւ անոր քննարկումը յետաձգուեցաւ ցնոր տնօրինութիւն[52]:

Ներկայացուցչական Տան վիճաբանութիւնները զուգադիպեցան ա՛յն բանակցութիւններուն՝ որոնք յառաջ կը տարուէին Անգարայի մէջ՝ Միացեալ Նահանգներուն Թուրքիոյ տուած զինուորական օգնութեան վերանորոգման գծով՝ իբր փոխանակութիւն ամերիկեան ուժերուն հոն տրուած դիւրութիւններուն: Ի վերջոյ՝ այս բանակցութիւնները յանգեցան համաձայնութեան վերանորոգման, բայց հայկական բանաձեւերը չյաջողեցան: Արդարեւ՝ 13 ամիս տեւած բանակցութիւններէ ետք, 12 Դեկտեմբեր 1986-ին, երկու պետութիւնները համաձայնեցան հինգ տարուան տեւողութեամբ վերանորոգել 18 Դեկտեմբեր 1985-ին վերջ գտած երկկող համաձայնութիւնը: 1985-1986 ելեւմտական տարուան ընթացքին՝ ԱՄՆ Թուրքիոյ տուաւ 868» միլիոն տոլար՝ իբր նուէր կամ փոխատուութիւն, իսկ յաջորդ ելեւմտական տարուան համար Թուրքիոյ խոստացուեցաւ 590 միլիոն տոլարի զինուորական եւ տնտեսական օժանդակութիւն: Իսկ իր կողմէն, Թուրքիա արտօնեց որ իր հողերուն վրայ ԱՄՆ ունենար օդային կարեւոր ռազմախարիսխ մը, եւ լրտեսական ու հաղորդակցութեան կեդրոններ՝ Խորհրդային Միութեան սահմաններուն մօտ[53]:

1986-ին Թուրքիան զօրաւոր հակազդեցութիւն մը ցոյց տուաւ Հայկական Դատը այժմէականացնելու սփիւռքահայութեան ձիգերուն դէմ: Փետրուարին՝ Թրքական բանակն իր ամենայնին ռազմափորձերը կատարեց Խորհրդային Հայաստանի սահմաններուն մօտ: Թուրքիոյ նախագահ Քենան Էվրեն սպառնալից եւ յոխորտալից ճառ մը խօսեցաւ Սարիղամիշի մէջ, եւ ի միջի այլոց ըսաւ թէ «մեր բանակը այնքան լաւ պատրաստուած է, որ կրնայ անցնիլ Ալլահուէքպէր լեռն ալ, Ագրը[54] լեռն ալ»[55]: Զօր. Էվրեն այցելեց կարս եւ խորհրդային սահմանին վրայ գտնուող Տոգուբայեզիտ գիւղը: Յուլիսին վարչապետ Թուրգութ Էօզալ այցելեց Մոսկուա, եւ, ըստ Թրքական Ճիւմհիւրիէթ թերթին՝ Խորհրդային Միութեան դեկավարներուն ներկայացուց «Թուրքիոյ դառնութիւնը Հայաստանի կառավարութեան՝ հայերու ցեղասպանութեան պատճառներուն առընչութեամբ»: Թուրքիոյ դեսպանները, յատկապէս Ուաշինկթընի մօտ դեսպան Շիւքրիւ Էլէքթաղ՝ օգտագործելով Նաթոյի անդամակցութեամբ Թուրքիոյ ունեցած դաշնակիցի հանգամանքը՝ դիւանագիտական դիմումներ կատարեցին եւ

ճնշում բանեցուցին Ամերիկեան կառավարութեան, Քանկրեսին, Եւրոպական Խորհրդարանին եւ ՄԱԿին վրայ, ու կարգ մը յաջողութիւններ արձանագրեցին ԱՄՆի մէջ: 1986–ին Ամերիկեան Քանկրեսին մէջ նոր փորձ մը չկատարուեցաւ Ապրիլ 24–ի չուրջ նոր քուէարկութիւն մը կատարելու համար: Ընդհակառակը՝ Թրքական կառավարութիւնը Թուրքիա հրաւիրեց ներկայացուցիչներ, հանրային կարծիքին վրայ ազդեցութիւն ունեցող անձնաւորութիւններ, պատմաբաններ, համալսարաններու դասախօսներ, լրագրողներ, եւայլն: Անգարայի դրդումով՝ Թուրքիոյ հրեայ համայնքը Թուրքիա հրաւիրեց հրեայ–ամերիկացիներ, որոնց մէջ կը գտնուէին Հրէական Ամերիկեան Խորհրդաժողովի նախագահ Թէոտոր Մաննը: Այս բոլորէն ոմանք, իրենց տունդարձին, գարձան Թուրքիոյ համակիրները[56]:

1986–ի Ապրիլին Արմա Ֆորսրգ Հրոնըլ Իմբրրնեշրնրլ մէջ «Տարբեր տեսակէտ մը Միացեալ Նահանգներու Թուրքիոյ հետ ունեցած յարաբերութեան մասին» վերնագիրով յատկանշական յօդուած մը լոյս տեսաւ ամերիկեան Պոլզ Քորփորէյշըն Ֆէրֆէքս Ընկերութեան նախագահ Տը Վալոն Պոլզի ստորագրութեամբ: Պոլզ վախ կը յայտնէր որ եթէ Համաշխարհային պատերազմի մը ընթացքին ԱՄՆի Միացեալ Սպայակոյտի Պետերուն պահեստի ծրագիրը որ կ'ենթադրէր ԱՄՆի զօրքերն իջեցնել Ալեքսանտրեթի ծոցը եւ անկէ յառաջացնել Անատոլուի ընդմէջէն դէպի Խորհրդային Հայաստան եւ Խորհրդային Վրաստան, ապա Կովկաս եւ հուսկ Ուրալներու արեւմտեան կողմը ի զօրու էր՝ անիկա գուցէ «առիթ ընծայէ[ր] որ Թուրքիա տեսնէ[ր] իր աւանդական երազին իրականացման կարելիութիւնը, այսինքն՝ Թուրքիայէն մինչեւ Կեդրոնական Ասիոյ սովետական հանրապետութիւնները եւ Սինճիանկ[57] երկարող համաթրքական պետութիւն մը»: Պոլզ կը պնդէր թէ վերի ռազմագիտական ծրագիրը «միակ հիմն է Թուրքիոյ այլապէս ալ չափազանցուող կարեւորութեան», ու կ'աւելցնէր որ «այս երազին իրականացման հետամուտ ըլլալով՝ Թուրքիա կը պահանջէ[ր] որ զոհենք ռազմագիտականօրէն աւելի կարեւոր դաշնակից մը՝ Յունաստանը, եւ լքենք աւանդական այն արժէքները, որոնք հիմնական են բուն իսկ Ամերիկայի մեծութեանն ու անոր պատմական տարողութեան համար: [Ուաշինկթընի Թուրք դեսպան Շիւքրիւ] Էլէքթաղ կը պնդէ որ աչք գոցենք Կիպրոսի մէջ իր երկրին հետապնդած ընթացքին հանդէպ եւ այնպէս ձեւացնենք թէ Առաջին Համաշխարհային Պատերազմի առաջուան Թուրքիոյ մէջ երբեք ցեղասպանութիւն չէ գործադրուած հայերուն դէմ»: Ապա Պոլզ կ'եզրակացնէր թէ պատմականօրէն փաստարկուած իրողութիւն էր հայոց դէմ գործադրուած ցեղասպանութիւնը, իսկ «Թուրքիոյ դիրքը կենսական է իրեն՝ իրրեւ աչք, եւ վճռական է համաթուրանականութեան

համար, որովհետեւ Անատոլուի եւ կեդրոնական Ասիոյ Թրքական ռովեռական հանրապետութեանց միջեւ կը գտնուի Հայաստանի Խորհրդային Հանրապետութիւնը, որ պէտք է բնաջնջուի որպէսզի իրականան Թուրքիոյ յոյսերը: Թուրքիան Ամերիկան մեզասկից կը դարձնէ ոչ միայն անցեալին գործուած՝ այլ նաեւ ապագայ հաւանական ոճիրի մը»: Այս խորաթափանց յօդուածագիրը կ'եզրակացնէր թէ «զինակցութիւնն աւելի կարեւոր է Թուրքիոյ՝ քան թէ Միացեալ Նահանգներու համար: Հարկ է որ տեսնենք այս մէկը եւ թոյլ չտանք, որ յանկարծ կատարուած արարքի մը հետեւանքով անզօր վիճակի մը մատնուինք»[58]:

Երանի թէ այս յանդուգն, պատմական իրողութիւններու վրայ հիմնուած, եւ իրատես ու հեռատես միտքերը իւրացուէին երկրին իշխանութիւնն ունեցողներուն կողմէ: 1987-ին ԱՄՆի պետական քարտուղարութիւնը թէեւ եւ թիկունք կանգնեցաւ Թուրքիոյ՝ Հայկական Ցիշատակի Օրուան բանաձեւերը ձախողեցնելու գործին:

18 Յունիս 1887-ին Սթրազպուրկի մէջ գումարուած Եւրոպական Խորհրդարանին Հայկական Ցեղասպանութիւնը ճանչցող որոշումէն հետ լայն թափ առին այն աշխատանքները, որոնք կը միտէին յաջողցնել բանաձեւ թիւ 132-ը, որուն համաձայն 24 Ապրիլ 1988-ը պիտի նշանակէր «Հայկական Ցեղասպանութեան Ցիշատակութեան Համազգային Օր»: Գործի լծուեցան Ամերիկայի Հայկական Համագումարը եւ Հայ Դատի Յանձնախումբերը: 2 Յուլիս 1987-ին ճարտարարուեստականներու խումբի մը ԱՄՆի պետական քարտուղար Ճորճ Շուլցի հետ հանդիպումի մը ընթացքին Հ. Բ. Ը. Միութեան նախագահ Ալեք Մանուկեանն ունեցաւ կարճատեւ խօսակցութիւն մը այս վերջինին հետ եւ խնդրեց անկէ աւելի բարեացակամ վերաբերում ցոյց տալ հայանպաստ բանաձեւին հանդէպ: Այդ առիթով Ալեք Մանուկեան պետական քարտուղար Շուլցին անձնապէս յանձնեց 30 Յունիս 1987 թուակիր յուշագիր-նամակ մը: Պետական քարտուղարը պատասխանեց այդ գիրին 10 Յուլիսին, ուր ի միջի այլոց կ'ըսէր անիկա, թէ «պետական պաշտօնակիցներս եւ ես նպատակ չունինք հերքելու կամ նսեմացնելու Արեւելեան Անատոլիոյ հայերուն կրած տառապանքը Ա[ռաջին] Աշխարհամարտի ընթացքին եւ անոր վաղորդայնին: կասկած չկայ, որ Օսմանեան կայսրութեան մայրամուտին միջ-համայնքային պայքարներ, վրէժխնդրութիւններ, ջարդեր եւ բռնի տեղահանութիւններ պատճառ եղան տեղւոյն խառն ազգաբնակչութեանց զանգուածային տառապանքներուն: Միլիոնաւոր մարդիկ զոհ գարձան ողբերգական այս եղելութեանց...:

«Տարակոյս չկայ, որ 132-րդ բանաձեւի հաստատումը լրջօրէն կը վնասէ Թուրք եւ Ամերիկեան յարաբերութեանց: Թուրքիոյ մէջ

բանաձեւը դիտուած է որպէս յանձնարարագիր հայկական ահաբեկչութեան եւ որպէս սկիզբ հատուցման պահանջներու եւ ի վերջոյ հողային մասնատումի: Այս հասկացողութեամբ՝ 132-րդ բանաձեւը, ինչպէս անոր նախորդողը 1985-ին եւ Եւրոպական Խորհրդարանին վերջերս ընդունած որոշումնագիրը զայրոյթ, ընդվզում եւ թշնամութիւն կը յառաջացնեն Թուրքիոյ բոլոր քաղաքական հոսանքներուն մէջ: Մենք չենք կրնար այս հակազդեցութիւնները անտեսել, ինչպէս նաեւ անոնց հաւանական անդրադարձը այնպիսի մեծ նշանակութիւն ունեցող յարաբերութեան մը վրայ, զոր պէտք է ջանանք ընդարձակել եւ զօրացնել»[59]:

Ցատակ, անմեկնին եւ անպաճոյճ խօսքեր էին այս բոլորը, որոնք առանց վարանումի եւ գրաւոր կերպով եկան պարզաբանելու պետական քաղաքականութիւնը Միացեալ Նահանգներուն, իսկ ձորճ Շուլցն ու Թուրքիոյ դեսպան Շիւքրի Էլէքթազն իրենց նամակներովն ու այլապէս ճնշեցին ներկայացուցիչներուն վրան, որպէսզի ձախողէր բանաձեւ թիւ 132-ը, եւ յաջողեցան վերջապէս[60]:

Բանաձեւ թիւ 132-ի հարցը քննարկուեցաւ ԱՄՆի Ներկայացուցչական Տան մէջ աւելի քան մէկ ժամ՝ 7 Օգոստոս 1987-ին: Բանաձեւին ի նպաստ զօրաւոր կերպով արտայայտուեցան ներկայացուցիչներ Տէյվիտ Պոնիորը, Պարպարա Պոքսըրը, Ֆրենք Անունզին, Ճոզըֆ Քենեթին, Ռիչըրտ Լեհմէնը, Տէն Էյնկրընը, Ռապըրթ Թորրիչելլին եւ Ճօ Մոթլին, իսկ դէմ արտայայտուեցան Ճին Քէյլըրը, Թրենթ Լաթը, Ֆրենք Հորթընը, Սթիվըն Սոլարզը, Տակլըս Պոսթոն եւ Ճան Մըրթան: Վիճաբանութեանց աւարտին տեղի ունեցաւ քուէարկութիւն մը, որ ոչ մէկ կապ ունէր բանաձեւ թիւ 132-ը վաւերացնելու կամ չվաւերացնելու հետ, այլ կ'առնչուէր ժողովավարական կանոնի մը, որ չորս ժամով պիտի սահմանափակէր արծարծումը բանաձեւին: Ըստ օրինի՝ անհրաժեշտ էր որ Ներկայացուցչական Տան անդամները համաձայնէին ժամանակի այդ սահմանափակման չուրջ բանաձեւի համար որեւէ քայլ առնելէ առաջ: «Վիճաբանութեան համար ժամանակահատուածի այդ սահմանման արդիւնքը որ 189-ի դէմ 201 էր՝ կանխեց բանաձեւին արծարծումը: Ընթացակարգային այս քուէարկութեամբ Միացեալ Նահանգներու Ներկայացուցչական Տունը խուսափեցաւ այդ հարցը քննելէ»: Քուէարկութեան հաշուումներէն երեւան եկաւ որ 42 ներկայացուցիչներ չէին քուէարկած ընթացակարգային այդ հարցին:

Թէ որքա՞ն զօրաւոր էր ճնշումը՝ ի յայտ կու գայ քուէարկութեան տուեալներէն: Բանաձեւ 132-ի առաջադրման մէջ դեր վերցուցած 18 ներկայացուցիչներ դէմ էին քուէարկած կանոնական հարցին, իսկ 15 ուրիշներ ալ երբեք չէին քուէարկած: Այս բոլորը մաս կը կազ-

մէին քուէարկութենէ խուսափած յիշեալ 42 քանակին։ Մինչ Մերակոյտին մէջ՝ ուր բանաձեւն ունեցեր էր 25 առաջադրող՝ հարցը կը գտնուէր յանձնախմբային մակարդակի վրայ։

Այս առթիւ՝ Նիւ Եորքի Տէյլի Նիուզ օրաթերթը Օգոստոս 31-ի իր խմբագրականը կ'ամբարտէր «ամօթալի» բառով, երէկ Ներկայացուցչական Տունը չսրբագրէր ինքզինք եւ մնար լուռ։ Իսկ անիկա մնաց լուռ[61]։

Նախագահական տարի էր 1988-ն, եւ առ այդ Հայկական Յեղասպանութեան ի նպաստ ելոյթներ ունեցան նախագահական թեկնածուներ ԱՄՆի փոխ նախագահ Հանրապետական Ճորճ Պուշն ու Մեսաչուսէթսի կառավարիչ դեմոկրատ Մայքըլ Տուքաքիսը։ Պուշն ընտրական իր պայքարը հիմնեց հետեւեալ կէտերուն վրայ[62]։

Ա. ԱՄՆ պէտք է որ ճանչնար Հայկական Յեղասպանութիւնը ջարդերէն վերապրողներու, պատմաբաններու եւ ջարդերուն ժամանակակից ամերիկեան ներկայացուցիչներու վկայութեանց վրայ հիմնուելով, որպէսզի չկրկնուին նոյնանման սարսափներ։

Բ. Ինք պիտի միանար Քանկրեսին՝ այդ շրջանի զոհերուն յիշատակը նշելու մէջ։

Գ. Ինք պիտի չարտօնէր որ քաղաքական ճնշումներ արգելք հանդիսանան մարդկութեան դէմ ոճիրներու ամերիկեան դատապարտման։

Դ. Ինք կը գիտակցէր որ արդի Թուրքիոյ Հանրապետութիւնը պատասխանատու չէր «1915-ի դէպքերուն» եւ դէմ էր այդ շրջանի իբր ցեղասպանութիւն ստորոգման։

Ե. Որպէս նախագահ՝ պիտի մղէր Թուրքիոյ ղեկավարները որ երկխօսութիւն մը սկսին աշխարհացրիւ հայ համայնքին հետ՝ լուծելու համար զիրար հակադրող տարբերութիւնները։

Զ. Նաթոյի ծիրէն ներս պիտի թիկունք կանգնէր որ չարունակուէր Թուրքիոյ տրուող զինուորական եւ տնտեսական օժանդակութիւնը։

Հակառակ առաջին եւ չորրորդ կէտերուն միջեւ եղած որոշ հակասութեան՝ «Ամերիկահայերու Պուշ-Քուէյլի համար յանձնախումբը» որուն պատուոյ առենապետն էր Քալիֆորնիոյ հանրապետական կառավարիչ Ճորճ Տէօքմէճեանը՝ յաւ կերպով ընդունեցաւ եղած յայտարարութիւնը։ Այս նոյն յանձնախումբը հաղորդագրութիւն մը լոյս ընծայեց փոխ նախագահական թեկնածու Տէն Քուէյլի հայանպաստ ելոյթին մասին զոր անիկա ունեցած էր Մերակոյտէն ներս 27 Ապրիլ 1983-ին, մանաւանդ որ անիկա առաջադրողներէն մէկն էր 1984-ի բանաձեւ թիւ 241-ին։ Յանձնախումբին առենապետ

Պէրի Զորքհան յայտարարեց թէ փոխ նախագահական դեմոկրատ թեկնածու Ժերակուտական Պենթսըն ոչ մէկ արտայայտութիւն էր ունեցած Հայկական Ցեղասպանութեան ճանաչման առնչութեամբ[63]:

Ամերիկայի Հայկական Համագումարը վեցական հարցում ուղղեց նախագահական թեկնածուներ Պուշի եւ Տուքաքիսի՝ հայոց վերաբերող հարցերու չուրջ եւ անոնցմէ խնդրեց ունենալ գրաւոր պատասխաններ: Պատասխանեցին երկուքն ալ:

Պուշի տեսակէտները հիմնականին մէջ կը պարզէին նոյն տեսակէտները, մինչ Մայքըլ Տուքաքիս կ'ըսէր· «Երկար տարիներէ ի վեր անձնապէս մասնակցած եմ Հայկական Ցեղասպանութեան Ճիշտակումի հանդիսութիւններուն: Եթէ ուժգնօրէն չդատապարտենք այսպիսի բռնութիւններ եւ հետեւողական կերպով չյիշենք անցեալին սխալները՝ ենթակայ պիտի մնանք այսպիսի սարսափներու կրկնումի վտանգին: Որպէս նախագահ՝ հաստատ կերպով դէմ պիտի կենամ բոլոր այն ճիգերուն ո'ր ազբիւրէն ալ ըլլան անոնք՝ [որոնք կ'ուզեն] վերստին գրել պատմութիւնը, կամ ուրանալ զայն, եւ պետական քարտուղարին հետ զոր պիտի ընտրեմ եմ՝ թիկունք պիտի կանգնիմ Քանկրեսի բանաձեւի մը որ պիտի նչէր 1915–1923–ի Հայկական Ցեղասպանութեան Ճիշտակումի Ազգային Օր մը»[64]:

Աւելի զուսպ եւ դիւանագիտական էին Ճորճ Պուշի պատասխանները, որովհետեւ անիկա արդէն իսկ փոխ նախագահն էր Միացեալ Նահանգներուն եւ մաս կը կազմէր նախագահ Ռիկընի վարչութեան, իսկ իր ընտրաշրջանին մէջ հայկական մեծ գաղութ մը ունեցող եւ ծագումով յոյն ու Մեսէչուսեցի կառավարիչ Տուքաքիսը մաս չէր կազմեր պետական վարչամեքենային եւ առ այդ՝ զերծ էր կաչկանդումներէ: Ընտրապայքարի մը առեն կատարուած վերի յայտարարութիւնները քուէ ապահովելու ձգտող արտայայտութիւններ էին միայն:

Ամերիկեան հանրային կարծիքին եւ քաղաքական շրջանակներուն վրայ որոշ ազդեցութիւն ունեցան 1988–ի Փետրուարին պայթած Ղարաբաղեան Հարցը եւ ահաւոր այն երկրաշարժը որ ցնցեց Հայաստանը 1988–ի Դեկտեմբեր 7–ին: Համակրանքի եւ զօրակցութեան կարգ մը արտայայտութիւններ կատարուեցան հայոց հանդէպ: ԱՄՆ յատկացուց հինգ միլիոն տոլար դարմանումին համար Խորհրդային Հայաստանի երկրաշարժի հետեւանքներուն, եւ ընտրեալ նախագահ Պուշի զաւակն ու թոռն այցելեցին Հայաստան:

1989–ին լայն թափ առացաւ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման հետապնդումը՝ օգտագործել փորձելով Ճորճ Պուշի առ այդ կատարած խոստումը: Այսուհանդերձ՝ չուտով երեւան եկաւ որ պէտք չէր ակնկալել հիմնական որեւէ փոփոխութիւն Թուրքիոյ հանդէպ

ԱՄՆի վարած ներկայ քաղաքականութենէն· առնուազն այդ ցոյց տուաւ Թուրքիոյ մօտ ԱՄՆի նոր նշանակեալ Մորթըն Ափրամովիչի նշանակման վաւերացման վերաբերող Մերակոյտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնախումբին քննարկման նիւթը: Տեղի ունեցող հարց ու պատասխանի ընթացքին, երբ Ծերակուտական Փոլ Սարպէյնզ Ափրամովիչին ուղղեց կարգ մը հարցումներ Հայկական Ցեղասպանութեան շուրջ՝ անիկա պատասխանեց, թէ «առաջին· պատմական բաւական լայն տարակարծութիւն կայ տեղի ունեցածին եւ ատոր տարողութեան մասին: Երկրորդ· նշանակելի տարակարծութիւն կայ այն մասին, թէ այն ինչ որ պատահեցաւ ցեղասպանութի՞ւն էր թէ ոչ· պատեպայ մը որ խորապէս կը վրդովէ Թուրքիան: Եւ այդ հիման վրայ մեր ընդհանուր կարծիքը այն է, որ այս հարցը պէտք է լուծուի պատմաբաններու կողմէ»[65]:

Տրուած պատասխանին ի լուր՝ Ծերակուտական Սարպէյնզ կրկին 1988–ի ընտրապայքարի ընթացքին նախագահ Պուշի ունեցած ելոյթը Հայկական Ցեղասպանութեան ճանաչման մասին եւ հարցուց նշանակեալ դեսպանին թէ «համաձա՞յն է նախագահի արտայայտութեան»: Ափրամովիչը յայտարարեց թէ «ես չեմ ցանկար վիճաբանիլ Միացեալ Նահանգներու նախագահին՝ իմ վերակացուիս հետ: Ես ձեզի բացատրեցի այն՝ ինչ որ, իմ հասկացողութեամբ, մեր կեցուածքն է Թուրքիոյ մէջ այդ ժամանակաշրջանին պատահած դէպքերուն մասին»[66]:

Դիւանագիտական ճարպիկ այս պատասխանէն հեռ էր որ Հայկական Համագումարի կառավարական եւ իրաւական հարցերու տնօրէն Վան Գրիգորեան յայտարարեց թէ ըստ երեւոյթին Հայկական Ցեղասպանութեան նկատմամբ կարծիքի տարբերութիւն կար Պետական Քարտուղարութեան եւ Սպիտակ Տան միջեւ, եւ անմիջապէս աւելցուց, որ «հակառակ այս առնչութեամբ նախագահ Պուշի յստակ յայտարարութեանց, պետական քարտուղարութիւնը, ըստ երեւոյթին, մտադիր չէ իր դիրքը փոխելու՝ Թուրքիոյ կողմէ այդ առնչութեամբ հաւանական բացասական հակազդեցութեան [մը] մտահոգութեամբ»[67]:

Իր կարգին՝ հանրապետական եւ ծերակուտական անվրդով դեկավար Պապ Տոլ 29 Սեպտեմբեր 1989–ին Մերակոյտին ներկայացուց բանաձեւ թիւ 212–ը, որ կ'առաջադրէր 24 Ապրիլը հռչակել «Հայկական Ցեղասպանութեան Զոհերու Յիշատակի Ազգային Օր»: Բանաձեւին եթին կը կենային 57 ծերակուտականներ, որոնցմէ 26–ը դեմոկրատականներ էին, եւ 21–ը՝ հանրապետականներ եւ որոնք ստորագրած էին առաջադրեալ բանաձեւը[68]:

Թուրքիան իրար անցաւ եւ ջղագրգիռ՝ զարձաւ պետական անձնաւորութիւններէն մինչեւ մամուլ եւ հասարակական կարծիք: Սակայն Թրքական ջղագրգռութիւնը հասաւ իր գագաթնակէտին երբ 17 Հոկտեմբեր 1989-ին Մերակոյտի Իրաւագիտական Ցանձնախումբը ձայներու մեծամասնութեամբ հաստատեց Ծերակուտական Տոլի Հայկական Ցեղասպանութեան յիշատակումին համար առաջադրած բանաձեւ թիւ 212-ը:

Իրար անցած՝ Թուրքիան հակազդեց զօրաւոր կերպով, եւ յաջորդ օրն իսկ, 18 Հոկտեմբերին, դիմեց սահմանափակ միջոցառումներու՝ ԱՄՆի դէմ: Առաւել՝ դիւանագիտական ճամբով ալ ճնշում բանեցուց անոր պետական վարչամեքենային վրան: Նոյն օրը՝ ԱՄՆի պետական բարձրաստիճան խօսնակ Մարկրէթ Թութուայլըը պատասխանելով իսրայէլեան Հաարեց թերթի թղթակից Եոսու Փառնիի հարցին՝ յայտնեց թէ Սպիտակ Տունը դէմ էր բանաձեւին, թէեւ ամերիկեան վարչութիւնը զգայուն էր հայ ժողովուրդի ողբերգական տառապանքին եւ 1915-1923-ի զոհերու յիշատակման պահանջին նկատմամբ, բայց նոյն ատեն ուշադիր էր Թուրքիոյ հետ ունեցած մօտիկ եւ զօրաւոր բարեկամութեան, ու նաեւ ա՛յն տարբեր կարծիքներուն՝ ինչ որ կը վերաբերէին այդ ահաւոր եղերութիւններուն ճշդրիտ յատկանշումին: Երբ Փառնի յիշեցուց ընտրապայքարի միջոցին Պուշի կատարած հաստատումը՝ խօսնակը պատասխանեց թէ կարելի էր իրարու հետ հաշտեցնել իր յայտարարութիւնը եւ նախագահին հաստատումը[69]:

Սպիտակ Տան Ազգային Ապահովութեան Գրասենեակի խորհրդական Պրենթ Սքոքրոֆթ թելադրեց ծերակուտականներուն «չհրաժարիլ առաջարկուած բանաձեւէն»: Անգարայի մօտ ամերիկեան դեսպան Ափրամովիչ կանչուեցաւ Ուաշինկթըն զեկուցումի պատրուակով, ուր անիկա տարհամոզումի աշխատանք տարաւ բանաձեւին դէմ[70]:

Թուրքիան դիմեց նաեւ Իսրայէլի օժանդակութեան՝ ըստ Միլիէթ օրաթերթին: Ուաշինկթըն Թայմզ օրաթերթին համաձայն՝ Իսրայէլ պահանջեց ԱՄՆի հրէական ազդեցիկ կազմակերպութիւններէն ձախողեցնել Հայկական Բանաձեւին վաւերացումը Ամերիկեան Մերակոյտին կողմէ: Ըստ իսրայէլեան Հաարեց օրաթերթին՝ Եոսի Սարիա որ իսրայէլեան խորհրդարանի արտաքին գործոց եւ պաշտպանութեան յանձնախումբի անդամ էր՝ բողոքեց արտաքին նախարարութեան՝ Ուաշինկթընի մօտ իսրայէլեան դեսպանին հայկական բանաձեւին դէմ միջամտութեան հարցով[71]: Հակառակ այս բոլորին, սակայն, Լուիզիանա նահանգի Նիու Օրլիրնզ քաղաքին մէջ գումարուող Ամերիկեան Հրեայ Ընկերակցութիւններու Միութեան

Համագումարը «Մէկ Միլիոնէ Աւելի Հայերու Ցեղասպանութիւնը 1915-ին» խորագրեալ բանաձեւով մը 6 Նոյեմբերին որոշեց թիկունք կանգնիլ ԱՄՆի Ողջակիզման Թանգարանին մէջ Հայկական Ցեղասպանութեան բաժնի մը եւ բանաձեւ թիւ 212-ին: Միչիկընի ծերակուտական Քարլ Լեւին իր խօսքին մէջ յայտարարեց ի միջի այլոց, թէ «եթէ մենք եւ աշխարհ 1920 եւ 1930 թուականներուն յիշէինք [Հայկական] Ցեղասպանութիւնը՝ Հիթլեր պիտի չկարենար ըսել թէ ո՞վ է որ այսօր կը յիշէ հայերը»[72]:

Թուրքիոյ արտաքին գործերու նախարարութեան բանբեր Մուրատ Սիւնկէրը յայտարարեց թէ Հայկական Բանաձեւին նկատմամբ Ամերիկայի ծերակոյտին մէջ մինչ այդ դրսեւորուող նպաստաւոր դիրքը մղեց Թուրքիան 18 Հոկտեմբեր 1989-էն սկսեալ ԱՄՆի դէմ որդեգրել «առժամեայ միջոցառումներ» եւ զորոնք արդէն իսկ դրաւ գործադրութեան: Այսպէս՝ այդ «առժամեայ միջոցառումներ»ը կը բաղկանային

«ա. Սահմանափակում Թուրքիոյ մէջ գոյութիւն ունեցող ամերիկեան 12 ռազմակայաններու գործունէութեանց:

«բ. Անգարան դադրեցուցած է Գոնիայի մէջ ամերիկեան էֆ-16 ռազմաօդանաւերուն թռիչքները:

«գ. Թուրքիան Ուաշինկթընէն պահանջած է 36-էն 24-ի իջեցնել Ինճիրլիքի մէջ գործող իր օդանաւերուն թիւը:

«դ. Ուաշինկթընն պէտք է նուազեցնէ նաեւ թրքական նաւահանգիստներ խարսխող իր ռազմանաւերուն թիւը:

«ե. Պէտք է նուազի նաեւ ամերիկեան զինուորական անձնակազմերուն երթեւեկը երկրին մէջ»[73]:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեսութ Եըլմազ յայտարարեց 20 Նոյեմբերին, թէ «եթէ բանաձեւը որդեգրուի՝ պիտի դիմենք նոր միջոցառումներու, որոնք պիտի երկարին մինչեւ հեռու ապագայ»: Թուրք պաշտօնատարներ նշեցին թէ այդ միջոցառումներէն մին կրնար ըլլալ «1990-ին չնորոգել երկու երկիրներու միջեւ [գոնուող] այն համաձայնագիրը, ըստ որուն՝ Թուրքիա Միացեալ Նահանգներէն կը ստանայ 500 միլիոն տոլարի օժանդակութիւն մը, որուն փոխարէն Միացեալ Նահանգներ իրաւունք կ'ունենայ Թուրքիոյ մէջ լրտեսական կեդրոններ գործածելու»[74]:

Թուրքիոյ իսկական մտավախութիւնը արտայայտեց Ուաշինկթընի մօտ Թուրքիոյ դեսպան Նուզհէթ Գանտամիրը, որ 18 Նոյեմբերին յայտարարեց, թէ «Թուրքիոյ ուղղուած ամբաստանութիւնը հայերու կողմէ առաջին քայլ մըն է՝ յետագային պահանջելու համար թրքական հողերը եւ արդարացնելու հակաթուրք ահաբեկչութիւնը»[75]:

Այս միջոցառումներուն ի տես՝ արեւմտեան զինուորական աղբիւրներ յայտնեցին 23 Նոյեմբեր 1989–ին թէ Նաթօն «կրնայ վերատեսութեան ենթարկել Թրքական Գոնիա քաղաքին մօտ պատերազմական օդանաւերու փորձ–թռիչքի խարիսխ մը կառուցելու իր որոշումը՝ ամերիկեան ծերակոյտին կողմէ առաջարկուած հայանպաստ բանաձեւին դէմ Թուրքիոյ որդեգրած հակա–ամերիկեան միջոցառումներուն պաճառով»[76]:

Թուրքիոյ արտաքին նախարարութեան բանբերը Սիւնկեր յայտարարեց թէ «Գոնիայի մէջ խարիսխի մը կառուցումը կը կարօտի քանի մը տարուան ժամանակամիջոցի, յուսալով որ Հայկական Հարցը լուծուած կ'ըլլայ մինչ այդ»[77]:

«Մինչ այդ»ը կը վերաբերէր պետական քարտուղարութեան եւ Թրքական պետական բարձր աստիճանի ճնշումներուն: Նախագահ Պուշի ընդդիմութիւնը բանաձեւ թիւ 212–ին՝ տեղի տուաւ հարցապնդումներու եւ բողոքներու: Ֆրեզնոյէն ընտրուած ռամկապետական ծերակուտական Ռիչըրտ Լիմըն 3 Նոյեմբեր 1989–ին նամակ մը գրեց նախագահ Պուշին անոր դիրքորոշումին մասին եւ յիշեցուց թէ Ֆրեզնոյի մէջ 1988 Մայիսին կայացող ընտրապայքարի չրջանին ընդունած էր Հայկական Ցեղասպանութեան իրողութիւնը եւ յետագային ալ, տարբեր թուականի մը, գրաւոր կերպով խոստացեր էր միանալ «Բանկրեսին յիշատակելու համար այդ չրջանի զոհերը»: Լիմըն հարց տուաւ տակաւին, թէ «Պուշի վարչամեքենան պիտի թոյլատրէ՞ որ օտար պետութիւններ ազդեցութիւն գործեն բարոյական էական հարցի մը քննարկումին: Եթէ ճ. Պուշ նախընտրէ մոռնալ իր ընտրապայքարի ատեն կատարած խոստումը՝ ատիկա ապտակ մը պիտի ըլլայ հայկական հասարակութեան՝ Ամերիկայի թէ արտասահմանի մէջ», եւ հրաւիրեց նախագահը նեցուկ կանգնելու տուեալ բանաձեւին[78]:

Թերեւս ներկայացուցիչներէն եւ հայկական կազմակերպութիւններէն հասնող այսպիսի յիշեցումներն էին որ ստիպեցին ամերիկեան կառավարութիւնը բանակցելու Թուրքիոյ հետ «բանաձեւին մեղմացուած մէկ տարբերակի ընդունման գծով», որուն մասին բացէ ի բաց արտայայտուեցաւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեսուտ Եըլմազը Թրքական խորհրդարանին մէջ եւ չեչտեց թէ «Թուրքիա երբեւիցէ պարտաւոր չէ սակարկութեան մէջ մտնելու եւ կամ՝ որեւէ ձեւի մէջ գտնուող հայկական բանաձեւի մը համաձայնելու»[79]: Այս գծով Թուրքերը համոզելու փորձ մը կատարեց նաեւ ԱՄՆի Անգարայի մօտ նախկին դեսպան Բապըրթ Հուփէն, որ Թրքական Հիւրրիէթ Թերթի հարցումներուն պատասխանելով յանձնարարեց Թուրքիոյ որ ընդունի «կակուղ եւ մեղմացուած ոճով գրի առնուած հայկական բանաձեւի մը վաւերացումը եւ այս հարցը փակուի

միանգամ ընդմիշտ»[80]: Ըստ Հուփէի՝ «լաւ գաղափար» մըն էր բանաձեւի մը վաւերացումը ընդունիլը, որովհետեւ այս կերպով այս նիւթն այլեւս դուրս կ'ելլէր Թուրք եւ ամերիկեան յարաբերութիւններէն եւ առաջքը կ'առնուէր ամէն տարի կրկնուող եւ անտեղի ժամանաճառութեան, իսկ Հայկական Լապին ալ կը կորսնցնէր իր ուժը: Սակայն Թուրքիան մնաց անդրդուելի:

Ի վերջոյ բանաձեւ SJR 212-ը դրուեցաւ Սերակոյտի քննարկման 1990-ի Փետրուարին՝ Մեծ Եղեռնի 75-ամեակի սեմին: Սերակուտական Պապ Տոլ զօրաւոր կերպով պաշտպանեց իր ներկայացուցած բանաձեւը՝ Հայաստանը նմանցնելով Դաւիթին, իսկ Թուրքիան ալ Գողիաթին: Ապա հաստատեց թէ ԱՄՆի Սերակոյտն արդէն իսկ 1920-ին ճանչցած էր Հայոց Մեծ Եղեռնին պատմական իրողութիւնը եւ առայդ՝ անհրաժեշտ էր որ անցնէր Ցիշատակումի Բանաձեւը:

Բանաձեւի հակառակորդ Սերակուտականները դիմեցին ժողովական կանոնի մը որ կ'արտօնէր անսահմանափակ վիճաբանութիւնը[81] այս հարցին շուրջ՝ ստիպելով որ բանաձեւին կողմնակիցները դիմէին ժողովական այլ կանոնի մը՝ ըստ որուն Սերակոյտի հարիւր անդամներուն վաթսունին քուէով կարելի կը դառնար դադրեցնել անսահմանափակ վիճաբանութիւնները եւ բանաձեւը դնել քուէարկութեան: Պապ Տոլ փորձեց ընել այդ մէկը 22 Փետրուար 1990-ին եւ քուէարկութեան արդիւնքն եղաւ 49-ի դէմ 49 ձայն[82]:

Այս քուէարկութենէն անմիջապէս ետք Թուրքիա սպառնաց Ուաշինկթընէն ետ կանչել իր դեսպանը եւ չվերանորոգել 1990-ին վերանորոգելի այն համաձայնագիրը որ կը վերաբերէր ամերիկեան տասը ռազմախարիսխներուն՝ եթէ քուէարկութեան դրուէր Հայկական բանաձեւը: Միւս կողմէ՝ Թուրքիան կը գնահատէր ռամկապետական մեծամասնութեան դեկավար եւ Արեւմտեան Վիրճինիայի Սերակուտական Ռասըրթ Պիրտի դիրքորոշումը Սերակուտական Տոլի բանաձեւը ձախողցնելու մէջ[83]: Սերակուտական Տոլ անգամ մը եւս փորձեց վիճաբանութիւնները սահմանափակել եւ բանաձեւը դնել քուէարկութեան. սակայն վերստին ձախողեցաւ անիկա՝ 48-ի դէմ 51 քուէով: Այն առեն Սերակուտական Տոլն ստիպուած ետ քաշեց իր բանաձեւը[84]:

Միջազգային քաղաքական կացութիւնը մեծ վերիվայրումներու նախանշաններ ցոյց տալու սկսաւ 1990-ին եւ մեծ փոփոխութիւններ իջան հրապարակ: Կորպաչեւի Խորհրդային Միութիւնը դադրեցաւ վտանգ մը ըլլալէ ԱՄՆի համար եւ չրջան մը Թուրքիան ենթարկուեցաւ իր դիրքը կորսնցնելու վիճակին՝ երբ 20 Օգոստոս 1990-ին վրայ հասաւ Իրագի ներխուժումը Քուէյթի վրայ եւ կրկին զօրացաւ Թուրքիոյ չրջանային դերը:

Հայաստանի մէջ ալ իրադարձութիւններն ստացան արագ ընթացք: Խորհրդարանական ընտրութիւններէն ետք՝ 23 Օգոստոս 1990–ին Հայաստան յայտարարեց իր Անկախութեան Գործընթացի Հռչակագիրը, որ իրողութիւն դարձաւ 21 Սեպտեմբեր 1991–ի համաժողովրդային հանրաքուէով եւ Հայաստան հռչակեց իր լիակատար անկախութիւնը 23 Սեպտեմբերին: Խորհրդային Միութեան մէջ տեղի ունեցած ձախող պետական հարուածը եւ անոր յաջորդող դէպքերն ի վերջոյ կազմալուծեցին Խորհրդային Միութիւնը, որմէ ետք կազմուեցաւ Անկախ Պետութիւններու Համագործակցութիւնը, որուն մաս կազմեց Հայաստանի Նորանկախ Հանրապետութիւնը:

Այս պայմաններու տակ էր որ հայութեան ուշադրութեան կեդրոն դարձան Հայաստանի երկրաշարժը, երկրին մէջ տիրող իրարայաջորդ իրադարձութիւնները եւ Արցախի արիւնալի զարգացումները: Ստեղծուած իրողական վիճակը պատճառ հանդիսացաւ որ Թուրքիա Հայկական Ցեղասպանութեան ճանաչման հետապնդումին հետ հետապնդումը Հայկական Դատին, եւ բնական էր որ ԱՄՆ ունենար իր քաղաքական դիրքորոշումը Հայաստանի հանդէպ:

1990–ի Անկախութեան Գործընթացի հռչակումէն ետք, Սեպտեմբերի վերջաւորութեան, եւ Հայկական Համագումարի հրաւէրով Ամերիկա այցելեց Հայաստանի խորհրդարանի նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը: Նկատելով որ տակաւին գոյ էր Խորհրդային Միութիւնը եւ ԱՄՆ զա՛յն էր որ կը ճանչնար որպէս գերիշխան երկիր՝ Հայաստանի նախագահին այցելութիւնը նկատուեցաւ անձնական: Այսուհանդերձ կարգադրուեցաւ, որ տեսակցութիւն մը կայանար ԱՄՆի փոխ նախագահ Տէն Քուէյլի հետ, բայց խաչաձեւում մը պատճառ հանդիսացաւ որ նախագահ Տէր Պետրոսեան չկարենար այցելել անոր, սակայն տեսակցութիւն մը կայացաւ անոր եւ Ամերիկայի Ազգային Ապահովութեան Խորհուրդի նախագահ Սքոքրոֆթին միջեւ:

23 Սեպտեմբեր 1991–ին Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան հռչակումէն եւ Լեւոն Տէր Պետրոսեանի Հանրապետութեան նախագահ ընտրուելէն ետք՝ նորընտիր նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանն երկրորդ անգամն ըլլալով այցելեց ԱՄՆ եւ այս առթիւ տեսակցեցաւ ԱՄՆի նախագահ Ճորճ Պուշի հետ 14 Նոյեմբեր 1991–ին: Այդ օր Սպիտակ Տան բանբեր Մարլին Ֆիցուաթըրի ստորագրութեամբ լոյս տեսաւ հաղորդագրութիւն մը, որ կ'ըսէր, թէ «այսօր Մ|իացեալ| Նահանգների նախագահ Ճորճ Պուշն ընդունեց իր ձուաձեւ աշխատասենեակում Հայաստանի նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանին եւ 45 վայրկեան զրուցեց նրա հետ: ԱՄՆի նախագահը չնորհաւորեց Լ|եւոն| Տէր Պետրոսեանին՝ առաջին անգամ Հայաստանի նախագահի ազատ ժողովրդավարական ընտրութիւններում վերջերս

յաղթանակ տանելուն առթիւ: Նա յայտարարեց որ Մ[իացեալ] Նահանգների կառավարութիւնը զօրավիգ է Հայաստանի կառավարութեան կողմից անցկացուող քաղաքական ու տնտեսական բարեփոխումներին:

«Նախագահը նաեւ հաւաստիացրեց որ ԱՄՆը մտադիր է կուռ փոխյարաբերութիւններ հաստատել Հայաստանի հետ: Երկու պետութիւնների ղեկավարները քննարկեցին հարցեր՝ կապուած ԱՄՆի կողմից Հայաստանին յատկացուելիք հնարաւոր պարենային, բուժական, առեւտրական, ինչպէս նաեւ արտածման-ներածման դրամատան միջնորդութեամբ ներդրումների ձեւով օգնութեան հետ: Վերջում նախագահ Պուշ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանին յայտնեց, որ ամերիկեան կառավարութիւնը մտադրել է 1992 թուականին երեւանում բացել հիւպատոսարան, ինչպէս նաեւ սկսել դիւանագիտական յարաբերութիւնների ծրագրի իրականացմանը»[85]:

Սակայն ԱՄՆ ճանչցաւ Հայաստանի Հանրապետութիւնը 1991-ի Դեկտեմբերին՝ Խորհրդային Միութեան լուծարքի յայտարարութենէն ետք նախագահ Պուշի կատարած յայտարարութեամբ: 4 Փետրուար 1992-ին Երեւանի Հրազդան պանդոկին մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր բացումը Հայաստանի մօտ Ամերիկեան Դեսպանատան, որուն ժամանակաւոր գործավարն էր Սթիվըն Մաննը[86]: ԱՄՆի մէջ ալ բացուեցաւ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատունը եւ լիազօր ներկայացուցիչ նշանակուեցաւ Ալեքսանդր Արզումանեանը:

ԱՄՆի պետական քարտուղար Ճէյմըս Պէյքըր, Խորհրդային Միութեան նախկին բաղկացուցիչ՝ այլ այժմ նորանկախ պետութիւններուն իր այցի ծիրէն ներս, 11 Փետրուար 1992-ին այցելեց նաեւ Երեւան, ուր տեսակցեցաւ Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանին եւ արտաքին գործոց նախարար Ռաֆֆի Յովհաննիսեանին հետ: Խօսակցութիւններն «առաւելաբար կեդրոնացան երկու երկիրներու փոխյարաբերութեանց եւ Լեռնային Ղարաբաղի հարցին խաղաղ կարգադրութիւններուն վրայ»[87]:

Պէյքըրի հետ ամերիկեան պատերազմական բեռնատար օդանաւ մը նախ Հայաստան բերաւ ԱՄՆի կառավարութեան Հայաստանի մէջ աղէտի գօտիին մատուցած 65 թոն կարագի նպաստը: Յետագային ալ հասան 541 թոն դեղօրայք եւ սննդեղէն:

Մինչ այդ արդէն իսկ տեղի ունեցեր էին նախ խորհրդարանական այցելութիւնները ծերակուտական Պապ Տոլի եւ ուրիշներու, եւ ապա՝ ԱՄՆի Մերակոյտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի նախագահ Քլէյպըրն Պիլի: ԱՄՆի Քանկրեսին հրաւէրով Հայաստանէն խորհրդարանական պատուիրակութիւն մը Հայաստանի խորհրդարանի նախագահ Բաբգէն Արարքցեանի գլխաւորութեամբ

փոխադարձ այցելութիւն մը տուաւ Միացեալ Նահանգներ: Նախնական համաձայնութիւններ կնքուեցան Հայաստանի խորհրդարանին եւ Ամերիկեան Քանկրեսին միջեւ «համագործակցութեան, տեղեկատուութեան փոխանակումին, նաեւ Հայաստանի խորհրդարանէն ներս Քանկրեսի փորձի ուսումնասիրութեան նպատակով մասնագէտներ գործուղելու վերաբերեալ»[88]:

2 Ապրիլ 1992–ին Հայաստանն եղաւ նախկին խորհրդային հանրապետութիւններէն առաջինը, որ առեւտրական համաձայնագիր մը կնքեց ԱՄՆի հետ: Դաշնագիրին վրան իրենց անուան սկզբնատառերը դրին Հայաստանի փոխ վարչապետ Հրանդ Բագրատեանը եւ ԱՄՆի պետական քարտուղար Ճէյմըս Պէյքըրը[89]:

Ամերիկեան արտաքին քաղաքականութեան մէջ երեւան եկաւ գիծ մը — Թուրքիոյ այսպէս կոչուած լայիֆ պետութեան քաջալերանք՝ կեդրոնական Ասիոյ նախկին խորհրդային իսկ այժմ անկախ պետութիւններուն հետ կապերու ամրապնդման՝ ի հեճուկս Իրանի իսլամական արմատականութեան: Շրջանին մէջ Թուրքիան ստացաւ որոշ վերարժեւորում, զոր անիկա օգտագործեց ի վնաս Հայաստանի, Արցախի եւ Նախիջեւանի:

Մարտին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հայկական ուժերն ազատագրեցին Խոջալուի օդակայանը եւ Մայիսին ալ, յաջորդաբար, Շուշին եւ Արցախէն Հայաստան անցքը՝ այդ ճեւով դուրս գալով նեղացուցիչ շրջափակումէ մը:

Խոջալուի ազատագրումի վաղորդայնին Թուրքիոյ վարչապետ Սուլէյման Տեմիրէլի հետ հեռաձայնային խօսակցութեան մը ընթացքին նախագահ Ճորճ Պուշ յայտնէլէ ետք իր մտահոգութիւնը Ղարաբաղեան Հարցին չուրջ՝ չեչտեց անհրաժեշտութիւնը զայն «բացառապէս խաղաղ միջոցներով» լուծելու եւ յոյս յայտնեց «որ Թուրքիան չէզոքութիւն կը պահպանի մարտնչող կողմերի նկատմամբ»: Այս առթիւ անիկա կոչ ուղղեց նաեւ Հայաստանին եւ Ազրպէյճանին, որ Լեռնային Ղարաբաղի հարցը լուծէին «խաղաղ միջոցներով»[90]:

Շուշիի եւ Լաչինի գրաւումէն ետք՝ ԱՄՆի պետական քարտուղարութեան բանբեր Մարկրիթ Թաթուայլըրը յայտնեց թէ ԱՄՆ կողմնակից էր Եւրոպայի Ապահովութեան եւ Համագործակցութեան Համագումարի միջնորդական ջանքերուն եւ թէ ամերիկեան կառավարութիւնը համամիտ չէր որ երրորդ կողմ մը միջամտէր վէճին, այլ կ'ողջունէր որեւէ երկրի ջանքերը, որոնք կը միտէին վէճի խաղաղ լուծման, եւ ապա աւելցուց թէ ԱՄՆի կառավարութիւնը գիտուորական գործողութիւններու հիման վրայ «Լեռնային Ղարաբաղի, Նախիջեւանի կամ որեւէ այլ տարածքի կարգավիճակի միակողմանի փոփոխութիւններ չ'ընդունիր»[91]:

Ամերիկեան պետական քաղաքականութենէն անկախ եւ չնորհիւ հայկական լոպիի աշխատանքներուն ԱՄՆի Մերակոյտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովն իր 13 Մայիս 1992-ի նիստին 14 թեր եւ 4 դէմ քուէով որոշեց Ազրպէյճանի տրուելիք օգնութիւնը պայմանաւորել Ազրպէյճանի կառավարութեան կողմէ Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի դէմ «պաշարումի եւ յարձակողական քայլերու ջնջումով»[92]:

Մերակուտական Ձոն Բերի որ ներկայացուցած էր առաջարկը՝ նշեց իր խօսքին մէջ որ Ազրպէյճանը բռնագրաւած էր Անկախ Պետութիւններու Հասարակապետութեան ռազմական պահեստները եւ օգտագործեր էր գերարդիական զէնքեր Հայաստանի ազգային բանակին եւ Լեռնային Ղարաբաղին վրայ իր կատարած յարձակումներուն առեն: Ապա եզրակացուց թէ Ազրպէյճանին պէտք չէ տրուի ամերիկացի քաղաքացիին տուրքերէն գոյացած որեւէ գումար, քանի որ անիկա «կը շարունակէ կիրարկել այնպիսի քաղաքականութիւն մը, որ խոտոր կը համեմատի ամերիկացի ժողովուրդին ժողովրդավարական եւ մարդկային իրաւանց հիմնական սկզբունքներուն»[93]:

Նոյն նիստին՝ Ամերիկայի պետական փոխ քարտուղար Ռիչըրտ Արմիթէյճը յայտարարեց «որ Պուշի կառավարութիւնը դէմ է Բերիի առաջարկին», որովհետեւ «մարդկային իրաւանց բռնաբարումները տեղի կ'ունենան երկու կողմերէն», եւ թէ՝ «հայերը պաշարումի ենթարկեցին Նախիջեւանը»: Արմիթէյճի կարծիքով, Ուաշինկթընի համար օգտակար չէր մխրճուիլ «ազգամիջեան հակամարտութիւններուն մէջ», մանաւանդ երբ անոնք կրնան դժուարացնել «Թուրքիա-Միացեալ Նահանգներ յարաբերութիւնները»[94]:

Երբ Մայիսի կէսերուն հայ ինքնապաշտպանութեան ջոկատները կը վերագրաւէին Սազարակի (Նախիջեւան) մօտ գտնուող հայկական բլուրները, ուրկէ ազերիները կը ռմբակոծէին Երասխաւանը եւ այլ հայկական բնակավայրերը՝ Նախիջեւանի վարչապետ Հայտար Ալիեւն ու Թուրքիան իրար անցուցին աչխարհը եւ յայտնեցան Նախոյին եւ Եւրոպական Միութեան անցընել տալ կարգ մը բանաձեւեր որոնք անարդար կերպով կը դատապարտէին Հայութիւնը: կեղծիքը չուտով երեւան ելաւ սակայն, որովհետեւ Հայաստան միտք չունէր Նախիջեւանը գրաւելու: Նոյնիսկ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան յայտարարեց, թէ պատրաստ էր փոխադարձ համաձայնագիր մը կնքելու Նախիջեւանին հետ: Ան այդ՝ ԱՄՆի պետական քարտուղարութեան բանբեր Ռիչըրտ Պուչըր յայտարարեց, թէ «Ամերիկեան կառավարութիւնը ոգեւորուած է Հայաստանի եւ Նախիջեւանի սահմանը անվտանգութեան գօտի դարձնելու նպատակով համաձայնագիր

ստորագրելու Հայաստանի նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի առաջարկով»[95]:

1992-ի Մայիսի վերջերուն Լիզպոնի մէջ կայացաւ միջազգային ժողով մը Հորհրդային Միութեան նորանկախ պետութիւններուն օժանդակելու համար, որուն ընթացքին ԱՄՆի պետական քարտուղար Ճէյմըս Պէյքըր տեսակցեցաւ Հայաստանի, Ազրպէյճանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարներուն հետ եւ միասնաբար քննարկեց «Լեռնային Ղարաբաղի վէճի կարգադրութեան միջոցները»[96]:

Զ. Մ.

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Այս ակնարկին առաջին մասին համար՝ «ԱՄՆի արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական Հարցը (1900–1976)»՝ տես ՀԱՑԿԱԶԵԱՆ ՀԱՑԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ, հտ. Զ. Պէյրութ, 1977–78, էջ 71–104:
2. «Հայկական Ցեղասպանութիւնը Միացեալ Նահանգներու Քանկրեսին մէջ — Ներկայացուցիչ Զարլզ Փաշայեանի ճառը», *Զարթօնք*, Պէյրութ, 11 Ապրիլ 1984, էջ 3:
3. Զաւէն Մսըրլեան, «1978–1979 Հայկական Դատի հետապնդման ճամբուն վրայ», *Զարթօնք*, Ամանորի բացառիկ, 31 Դեկտեմբեր 1979, էջ 10:
4. Նոյն:
5. *Hoosharar*, vol. 67, N° 17, New York, 1 November 1980, p. 17.
6. «Ամերիկեան հակասութիւնը», *Ազդակ*, Պէյրութ, 31 Յուլիս 1978, էջ 1:
7. *Ազդակ*, Պէյրութ, 29 Փետրուար 1980, էջ 4:
8. *Հայրենիք*, 16 Ապրիլ 1980, էջ 1:
9. Տես՝ *յաւելած*· բիւ 2:
10. *News*, Congressman George E. Danielson, 30th District, California, «Remembering the Armenian massacre», LA, 19 May 1981, p. 8.
11. «Միացեալ Նահանգներու դեսպանը Հայաստանի մէջ», *Զարթօնք*, Պէյրութ, 6 Ապրիլ 1982, էջ 2:
12. *Ազդակ*, Պէյրութ, 26 Յունուար 1982, էջ 8:
13. Էնտրիւ Քրրգըն, «Հայկական ահաբեկչութիւն — Ուրուագիծ մը», *Զարթօնք*, Պէյրութ, 21–22 Ապրիլ 1983, էջ 2:
14. Տես՝ *յաւելած*· բիւ 2:
15. *Զարթօնք*, Պէյրութ, 25 Փետրուար 1983, էջ 2:
16. *Զարթօնք*, Պէյրութ, 20 Մարտ 1983, էջ 2:
17. «Ներկայացուցչական Տան նախագահ Թամբս Օ'Նիլի խօսքը», *Զարթօնք*, Պէյրութ, 13 Ապրիլ 1984, էջ 2:
18. Նոյն:
19. Տես՝ *յաւելած*· բիւ 2:
20. *Զարթօնք*, Պէյրութ, 14 Նոյեմբեր 1982, էջ 2:
21. *Զարթօնք*, Պէյրութ, 2 Դեկտեմբեր 1982, էջ 1:
22. Նոյն:
23. «Թուրքիա մտահոգ իր արեւելեան շրջաններէն», *Զարթօնք*, Պէյրութ, 7 Հոկտեմբեր 1983, էջ 2:
24. Նոյն:
25. Նոյն:
26. «ՆԱԹՕի ռազմափորձերը արեւելեան Թուրքիոյ մէջ», *Զարթօնք*, Պէյրութ, 10 Յունիս 1983, էջ 2:
27. «Մոսկուայի ձայնասփիւռը ՆԱԹՕի բրիտանական ռազմափորձերու մասին», *Ազդակ*, Պէյրութ, 19 Յուլիս 1983, էջ 5:
28. «Հայկական Ցեղասպանութիւնը չի շահագրգռեր Միացեալ Նահանգներու Հանրապետականները», *Զարթօնք*, Պէյրութ, 13 Սեպտեմբեր 1984, էջ 2:
29. «Ամերիկայի նախագահական դիմակրատ թեկնածուներ Մոնտէյլ եւ Ճեքսըն Հայկական Ցեղասպանութեան մասին», *Զարթօնք*, Պէյրութ, 26 Յունիս 1984, էջ 3:

30· «Հ·Ց·Դ· Հայ Դատի Ցանցախումբը 100·000 տոլար կը յատկացնէ Մոնտէյլի ընտրապայքարին», *Զարթօնք*, Պէյրութ, 10 Ապրիլ 1984, էջ 2:
31· *Զարթօնք*, Պէյրութ, 5 Օգոստոս 1983, էջ 2:
32· «Թրքական հակահայ ցնցումները կը սաստկանան — Մ[իացեալ] Նահանգներու Արտ[աքին] Գործոց Նախարարութիւնը չ'ընդունիր Հայկական Ցեղասպանութիւնը», *Զարթօնք*, Պէյրութ, 20 Ապրիլ 1984, էջ 2:
33· Նոյն:
34· «Հայ Դատի Ցանցախումբին կոչը՝ նախագահ Ռոնըլտ Ռիկընի», *Ազդակ*, Պէյրութ, 30 Օգոստոս 1984, էջ 1:
35· Նոյն:
36· *Wall Street Journal*, New York 2 October 1984. տես՝ «Ասալայի օրը», *Զարթօնք*, Պէյրութ, 27 Հոկտեմբեր 1984, էջ 2:
37· «Les Etats-Unis vont fournir des systems de defense aerienne à la Turquie», *L'Orient-Le Jour*, Beyrouth, 15 Novembre 1984, p. 1.
38· «Ռիկընի վարչութիւնը դէմ է մարդ[կային] արդարութեան», *Զարթօնք*, Պէյրութ, 11 Յունիս 1985, էջ 2:
39· Նոյն:
40· Նոյն:
41· *New York Times*, New York, Editorial, 29 April 1985. տես՝ *Զարթօնք*, Պէյրութ, 23 Մայիս 1985, էջ 2:
42· *Boston Globe*, Boston, Editorial, 18 April 1985. տես՝ *Զարթօնք*, Պէյրութ, 23 Մայիս 1985, էջ 2:
43· Զաւէն Մսըրլեան, «Հայկական Հարցի հոլովոյթը Մեծ Եղեռնի 70-ամեակին», *Խօսնակ*, Պէյրութ, ԻԸ· տարի, թիւ 12, Դեկտեմբեր, 1985, էջ 15:
44· United Nations, Economic and Social Council, E/CN. 4/Sub. 2/1985/S.R. 18, p. 3, pt. 33.
45· United Nations, Economic and Social Council, E/CN. 4/Sub. 2/1985/S.R. 39, Add. 2, pp. 4-5, pt. 33.
46· Տես՝ *Ծանօթ*· թիւ 43, էջ 10:
47· Նոյն:
48· Նոյն:
49· «Mise en garde de la Turquie sur la Question Arménienne», *L'Orient-Le Jour*, Beyrouth, 6 Decembre 1985, p. 1. Տես նաեւ *Զարթօնք*, Պէյրութ, 7 Դեկտեմբեր 1985, էջ 3:
50· «Ձորճ Տեօմէճեան կը խօսի Ողջակիզման եւ Հայկական Եղեռնի մասին», *Զարթօնք*, Պէյրութ, 15 Դեկտեմբեր 1985, էջ 2:
51· Տես՝ *Ծանօթ*· թիւ 43, էջ 15:
52· Նոյն:
53· «Մ[իացեալ] Նահանգներ-Թուրքիա համաձայնութիւնը վերանորոգուած», *Զարթօնք*, Պէյրութ, 22 Յունուար 1987, էջ 4:
54· Արարատ լեռ:
55· Տես՝ *Ծանօթ*· թիւ 53:
56· Զաւէն Մսըրլեան, «Դիւանագիտական գետնի վրայ Հայկական Հարցին հոլովոյթը 1986-ին», *Զարթօնք*, Ամանորի բացառիկ, Պէյրութ, 1 Յունուար 1987, էջ 7:
57· Այսինքն՝ Սինֆիանկ, կամ Չինական Թուրքեստան:
58· Տես՝ *Ծանօթ*· թիւ 56:
59· «Ալեք Մանուկեանի յուշագիրը պետական բարտուղար Ձորճ Շուլցին Ցեղասպանութեան Ոգեկոչման որոշմանագրին մասին», *Խօսնակ*, Պէյրութ, 1987, էջ 5-6:
60· «Թուրք-ամերիկեան սերտ գործակցութիւն Հայկական Բանաձեւին դէմ», *Ազդակ*, Պէյրութ, 12 Սեպտեմբեր 1987, էջ 4-5:
61· «After all it's only genocide», Editorial, *Daily News*, New York, 31 August 1987, p. 26.
62· *Nor Gyank*, Los Angeles, 20 October 1988, p. 50.
63· Նոյն:
64· «Bush and Dukakis on Armenian related issues», *Hay Gyank*, Los Angeles, 21 October 1988, p. 18.
65· «Թուրքիոյ մօտ ամերիկեան դեսպանը Հայկական Ցեղասպանութեան մասին», *Զարթօնք*, Պէյրութ, 4 Օգոստոս 1989, էջ 2:

66. Նոյն:
67. Նոյն:
68. *Զարթօնք*, Պէյրութ, 24 Նոյեմբեր 1989, էջ 2:
69. «Պուշի վարչութեան ընդդիմութիւնը Հայկական Բանաձեւին դէմ», *Զարթօնք*, Պէյրութ, 24 Նոյեմբեր 1989, էջ 2:
70. *Զարթօնք*, Պէյրութ, 1 Դեկտեմբեր 1989, էջ 2:
71. Տես՝ *ծանօթ*. թիւ 69:
72. «Ամերիկեան Հրեայ Ընկերակցութիւններու Միութիւնը կ'որոշէ զօրավիգ կանգնիլ Հայկական Բանաձեւին», *Զարթօնք*, Պէյրութ, 7 Դեկտեմբեր 1989, էջ 2:
73. Տես՝ *ծանօթ*. թիւ 69:
74. *Ազդակ*, Պէյրութ, 21 Նոյեմբեր 1989, էջ 1:
75. Նոյն:
76. *Ազդակ*, Պէյրութ, 24 Նոյեմբեր 1989, էջ 8:
77. Նոյն:
78. «Հայկական Յեղասպանութեան մասին Լիմընի նամակը Պուշին», *Զարթօնք*, Պէյրութ, 1 Դեկտեմբեր 1989, էջ 2:
79. *Հայրենիք*, Պոսթըն, 8 Դեկտեմբեր 1989, էջ 1:
80. Նոյն:
81. Անգլերէն տարազն է filibusterism, որ կը նշանակէ «յեղուզակութիւն, օրինականութեան գործընթացը օրինական միջոցներով խափանելու արարք»:
82. «Armenian Genocide Resolution SJR 212 withdrawn following Senate filibuster», *Hye Sharzhoom*, Fresno, vol. 11, N° 3, March 1990, p. 1.
83. «Campagne turque contre un projet pro-arménien du Congrès», *L'Orient-Le Jour*, 27 Février 1990, p. 3.
84. Տես՝ *ծանօթ*. թիւ 82:
85. *Զարթօնք*, Պէյրութ, 21 Նոյեմբեր 1991, էջ 1:
86. «Երեւանի մէջ բացում ամերիկեան դեսպանութեան», *Զարթօնք*, Պէյրութ, 6 Փետրուար 1992, էջ 1:
87. «Ճէյմըս Պէյքըր Հայաստանի մէջ», *Զարթօնք*, Պէյրութ, 13 Փետրուար 1992, էջ 1:
88. «Հայաստանի խորհրդարանական պատուիրակութիւն մը Քոնկրէսի հրաւէրով Մ[իացեալ] Նահանգներուն մէջ», *Զարթօնք*, Պէյրութ, 25 Մարտ 1992, էջ 1:
89. *Ապագայ* (անգլերէն բաժին), Մոնթրէալ, 27 Ապրիլ 1992, էջ 9:
90. *Արարատ*, Պէյրութ, 27 Մարտ 1992, էջ 1:
91. *Զարթօնք*, Պէյրութ, 24 Մայիս 1992, էջ 3:
92. *Ազդակ*, Պէյրութ, 18 Մայիս 1992, էջ 1:
93. Նոյն:
94. Նոյն:
95. *Զարթօնք*, Պէյրութ, 27 Մայիս 1992, էջ 1:
96. Նոյն:

THE FOREIGN POLICY OF THE UNITED STATES OF AMERICA AND THE ARMENIAN QUESTION 1977 - MAY 1992
(Summary)

ZAVEN MESSERLIAN

Relying mainly on Armenian newspaper information and various official documents both Armenian and American, the article endeavours to give an account of the USA foreign policy vis-a-vis the Armenian Question. The story thus told covers a period of fifteen odd years (1977-1992), being the second installment of an article the first part of which was published in the *Haigazian Armenological Review*, vol. VI, 1977-78, pp. 71-104.

The article published here brings to light the ambiguous policy of the White House officials, the American Congressmen & the representatives in spite of the various declarations made by them on various occasions; moreover it portrays the pro-Turkish stand of almost all the American officials, big or small, who helped to ram The American State ship. This general survey presented here will definitely help better understand the undercurrents which formulated the American Policy both towards the Soviet Armenian Republic of yesterday and the Independent Armenian Republic of today.

ՊՈԼՍԱՀԱՑՈՒԹԻՒՆԸ, ԲԱՐՁՐԱԳՈՑՆ ԴՈՒՌԸ ԵՒ ԱՑԼ ԲԱՆԵՐ (30 Սեպտեմբեր 1895)

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ

1.

Գրեթէ դար մը եղաւ Պոլսոյ մէջ յառաջացած այն խլրտումներուն՝ որոնցմով հայութեան փոքր հատուած մը փորձեց յիշեցնել օսմանեան իշխանութիւններուն, թէ չա՛տ էին ուշացած բարենորոգումները եւ առ այդ՝ անհրաժեշտ էր գործադրել զանոնք՝ ըստ Պերլինի 1878 թուակիր դաշնագիրի վաթսունմէկերորդ յօդուածին: Այդպէս՝ յիշեցում մը լոկ, որովհետեւ Սուլթանին աչխարհավարութիւնը կարծողացեր էր բարենորոգումները պահել գրուանի ներքեւ եւ, ըստ ոմանց, մատնել մոռացութեան: Միւս կողմէ՝ Բարձրագոյն Դուռը[1] եւ Սուլթանն ըրեր էին ու տակաւին կը չարունակէին ընել կարելի եւ անկարելի ամէն բան՝ հրապարակէն չքացնելու համար այդ դաշնագիրով միջազգային դիւանագիտական սեղան հասած Հայկական Հարցը, մի՛չտ ալ հաւատալով որ չքացնելով տէրը հարցին՝ կարելի էր չքացնել հարցը զի՛նք, ահա թէ ինչո՞ւ համար տասնիններորդ դարու ութսունական թուականներէն ասդին հայուն հող հայրենին զգեցաւ կարմիր՝ թոյր ու երանգովը հայուն կաթած արիւնին, եւ ամբողջ աչխարհ մը ընծայուեցաւ քանդուած ու քայքայուած՝ քանդումովն ու քայքայումովը հայութեան: Իրա՛ւ էր, Սուլթանը կատարեր էր, ու կը կատարէր տակաւին, Պուտափեչտի համալսարանի դա-

սախօա, հունգար թրքագէտ եւ թուրանագէտ Արմենիուս Վամպերիին կատարած իր հաստատումը, թէ «պիտի հանդարտեցնեմ այս հայերը: Այնպիսի հարուած մը պիտի իջեցնեմ անոնց ականջին, որ զգաստացնէ զանոնք եւ նուազեցնէ անոնց յեղափոխական նկրտումները»[2]: Այլ առիթով մը Սուլթանը յայտարարեր էր Գոլսոյ գերման դեսպան Իշխան Բատսլենին, թէ «կ'երդնում, որ վիզ պիտի չծռեմ հայերուն անիրաւ ճնշումներուն առջեւ, եւ նախամեծար կը համարեմ մահը՝ քան թէ համաձայնութիւնս [հայերն] ինքնիշխանութեան տանող բարենորոգումներուն»[3]: Աւելին՝ Սուլթանը գրեթէ նոյն ոճով էր խօսեր Գոլսոյ Աշըգեան Պատրիարքին ալ՝ 1889-ի Դեկտեմբերի երկրորդ կէսին կայացած հանդիպումի մը ընթացքին, երբ, ինչպէս Պատրիա՛րքն իսկ կը հաղորդէր էջմիածինի գահակալ Մակար Առաջինին՝ «ի ձեռն անձնական քարտուղարի իւրոյ յայտնեալ թէ անհնարին է ինձ զիջանիլ տալ զինքնօրէնութիւն զոր հայք երազեն, եւ ոչ միայն ինքն՝ այլ եւ զամենեցուն որ գկնի իմ գալոց են սուլթանք, նզովք դնեմ ի վերայ չտալ հայոց այնպիսի ինչ, այլ մանաւանդ զննդումն բովանդակ իսլամութեան յերեսանց երկրի ուխտ դնեմ պատերազմի ընդդէմ անկախութեան հայոց»[4]:

Ցաւակ է ամէն ինչ: Հայ-թրքական յարաբերութիւններու պատմութեան մէջ չկայ տող մը, որ հաստատէ հակառակը սուլթանական սա աշխարհավարութեան. այսուհանդերձ՝ հիմա մեր նպատակը չէ լոյսին հանել մանրամասնութիւնները անոր, որոնք եկան գրելու էջերը յետպերլինեան շրջանի Հայոց Պատմութեան, ոչ ալ իրենել ալքերը հայ-օսմանեան յարաբերութիւններուն, որովհետեւ չենք որոշած տալ մէկ պատումը տասնիններորդ դարու վերջին մէկուկէս տասնամեակին, եւ ոչ ալ կը նպատակադրենք գծել ուրուագծային մէկ պատկերը եղածին ու պատահածին: Ա՛յլ պատմութիւն է այդ մէկը եւ կը պահանջէ ուրիշ ճիգ ու աշխատանք: Ընդհակառակը, հիմա ինչ որ պիտի փորձենք կատարել հոս՝ պիտի ըլլայ փոքր, իսկապէս շա՛տ փոքր մէկ վերբերումը անոր՝ որ ունեցաւ իր ինքնուրոյն տեղը հայ-օսմանեան յարաբերութիւններուն մէջ եւ հայութեան արժեց կորուստն ա՛նուազն հազարեակ մը մարդու: Իրականութեան մէջ՝ ցաւի ու տառապանքի, արիւնուտի եւ սպանդի երկարաձգուող շղթային վրան անիկա եկաւ ըլլալու փոքր, շա՛տ փոքր օղակ մը լոկ, մինչդեռ «դէպքերէ» եւ «ըմբոստութիւններէ» կազմուած այդ շղթան հայութենէն խլեց կեանքը 300·000 մարդու եւ տուաւ հէնքը արեւմտահայ պատմութեան կարճ հատուածի մը ու զայն վերնագրեց «Հայաստանի ջարդերը»:

Պատմութիւնն այսպէ՛ս կը ճանչնայ երկարաձգուող շղթան այն ջարդերուն՝ որոնք խեղդամահ ըրին հայութիւնը 1895-1896-ի ամբողջ

տեւողութեան: Իրականութեան մէջ՝ այդ չղթային առաջին օղակը պէտք է գետեղել հեռու հեռուր չրջանէ մը ներս, որուն համար այժմ կարելի է տալ ո՛չ մէկ թուական: Կը բաւէ միայն ըսել, թէ Պերլինի 1878 թուակիր դաշնագիրէն անմիջապէս ետք սկսան գործադրուիլ «բարենորոգումները», եւ ջարդերը յաջորդեցին իրարու: Այսպէս՝ 1878–ին Կիլիկիոյ մէջ ընդհանրապէս ջարդուեցան 3000 հայեր, եւ ապա՝ Արեւմտեան Հայաստանի զանազան չրջաններուն մէջ՝ 1879–ին 10,000, 1880–ին՝ 5000, 1887–ին 2000 եւ 1890–ին՝ 3500 հայեր: Սկըզբնաղբիւրներն ու պատմագրական գրականութիւնը ցոյց կու տան՝ որ անկախ յականէ անուանէ չիշուած այս «բարենորոգումներէն»՝ 1880–1890–ի չրջանին Հայաստանի մէջ ընդհանրապէս կոտորուեցան 150,000 հայեր, եւ յաջորդ հնգամեակին ալ՝ մօտ 15,000 ուրիշներ: Ընդհանուր գումար՝ 193,000 հայ մարդ[5]:

Ահա՛սիկ արդիւնքը Պերլինով խոստացուած բարենորոգումներուն, զորոնք Բարձրագոյն Դուռը յանձն կ'առնէր հաղորդել մեծ տէրութիւններուն[6]: Հաղորդե՞լ՝ ըրա՞ւ երբեք: Այսօր կայ ո՛չ մէկ փաստաթուղթ որ վկայէ այդ մէկը: Ընդհակառակը՝ դաշնադիր կողմերն իրե՛նք էին, որ ի վերջոյ, անգլիական հետապնդումներու որպէս հետեւանք[7], եւ յաճախ ակամայ կերպով, չարժեցան: Արիւն կու լար Հայաստան Աչխարհը եւ արեւմտեան հանրային ճիչն ու աղաղակը հասեր էին գագաթը Ալպիոնին: «Կացութիւնն եղաւ սարսափելի՝ հայկական նահանգներուն մէջ»՝ կը հաստատէր Գրիգոր Զօհրապ 1913–ին եւ «Բարձրագոյն Դուռ ներկայացուած հաւաքական յուշագիրով մը վեց պետութիւնները պահանջեցին իրագործումը խոստացուած բարենորոգումներուն: Յուշագիրը կը յայտնէր թէ ի՞նչ բաներ պիտի ընդգրկէին այդ բարենորոգումները: Դուռն անպատասխան ձգեց այս յուշագիրը[9]:

«Անցան քանի մը տարիներ: Եւրոպայի անհոգութեան չնորհիւ Թուրքիոյ մէջ հազուադէպ եղող որոշ ձեւով մը եւ չարունակականութեամբ մը տեւեցին հայերուն հալածանքները: Հայերը կողոպտուեցան իրենց հողերէն Հայաստանի բոլոր կողմերը: Իրենց յուսալքութեան մէջ՝ անոնք ապստամբեցան քանի մը անգամ (Սասունի առաջին դէպքերը, 1894): Բարձրագոյն Դուռը պատասխանեց ճնշումով եւ ջարդերով:

«Պահ մը եւրոպական եւ քրիստոնեայ խղճմտանքը հարց տուաւ թէ հեղուած այս արիւնին մէկ մասին պատասխանատուութիւնը չէ՞ր իյնար իր վրայ: Մեծն Բրիտանիան, Ֆրանսան եւ Ռուսիան պահանջեցին գործադրութիւնը բարենորոգումներուն, զորոնք Թուրքիան Պերլինի Դաշնագիրին 61–րդ յօդուածով յանձն էր առեր կատարել հայկական նահանգներուն մէջ: Այս երեք մեծ պետութիւնները պատ-

բաստեցին նոյնիսկ յուշագիր մըն ալ[9] եւ բարենորոգումներու ծրագիր մը՝ զոր Դուրը մերժեց[10]: [Սակայն] հաղորդեց անոնց այն՝ ինչ որ կ'ըսէր թէ որոշած էր կատարել»[11]: Առ այդ՝ Շաքիր Փաշայի նախագահութեան տակ յանձնախումբ մը ղրկուեցաւ Հայաստան[12]:

Սեղմ, չա՛տ է սեղմ Զօհրապը հարցերը ներկայացնելու իր ձեւին մէջ, որ հազիւ թէ կարող է լոյսին բերելու իսկական մէկ պատկերը իրականութեան, ահա թէ ինչո՞ւ՝ ամբողջական ընծայելու համար զայն հոս անհրաժեշտ կը նկատենք դիմել Օրմանեանին ալ, որ հակառակ ունեցած իր կարգ մը կրկնութիւններուն՝ ունի հարցերը յստակացնող քանի մը կէտ:

Սասունի կոտորածէն ետք, կը ճշդէ անիկա, մեծ պետութիւններուն կողմէ «հայաբնակ գաւառներ կոչուած շրջանակը կը ճշդուէր վեց կուսակալութեանց վրայ, որոնք են Վան, Կարին, Բաղէշ, Խարբերդ, Տիգրանակերտ եւ Սեբաստիա, եւ այդ Վիլայէթը Սիքքէ կոչուած վեց կուսակալութեանց շրջանակին համար յստակ վարչական ծրագիր մը կը սկսէր ուսումնասիրուիլ Պերլինի դաշնագիրին ծրագիրին գործադրութիւնը ստանձնող Անգլիոյ եւ Գաղիոյ եւ Ռուսիոյ երեք դեսպանատուներէն, որոնք գործի կը ձեռնարկէին 1895 Ապրիլ 6–ին ու երեք շաբաթէն կ'աւարտէին Ապրիլ 28–ին[13], եւ 29–ին Օսմանեան կայսրութեան կը ներկայէին Մայիսեան ծրագիրը[14]: Ծրագիրին քննութիւնը երկարեցաւ հինգ ամիս եւ աւելի, երեք դեսպանատուներու մէջ համերաշխութիւնը պակսեցաւ, եւ գլխաւորապէս Ռուսիա չէր կրնար մոռդիւր զիջանիլ որ հայկական շրջանակին կից ուրիշ հայկական շրջանակ մը ստեղծուէր, որ իրենինէն լաւագոյն կացութիւն մը ունենար, ուստի դժուարութիւններ առջեւ կը դնէր Ռուսիոյ նախարարապետը[15], եւ օսմանեան արքունիքը օգուտ կը քաղէր ամէն պզտիկ պարագայէ: Բանակցութիւնները շարունակեցին եւ հետզհետէ ծաւալեցան եւ կանուխէն կազմուած ակնկալութիւններ սկսան թեթեւնալ, ինչ որ դիւրաւ կրնար նախատեսուիլ դիւանագիտական յարաբերութեանց խորը առանց նախապաշարումներու դիտող ոեւէ անձէ: Օսմանեան կառավարութեան վրայ բռնադատեալ ճնշում բանեցնելու պայմանը Ռուսիայէ[ն] մերժուեցաւ: Անգլիա վախցաւ, որ ձեռնարկը բոլորովին վիժէ, Գաղիա չկրցաւ ազդուապէս յայտարարուիլ Ռուսիոյ դէմ, որուն հետ շահերով կապուած էր, իսկ Ապտիւլհամիտ կասկածեցաւ որ բոլորովին մերժելով կրնայ դիմացինները իրարու մօտեցնել, վերջապէս առժամեայ համակերպութեամբ գործը տեղ մը կապելու մտօք ամենուն վրայ տիրել կը սկսէր»[16]:

Իրականութեան մէջ՝ Սուլթանը քաջատեղեակ էր եւրոպական դիւանագիտութեան ներքին սադրանքներուն, եւրոպական պետու-

Թիւններն իրարու հակադրող ուժերուն, եւ մանաւանդ հինէն, չա՛տ հինէն եկող աչխարհավարութեանը ոուսին։ «Ռուսերը համամիտ չէին Թուրքիոյ մէջ անկախ Հայաստանի մը հիմնումին»՝ պիտի գրէ Սուլթանն իր Ցուշատետրին մէջ՝ երբ ա՛լ վաղուց էր որ իջեր էր իր գահէն, «որովհետեւ հայեր կը գտնուէին իրենց ալ սահմաններէն ներս. այնատեն անո՛նք ալ պիտի փափաքէին միանալ ազատ հայերուն։ Ռուսերուն նպատակն էր մատ մը մեղր քսել հայերուն բերանը, իսկ փորձանք մը փաթթել Թուրքիոյ գլխուն»[17]։ Տեղեակ այս բոլորին՝ Սուլթանը չէր իսկ մտածեր հայկական նահանգներէն ներս իրագործելի որեւէ բարենորոգումի մասին։ Ընդհակառակը, ըստ իրեն, բարենորոգումներն իրենց խորքին մէջ խաղն էին արեւմտեան դիւանագիտութեան, եւ անոնց որպէս հետեւանքն ինչ որ կը պատահէր սահմաններէն ներս Օսմանի Աչխարհին՝ լո՛կ ներքին հարցն էր Օսմանեան կայսրութեան[18]։

Ի՛նչ որ ալ ըլլային հարցերը եւ ինչպէ՛ս որ ալ ընթանային անոնք՝ արեւմտեան դիւանագիտութեան եւ Օսմանեան Կայսրութեան միջեւ տարուող բանակցութիւնները տուին ոչի՛նչ՝ որ ըլլար դրական ու գնահատելի։ Օրերը յաջորդեցին իրարու եւ հայուն արիւնը վազեց առատօրէն, եւ առաջին հերթին՝ Սասունն ու Տալուորիկն էին որ իրենց վրան զգացին քաչն ու ծանրութիւնը Սուլթանի անոպայ թաթին եւ անագորոյն ճնշումն անոր աչխարհավարութեան, որովհետեւ, ինչպէս կը հաւատար Սուլթանն ինք, այդ շրջանին մէջ էին բնակեր հայ յեղափոխականները, որոնք պատճառ կը հանդիսանային թուրքին եւ մահմետականին սպանութեան։ «Այս հայ յեղափոխականները»՝ կը գրէր անիկա, «ճարպիկ կերպով չարունակեցին իրենց չարժումները Սասունի շրջանին մէջ։ Այս հայ-մահմետական բախումին վերջ մը տալու համար այս շրջանը զրկեցի Մարաչախտ Զեքի Փաչայի հրամանատարութեան ներքեւ գտնուող բանակը եւ զսպեցի ըմբոստութիւնը։ Մեծ պետութիւններն իրարուետեւէ խուժեցին պալատ»[19]։

Սկսուած էր խաղը եւ հո՛ն էին ջարդերը։ Սուլթանը վերադարձեր էր իր սահմաններէն ներս յառաջացող հարցերը լուծելու իր գիտցած մի՛ակ ձեւին, որ հրիտակուեր էր իրեն դեղին իր ապ ու պապերէն։ Այսուհանդերձ՝ ցոյց տալու համար թէ կ՛ընէր որեւէ բան՝ Սասունի ջարդերէն եւ անոնց յաջորդող զանազան այլ ջարդերէն ետք՝ անիկա Մուշ առաքեց յանձնախումբ մը՝ ըստ իրեն պատրաստելու համար ծրագիր մը անհրաժեչտ բարենորոգումներու եւ քննելու դէպքերը, որոնք պատահեցան[20], եւ չուշացաւ իր արտաքին գործերու նախարար Թուրխան Փաչայի միջոցով յայտնելու, ինչպէս իր 27 Օգոստոս 1895 թուակիրով Պոլսոյ Ֆրանսական դեսպան Փոլ Քամպոն կը գրէ Ֆրանսայի արտաքին գործերու նախարար Հանոթոյին՝ թէ

«Շաքիր փաշան մեկներ էր ամենայն իրաւասութեամբ գործադրելու համար Բարձրագոյն Դուռի վերջին ծանուցագիրով նախատեսուած բարենորոգումները եւ գործէ կախակայելու զեղծումներու պատասխանատու պաշտօնատարները»[21]: Սակայն խորապէս գիտակ ըլլալով Օսմանեան իշխանութիւններու աշխարհավարութեան եւ գործելակերպին՝ Մեծ Պետութիւններու Պոլսոյ դեսպաններն ալ Սասուն ու Մուշ փութացուցին իրենց ներկայացուցիչները՝ հակառակ Բարձրագոյն Դուռին կատաղի ընդդիմութեան[22]: Սկսեր էր լռելեայն ճակատում մը երկուսանք:

Այժմ մեր հետաքրքրութեան սահմաններէն դուրս կ'իյնան պատումն այս ճակատումին եւ արդիւնքն անոր[23]: Կը բաւէ միայն ըսել, թէ, հակառակ սուլթանական խոստումներուն եւ արտաքնապէս ցոյց տրուող ճիգ ու աշխատանքին՝ կատարուեցաւ ոչինչ եւ փոխուեցաւ ոչ մէկ բան կացութենէն, եւ ապա, ինչպէս կը վկայէ ամերիկացի միսիոնար մը, «անցան գարունն ու ամառը [եւ] հասաւ տարեդարձը Սասունի ջարդերուն: Ապահովուած էր ոչ մէկ հատուցում, ոչ իսկ պատիժը որեւէ մէկ պաշտօնեայի, ոչ ալ որդեգրուած էր մէկ հատիկ իսկ բարենորոգում: Կը թուէր թէ Եւրոպան կը փորձէր լուծեան մատնել Հայկական Հարցը:

«[Իսկ] հայերն զգացին, որ այս պիտի նշանակէր մահաքունն իրենց ցեղին»[24]:

Այսի՞նքն: Սակայն ճի՛շտ հոս ալ չարժեցան կարգ մը հայեր:

2.

Այո՛, չարժեցան կարգ մը «հայեր, կամ աւելի ճիշտ՝ հայոց դասը սառնձնած ըլլալու կերպարանն առնող հնչակեան գործիչներ[ը, որոնք] տեսնելով որ վստահութեամբ սպասուած ելքը պարապի ելլալու նշաններ կը ցուցնէ՝ հրապարակային ցոյցի որոշում կու տան»[25]: Միւս կողմէն՝ Հնչակեան Կուսակցութեան կեդրոնական Վարչութիւնն ինքն էր, որ պիտի յայտարարէր Հնչակի թիւ 16-ի յաւելուածով, թէ ինք կը գործէր «իբրեւ հայ ժողովրդի ներկայացուցիչ եւ նրա ձգտումների արտայայտիչը»[26]: Այսուհանդերձ՝ այժմ սխալ է յունական էսթիա թերթին այն կարծիքը թէ «յոյն ժողովրդի մեծ նպատակների ժառանգորդներն են [հայերը] ... եւ թէ հայկական յեղափոխական կազմակերպութիւնները այժմ իրենց վրայ են վերցրել Արեւելքի ազգային ազատագրման զգալի մասը»[27]: Իրականութեան մէջ՝ տուեալ պահուն ո՛չ Հնչակեան եւ ոչ ալ որեւէ այլ կազմակերպութիւն այդքան լայն էր բացած կարկինն իր գործունէութեան

եւ երբեք ալ չէր մտածեր կենալ գլուխը Արեւելքի մէջ ազգային ազատագրական որեւէ շարժումի: Ընդհակառակը՝ այդ վայրկեանին այդ մէկը գուցէ կարելի կրնար ըլլալ լոկ որպէս հեռաւոր ծրագիր մը, մինչդեռ պատմական վայրկեանը կը պահանջէր այլ բան: Ըստ Վերէտտինի՝ Մունսել Պլիսի՝ «Թուրքիոյ մէջ լաւ կարգ ու սարքի մը համար կատարուած բանակցութիւններէն ծագելիք որեւէ նպաստաւոր արդիւնքի մը երկար սպասումը առիթ մը ընծայեց հնչակեաններուն [որ շարժէին]: Թուրքեր հակամէտ էին հաւատալու թէ տկարութիւնն ու վախը տիրական էին անգլիացիներուն մօտ, այլապէս կրնար վրտանգուիլ Տարտանելի ջրանցքը: Ապա հասան ամէն տեսակ տեղեկութիւններ: Հնչակեանները չրջանառութեան դրին պատմութիւն մը, թէ անգլիական դեսպանը կը փափաքէր քանի մը հայերու սպանութիւնը Պոլսոյ փողոցներուն մէջ, որպէսզի արդարացում մը ունենար նաւատորմիղը կանչելու»[28]:

Թէ որքա՛ն ճիշտ էր այս «պատմութիւնը» ցոյց տուին յետագայ դէպքերը· արդարեւ՝ ցոյցէն եւ սպանութիւններէն քանի մը օր անց՝ տակաւին ոչ մէկ զրահաւոր էր շարժեր դէպի Պոլիս: «Տարաձայնութիւն մը կար հայերուն մէջ թէ անգլիական զրահաւորներ 8 ժամէն Վոսփորէն պիտի անցնին· 40 ժամ կ'ըլլայ· ամէն տեղ մահ, կոտորած, հազարաւոր ձերբակալութիւն ու զրահաւորները դեռ չեմ գիտեր ինչի՞, [եւ] որի՞ կը սպասեն...»[29]՝ հարց կու տար վկայ մը:

Իրականութեան մէջ, ինչպէս կը վկայէ 30 Սեպտեմբերի Պոլսոյ ցոյցին կազմակերպիչներէն եւ դեկավարներէն Կարապետ Սահակեանը[30]՝ «անգլիական դիւանագիտութիւնը, որ սուր հոտառութիւն ունի, ըմբռնելով հայ կուսակցութիւններու հոգեբանութիւնը՝ անուղղակի կերպով մերձենալ, դրդել սկսաւ, ուղղութիւն տուաւ, քաջալերեց՝ յայտնելով Հնչակեան Կուսակցութեան Պոլսոյ ներկայացուցիչին[31]՝ թէ «մինչեւ որ ձեր ատրճանակները Պապը Ալիի առջեւ չի գոռան՝ դիւանագիտութիւնը չպիտի շարժի եւ Մայիս 11–ը[32] օղը պիտի ցնդի»[33]: Նոյն դերը խաղացած եւ նոյն լեզուն գործածած է Անգլիան Հնչ[ակեան] կուսակցութեան Լոնտոնի կեդրոնին մօտ, ուղղակի թէ անուղղակի մղում տալով գործին: ... Եւ ցոյց մ'ընելու գաղափարը արտայայտող նամակը կ· Պոլսոյ Հնչ[ակեան] մասնաճիւղին կողմէ դէպի Լոնտոնի կեդրոնը ճամբայ ելած ատեն՝ նոյն իմաստով նամակ մը Լոնտոնի կեդրոնէն ճամբայ կ'ելլէր դէպի կ· Պոլսոյ մասնաճիւղը»[35]:

Ի՛նչ որ ալ ըլլային իրականութիւնները եւ ինչպէ՛ս որ ալ դրսեւորուէին անոնք՝ ա՛յլ էր, սակայն, աշխարհընկալումը Օսմանի Աշխարհին, որ մի՛չտ ալ հաւատաց, թէ բոլոր չարժումներու եւրին կը կենար անգլիական դիւանագիտութիւնը: «Թուրք պաշտօնատար-

ները»՝ կ'ըսէր 4 Հոկտեմբերին Պոլիսէն Լոնտոն առաքուած հեռագիր մը՝ «տակնուվրայութիւններուն կը նային որպէս ուղիղ հետեւանքը Եւրոպայի, մանաւանդ Անգլիոյ՝ Թուրքերուն դէմ Հայոց ի նպաստ չարժումին»[36]: Իր կարգին՝ ոստիկանութեան նախարար Հիւսէին Նազըմ Փաշան կը գրէր իր 10 Հոկտեմբեր 1895 թուակիր տեղեկագիրով, թէ «քաջալերուելով իրարայաջորդ ներումներէն՝ հայ յեղափոխականներն անկարգութիւններ ստեղծեր էին երկիրին բոլոր կողմերը: Ձգտելով իրենց յառաջացուցած այս խռովութիւններէն՝ յեղափոխականներն ուզեցին գործն աւելի յառաջ տանիլ: Իմացուած էր, որ ժամանակէ մը ի վեր անոնք բազմապատկեր էին իրենց քանդումներն ու յարձակումները՝ քաջալերուելով [այն միտքէն թէ] եթէ նոր եւ արիւնագին անկարգութիւն մը ծագէր Պոլսոյ մէջ՝ Պոլիս կըրնային գալ նաւատորմիղները եւրոպական պետութիւններուն: Հայոց Պատրիարքին պահանջով ազատ արձակուած հայերն ալ կ'ընէին այն՝ ինչ որ կը կամէին՝ հաւատալով որ պիտի կրէին ոչ մէկ պատիժ: [Ա ւ այդ], խրախուսուած, սկսան գրգռութիւն յառաջացնել»[36]:

Այժմ յստակ է, որ Սասունի ջարդերուն եւ անոր հետեւանքներուն մասին տարուած պաշտօնական քննութիւնները տուին ո՛չ մէկ արդիւնք՝ բացի ամերիկեան, անգլիական եւ արեւմտեան այլ երկիրներու կողմէ կատարուած նպաստի արտայայտութենէ մը, որ ուղղուեցաւ դէպի աղիտահար շրջանը, մինչ բանակցութիւնները չարունակուեցան իրագործելի բարենորոգումներու եւ արձանագրութիւն չգտած բազմերես սակարկութիւններու չուրջ, իսկ ցաւն ու տառապանքն աճեցան անհունօրէն: Կը թուի թէ ա՛յս էր հիմնական պատճառը, որ «1895–ի աշնան հոս[37] դեսպանութիւնները խրախուսեցին հայերը, որ աղերսագիր մը ներկայացնէին մեծ վեզիրին՝ իրենց բանակցութիւնները դուրս բերելու համար անելէն»[38]: Այս խրախուսանքը եւ անոր տուն տուող յուսահատութիւնը հայերուն, եւ մանաւանդ ամուլ երկարաձգումը բանակցութիւններուն, աւելի ճիշտը՝ ձգձգումը, չա՛տ երկար ձգձգումը անոնց, պիտի պատճառ հանդիսանային որ կարգ մը հայեր դառնային անհանդարտ, եւ, ինչպէս կը հաստատէ Ֆրետերիք Տէյվիս Կրինը՝ «քանի մը տաք-գլուխներ» որոշէին ցոյց մը կազմակերպել Պոլսոյ մէջ՝ յուսալով որ անիկա պիտի արագացնէր լուծումը հարցերուն[39]:

Գրեթէ նոյն ձեւով կը խօսին հայկական աղբիւրներն ալ: «Հրէնչակեաններ, դեսպաններու զիջողութենէն յոգնած, կասկածելով, որ իրենց աշխատանքը դրական արդիւնք պիտի չունենայ, կ'որոշեն Պոլսոյ մէջ երկրորդ ցոյց մը ընել: Իրենց առաջին ցոյցը[40] գիրենք զգաստութեան չէր բերած...»[41]: Եաղըճեանի այս կեցուածքին դէմ Ճանկիւլեանն իր կարգին խանդավառութեամբ կը գրէր յետագային,

թէ «Պոլսէն մեր ընկերները կը գրէին, թէ իրենք միշտ կը գործեն, մանաւանդ երբ առիթը ներկայանայ, եւ երբ համոզուին, որ ձեռնարկուելիք գործէն արդիւնք մը առաջ պիտի գայ, եւ մեր դատին նպաստաւոր պիտի ըլլայ: [Աքէյի[42] մէջ] գիտէինք, որ Պոլսոյ մէջ ցոյց մը պիտի ըլլայ· բնական էր, որ օրէ օր այդ լուրն առնելու բարեբախտութիւնն ունենայ[ու] սպասէինք»[43]:

Այսպէս՝ երբ համոզուէի'ն: Ու կը թուէր թէ համոզուեցա'ն ոմանք, եւ հաշուարկումները ցոյց տուին դրական արդիւնքը պատահելիքներուն· չահի ու պարտքի տոմարը յստակ էր շատ, որուն սիւնակներուն մէջ զետեղուածը մարդկային կեա'նքն էր սակայն, ի՞նչ փոյթ որ Սուլթանն ըլլար մէկէ աւելի անգամներ յայտարարած իր կեցուածքը հայերուն հանդէպ: Իրականութեան մէջ, սակայն, սա տոմարը այլ բան ցոյց կուտար ուրիշներու մօտ: Ըստ Լոնտոնի պետական բանբեր Սթանտըրտի՝ Սուլթանը կը ձգձգէր բարենորոգումներու հարցերը եւ առ այդ՝ կ'երկարէին բանակցութիւնները, որոնք աւելի եւս կը դժուարանային ռուսական ու ֆրանսական կասկածամտութեան պատճառով: Սակայն եթէ հայերը կարենային քչիկ մըն ալ ըլլալ համբերատար՝ Սուլթանն ստիպուած պիտի ըլլար ընդունելու բարենորոգումները, որոնց վրայ կը պնդէր Լորա Սոլզպըրին: Իրականութեան մէջ՝ հայկական կուսակցութիւնները գործեցին մեծ սխալ մը Եւրոպայի ցոյց տալով թէ որքա'ն վարպետ էին կոտորած կազմակերպելու մէջ[44]: Կոտորա՞ծ՝ սակայն անիկա բնաջնջումն իսկ էր հայութեան: Սուլթանին համար հարցերը լուծելու լաւագոյն կերպն էր այդ: «Այդ բնաջնջման համար»՝ կը հաստատէ Մարկոսեանը՝ «սուլթանական կառավարութեանը շատ բան պէտք չէր: Միայն թէկուզ ամենաջնջին առիթներ, որոնք նա կարողանար օրակել որպէս ապաստմբութիւն: ...Սկսած Մայիսից մինչեւ Սեպտեմբեր Սուլթանը չէր էլ մտածում ռեֆորմների[45] վերաբերեալ Իրատէ[46] հրատարակել· ընդհակառակն, նրա կառավարութիւնը օրեւէ ցոյցի առիթի էր սպասում, որպէսզի հայկական մասսայական[47] ջարդեր կազմակերպի: Եւ ահա Սեպտեմբեր 30–ին տեղի է ունենում մի ցոյց»[48]: Այսուհանդերձ՝ Սուլթանը որ ի վերջոյ ստիպուեցաւ ընդունիլ Պոլսոյ արեւմտեան դեսպաններուն պատրաստած բարենորոգումներու ծրագիրը եւ ստորագրել զայն՝ կանխեց ցոյցի այդ արարքը իր աչխարհին զանազան չրջանները յղելով հրահանգ մը, թէ «ստուգուած է, որ անիծեալ հայ յեղափոխականները դարձեալ կը պատրաստուին կոտորել իսլամները, առեւանգել իսլամուհիները եւ աղտոտել մզկիթները: Ի մօտոյ հոգ ալ այդպիսի գայթակղելի ձեռնարկներ պիտի ընեն եղեր: Ուստի բոլոր պաշտօնական անձերուն եւ իսլամ ժողովուրդի գլխաւորներուն ծանուցանելով յեղափոխականներու այս չար խոր-

հուրդները՝ յորդորեցէք զանոնք, որ զգոյշ գտնուի իսլամ ժողովուրդը, եւ դուք ալ կարեւորն ի գործ դնելով՝ չուտով տեղեկագրեցէք։ Հակառակ պարագային՝ զինքով պատասխանեցէք»[49]։

Սակայն Սուլթանին մոլեռանդութենէն եւ լեղի հայատեցութենէն տարբեր չէր ունեցածը իր նախարարներուն։ Այսօր, դէպքերէն հարիւրամեակ մը ետք, լոյսին տրուած օսմանեան արխիւային նիւթերը կու գան փաստելու սա մէկը՝ հակառակ որ անոնք անցուած են մաղէ, ջոկուած եւ ստուգուած տասնեակ անգամներ, եւ զտուած այդքան՝ որ իսկական փաստերէն կը մնայ հազիւ թէ ոչինչ տոկոս մը միայն։ Այժմ կարելի չէ գիտնալ թէ ո՞վ էր իսկական վարիչը Օսմանեան Աչխարհին, որովհետեւ այդքա՛ն նոյնանման են չարժուձեւները Սուլթանին եւ իր վարչական պաշտօնատարներուն։ Իսկ անոնցմէ եօթը տասնամեակ ետք հրապարակ իջած Թուրք պատմագրութի՞ւնը, որ, հետաքրքրակա՛ն է, կարողացաւ գտնել «իսկական» պատճառները անցեալ դարավերջին պատահած դէպքերուն։ Այսպէս, ըստ Թուրք ժամանակագիր Տանիշմենտի, 3 Յունիս 1895–ին Սուլթանը մերժեց հայկական բարենորոգումներու պահանջները՝ «զանոնք անհամատեղելի գտնելով [Օսմանեան կայսրութեան] անկախութեան հասկացողութե՛ան [իսկ]։... Վերջապէս ահաւասիկ ա՛յս է պատճառը, որ հայ կուսակցականները որոշէին դէպք մը ստեղծել Պոլսոյ մէջ չարժումի մղելու համար Եւրոպան»[50]։ Տանիշմենտ ի՛նքն էր որ «Հայկական խռովութիւն» կոչեց Պոլսոյ 30 Սեպտեմբերի խաղաղ ցոյցը, մինչ Էօզթունան պարզօրէն եզրակացուց թէ «ըմբոստութիւն» մըն էր անիկա եւ «ապստամբութիւն», զորոնք հայերն ու անգլիացիներն ստեղծեցին համագործակցաբար։ «Հայերն ու իրենց վարկին հարուած ստացած անոնց տէրերը՝ անգլիացիներն էին որ պատրաստեցին երկրորդ արարը խաղին»՝ հաստատելէ ետք՝ Էօզթունան կ'աւելցնէր տակաւին թէ «այս անգամ բոլոր աչխարհի աչքին առջեւ դէպք մը ծրագրուեցաւ Պոլսոյ մէջ։ Մինչեւ այդ Թուականը Պոլսոյ մէջ խռովութիւն մը յարուցանելը Թուրքերուն վերաբերող արարք մըն էր — փոքրամասնութեան մը այդպիսի գործ մը կատարելու խիզախութիւնը չէր տեսնուած։... 30 Սեպտեմբեր 1895–ին Պոլսոյ մէջ սկսաւ «Հայկական ապստամբութիւն» անունով պատմութեան անցած ապստամբութիւնը։ Եւ Հայոց Պատրիարք Իզմիրլեանի զինած քանի մը հարիւր հայեր» անցան գործի[51]։

Իրա՞ւ ըմբոստութիւն։ Սակայն ճի՛շտ հակառակն է որ ցոյց կու տան փաստերն ու վկայութիւնները։ «Անհեթեթութիւն է խօսիլ հայերու ըմբոստութեան մասին ընդդէմ Թուրք կառավարութեան»՝ կը հաստատէ Դկ. Քիմպոլ՝ անմիջապէս աւելցնելու համար՝ ճի՛շտ այնպէս՝ «ինչպէս որ կարելի չէ խօսիլ ոչխարներու ըմբոստութեան մա-

սին ընդդէմ գայլերու։ Գոյութիւն չէ ունեցած աւելի համակերպող, հնազանդ [եւ] ենթարկուող ժողովուրդ մը» քան հայը[82]։ Իր կողմէ՝ անգլիական Տէյլի Նիուզ օրաթերթի Պոլսոյ թղթակիցը հիմնովին կը մերժէ ապստամբութեան ամէն վարկած։ Ըստ նիւ եորքի Հայէին՝ «կան ոմանք որ «Լրջօրէն» կ'ըսեն թէ Պոլսոյ խլրտումը սերտիւ կապուած է ընդհանուր ապստամբութեան մը ծրագիրին, զոր հայերը մշակեցին վեց ամիս առաջ։ Օրաթերթին անկարելի կը գտնէ այս մէկը, որովհետեւ ափ մը ժողովուրդ, ինչպիսին են հայերը, եւ անոնց ղեկավարները, եթէ նո՛յնիսկ փախած ըլլան յիմարանոցէն՝ պիտի ո՛չ իսկ մէկ վայրկեան մտածէին ամբողջական այսպիսի անձնասպանական ծրագիրի մը մասին»[83]։

Թէ Իզմիրլեան Սրբազանը ո՞րքանով պատասխանատու էր Պոլսոյ 30 Սեպտեմբերի չարժումին՝ այժմ կարելի չէ գիտնալ լրիւ կերպով, թէպէտեւ ցոյցի ղեկավարներէն Սահակեան կը գրէ թէ Պատրիարք Իզմիրլեանը համաձայն էր ցոյցին, բայց ո՛չ զինեալին անոր։ Ցոյցէն մօտ տասնօրեակ մը առաջ, կը պատմէ Սահակեան, Ալէքսճեան Սրբազան կանչեց զինք տեսակցութեան մը համար։ «Քեզ կանչեցի հասկնալու համար թէ ճի՞շտ է որ ցոյց մ'ընելու մտադրութիւն կայ»՝ կ'ըսէ անիկա։ «Պատասխանս այո՛ եղաւ։— «Ի՞նչ ձեւով», հարցուց Սրբազանը, «խաղա՞ղ թէ՝ զինեալ»։— «Զինեալի եւ անզէնի սահմանը ճշդուած չէ», ըսի։

«— Ուրեմն, ըսաւ Սրբազանը, դեռ քանի ժամանակ կայ, գնա իմ կողմէ ընկերներուդ հաղորդէ, որ Սրբազան Պատրիարքը զինեալ ցոյցի երբեք համակիր չէ···»[84]։

Կը թուի թէ Իզմիրլեանէն տասնամեակներ ետք լոյսին աչք բացող թուրք պատմաբանները բան մը գիտէին, զոր ամբողջ դար մը անգիտացաւ հայ պատմագրութիւնը, այլապէս Խզթունայինի հետ էրտողան Արըփընարն ալ պիտի չփութար հաստատելու, թէ «դիմումնագիրին մերժումին վրայ՝ Հայոց Պատրիարք Իզմիրլեանը ոտքի հանեց Պոլսոյ հայերը 30 Սեպտեմբեր 1895-ի երկուշաբթի օրը, [եւ] հարիւրաւոր հայեր ուղղուեցան դէպի Բարձրագոյն Դուռ»[85]։ Ըստ Արըփընարի՝ սա մէկն ըմբոստութիւն էր արդէն, որուն հեղինակները, Մուսթաֆա Թուրանի տարազումով, «Բարձրագոյն Դուռին վրայ յարձակում գործող հայերն էին»[86]։ Արըփընարի մօտ այսօր կարելի է գտնել դէպքերու ժամանակագրական խախտում, որովհետեւ հայկական չարժումը դէպի Բարձրագոյն Դուռ տեղի ունեցաւ ո՛չ թէ «դիմումնագիրին մերժումին վրայ»՝ այլ առա՛ջ։ Իսկ թէ ինչո՞ւ էր սա «յարձակումը» հայերուն՝ ինչպէս բազմաթիւ թուրք պատմաբաններ՝ Թուրանն ալ չունի որեւէ պատասխան, մինչդեռ, հետաքրքրական՝ն է, Ֆահրի Պելենն ունի՛։ Ըստ անոր՝ «ուշադրութիւն գրաւելով՝ պե-

տուքիւններու միջամտութիւնը ապահովելու համար Պոլսոյ հայերը կազմակերպեցին զինեալ ցոյց մը»[57]:

Թուրք պատմաբաններուն մէջ Օսման Նուրին կը մնայ միակը, որ քիչիկ մը կը մատչի ճշմարտութեան: «Հայաբնակ նահանգներուն համար կառավարութենէն բարենորոգումներ պահանջեցին»՝ կը հաստատէ անիկա դարասկիզբին հրատարակուած իր մէկ գործին մէջ[58]: կը թուի թէ Նուրին տեղեակ էր բովանդակութենէն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Պոլսոյ կեդրոնական կոմիտէի հրատարակած Դրօշակի 24 Սեպտեմբեր/6 Հոկտեմբեր 1895 թուակիր թիւ 1 Թռուցիկ Թերթին[59], որ կը յայտարարէր թէ «Հնչակեաններու ձեռքով կազմակերպուած Սեպտեմբեր 18-ի[60] խաղաղ ցոյցը, որով կ'ուզէին մայր-հայրենիքի ահեղապէս անտանելի վիճակը վերջին անգամ հաւաքաբար պարզել թուրք կառավարութեան եւ Եւրոպայի առջեւ...»[61]՝ բարենորոգումներու պահանջ մըն էր, որ ուղղուած էր Բարձրագոյն Դուռին: Իրաւ ալ՝ Ճանկիւլեանն ի՛նքն էր, որ կը գրէր յետագային թէ հայ «ժողովուրդը խաղաղ ցոյց մը պիտի ընէ թուրք կառավարութենէն պահանջելու որ երկրին մէջ բարենորոգումներ մտցուին»[62]: Օրմանեանն իր կարգին ընդունելէ ետք սա հաստատումը՝ կը չեչտէ տակաւին. թէ «հազարաւոր նչանակալից բազմութեամբ [հայերը] Օսմանեան Բարձրագոյն Դուռը կը դիմեն, որպէսզի[63] բարեռնորոգումներու խնդիրը շուտ եւ արդիւնաւէտ կերպով վերջացնելու ընթաց»[64]:

Այսօր այս բոլորին հաստատումը կարելի է գտնել ամերիկեան դիւանագիտութեան թուղթերուն մէջ եւս: Այսպէս՝ Պոլսոյ Ամերիկեան դեսպան Թերելն իր կառավարութեան յղած 2 եւ 3 Հոկտեմբեր 1895 թուակիր զոյգ հեռագիրներով կը հաղորդէր թէ «քանի մը հայեր քալեցին Դուռին վրայ» յայտնապէս դարման մը պահանջելու համար իրենց տառապանքներուն»[65], որովհետեւ «քանի մը օր առաջ անստորագիր[66] նամակ մըն էր ղրկուեր Մեծ Վեզիրին՝ զինք տեղեակ պահելու, որ... մեծ թիւով հայեր պիտի քալէին դէպի Բարձրագոյն Դուռը՝ բռնութիւններու դէմ դարմանի մը ի խնդիր աղերսագիր մը ներկայացնելու համար»[67]: Իրարայաջորդ այս երկու հեռագիրներէն մօտ երկուքուկէս ամիս ետք Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Ռիչըրտ Օլնին իր 19 Դեկտեմբեր 1895 թուակիր տեղեկագիրով հաղորդեց Ամերիկեան Վերակոյտին թէ Պոլսոյ մէջ «քանի մը հարիւր հայեր... հաւաքուեր էին խմբովին երթալու համար Սուլթանին պալատը եւ դարման մը խնդրելու իրենց ազգակիցներուն տառապանքներուն»[68]:

Իրականութեան մէջ, ինչպէս ցոյց կու տան փաստերը եւ օտար դիւանագիտական եւ այլաբնոյթ վկայութիւնները՝ ապստամբութիւն

մը չէր 30 Սեպտեմբերի ցոյցը, զոր, այն ատեն, այդպէս ստորագեցին արեւմտեան մամուլի կարգ մը արտայայտութիւններ՝ սուլթանական գանձէն ստացուած դրամներով, ահա թէ ինչո՞ւ համար Նիւ Եորքի Հայոց Հայրենասիրական Դաշնակցութիւնը չուշացաւ հակադարձելու Նիւ Եորք Թայմզի մէկ գրութեան: «Հայոց չարժման ճշմարիտ ոգին «ապստամբութեան» ոգի չէ, որ կը նշանակէ «կարգէ դուրս ելնել», այլ բուռն միտումն «ի կարգ մտնելու»: Նոքա կը խնդրեն կառավարուիլ» չեշտեց անիկա, եւ ապա ներկայացնելէ ետք կացութիւնը հայկական գաւառներէն ներս եւ հոն ապրող հայութեան՝ շարունակեց տակաւին, թէ «պոլսաբնակ եղբարց իննկաւ Դրան դէմ բողոք մի բառնալու սրբազան պարտաւորութիւնն, [զի հայերն զինուած չէին հոն]:... Ահա ա՛յս հայերն[69], ճշմարիտ ներկայացուցիչք հայ գաւառաց, փորձեցին ազերսագիր մի ներկայացունել Մեծ Եպարքոսին: Նոքա զայդ արին երկար ամիսներ համբերութեամբ սպասելէ յետոյ եւրոպեան միջամտութեան արդիւնքին ի նպաստ իրենց, եւ երբ մտածեցին թէ բողոքելու ժամ էր՝ բողոքեցին չատ կանոնաւոր կերպով:... Ձայրոյթի յանկարծական պայթում մի չէր, այլ մի նախամտածեալ գործողութիւն...

«Հայկական ցոյցն լոկ Բ[արձրագոյն] Դրան դէմ բողոք մի չէր: Աւելի լայն նշանակութիւն մ՛ունէր, որ ընդհանուր ուշադրութենէ վրիպած է: Այն բողոք մ՛է նաեւ տէրութեանց դէմ»[70], որոնք կը դանդաղէին այդքա՛ն:

Հակառակ օսմանեան դիւանագիտութեան ճկուն աճպարարութիւններուն եւ խեղաթիւրումներուն՝ հակադարձելու համար հայ մամուլին եւ հայկական կարգ մը կազմակերպութիւններու ճիգերուն՝ ցոյցը կազմակերպող Հնչակեան Կուսակցութեան պաշտօնաթերթ Հնչակն ի՛նքն իսկ եկաւ ուղի բանալու օսմանեան ամբաստանութիւններուն առջեւ: Արդարեւ իր 1895–ի Թիւ 10–ի խմբագրականով չունգալից կերպով աւետելէ ետք 30 Սեպտեմբերի պատահարը Պոլսոյ մէջ՝ անիկա կը գրէր տակաւին, թէ «Հնչակեան Կուսակցութիւնը մի մեծ ցոյցով այս անգամ նախագգուշացրեց... եւ վառեց փրկութեան կանթեղը: Այսօր ամբողջ Եւրոպան, կառավարութիւններ, դիպլոմատիա, մամուլ, հասարակութիւն — սարսափած հայ յեղափոխական կարմիր տեսիլից, մի չտեսնուած մեծ իրարանցման մէջ են ընկել հայկական Խնդրի առիթով: Ցոյցը, յեղափոխութեան այդ ձայնը, կտրեց պետութիւնների հաչուի թելը, պատռեց նրանց դիմակները տհաճութիւն պատճառելով նրանց եւ ստիպեց նորից եւ այլ եւս լուրջ կերպով դիմել Հայկական Խնդրի լուծման:... Մենք տարինք մի մեծ յաղթութիւն եւ կը ձգտենք մեր ամբողջ եռանդով հասնել վերջնական յաղթանակին: Ամէն տեղ կռիւ կը մղենք, ամէն տեղ զոհեր կը տանք,

եթէ ատիպէն մեզ այդ անել, եթէ չուտափոյթ լուծում չտրուի մեր խնդրին: Այո՛, եթէ պէտք լինի, կը դիմենք նոր եւ նոր կռիւների, նորանոր յաղթութիւնների համար»[71]:

Հնչակի Լոնտոն նստած խմբագիրին համար շատ չէր վիպապաշտ եւ երազատես սա ոգեւորութիւնը, եւ այդ մէկը չնուազեցաւ երբեք նո՛յնիսկ երբ արիւնն սկսաւ յորդառատ վազել ամէնուրեք: Մուլ՝ արտաքին ձայներու դէմ՝ այս անգամ անիկա փորձեց ոտանաւորով մը երգել մեծութիւնն ու փառքը 30 Սեպտեմբերին, եւ հարց տուաւ թէ «այն ի՞նչ է, [որ] պայթեցաւ ինչպէս չանթ բոցեղէն՝ ամպերի խորին մէջ, որպէս գիծ հրեղէն...՝ իր ցնցումն ահաւոր օրհասական զարկով ժողովրդեան գնդերն դուրս բերաւ չարքով սուրբ կռուի դաշտն՝ ընդդէմ բռնութեան խռով», եւ ապա՝ «յանկարծ փողը հնչեց, փող յեղափոխական, չանթի պէս պատռեց օդն չունդիւնով սոսկական, ճիչ ելաւ ահեղ եւ խառնուեց ամէն բան, օդին մէջ երեւցաւ սասունցի ուրուական, գետինը ճեղքեցաւ, արիւնը դուրս յորդաց, թշնամին խողխողուած եւ հայեր շատ մորթուած, մինչ բարձր էր ապստամբ հայի դրօշն իր քրով»[72]:

Ցաղթանակ մըն էր ամէն ինչ եւ ամէն քայլ, արիւնոտ յաղթանակ մը սակայն, զոր աւետելէ ետք 20 Հոկտեմբեր 1895–ի իր խմբագրականով՝ Հնչակը պիտի առաջարկէր տակաւին, թէ «յայտարարելով մեր այս մեծ յաղթութիւնը, որ մի նոր դարագլուխ է բացում հայ ժողովրդի կեանքում՝ նայենք այժմ մեր դրութեան»[73]:

Նայի՞լ՝ գուցէ ըրաւ «բանաստեղծ» խմբագիրը Հնչակին, սակայն լո՛կ տարի մը ետք: Արդարեւ՝ 24 Սեպտեմբեր 1896–ի իր խմբագրականով՝ անիկա պիտի գրէր թէ «Սեպտեմբեր 18/30–ի ցոյցէն ետք բարեկարգութիւններու գործադրութեան հաւատքը զօրացաւ· այդ հաւատքին ուժ տուին նեղուցներուն բերանը հասած նաւատորմիղները եւ Անգլիոյ նախարարապետ Լորտ Սոլզպերիի չանթահարող ճառերը: Սուլթանը պատասխանեց 100,000 դիակ նետելով Անգլիոյ առջեւ: Մեծ[ն] Բրիտանիան յաղթուեցաւ «հիւանդ մարդէն»[74]:

Նախազգուշացում եւ յաղթանակ՝ որո՞ւն համար եւ որո՞ւն դէմ սակայն: Եթէ յաղթանակ մըն էր անիկա՝ ուրեմն ըմբոստութիւն մըն էր կատարուածը, իսկ եթէ ըմբոստութիւն մը չէր, ինչպէս կը վկայեն հայ եւ օտար բազմաթիւ ականատեսներ եւ թուղթեր, այլ պարզօրէն խաղաղ ցոյց մը խնդրագիր մը ներկայացնելու համար Օսմանեան կայսրութեան վարչապետին՝ այն ատեն սնամէջ մեծխօսիկութիւն մըն էր կատարածը Հնչակին, անխոհեմութիւն մը եւ անպատասխանատու գործ, աւելին՝ գրգռութիւն մը եւ ո՛չ նախազգուշացում: Բոլոր պարագաներուն ալ՝ կար անիմանալի բան մը այս բոլորին մէջ, զոր ընկալել կարենալու համար հայ պատմագրութիւնը հազիւ թէ ժամանակ

գտաւ տրամադրելու։ Լէոն քննադատեց կատարուածը, սովետահայ պատմագրութիւնը անգիտանալ փորձեց զայն, Հնչակեանը՝ հազիւ թէ մատչեցաւ անոր եւ մի՛չտ ալ եղածէն ներս ուզեց տեսնել արիւնագին եւ կարմիր յաղթանակ մը, մինչ արտասահմանեան պատմական գիրն ու գրականութիւնը լո՛կ արիւն եւ սպանդ տեսան անկէ ներս։

Բարդ, չա՛տ են բարդ սեպտեմբերեան սա ցոյցին ետին կեցող հոգեկան ու հոգեբանական, ընկերային ու տնտեսական, կրօնական եւ զգացական, քաղաքական եւ դիւանագիտական, ու մանաւանդ կուսակցական եւ հատուածամոլական գործօնները, որոնց մէկ համադիր պոռթկումը հանդիսացաւ անիկա, եղաւ նաեւ յուսահատութեան մէջ ծայրայեղականութեան մէկ դրսեւորումը, բանե՛ր այս բոլորը՝ որոնք մի՛չտ ալ դուրս մնացին հասողութենէն հայ պատմագրութեան եւ պատմագիրին։ Ու տակաւին եղան իրականութիւններ՝ որոնց ո՛չ մէկն եղաւ վերահասու։ Արդարեւ՝ Նիւ Եորքի Տէյլի Նիուզ օրաթերթին թղթակիցն էր որ 1895–ի Նոյեմբերին պիտի հեռագրէր Պոլիսէն, թէ, ինչպէս կը թարգմանէ Նիւ Եորքի Հայկը, «Կ. Պոլսէն բարձրաստիճան պաշտօնեայի մը յղուած նամակ մի կ'ասէ թէ Սուլթանն միայն պատասխանատու է այն ժխորմանց եւ կոտորածոց համար որ[ոնք] տեղի ունեցան հոն։ Քանի մ'ամսէ ի վեր պալատական գործակալներ կը յորդորէին զՊատրիարքն ներմուծել առ Սուլթանն պատգամաւորութիւն մի՝ խնդրելու կայսերական գթութիւն եւ բարեկարգութիւն, ըստ որում դեսպանաց միջամտութիւնն դժպհի է։ Պատրիարքն կը պատասխանէր թէ ինքն կարող չէր անել զայդ։ Ցայնժամ պալատի գաղտնի գործակալներ դրդեցին հայերն ներկայացունել Մեծ Եպարքոսին աղերսագիր մի, որոյ ընդունելութիւնն խոստացան։ Ուրեմն ցոյցն պալատական ներքնգործուածեան արդիւնք էր։ Երբ հայք տեսան թէ ի ծուղակ առաջնորդուած էին, չատքն զրդռեցան եւ կրակեցին։ «Սոֆթա» կոչուածներն որք ջարդերն արին հետեւեալ օրն՝ զինուորներ կամ արձակեալ բանտարկեալներ էին՝ սոֆթայի հանդերձ հագած ու զինուած։ Նոցա հրաման եղած էր միայն սպաննել հայերուն։ Այս ծրագիրն հաչւեալ էր այնպէս ցուցնել թէ մոլեռանդ յարոյթ մ'էր։ Սակայն ամենայն իրօք կազմակերպեալ կոտորած մ'էր դեսպաններն վախցունելու մտօք կարգադրուած»[75]։ Այժմ կարելի չէ ճչդել իրաւութիւնը Տէյլի Նիուզի հեռագիրին առաջին մասին, սակայն կը թուի թէ վերջին տեղեկութիւնները իրագործելու համար իշխանութիւնները սոֆթայի վերածեցին կարգ մը բանակայիններ։ Արդարեւ Լեւոն Բաշալեանի 18 Դեկտեմբեր 1896–ին Արփիար Արփիարեանի յղուած մէկ նամակը կ'ըսէր ի միջի այլոց թէ Տիկին Շահնազարն իր մէկ նամակով գրեր էր իր աղջիկներուն, որ «Սուլթանը իր զինուորներուն սոֆթայի հագուստ հագցուցած՝ հայերը ջարդել կու տար»[76]։

Եթէ ճի՛շտ էին այս բոլորը, իսկ ճիշտ ըլլալու ունին ամէ՛ն հաւանականութիւն՝ օսմանեան ծուղակն ինկած կազմակերպութիւն մը եղաւ ցոյցին ետին կեցող ուժը եւ անգիտակից կերպով ընձեռեց Մուլթանին ոսկի այն առիթը որուն այդքա՛ն պէտք ունէր անիկա միանգամ ընդմիշտ վերջ մը դնելու համար հայկական խլրտումներուն:

3.

Սակայն հոս, ճի՛շտ հոս ալ անհրաժեշտ կը դառնայ տալ այն փաստաթուղթը զոր իրենց ձեռքին ունէին 30 Սեպտեմբերին կազմակերպիչները: Հետաքրքրական է, որ զանազան հեղինակներ զայն կը կոչեն պահանջագիր, բողոքագիր, բողոքախառն պահանջագիր, բողոք, յայտարարութիւն, խնդրագիր կամ աղերսագիր: Այժմ այս փաստաթուղթէն ձեռքի տակ կը գտնուին քանի մը փոփոխակներ, որոնցմէ լո՛ւկ մէկն է ամբողջական[77]: Մնացեալները կա՛մ ամփոփում են՝ ինչպէս է պարագան Օզանեանի տուածին[78], բովանդակութիւն՝ ըստ Օսման Նուրիի[79], եւ պահանջագիր՝ Արսէն Կիտուրի համաձայն[80]: Կարգ մը պարագաներու հատուածներ են անոնք եւ առ այդ՝ ոչ–ամբողջական[81]: Որքան որ ծանօթ է մեզի՝ օտար լեզուով անիկա ունի միայն մէկ հրատարակութիւն[82] անգլիական Կապոյտ Գիրքերուն մէջ. ֆրանսական Դեղին Գիրքը չունի զայն: Իսկ մնացեալ դիւանագիտական թուղթերը չեն հրատարակած սա փաստաթուղթը: Այսուհանդերձ՝ հրապարակի վրայ գտնուող եւ Կիւթեմպերկի գլանէն անցած բոլոր տուեալները կ'ըլլան միեւնոյն աղբիւրէն եւ կ'օգտագործեն միեւնոյն վաւերագիրը, ի՞նչ փոյթ որ անոնց միջեւ գտնուին տարբերութիւններ բովանդակութեան, լեզուական չարայարումի, արտայայտչական եւ բառային արտայայտութեան եւ նոյնիսկ՝ կէտադրութեան: Ըստ հնչակեան հեղինակութեան մը՝ «ամիսներ տեւող գաղտնի պատրաստութիւնները կը լրանան Սեպտեմբեր 16–ին: Ցայտարարութիւնները, 40 օրինակ հայերէն, 10 ֆրանսերէն եւ 10 թուրքերէն՝ կը ցրուբերին նոյն օրը կէսօրին»[83]: Օզանեան կը գրէ թէ «ցոյցը դնկավարող 4 անձնաւորութիւններ իրենց ձեռքին մէջ ունէին այն պահանջագիրը, ուր մանրամասնօրէն պարզուած էին օրուան վիճակն ու գծուած՝ անոր դարմանները: ... Ահա ամփոփումը այն բանաձեւին, որով Պապը Ալիի ցոյցին առեն Հնչակեան Կուսակցութիւնը իր բողոքներն ու պահանջները ներկայացուց կառավարութեան ու Մեծ Պետութիւններուն»[84]: Իր կարգին՝ Հնչակեան Կուսակցութեան երկհատոր պատմագիրքին հեղինակը կու գայ աւելցնելու, թէ «ցոյցի յայտարարութիւնը՝ հայերէն, թուրքերէն եւ

ֆրանսերէն, կը ցրուեն քանի մը օր առաջ նոյնիսկ դիւանագիտական շրջանակներուն: Կը պատրաստուի բողոք-պահանջագիր մը, որ պիտի տարուէր Բ[արձրագոյն] Դուռ եւ ներկայացուէր Սուլթանին: Ահա՛ այս պահանջագիրը, խմբագրուած՝ Մ[իհրան] Տամատեանի կողմէ»[85]: Այլ տեղ՝ կիտուր կը գրէ թէ «Սեպտ[եմբեր] 18-ին Պապը Ալիին ներկայացուելիք բողոք-պահանջագիրը հետեւեալն էր»[86]: Տամատեան ինքն ալ կը հաստատէ թէ ի՛նքն էր հեղինակը բողոք պահանջագիրին, որուն «պատրաստութիւնը ֆրանսերէն եւ հայերէն յանձնուեցաւ Մ[իհրան] Տամատեանին»[87]:

Սակայն առանց խորհելու առկայ հայ կուսակցութիւնները եւ միացնելով զանոնք ցոյցի կազմակերպումին մէջ[88]՝ թուրք պատմաբան Օսման Նուրին վստահութեամբ կը հաստատէ թէ «կոմիտէները[89] գործեցին աւելի մեծ անհամբերութեամբ: 1895-ի Սեպտեմբերի 28-ին[90] բողոքագիր մը յանձնեցին Բարձրագոյն Դուռին: Այդ բողոքագիրին բովանդակութիւնը հետեւեալն էր»[91]: Օգանեանի տուեալներով՝ այս փաստաթուղթը ներկայացուեցաւ մեծ պետութիւններուն եւ Օսմանեան կայսրութեան օրուան կառավարութեան, այսինքն՝ Բարձրագոյն Դուռին: Կիտուր կը հաղորդէ թէ անիկա պիտի տարուէր Բարձրագոյն Դուռ եւ ներկայացուէր Սուլթանին, մինչդեռ Օսման Նուրին պարզօրէն կը հաւաստէ թէ կուսակցութիւնները բողոքագիր մը յանձնեցին Բարձրագոյն Դուռին: Քննութիւններն ու պրպտումները, սակայն, ցոյց կու տան որ սա պահանջագիրը, բողոք-պահանջագիրը, բողոքագիրը, խնդրագիրը կամ աղերսագիրը Դուռին կամ Սուլթանին յանձնելու որուեցաւ ոչ մէկ առիթ: Սահակեանն ալ չի յիշեր զայն յանձնած ըլլալը իշխանութիւններուն, որովհետեւ ձերբակալեցին զինք պալատի երկաթեայ դուռէն մտնելէ առաջ: Ցուշագրողները կ'ըսեն թէ անկէ չորս օրինակ կային Դուռին յանձնելի, սակայն չեն ըսեր թէ անոնցմէ որեւէ մէկը յանձնուեցա՞ւ թէ ոչ: Ցաւակ է այժմ, սակայն, որ սա գիրը հասաւ իշխանութիւններուն ձեռքը՝ արիւնի ճամբով: Ահաւասիկ այդ գիրը՝ իր ամենէն վաւերական եւ ամբողջական ձեւին մէջ.

«Կ. Պոլսոյ տեղացի եւ ասիական ամէն նահանգէ պանդուխտ հայերս միաձայն հաւանութեամբ կազմակերպեցինք այս ցոյցը հանդիսաւոր կերպով բողոքելու համար մեր երկրին մէջ տիրող արդի կացութեան դէմ եւ Բ[արձրագոյն] Դրան ու Եւրոպային ներկայացնելու համար հայ ժողովուրդին պահանջումները[92]:

«Մենք կ'ուզենք այսօր անգամ մը եւս մեր կացութեան վրայ հրաւիրելով քաղաքակիրթ աշխարհին ուշադրութիւնը՝ յայտարարել թէ անխախտելի որոշում տուած ենք այլեւս համակերպութեամբ չտանիլ արդի մահաբեր եւ անիրաւ վիճակնիս[93]:

«ՄԵՆՔ ԿԸ ԲՈՂՈՔԵՆՔ այն սիսթեմաթիք հալածանքին դէմ, որուն ենթակայ եղած է մեր ժողովուրդը նամանաւանդ այս վերջին քանի մը տարիներս, հալածանք՝ որ Բ[արձրագոյն] Դրան կողմէ ընդունուած է իբր կառավարական սկզբունք, միտք ունենալով բնաջինջ ընել հայերը իրենց բնիկ երկրէն: Այս իրողութիւնը լիուլի կը հաստատեն մէկ կողմէ հիւպատոսներու տեղեկագիրները եւ եւրոպական թերթերու թղթակցութիւնները եւ միւս կողմէն՝ պաշտօնական տեղեկագիրները եւ չարունակական գանգատները, որոնք կը տեղան Ազգային Պատրիարքարանը[94]:

«ՄԵՆՔ ԿԸ ԲՈՂՈՔԵՆՔ քաղաքական անթիւ ձերբակալութեանց դէմ, բանտարկեալներուն վրայ գործադրուած բարբարոսական եւ հակամարդկային տանջանքներուն դէմ, քիւրտերու վայրագ խժդժութեանց դէմ, ինչպէս նաեւ պաշտօնեաներուն եւ հարկահաններուն անիրաւ կեղեքումներուն դէմ[95]:

«ՄԵՆՔ ԿԸ ԲՈՂՈՔԵՆՔ Սասունի կոտորածին դէմ, յորում, ինչպէս հաստատուած իրողութիւն մըն է այսօր, մեր հազարաւոր եղբայրներն ու քոյրերը, որոնք համարձակած էին խնդրել ապահովական երաշխաւորութիւն իրենց կեանքին, ինչքին, իրենց պատուոյն պաշտպանութեանը եւ իրենց կրօնքին ազատ պաշտամունքին համար, նկատուեցան իբր ապստամբներ, ուստի եւ զինուորներէն ջարդուեցան եւ իրենց արիւնին մէջ լողացին[96]:

«Մեր ժողովուրդը անհրաժեշտ [կերպով] պէտք ունի անդորրութեան եւ ապահովութեան, որպէսզի կարենայ, ինչպէս իր արդար իրաւունքն է, համեմատաբար բարեկեցութիւն ձեռք բերել ու հասնիլ այն յառաջդիմութեան եւ քաղաքակրթութեան, դէպի ուր կը դիմեն ուրիշ ժողովուրդներ[97]:

«Ցանուն մեր այդ արդար ձգտումներուն.—

«ՄԵՆՔ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆՔ օրինական իրաւունքներ, որոնք բացարձակօրէն մեզի երաշխաւորեն մեր կեանքին եւ ինչքին բացարձակ ապահովութիւնը, մեր պատուոյն պահպանութիւն եւ յարգանք:

«ՄԵՆՔ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆՔ ազատութիւն խղճի, խօսքի, մամուլի եւ հանրային գումարումներու, օրէնքին առջեւ ամենուն բացարձակ հաւասարութիւն[98]:

«ՄԵՆՔ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆՔ, որ որեւէ ձերբակալութիւն անմիջապէս իր արդարացումն ունենայ դատարաններու առջեւ, որով կարելի է նախնական բանտարկութիւնը եւ կամայական ձերբակալութիւնները արգիլել: Որ մեզի արտօնուի տրուի զէնք կրել[ու]՝ քանի որ անկարելիութիւն կայ քիւրտերը զինաթափ ընելու[99]:

«ՄԵՆՔ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆՔ, որ վարչական բաժանումներուն թիւը զեղջուի հայկական վեց նահանգներուն մէջ, որոնք են·

էրզրում, Գիւմիւշ, Վան, Սըվազ, Մամուրէթ-իւլ-Ազիզ եւ Տիարպեքիր: Այս գեղջումը պէտք է [որ] կատարուի այնպէս, որ վերոյիշեալ կուսակալութեանց ժողովուրդները ազգագրական սահմանագծերով որոշուին[100]:

«ՄԵՆՔ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆՔ այդ վեց նահանգներու համար ընդհանուր կառավարիչի մը հաստատումը: Ամէն պարագայի մէջ այդ պաշտօնը պիտի յանձնուի եւրոպացիի մը, որ պիտի նչանակուի պետութիւններէն: Այդ պաշտօնեան պիտի կառավարէ իր վարչութեան յանձնուած երկիրը աջակցութեամբը տեղական ժողովի մը, որուն անդամնե՞ր պիտի ընտրուին ընդհանուր քուէարկութեամբ՝ առանց ի...րութեան ցեղի, կրօնքի եւ դասակարգի[101]:

«ՄԵՆՔ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆՔ տնտեսական բարենորոգումներ տեղական պէտքերուն համաձայն, ինչպիսին՝ հարկերու թեթեւացում, տարապարհակ աշխատութեանց, քիւրտ պէյերու եւ աղաներու համար ձրի աշխատութեանց ջնջում, տասանորդի, վարձակալութեան ջնջում, ինչպէս նաեւ ջնջում քիւրտերու դրած ապօրէն հարկերու եւայլն: Ամբողջ երկրին համար միաձեւ տուրքերու միատեսակ դրութիւն, երկրագործութիւնը եւ արդիւնաբերութիւնը վերակենդանացնելու յատուկ բարենորոգումներ: Վերջ տրուի այն դրութեան որով հայոց հողերը բռնութեամբ անոնց ձեռքէն յափշտակելով քիւրտերուն կը բաշխուի, ինչ որ տեղի կ'ունենայ նամանաւանդ լեռնային տեղերը: Ընդհակառակը՝ կ'ուզենք որ հող տրուի չունեցող գիւղացիներուն, եւայլն[102]:

«Հաստատ համոզուած ենք, որ վերոյիշեալ պահանջներուն իրականացումը անհրաժեշտ է թէ՛ հայերուն ընդհանուր ապահովութեանն ու բարեկեցութեանը համար եւ թէ [ալ] այն տարբեր ժողովուրդներուն որոնք մեր երկիրը կը բնակին եւ որոնց հետ մեր շահերը միեւնոյնն են[103]:

«Հաստատ համոզուած ենք, ընդհակառակն, որ իրաց ներկայ անկանոն վիճակին չարունակութիւնը անխուսափելի կերպով ամենամեծ չարիքներու պատճառ պիտի ըլլայ թէ՛ մեր երկրի, թէ՛ մեր դժբախտ ժողովրդի եւ թէ [ալ] ամբողջ Օսմանեան կայսրութեան համար[104]:

«Սակայն հայկական ձմեռը՝ քաղաքատնտեսական չատ մը խստութեանց եւ դժուարութեանց հետ միատեղ՝ կը մօտենայ, այնպէս որ կորովալիր եւ անմիջական գործողութեան մը հարկը անհրաժեշտ է[105]:

«Այս պատճառաւ որոշեցինք վճռական ապացուցական կերպով յիշեցնել Սուլթանին եւ Պետութեանց Հայկական Ընդրոյն նպաստաւոր եւ անմիջական լուծումի մը անհրաժեշտ հարկը[106]:

«Հետի ընդհանուր կերպով մը անոնց կը ներկայացնենք մեր օրինաւոր պահանջումներն բարենորոգումներու, որոնց գործադրութիւնը միայն կրնայ երաշխաւորել խաղաղութիւնը եւ ապահովութիւնը մեր երկրին, որ այնքան երկար ատենէ ի վեր մատնուած է անիրաւ հալածանքի եւ արիւնալից խռովութեանց»[107]:

Այժմ փոքր բաղդատական մը այս փաստաթուղթին առկայ վեց տարբերակներուն՝ պիտի ցոյց տայ որոշ զանազանութիւն մը բովանդակութեան, որուն աւելի մօտ մէկ քննութիւնը զանոնք պիտի ենթարկէ որոշ խմբաւորումի՝ ոճային, արտայայտչական եւ բովանդակային յարանմանութիւններու եւ տարբերութիւններու տուեալներով: Մենք չենք որոշած մանրամասն մէկ վերլուծումը կատարել այս բոլորին, սակայն յստակ է որ անոնցմէ ոմանց մօտ կը պակսին որոշ հատուածներ, երբ միւսներն ունին զանոնք կա՛մ որպէս ամբողջութիւն եւ կամ ալ որպէս ամփոփում: Անոնցմէ ոմանց մօտ նշմարելի է թարգմանական եւ խմբագրական որոշ միջամտութիւն: Լեզուական, ոճային եւ բառային տարբերութիւններ կան կիտուրի տուած զոյգ վաւերաթուղթերուն մէջ, այսուհանդերձ՝ յստակ է որ անիկա որպէս աղբիւր օգտագործած է քառասնամեակի Ցուշարձանին փաստաթուղթը: Նոյն հաստատումը ի զօրու կը մնայ նաեւ Գեղամ Վարդեանի պարագային: Վաւերագիրին վեց այս տարբերակներէն իրարու մերձաւորագոյնները կը մնան Ցուշարձանին եւ Ցիսնամեակին, կիտուրին եւ անգլիական Կապոյտ Գիրքին ունեցածները՝ հակառակ անոնցմէ ներս առկայ տարբերութիւններու:

Բաղդատական մը Ցուշարձանի եւ Օզանեանի տուած նիւթերուն՝ պիտի ցոյց տայ թէ հակառակ որ ամփոփում մըն է Օզանեանի Հայապատումինը՝ անոր հատուածներուն մէջ յաճախ կը կատարուի բառացի օգտագործումը Ցուշարձանի տուեալներուն՝ ի՞նչ փոյթ որ Օզանեան մերթ դուրս կը ձգէ որոշ նիւթեր՝ գուցէ զանոնք անհամապատեղելի նկատելով Բարձրագոյն Դուռ ներկայացուելիք պահանջագիրին տարին ու ոգիին, մինչդեռ Օզանեանին համար անհրաժեշտ էր տալ նա՛եւ մէկ ամփոփումը թողքուած այս հատուածներուն, որովհետեւ օսմանեան իշխանութիւններուն ներկայացուելիք այս պահանջագիր-բողոքագիրին վերջին վեց պարբերութիւնները ո՛չ միայն կը խօսին անմիջական անհրաժեշտութեանը եւ պայմաններուն մասին Արեւմտեան Հայաստանի իրաւունքին բարելաւելու՝ այլ մանաւանդ կու գան եզրայանգումի մը հասցնելու հոգեկան եւ իմացական կառոյցը փաստաթուղթին, որ վերլուծումի վերջին հանգրուանին՝ դրսեւորումն իսկ է հայութեան ներքին աշխարհին:

Հետաքրքրական է, սակայն, Օսման Նուրիի մօտ առկայութիւնն այս փաստաթուղթին, որուն անիկա կու տայ հակիրճ՝ այլ բա-

ական մը աղճատուած մէկ բովանդակութիւնը սակայն։ Նուրին որ իր պատմագիրքին երեք հատորները գրելու համար ազատօրէն օգտագործեց եւրոպական դիւանագիտական թուղթեր, յուշագրութիւններ, արձանագրութիւններ, յուշագիրեր, պայմանագիրեր, որովհետեւ, ինչպէս ի՛նքն իսկ կ՚ըսէ Օսմանեան պետութեան վերջին եբեհնամեակին հրատարակուած է պաշտօնական ոչ մէկ գիր, եւ ամէն ինչ պահուեր է գաղտնի[108]՝ հայկական այս փաստաթուղթը ձեռք անցընելու ունէր լո՛կ մէկ ճանապարհ — անգլիական Կապոյտ Գիրքը։ Իրաւ էր, որ անոր ֆրանսերէն եւ հայերէն օրինակները յանձնուեցաւ օտար դեսպանութիւններուն եւ Հայոց Պատրիարքութեան. իսկ Թրքակա՞նը։ Էօզթունան ի՛նքն իսկ կը հաստատէ, թէ «Թէպէտեւ հայերը կը նպատակադրէին Բարձրագոյն Դուռ գալով բողոքագիր մը ներկայացնել՝ չյաջողեցան։ Հազիւ թէ Գատըրկայէն կրցան ելլել Սուլթան Համիտի մերձակայքը։ Չկարողացան Բարձրագոյն Դուռ հասնիլ»[109]։ Եթէ ճշմարտութիւն մըն է այս՝ ձերբակալուած Սահակեանի ձեռքն եղող օրինակը երբեք ալ չէր կրնար հասած ըլլալ Օսման Նուրիի ձեռքը։ Փաստաթուղթին առաջին հրատարակութիւնը կատարուեցաւ անգլերէնով՝ 1896–ին, սակայն կը թուի թէ անկէ տեղեակ էին սակաւաթիւ հայեր, որոնց համար անհրաժեշտ էր սպասել ճի՛շտ երեքուկէս տասնամեակ՝ 1930–ին հանդիպելու համար անոր հայերէն առաջին հրատարակութեան, որմէ ետք գայն կարելի է գտնել քանի մը այլ հրատարակութիւններու մէջ։ Կը թուի թէ Օզանեանն ունէր անոր մէկ պատճէնը՝ 1912–ին հրատարակել կարենալու համար ամփոփ մէկ օրինակն անոր, սակայն այս պարագային ալ հարց կը ծագի թէ ո՞ր լեզուով գրուածն էր անորը[110]։

Այսօր աւելի քան վստահ ենք, որ տասնամեակներու փոչիներու հեւքին ներքեւ կքած դիւանագիտական թղթածրարներու մութին մէջ պահ մնած կան օրինակները նախ՝ Սուլթանին եւ ապա՝ անոր մերժումէն ետք անոր վարչապետին ներկայացուելիք փաստաթուղթին։ Մեզի կը թուի թէ Սահակեանի ձերբակալութենէն առաջ իսկ Եըլտըզն ստացաւ օրինակ մը սա պահանջագիր–բողոքէն, եւ այդ մէկը՝ գուցէ դիւանագիտական անտես ու գաղտնի ճամբաներով՝ որպէս հետեւանք դիւանագիտութեան պարզած հակամարտութիւններուն եւ հակասութիւններուն։ Այժմ գա՛ր մը ետք պոլսահայութեան դէպի Բարձրագոյն Դուռ երթէն՝ չա՛տ հաւանական կը թուի այս վաւերաթուղթին Սուլթանին յանձնումը Անգլիոյ դեսպան Սըր Ֆիլիփ Փըրիի, Ֆրանսայի դեսպան Փոլ Քամպոնի, կամ Ռուսիոյ դեսպան Նելիւտոֆի կողմէ։ Երբեք մտահան ընելու չէ նաեւ գերման դեսպան Զաուրման, որուն չա՛տ սերտ էին յարաբերութիւնները Սուլթանին հետ։ Աւելին՝ հաւանական է նաեւ, որ սա փաստաթուղթին մէկ օրինակը իշխանու–

թիւններուն յանձնուած ըլլար Հնչակեան Կուսակցութեան Պոլսոյ ղեկավարներէն մէկուն՝ կամ նո՛յնինքն ոստիկանութեան նախարար Հիւսէին Նազըմ փաշայի յիշած Ցակոբին ձեռքով[111]՝ առա՛նց որ զայն գիտցած ըլլար ոեւէ մէկն իր կուսակիցներէն։

Այսօր ի՛նչ որ ալ ըլլան իրականութիւնները՝ անվարան կարելի է յայտարարել, թէ Օսման Նուրին ունեցաւ պատճէնը այս փաստաթուղթին եւ տուաւ անոր բովանդակութիւնը՝ միայն թէ իր տուածն ունեցաւ բազում զարտուղութիւններ Տամատեանի գրիչին ելածէն եւ բազմաթիւ ազաւաղումներ, որոնց ամբողջութիւնը փաստաթուղթն ընծայեց յարձակողական եւ հակապետական։

Լ. Վ.

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Օսմանիրէնի մէջ՝ արաբերէնէն փոխ առնուած Պապ-ը Ալիճ, զոր հայացուցած է հայ պատմագրութիւնը՝ կը նշանակէ Բարձրագոյն Դուռ եւ կը կենայ Օսմանեան կայսերական կառավարութեան տեղ: Այս անունով ալ ծանօթ է հայ պատմագրութեան մէջ 30 Սեպտեմբեր 1895–ի Պոլսոյ Հնչակեան Ցոյցը:
2. Arménius Vambery, *The Story of My Struggles*, London, [n. d.], p. 343.
3. Dogan Avcioglu, *Milli Kurtulus Tarihi*, üçüncu kitab, Istambul, 1974, s. 1091.
4. Լէօ, *Թիւրքահայ Յեղափոխութեան Գաղափարաբանութիւնը*, հտ· Ա·, Փարիզ, 1934, էջ 175:
5. Այս բոլորին մասին տես՝ Լեւոն Վարդան, «Զարդերը Օսմանեան Կայսրութեան մէջ, 1806–1938», *Զարթօնք*, 25–26 Յունիս 1969, էջ 2 յաջորդաբար:
6. Տես՝ Պրոֆ· Զ· Ս· Կիրակոսեան [խմբ·], *Հայաստանը Միջազգային Դիւանագիտութեան եւ Սովետական Արտաքին Քաղաքականութեան Փաստաթղթերում* (1828–1923), Երեւան, 1972, էջ 128:
7. Անգլիական ճնշումի օրինակի մը համար տես՝ Great Britain, Foreign Office, *British Documents on Foreign Affairs*, Pt. I, *The Near and Middle East, 1856-1914*, vol. 17, *The Ottoman Empire, Arabia and the Gulf : British Strategic Interests, 1885-1907*, London, 1985, pp. 118-123:
8. 7 Սեպտեմբեր 1880–ի այս յուշագիրին համար տես՝ Marcel Léart, *La Question Arménienne à la lumière des documents*, Paris, [1913], p. 32-37:
9. Մարտ–Ապրիլ 1895–ի այս յուշագիրին համար տես՝ նոյն, էջ 38–42: Տես նաեւ՝ Կիրակոսեան, էջ 130–137, եւ Լէօ, *Հայոց Հարցի Վաւերագրերը*, Թիֆլիս, 1915, էջ 201–212: Ասկէ ետք կը նշուի որպէս *Հայոց Հարցի*:
10. Բարենորոգումներու այս ծրագիրին համար տես՝ Կիրակոսեան, էջ 136–147, *Հայոց Հարցի*, էջ 213–234, եւ Léart, p. 43-52:
11. Այս պատասխանին եւ իրագործելի ծրագիրին համար տես՝ Կիրակոսեան, էջ 148–149, *Հայոց Հարցի*, էջ 235–237, եւ Léart, p. 53–58:
12. Léart, p. 6.
13. Տես՝ Կ· Թումայեան, *Պատմութիւն Արեւելեան Խնդրոյ եւ Առաջնորդ Հայկական Հարցի*, հտ· Բ·, Լոնտոն, 1905, էջ 555:
Bitlis, Diarbekr, Erzeroom, Kharput, and Mardin are missionary stations, occupied by Americans. They have eighty-six out-stations, supervised by native helpers. The whole is collectively known as the Eastern Turkey Mission. The establishment consists of —

Missionaries	14
Female assistant ditto	21
Native Pastors	17
Licensed Preachers	16
Native Teachers	47
Native helpers	68

who have under their charge —

Churches	22
Persons received on profession of faith in 1867	97
Present number of members	697
Preaching places	80
Average Sabbath congregation	3,981
Sabbath Schools	35
Sabbath School pupils	2,566

The actual Protestant community and ordinary schools, with their immates, are —

Number of Males	2,794
Number of Tax-Payers	1,462
Registered Protestants	4,796
Common Schools	92
Male Pupils	1,492
Female Pupils	677
Total Pupils	2,169
Pupils in the Theological School	48
Pupils in Female Boarding Schools	59
Other Adults under Instruction	624
Whole number under Instruction	2,900

The community contributed during the year to various objects of Christian benevolence — including pastors' salaries, education, and general charities — 6,776 dollars, in gold, an advance of 1,000 dollars on 1867.

The sale of 1,400 volumes of Scriptures, and of more than 8,000 volumes of other books, is one of the best evidences of the awakened interest of the people, when one considers the above sales were all effected in one year, and amongst a class who has only lately been taught to read.

Amongst the Nestorians, in addition, there are twelve out-stations, occupied by twenty-four native preachers, teachers, and catechists. They are under the superintendence of the American missionaries stationed at Oorooniva[45], in Persia. The Patriarch — Mar Shamoon — through the British Vice-Consul at Mosul — Mr. Rassam — and some of the Nestorian Bishops, lately sent a Petition to the late Archbishop of Canterbury, in which they profess to be left in great spiritual destitution, oppression, and ignorance, despite the efforts of the American missionaries, and implore the aid of the High Church party. This movement has distracted the minds of the people, and is devoid of sincerity, being simply a clap-trap to secure pecuniary aid or relief through foreign interference from political oppression. As such, I would emphatically endorse the words of the American Report that «no aid or encouragement be given to a movement thus likely to distract and embarrass the Christian work in progress.»

The most interesting feature connected with the progress of Protestantism, and a proof of the sincerity of its members, consists in the efforts made by the different communities to become self-supporting and independent entirely of extraneous aid. Such efforts are the more meritorious as

the Protestant is the poorest community in the country, while its taxes, from the sectarian revenge of the creeds its members have seceded from, are heavier than those paid by any other.

Kizzilbash Koords.— *I have also on former occasions pointed out the unsatisfactory relations of the Kizzilbash Koords with respect to Government, and the means then taken by Edhem Pasha to control them. Since, however, Derveesh Pasha assumed the chief command of the 4th army corps at Erzingan, his predecessor's well-digested measures have not been pursued, and, consequently, dissatisfaction among them is stronger than ever.*

In alluding to the Kizzilbash here, I do not do so to swell the list of those people I consider Russianized, but to note that, from my own observations and conversations with them, their strange religion, position, and habits, they are essentially hostile to the Turks, which would render them disposed to support any movement likely, in their opinion, to ensure them a continuance of their present insubordination or future separation from the governing class they detest.

Although I have scrupulously endeavoured to record impartially all I saw or that was brought to my notice, for good or for evil, during my tour, the tenor of this Report would make it appear, I have confined myself to reciting Christian wrongs without at the same time noticing improvements in their condition, consequent upon late Firmans or orders. I have certainly dwelt principally upon the serious oppression the Christians suffer from the Koords, not because, however, I would make it be believed they are the only sufferers, or that I purposely shut my eyes to the grave injuries sustained also by the agricultural Turks; for personal observation showed me all industrious Moslems, having the misfortune to live in localities partly inhabited by Koords, are under their influence, and, therefore, losers, accordingly; but because the Christians, in addition to deprivation of property, daily jeopardise their lives, and what is more terrible, the honour of their females, in daily struggles for existence; trials from which the Moslems are exempt.

Agricultural Turks, too, in these northern districts form both in numbers and industry an insignificant class as compared with the Christians. Other means of subsistence closed to the latter are open to them. They are therefore rapidly decreasing there, retiring into the vicinity of towns, where Koords have no opportunity of exercising their depredations. And with respect to other injuries, arising from the vicious system of tithe-farming, substitution of the Temetta[46] for Vergoo[47], and requistion for forced labour, there seems to be no exceptions in favour of particular creeds; all suffer and complain alike. The incidence of taxation falls heaviest on those least able to bear it, and it is increased as the people think unreasonably, for Govern-

ment has undertaken no outlay or material improvement that can satisfy the people. They are in some measure reimbursed for the large sums they are called upon yearly to contribute. Personal security at the same time is unknown. Many of the local Mudirs and Kaïmakams — generally local Koords or Turks — either from fear, relationship, or pecuniary motives, siding with the robbers, and sharing their spoil; and the miserable police, employed for the public protection, being the worst characters in the place, are far more frequently the partners than deterrers of criminals. It is not wonderful, under the circumstances, in these interior provinces, that the population generally is decreasing. No inferences can be drawn with respect to that decrease in them by any person acquainted with the activity of most of the sea-ports of Turkey, its capital, or European provinces, as it is notorious emigration to those places has been and is now still constantly taking place.

Other reasons also, apart from those stated, and the detestable vice common to Eastern countries tending to demoralize a people and curtail increase, or rather in favour of decrease, are to be found in the facts that, previously, no private soldier was allowed to marry, and that in every town or large village morals are so depraved that forced abortion and infanticide are daily crimes. Taking Erzeroom, Diarbekr, Kharpoot, or Van as examples, I do not in the least exaggerate when I state that 1,000 such cases recur yearly in each of those towns, the crime being aggravated by criminals in many cases, not being necessarily unfaithful to their husbands, and therefore anxious to conceal the consequences of illicit love, but that they stifle birth at their instigation, in order to ensure a longer duration of beauty, or to avoid the cares and trials incidental to a numerous offspring. There is no law touching such miscreants, or if there be one, it is so little applied as to be utterly useless to prevent or check these frequent crimes.

It is lamentable, in such a rich country, so close to the sea-board, to witness such, and other impediments to progress, and the restrictions clogging trade and industry in all its branches. A grain country, capable of supplying, even under the present lazy system of agriculture, more than 500,000 quarters of grain for export after all local wants have been satisfied, finds it a losing operation to send any considerable part of its surplus to Trebizonde, 180 miles off, which consequently imports from Russia; and native manufacturers, at one time an important item of domestic industry and trade, are now nearly universally replaced by European imitations.

The fact cannot be too often repeated that it is the want of roads that has paralyzed the resources of this province, and contributed so much to the gradual bankruptcy of the people. Government, I am glad to say, is now making some exertion towards remedying this evil, and has appropriated

20,000l. Turkish per annum for three years, from the provincial revenue, towards completing a metalled highway between Erzeroom and Trebizonde. This, when completed, will at once raise the dimes 100 per cent, besides enhancing the value of all other produce, real property, and trade. The Turkish engineers are sanguine enough to predict its completion in two years from this. If so, and although the Persian transit be lost to this country, the produce of the plains in this vilayet will amply make up any loss sustained in consequence, by competing favourably with the cereals of Southern Russia in the European markets, that will prove a source of wealth to Turkey she has not experienced since the establishment of her rule.

(Signed) J. G. TAYLOR

Erzeroom, March 18, 1869.

NOTES

1. Suleywan - Silvan.
2. Farkeyn - Farghin.
3. Fellahs - Peasants.
4. Muttasurruflik - Mutesaruflik - Canton.
5. Ikhlat - Aklat.
6. Jibraulee - Jibranlee.
7. Kochers - Kochars.
8. Giaours - Kefirs - non-Moslems, Christians, especially Armenians.
9. Murceds - Mursheeds - guides; those who point the right way; spiritual leaders who reveal the mystic secrets of the Moslem religion.
10. Medjliss - town or city council.
11. Boors - Alludingly the Armenian peasants.
12. Kassan Agha - Hassan Aga.
13. Tchoruk Su - Djorokh river.
14. Pennek - Panak or Pana river, tributary to the Djorokh. The plain too where Pennek flows is called after it.
15. Akhkhalsik, Akherkellek - Akhaltzikh, Akhalkalak.
16. Ardanutsch - Ardanoosh.
17. Ordahan - Ardahan.
18. Karslees - Karsiots; natives of the city of Kars.
19. Shiraj - Shiraz.
20. Timariots - Turkish landowners, land being given them by the Sultan as compensation to the military service done.
21. Danir Kapoo - Demir Kapoo.
22. Murad Su - Aradzani.
23. Toprak Kalla Kuzzan - Toprak Kale Kaza - The district of Toprak Kale.
24. Tchukoorlee - Chookoorlee.
25. Julamerk - Julamerik.
26. Albek - Aghpag.
27. Ardh el Jivaz - Adeljivaz.
28. Gevver - Kiavar.
29. Boolarick - Boolanik.
30. Arsanias - Aradzani.
31. Harpasus - Arpa Chai.
32. Acampsis - Djorokh river.
33. Hallys - Kizil Irmak.
34. Lycus - Kalkyt Su - Kayl river.
35. Mamagonians - Mamigonians.
36. Shoora i Douleh - Shoora-i Dawleh - National Assembly.
37. Arras - Araz - Arax.
38. ov Eel Khan - or Il-Khan.
39. Catholicas - Catholicos - Head of the Armenian Church.
40. Seraff - Sarrafs - money-lenders; bankers.
41. Firman - Imperial edict.
42. Deyrsim - Dersim.
43. Ashiret - Tribe.
44. Raya - Subdued, sedantary and agricultural people.
45. Oorooniva - Oormiya.
46. Tumetta - Temettu - Income tax.
47. Vergoo - Vergee - Tax, contribution.

ՓԱՐԻԶԻ *ՄԵՆՔԻՆ* ՏԵՂԸ ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՊԼՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

«Փնտռելով իւրաքանչիւրին մօտ ևո՛յն ժողովուրդի զանակներուն յատուկ հասարակաց գծեր, ներշնչումներ ու մտահոգութիւններ, ճամբայ հարթել, որոնել եւ կերպարանք տալ, ժամանակի ընթացքին, ընդհանուր հանգանակի մը, որ ազատութիւն տալով հանդերձ իւրաքանչիւրին անհատականութեան, համապատասխանէ հայ մշակոյթի պահանջներուն»:

[«*Մենք*» 1931, 20 Ապրիլ]

Առաջին Համաշխարհային Պատերազմէն եւ 1915-ի Հայկական Մեծ Եղեռնէն ետք կոտորուած եւ կոտորակուած հայութեան բեկորները սփռուեցան աշխարհով մէկ եւ դարձան Սփիւռք: Արեւմտահայը դարձաւ ակամայ՝ Սփիւռքահայ:

Ժողովուրդին հետ ժողովուրդին վերապահուած ազգային ոգբերգութեան ճակատագիրը ապրեցաւ նաեւ արեւմտահայ մտաւորականութիւնը՝ ճզակոտոր եւ եղերական իր անճիտումով, Հայաստան թշնամիին Հայ Մաքին տուած մահացու հարուածին որպէս հետեւանք:

Մնունդ առած Հայկական Սփիւռքին մտաւոր եւ մշակութային կեդրոնը հանդիսացաւ Հայկական Փարիզը, որ համախումբ հայութեամբ եւ մտաւորական ուժերու եւ գրագէտներու մէկտեղումով իմացական եւ գրական չարժում առաջացուց եւ նշանակալից նպաստ մը բերաւ Սփիւռքահայ Գրականութեան զարգացման:

Իմացական եւ փիլիսոփայական ճառագայթումներէն լոյսի բաղաբին նպաստաւորուեցաւ Հայ Միտքը: Եւրոպական մտքին եւ ճաշակին հաղորդ արեւմտահայ մտածողութիւնը՝ Փարիզահայ մտաւորականութեան ուղղակի հաղորդակցութեամբ մօտէն չփուեմ հաստատեց արեւմտեան մշակոյթի ամենէն եռուն, յառաջապահ, հակադիր հոսանքներով յատկանշուող մէկ կեդրոնին հետ: Այդ հանգամանքով ալ Փարիզահայ մտաւորականութիւնը իրագործեց, որեւէ ուրիշ հայկական գաղութէ առաջ եւ որեւէ ուրիշ հայկական գաղութէ աւելի՛, Հայ մտքի հանդիպումը եւրոպական մշակոյթի հետ: Հայկական ինքնութեան, հոգեբանութեան եւ մտածողութեան հաւատարիմ մնալով հանդերձ՝ Փարիզահայ մտաւորականութիւնը բացուեցաւ Ֆ. Համաշխարհային պատերազմէն առաջ եւ պատերազմէն ետք Փարիզի մտաւորական, փիլիսոփայական եւ արուեստի աշխարհներէն ներս յայտնուած եւ զարգացած գոյութենապաշտութեան եւ գերիրապաշտութեան, ինչպէս նաեւ ա՛յլ խայտաբղէտ հոսանքներուն եւ դպրոցներուն: Առի՛ն անոնցմէ այն նորը, արդիականը, յառաջապահը, որ յատուկ էր այդ օրերու Փարիզին եւ հայ գրականութեան աւանդական ակօսներով ընթացող հունին մէջ տեղաշարժ առաջացուցին: Առնուած նորը հայ կեանքի մշակութային առօրեային ձուլեցին:

Հայկական աւանդապահ մտածողութիւնը վերապահութեամբ ընկալեց Փարիզի յառաջապահ այս չարժումը: Տարօրինակ գտաւ: Իր զարմանքը չվերապահեց: Հոչակեց անհեթեթ: Քննադատական վերաբերում ճշդեց: Հակազդե՛ց:

Բայց ի՛նչ որ անուրանալի կերպով վաւերական էր եւ հայ ըմբռնողութեան մէջ բերուած նպաստ՝ եղեռնով անճիտուած մտաւորականութեան տեղ ծնունդ առած եւ կազմաւորուած նոր մտաւորականութեան գոյութեան հրաշքին հետ՝ անոնց համագործակցութեամբ որդեգրած համահայկական կեցուածքն էր: Մեմֆի հաւաքական մտածողութիւնը:

Փարիզի «Մեմֆ» գրականութեան նուիրուած ամսագիրը մէկ տարուան վրայ տարածուած իր հրատարակութեամբ 1931-1932, Փարիզահայ մտաւորականներու միջեւ առաջացուցած համագործակցութեամբ եւ որդեգրած համահայկական ուղեգիծով իրագործած է վաստակ մը: Վաստակ մը, որ գեղարուեստական գրականութեան մնայուն էջերով, եւրոպական ժամանակակից գրականութեան նուիրուած անդրադարձներով, իմացական եւ արուեստագիտական հարցեր չօչափող վերլուծումներով, գիրքերու աշխարհը մեկնող գրադատութիւններով, արտայայտուած ազատ կարծիքներու եւ գաղափարներու հանդէս ըլլալու հանգամանքով՝ նշանակալից տեղ մը

կը գրաւէ Հայկական Սփիւռքի գրական մամուլի պատմութեան մէջ։ Որակ մը նուաճած մշակութային յուրջ մակարդակով։

Ընդգծելի երեւոյթ կը մնայ «Մենք»ի չուրջ համախմբուած գրողներու եւ մտաւորականներու երիտասարդներ ըլլալու հանգամանքը, որ յատկանշուած է նաեւ երիտասարդական կեցուածքներով, դասական արժէքներու հանդէպ ուրացումներով եւ հինին նկատմամբ դժգոհութիւններով։

«Մենք»ի առաջին համարի «մանիֆեսթին» տակ, որուն մէջ արտայայտուած են իրենց տեսակէտները եւ գրական հանգանակը, առորագրած են հետեւեալ գրողներն ու մտաւորականները. Նշան Պէշիկթաշլեան, Ղեւոնդ Մելոյեան, Հրաչ Սարգիսեան, Ռաֆայէլ Զարդարեան, Յարութիւն Ֆրէնկեան, Ոստանիկ, Գ. Գեղարճուճի, Նիկողոս Սարաֆեան, Բիւզանդ Թօփալեան, Փայլակ Միհայէլեան, Արշամ Տատրեան, Զ. Մ. Որբունի, Շահան Շահնուր, Վազգէն Շուշանեան, Շաւարշ Նարդունի։

«Մենք»ին մանիֆեսթը հայ գրականութեան եւ մշակոյթին ծառայելու համար, կ'առաջադրէ սերտ գործակցութեան եւ համերաշխութեան գետին մը ստեղծել հայ գրողներու միջեւ։ «Մենք»ին մասնակից իւրաքանչիւր գրող ու մտաւորական «Մենք»ի հաւաքական եւ ընդհանրական մտածողութեան հետ նոյնանալով հանդերձ՝ պիտի պահէր բան մանիֆեսթին, «իր անհատականութեան ազատ ու լրիւ զարգացումը»։ Կեցուածք մը, որ կը յատկանշուի իր լայնախոհութեամբ եւ մտաւորական անկախութեամբ՝ մեկնակէտ ունենալով. «Հայ նորագոյն գրականութեան ազատ զարգացումն ու ծաղկումը»։ Մանիֆեսթը Մենքին կը վերապահէ նաեւ չաղաթի դեր մը կատարել ընդհանրապէս Հայկական Սփիւռքի գրողներուն միջեւ։

Մանիֆեսթէն կ'արժէ ընդհանրացնել այն գաղափարները, որոնք այսօրուան հայ մշակոյթի ծաղկումին համար եւս կը պահեն իրենց թելազրականութիւնը եւ այժմէականութիւնը։

«Փնտռելով իւրաքանչիւրին մօտ ևո՛յն ժողովրդի զաւակներուն յատուկ հասարակաց գծեր, ևերշնչումներ ու մտահոգութիւններ՝ ևամբայ հարթել։»

Գաղափարները եւ անոնց ազգային-քաղաքական մակարդակի վրայ ունեցած տարբերութիւնները ո՛չ միայն հետացուցեր են այլ նոյնիսկ օտարացուցած են նո՛յն ժողովուրդի պատկանող գրողներն ու մտաւորականները։ Երեւոյթին ախտաճանաչումը՝ հասունութեան պակասով կը բացատրուի։ Մտքի եւ հորիզոնի սահմանափակութեամբ։ «Մենք»ի գրագէտ տագրը, Փարիզ նստած կը փորձէն ազատագրել հայ միտքը իր կապանքներէն եւ հասարակաց մտահոգու-

թիւններ եւ ներչնչումներ փնտռել իրարու մօտ եւ իրարու մէջ։ Ու այդ ուղեծիրով «ճամբայ հարթել»։

Հասարակաց ներչնչումը կը բխի նոյն անցեալը, նոյն ճակատագիրը, նոյն մշակոյթը ունենալու համահայկական գիտակցութենէն...։ Հայ մշակոյթի անգաստանը նոր ակօսներով թարմացնելու հաւաքական եւ հասարակաց մտահոգութենէն...։

Բայց ճամբայ հարթողները մի՛շտ ալ քարկոծուած են...։ Վօլթեր հետեւեալ ձեւով բանաձեւած է վիճակէն թելադրուող գաղափարը. «մեր թշուառական մարդկային արարածը այնպէս շինուած է, որ սովորական ճամբէն խլողները միշտ ալ խարեր կը նետեն ա-նոնց՝ որոնք նոր ճամբայ մը ցոյց կու տան»։

Մանիֆեսթին երկրորդ հիմնական եւ կեդրոնական գաղափարը կը հանդիսանայ հետեւեալը։

«Որոնել եւ կերպարանք տալ, ժամանակի ընթացքին, ընդհանուր հանգանակի մը, որ ազատութիւն տալով հանդերձ իւրաքանչիւրին անհատականութեան՝ համապատասխանէ հայ մշակոյթի պահանջներուն»։

Փարիզի չփոթեցնող, շլացնող եւ չփոթահար պահող միջավայրին մէջ, ուր գեղագիտական եւ գրական հակադիր հոսանքները կը խճողեն մշակութային այլապէ՛ս կենսախայտ ու կենսայորդ հրապարակը՝ «Մենք»*ի չուրջ համախմբուած մտաւորականութիւնը իրեն մեկնակէտ կը դարձնէ արուեստի եւ գրականութեան ազգային պահանջները։ Պատուաստելով հանդերձ հայ միտքը օտար մշակոյթներու նպաստով, որոնցմէ ճամբով կ'ուզեն հասնիլ հասարակաց հանգանակի մը, որ համապատասխան ըլլայ հայ մշակոյթի ձգտումներուն։ Առողջ ձգտում է նաեւ անհատականութիւններու ազատ զարգացման արտայայտութիւնը, որ իւրաքանչիւր ստեղծագործ արուեստագէտի եւ մտաւորականի հոգեկան պահանջը կը կազմէ։*

*Մանիֆեսթով բանաձեւուած «Մենք»*ի *հասկացողութիւնը իր արտայայտութիւնը գտած է «Մենք»*ի *էջերուն, տարբեր մտաւորականներու եւ գրողներու կողմէ յայտնուած տեսակէտներով։*

*Տեսական-քննադատական գրութիւններով հանդէս եկող Յ. Ֆրէնկեան «Մենք»*ի *առաջին համարին մէջ «Վէպի մը հերոսին» խորագրուած արձակով, որ Շահան Շահնուրի «Նահանջը Առանց Երգի» վէպին գլխաւոր հերոսներէն Պետրոսին ուղղուած խորհրդածութիւններ կը բանաձեւէ, կ'արտայայտէ նաեւ Մենքեան մտածողութիւնը՝ հակառակ խմբագրական ծանօթութեամբ կատարուած նշումին, ըստ որուն արտայայտուած մտքերուն պատասխանատուութիւնը կը վերապահէ միա՛յն զայն ստորագրողին։ Խմբագրութեան կողմէ կատարուած մատնանշումին տուն տուող պատճառը Յ. Ֆրէնկեանի*

մաքերուն համարձակ եւ յախուռն արտայայտութիւններն են՝ Արեւելքը մոռնալով Արեւմուտքին բացուելու առաջադրութեամբ։

Ըստ Ց. Թրէնկեանին, որ Արեւմտեան քաղաքակրթութիւնն ու մտածողութիւնը Արեւելքին կը հակադրէ, արեւելքէն արեւմուտք հատատուած հայ մարդը ընդհանրապէս եւ հայ մտաւորական ազատքը (երիտասարդութիւն) մասնաւորաբար պէտք է օր առաջ թօթափեն իրենց վրայէն արեւելքցիին յատուկ եղող զգացականութիւնը եւ ձերբազատուին զարերով կուտակուած «տառապանքէն, ազգային ցաւէն, յոռետեսութենէն, ախ ու վախէն», ամբողջութեամբ արեւմուտքցի ըլլալով անոր լոյսին բացուին եւ իբր զարգացման անհրաժեշտ տարր զայն ընդունին իրենց մէջ։ «Ժողվեցէ՛ք ինչ որ ձեր ճամբուն վրայ կը գտնէք որպէս մտքի ծաղիկներ.— Արուեստը։ Զարգացէ՛ք, զարգացէ՛ք, անով է որ պիտի յաղթէք կեանքին, պիտի յաղթէք մարդոց եւ մանաւանդ այն ճակատագրին որուն կը հաւատաք։ Անով է որ պիտի յաղթէք մանաւանդ ձեր անձին։ Արեւմուտքցի եղէ՛ք, արեւմուտքը սիրեցէ՛ք ու անոր լոյսովը ողողեցէք ձեր աչքերը»։

Տեղ-տեղ հակասական մտքերու զարգացումով, Արեւմուտքը Արեւելքին հակադրող մտածողութեամբ՝ Թրէնկեան կը յանգի «Մենք»ի հաւաքական եւ ընդհանրական բանաձեւումին. «բոլորս պիտի պոռանք օր մը այդ միավանկը Մենք։ Բայց որպէս զի այդ հաւաքական կանչը կարելի ըլլայ՝ անհրաժեշտ է որ մեր տակաւին երիտասարդ հոգիները առանց երբեք blasé ըլլալու պահեն ինչ որ կայ իրենց մէջ ազնուական, վեհ ու մաքուր «փաշա մանչերու» արժանի»։

Արեւելքէն առնուածը արեւմուտքի լոյսով չազախուած տալու առաջադրութիւնը պէտք չէր որ Ց. Թրէնկեանը առաջնորդէր արեւելքի ուրացման, ա՛յդ աստիճան։

Փարիզի մտաւորական-գրագէտներէն Շաւարշ Նարդունի, որ «Մենք»ի հրատարակութեան օրերուն ոչ միայն տարիքով երիտասարդ էր, այլ եւ մտածողութեամբ, իր երիտասարդական յեղափոխական կեցուածքը կ'արտայայտէ գրական հասկացողութիւններու չուրջ, յատկապէս հին աւանդութիւններէ հրաժարելու, արուեստի նոր ու արդիական կերպեր որոնելու ուղղութեամբ։

«Մենք»ի մանիֆեստով արտայայտուած մտածողութիւնը ընդհանրացնելու կը ծառայեն իր «— Մենք··· — Մենք··· — Մենք···» խորագրուած անսական խորհրդածութիւնները, որոնք յետ-պատերազմեան գրական սերունդին հաւատոյ հանգանակը կը ձեւակերպեն այն սկզբունքով, ըստ որուն «գոյութիւն ունին հիմա նախապատերազմեան մարդն ու յետ պատերազմեան մարդը»։

Շաւարշ Նարդունիի հայեցողութեամբ յետպատերազմեան մարդու եւ գրագէտի հոգեբանութիւնն ու զգայնութիւնը կը տարբե-

րին նախապատերազմեան մարդու եւ գրագէտի հոգեխառնուածքին եւ գաղափարքին: Ահա թէ ինչու ան կ'առաջադրէ յետպատերազմեան սերունդին համար նո՛ր դիմագիծով գրականութիւն ստեղծելու հրամայականը՝ ամբողջ Սփիւռքի տարածքին: Թէ ի՞նչ պէտք է ըլլան դիմագիծին կերպարանք տուող գոյներու արտայայտութիւնները: Շաւարշ Նարդունի անոր կու տայ հետեւեալ պատկերացումը. «ի՞նչ է մեր նպատակը,— գծել յետ-պատերազմեան սերունդի մը պատկերը, պատրաստել գրական յեղափոխութեան մը նախատարերքը, փոխել հոգին, աւանդութիւնները, ձեւերը, որ կը տիրապետէին մեր գրական աշխարհին մէջ: Մանաւանդ բոլորովին ջնջել գրական սերունդներու փոխանցման սովորութիւնները»:

Հինի ու նորի միջեւ խրամատը կը խորացնեն Շաւարշ Նարդունիի տեսական մտածումները, որոնք հինին հակադրութեամբ կը փորձեն ճիշդ orientation տալ գրական նոր կամ երիտասարդ սերունդի մտաւորականութեան: Բոլոր ազգերու գրականութեան բացուելու քաղաքականութիւն կ'առաջադրէ, «տիեզերքի ձայներուն» հաղորդ մնալու սկզբունքով: Արուեստն ու գրականութիւնը Հայրենիքը փոխարինող ազդակ դառնալու են՝ մինչեւ հայութեան իր սեփական հողին վրայ հաստատուելու պատմական օրը. «մենք, հողէ զրկուած երիտասարդներ, կ'ուզենք արուեստի հողին վրայ բարձրացնել մեր ժողովուրդը, որպէս զի դիմանայ մինչեւ որ իսկական հողը գտնէ՝ բնակարան կանգնելու համար»:

«Մենք»ի սերունդէն բանաստեղծ եւ արձակագիր Նիկողոս Սարաֆեան, որ սերունդի յառաջապահներէն է նաեւ իբր ստեղծագործող, իր սերնդակիցներու մտածողութեան հետ քայլ պահելով հանդերձ, իր մենքեան հայեցողութեան կու տայ ինքնագրոչմ իւրայատկութիւն, որ կը յատկանշուի յախուռն ըմբռնողութեամբ:

Նիկողոս Սարաֆեան եւս կ'ընդհանրացնէ՝ անկախ գաղափարական պատկանելիութենէ, Սփիւռքի մէջ գրականութեան ապակուսակցականութիւնը եւ գայն «մեծերու կեղծ, ձրի եւ ունայնամիտ հովանաւորութենէն» ազատագրելու գաղափարը: Կը քննադատէ անխնայօրէն հիններու եւրոպական մշակոյթի կապկումը, որ սեփական մշակոյթին անգիտութենէն կ'առաջանայ:

20-րդ՝ «Նախորդներէն տասն անգամ աւելի արագ վազող հրսկայ դարու» սերունդը որպէս՝ Նիկողոս Սարաֆեան կը զարգացնէ այն միտքը թէ Դարը կը պահանջէ իր յառաջդիմութեան համապատասխան գրական զարգացում, որուվհետեւ ըստ իրեն. «Աւելի դիւրին էր Եղիշէի պոհեմ-ի աւօթի գրականութիւնը, քան հիմակուանը, որ մեզմէ կը պահանջէ շատ աւելի գրական ըլլալ եւ օրօրներ ու ճառեր

գրելէ աւելի՝ մտածել, որ գրականութիւնով միայն չեն փրկուիր ո՛չ իր հոգին եւ ոչ ալ իր ազգը»:

Արեւմտահայ գրականութիւնը՝ Սփիւռքեան հոգեխառնութեամբ, արեւմտա-եւրոպական մտածողութեամբ եւ արագ զարգացող դարու կշռոյթով վերանորոգելու եւ կենսաւորելու առողջ ձգտումն ու առաջադրանքը ունենալով հանդերձ «Մենք»ի մանիֆեսթն ու անոր տեսաբաններուն կողմէ կատարուած ընդհանրացումները, տեղ-տեղ անոնք յանգած են ծայրայեղութեան, ինչ որ չէ արդարացած «Մենք»ի մէջ տեղ գրաւած ստեղծագործական էջերով:

***

«Մենք»ի քննադատական եւ գեղագիտական մտածողութիւնը,— հայկական եւ եւրոպական իմացական չարժումներու, գիրքերու, գեղարուեստական ձեռնարկներու, պարբերականներու եւ դէմքերու մասին անդրադարձումներով,— բացայայտուած է ընդհանրապէս պարբերագիրքի վերջաւորութեան՝ «Գրականութեան եւ Արուեստի Լրատու» բաժինով թէ պարբերագիրքի էջերուն տպուած տեսական յօդուածներով:

Զոյգ բաժիններու տեսական յօդուածներով, արուեստի քրոնիկներով եւ քննադատական ակնարկներով ալ, «Մենք»ի հաւաքական առաջադրութիւնը եղած է. համահայկական կեցուածք. եւրոպական մշակոյթին հաղորդ ընդգրկում. քննադատական վերաբերում երէցներու հանդէպ:

«Մենք»ի տեսական գրիչներէն Հրաչ Սարգիսեան «Հապճեպ Ակնարկ մը Ֆրանսական Արդի Գրականութեան Վրայ» *յօդուածով, առանց խորանալու ֆրանսական գրականութեան ժամանակակից հոսանքներու իմացումներուն մէջ՝ իրապէս արագ ակնարկով մը տպաւորութիւններ կ'արտայայտէ՝ փորձելով պատկերացումը տալ Ֆրանսայի գրական կեանքին: Ըստ յօդուածագիրի կարծիքին, Ֆրանսայի 1930-ական թուականներու գրական կեանքը դպրոցներէ աւելի գրողներու անհատապաշտութեամբ կ'առաջնորդուի: Հակառակ «չատ հոսանքներ» ըլլալուն, անոնք իրենց ուղղութեամբ չեն ներգործեր: Միայն գերիրապաշտութիւնն է, որ զգայացունց իր «մանիֆեսթ»ով ուշադրութիւն գրաւած է: Գրողներու անհատական ազդեցութեան վրայ չեչոր դնելով, Ֆրանսական արդի գրականութենէն կ'առանձնացնէ միջազգային առումով հեղինակութիւններ. «Եթէ դպրոցները խորապէս չեն ազդեր, կան անհատներ որոնք կեդրոնական դիրք բռնած՝ կը տիրապետեն շատ մը երիտասարդ մտքերու վրայ: Ներ-*

կայիս չորս հսկայ տաղանդներ — Մարսել Բրուստ, Բօլ Վալերի, Անտրէ Ժիտ եւ Գլոտել առաջնորդողի դեր կը կատարեն»։

Ֆրանսական արդի գրականութեան մէջ վիպական ժանրին մասնայատուկ դերը ընդգծելէ ետք՝ չեչտուած անհատականութեան ակը բանաստեղծներու բացակայութիւնը կը հաստատէ ա՛յն իրողութեան լոյսին տակ, որ Ֆրանսական ակադեմիան առնուազ իր քառասուն անդամներուն երեք քառորդը բանաստեղծ կը հաշուէր, իսկ այդ օրերուն՝ երկու։ Հաների տը Բրնեիէ եւ Բօլ Վալերի։

Ինչքան ալ ակադեմիաները գիտական առումով բարձրագոյն մակարդակի հիմնարկներ են, բայց միակ չափանիշը չեն կազմեր գրական կամ բանաստեղծական բացառիկ անհատականութիւններու գոյութեան։ Որքան մեծ բանաստեղծներ յաճախ դուրս կը մնան ակադեմիաներէն եւ չեն արժանանար գրական միջազգային մրցանակներու (Արակոն, Բօլ Էլիւար եւն.)։ *Ֆրանսական տիրապետող դպրոցին՝ գերիրապաշտութեան մասին իր վճիռը քննադատական հետեւեալ չեչտը ունի, հակառակ որ անոր ազդեցութիւնը ֆրանսահայ գրականութեան վրայ եւս ակնյայտ կը համարուի.* «Նոր բանաստեղծները հետզհետէ կ'ուզեն զարմացնել եւ համայել գիւտի չափազանց ճիգերով»։

Հրաչ Սարգիսեան, որ Ֆրանսական արդի գրականութեան չարժումներուն հետեւող մտաւորական մըն էր, եւ հակառակ իր խոստումին՝ «Ֆրանս. արդի գրականութեան մասին ուրեմն կարելի չէ խօսիլ, գայն հոսանքներու վերածելով, այլ առանձնապէս անհատներ առնելով ու վերլուծելով, ինչ որ յաջորդաբար պիտի տանի *«Մենք»*ի մէջ»՝ *գրականագիտական ուրիշ յօդուածի մը տակ չենք հանդիպիր իր անունին «Մենք»ի հետագայ համարներուն մէջ։*

«Մենք»ի գրաքաոսական կարճ, *բայց դիպուկ ակնարկներուն մէջ բանաձեւուած կը գտնենք մենքեան սերունդին քննադատական կեցուածքը, յաճախ ուրացումի միտող ծայրայեղութիւններով, որոնք ստորագրուած են Վազգէն Շուշանեանէ, Շաւարշ Նարդունիէ, Նիկողոս Սարաֆեանէ, Յարութիւն Ֆրէնկեանէ եւ Շահան Շահնուրէ։*

Սփիւռքի թէ հայրենիքի մէջ լոյս տեսած գործերու մասին «Մենք» բաւ է իր խօսքը՝ արուեստի եւ գրականութեան իրեն յատուկ գեղագիտական պրիսմակէն անցնելով գրաքաոսուած գիրքին պարունակութիւնն ու գեղարուեստական արժէքը։ Եւրոպական գրական պարբերականներէ որդեգրուած կերպով, «Մենք»ը յաջողած է քննադատական մտածողութեան տալ որքա՛ն հակիրճ նոյնքան կուռ եւ խիտ կառոյց մը, որ դասական ըմբռնողութեան չատաբանութենէն հրաժարում մըն է։

Միա՛յն ա՛յս նորարարութեամբ չի յատկանշուիր «Մենք»ի

քննադատական մտածողութիւնը, այլ՝ երէցներու հանդէպ բացատականութեամբ: Անո՛վ է նաեւ, որ «Մենք»ը իր չուրջ ստեղծած է աչխուժութիւն, հակազդեցութիւններ եւ համակրալիր վերաբերումի հետ մերժողական արձագանգներ:

Առաջին համարին մէջ «Մենք»ի յառաջապահներէն Վազգէն Շուշանեանի գրադատականը՝ Կոստան Զարեանի «Տատրագոմի Հարսը» պոեմի մասին, որ գրախօսուող գիրքէն աւելի գրողին վրայ չռնդալից գրոհ մըն է՝ որակումներու անհակակշիռ աստիճանաչափով: Սերունդի մը՝ Փարիզի մենքեան սերունդի՝ կեցուածքը դրսեւորել յաւակնող Վազգէն Շուշանեանի սոյն ազմկայարոյց գրախօսականը, պարկեշտ դատումէ աւելի իր խառնուածքին յատուկ յախուռն եւ ուրացող պոռթկում է եւ՝ գեղում, որուն հետ դժուար թէ կարելի ըլլայ հաչտեցնել գրական չափանիշներու անեղծութիւնը:

Վազգէն Շուշանեան կը գրէ Կոստան Զարեանի մասին. «Դժուար է այս խորհրդածութիւնները չընել, երբ մարդ կը կարդայ «Տատրագոմի Հարսը» ու այդ բառերու շրեղ կոյտին մէջէն, կը փնտռէ հինաւուրց ու արիւնահեղձ երկիրը որուն ցաւագին երագովը կերակրուեցաւ ամբողջ սերունդներ: Ո՞վ է այս մարդը, այո՛, գրասեղանին վրայ հակած դպիրը այս, որ ուրիշին ճաշի մը էջերուն վրայ՝ ճաշի մը ժամ որոճալով, տխուր յաւակնութիւնը ունի հայոց երկրին մեռեալ այլ այնճաւ մերձ անցեալը երգելու: Մենք կը մերժենք այս մարդուն գրադարանային դիւցազներգութիւնը՝ որ մտքի ընդարձակ գիջութիւն մըն է պարզապէս: ... Օտար մըն է, որ կեցած մեր ցաւի ընդարձակ տարածութեան դիմաց՝ կ'ապաւինի իր բառերուն գեղեցկութեան, մեզ խաբելու համար:

«Ու այդ բառերը սուտ կը խօսին»

Հայ գրականութեան «բառի եւ մտածումի կախարդ»ին մասին «Մենք»ի Վազգէն Շուշանեանի գրիչով բանաձեւած դատողութիւնը հերքող եղած է դատաւորներուն մեծագոյնն ու ամենէն անաչառը՝ ժամանակը: Կոստան Զարեան կ'ապրի հայ գրականութեան մէջ իր վաստակին թէ տաղանդին մեծութեամբ...:

«Մենք»ի ուրացման երկրորդ թիրախը հանդիսացած է ուրիշ հեղինակութիւն մը՝ նշանաւոր պատմաբան Նիկողայոս Ադոնց: «Մենք»ի խմբագրութեան կողմէ գրի առնուած են հետեւեալ գաղափարները, որոնք պարզապէս կը զարմացնեն Նիկողայոս Ադոնցը մեծ հայ եւ գիտնական դաւանողները յատկապէ՛ս, «Ձեր դասախօս մը որ հին «Նոր Դարեան» մը եւ պիտակաւոր յետադիմական մըն է ու իր բարեկամներուն համար իսկ «պրոտ ու փոքրոգի մի մարդ»՝ Նիկողայոս Ադոնց, պատմաբան ու բանասէր ի պաշտօնէ եւ գրականագէտ իր պարապոյ ժամերուն՝ ամիսներէ ի վեր եղած է արշաւի երկու ա-

բեւմտահայ մեռած գրողներու՝ Ռուբէն Զարդարեանի եւ Մկրտիչ Պէշիկթաշլեանի դէմ: Ու կը յայտարարենք յանուն այս ժողովուրդին վիրաւորուած արժանապատուութեան, որ բոլոր հայերը հաւասար են, բացի սրիկաներէն, դաւաճաններէն, ապազգայնացած խաղխեղիներէն ու ասոնց ծառայութեան մէջ գտնուող մտաւորականներէն, իրենց դարաւոր գերութեան ու ի խնդիր ազատութեան մղած մարտնչումներուն դէմ»:

Ինչպէս կ'երեւայ՝ «Մենք»ը՝ մե՛ծ պատմաբանին հակադրողը գաղափարներու եւ տեսակէտներու տարբերութենէն աւելի, կի՛րքն է: Փոխանակ քննադատական առողջ եւ չինարար ոգիով,— ի՛նչ որ պէս-ք էր ըլլար «Մենք»ի չուրջ համախմբուած լուրջ եւ զարգացած մտա-ւորականներուն,— վերլուծելով հակադրուելու Ազոնցի տեսակէտ-ներուն, դիմուած է դիւրին միջոցին՝ ուրացող ու նուաստացնող պարսաւանքին:

Ինչպէս «Մենք»ին, Խորհրդային Հայաստանի համար եւս Նիկողայոս Ադոնցը չհասկցուած մնալէ եւ երկար ժամանակ անտեսուելէ ետք, ընդունուեցաւ եւ ըստ արժանւոյն գնահատուեցաւ իր պատմագիտական երկերուն հրատարակութեամբ եւ հայ պատմագրութեան միջազգային առումով բերուած նպաստին գնահատութեամբ:

Աւանդական մամուլի հանդէպ եւս «Մենք» չէ վերապահած իր դժգոհութիւնները: «Պարբերականներ» խորագրին տակ քննադատաբար անդրադարձած է «Հայրենիք» ամսագրին, Գահիրէի «Ցուսաբեր» եւ Փարիզի «Ապագայ» թերթերուն մասին: Շաւարշ Նարդունի՝ «Հայրենիք» ամսագրի հարիւր հատորի հրատարակութիւնը ողջունելէ ետք, կ'արծարծէ գրական քաղաքականութեան, գրական ամսագրի համար ընտրութեան զգայարանքի եւ ճաշակի անհրաժեշտութեան հարցերը, որոնք ըստ իր հայեցողութեան կը բացակային «Հայրենիք» ամսագրին բովանդակութիւն տուող ուղղութենէն. «Ցիշեմ երրորդ պատճառը, ամերիքացիզմը,— էջեր լեցնելու կամ ծաւալ առնելու սէրը նիւթ կը պահանջէ (անհամ ու անլի նորավէպեր, երգիկ ոտանաւորներ եւ դրուագներ առանց պատմական պատասխանատուութեան, առանց հակակշիռի)»

Վազգէն Շուշանեան՝ «Ցուսաբեր»ի եւ «Ապագայ»ի մասին կատարած խորհրդածութիւնները միա՛յն իր պատասխանատուութեան վերապահելով (խմբագրութենէն անկախաբար) գնահատութիւնը կը կատարէ մամուլի զոյգ օրկաններուն բովանդակութեան եւ լեզուական մակարդակին: Առաջինին հանդէպ բացայայտ համակրանքով կը դրուատէ անոր բովանդակութեան աշխուժութիւնը, լայն հետաքրքրութիւններ գոհացնելու հորիզոնը, կարեւոր հանրային խնդիրներ արծարծելով ընթերցողը բարձրացնելու ճիգը եւ հայոց գաղթական

լեզուին հանդէպ ցուցաբերած հոգածութիւնը: Սակայն, ինչ կը վերաբերէր անոր կուսակցական տոկմաթիզմին, Վ. Շուշանեան զայն չափազանցուած կը նկատէ. «Պաշտօնաթերթը՝ կուսակցութեան մը, ան ջղուտ, գրեթէ գինուորական կարգապահութեամբ մը կը հետեւի այն բոլոր քաղաքական շարժումներուն որ կ'ակօսեն Արեւելքը: Սակայն շարժումներու յորձանքին մէջ — ինչպէս չըսել — ան կրկին կը կորսնցնէ իր պաղարիւնութիւնը: Այսպէս՝ դժուար է յուսալ, որ ան կարենայ առարկայօրէն մօտենալ թրքական ու ռուսական խնդիրներուն, որոնց հանդէպ ի յառաջագուշէ ունի կանխամտածուած ու կանխորոշուած կարծիքներ՝ որ կը մնան անփոփոխ, որքան ալ դէպքերը փոխեն իրենց յարաշարժ ընթացքը»:

Վազգէն Շուշանեան քննադատական աւելի անխնայ վերաբերում ցոյց տուած է «Ապագայ»ի հանդէպ. «Աղբատ՝ գաղափարներով, կրկին աղբատ՝ լեզուով մը, որմէ պիտի ամչնային, այո՛, «Աւետարեր» խմբագրող Ամերիկացիները իսկ, երիցս աղբատ քաղաքական ու ընկերային ծանօթութիւններով, անգամ մը եւս աղբատ ու գուրկ խանդավառութենէ — բարի մարդիկ — մարդ կ'ապշի թէ յամի շնորհաց հազար իննը հարիւր երեսուն եւ մէկին կարելի է նման թերթ մը խմբագրել այս քաղաքին մէջ»:

Անկախաբար «Մենք»ի խիստ քննադատական ոճէն, արժէքներու հանդէպ պահած է մտաւորական ողջախոհութիւնը, արժէքին գիտակցութենէն մեկնող ճշմարիտ գնահատութեամբ: Այս տեսակէտով Նիկողոս Սարաֆեանի ստորագրած գրախօսականը Գեղամ Տէր Կարապետեանի «Տարօնի Աշխարհ» եւ Շաւարշ Նարդունիի գրախօսականը Ակսել Բակունցի «Մթնաձոր»ի մասին կու տան գաղափար մը մենքեան գեղագիտական հասկացողութեան եւ չափանիշի մասին: Նիկողոս Սարաֆեան այսպէս կ'եզրակացնէ իր դատումը. «Բայց Տարօնի Աշխարհը պատկառելի է իր կազմով ու հակառակ իր բոլոր անհաւասարութիւններուն եւ հոգեբանական ծանծաղութեան՝ կու տայ լիովին շրջան մը՝ որոշ թուականներով, դիմագծի, հագուստի, գաւառի լեզուի, վանքի, վարուելակերպի, ըմբռնումի աշխարհագրական յստակ ու յատկանշական նկարագրութիւններով: Ու ատիկա շատ վեր՝ մեր գաւառական գրականութեան շատ շատ էջերէն, որոնց բառերու մոլի փառասիրութիւնը կրթնած է յաճախ պզտիկ, նիհար յիշատակի մը վրայ»:

Շաւարշ Նարդունիի վերլուծումը ինքնուրոյն մեկնակէտով ֆրանսական գրականութեան այդ օրերու հոգեբանական լուսարձակին տակ կ'առնէ Ակսել Բակունցի «Մթնաձոր»ը ընդհանրացնելով գրական հետեւեալ հետաքրքիր մտածողութիւնը. «Բակունց վարպետ արուեստագէտն է համր գրականութեան, չափազանց ինքնատիպ,

ճոյնիսկ անկախ ֆրանսական «Լուրեան Դպրոց»էն: Եթէ ֆրանսական դպրոցը կ'աշակերտի համր Սիմէմայիմ, ինչպէս նաեւ հոգեբանական այն փորձերուն, որ կ'աշխատին պեղել մարդուն ենթագիտակցական աշխարհը, Բակունցի համրութիւնը, ազդուած ըլլալով հանդերձ իր հողային ու կենդանական աշխարհէն, խորերէն եկած վարժութիւն մըն է արեւելցի մարդու: Արդարեւ չի՛ խօսիր արեւելցին, եւ, զարմանալի՛ է, համր է նաեւ արեւելցի փիլիսոփան (ան կը նայի, կը դիտէ իր ներսը,— ներհայեցողութիւնը արեւելեան դպրոց մըն է)»:

«Մենք»ի քննադատական հայեացքներն ու վերլուծական անդրադարձները չեն սահմանափակուիր միայն հայ գրական-իմացական կեանքով, այլ՝ կը տարածուին եւրոպականին վրայ, մասնաւորաբար՝ ֆրանսականին: Հայ գրական կեանքին անդրադարձող նո՛յն գրիչներն են՝ Շաւարշ Նարդունի, Վազգէն Շուշանեան, Նիկողոս Սարաֆեան եւ Շահան Շահնուր՝ որոնք եւրոպական գրականութենէն եւ արուեստի փիլիսոփայութենէն կատարած իրենց ընթերցումներուն հաղորդ կը պահեն հայ գրական միտքը՝ կարճ բայց խորաթափանց դատումներով: Այս ուղղութեամբ ամենէն աշխոյժները Շաւարշ Նարդունին եւ Վազգէն Շուշանեանն են:

Շաւարշ Նարդունի առաւելաբար կ'անդրադառնայ արուեստի հոգեբնախօսական հարցերուն առընչուող գիրքերուն: Այսպէս՝ A. Thibaudet–ի «Physiologie de la critique» եւ Charles Baudoin–ի «La psychoanalyse de l'art» գիրքերուն բովանդակութիւնը ներկայացնելէ անկախաբար, կը կատարէ անոնց բերած նորութեան գնահատանքը: Առաջինին հեղինակը՝ Ալպեր Թիպոտէ, որ ամբողջ Եւրոպայի ամենէն հեղինակաւոր մտաւորականներէն եւ համուտ քննադատներէն մին կը համարուի, իր սոյն գիրքով կը հաստատէ թէ քննադատութիւնը «գրական սեռ մըն է եւ ստեղծագործական նկարագիր ունի»: Թիպոտէի օրերէն ասդին վէճի առարկայ ըլլալէ չէ դադրած Քննադատութեան գրական սեռ մը եւ ստեղծագործական նկարագիր ունենալու հանգամանքը: Երկրորդին բովանդակութիւնը՝ հոգեվերլուծման կամ ֆրոյտիզմին յեղաշրջական անդրադարձները իբր նիւթ ունի, արուեստի եւ գրականութեան աշխարհէն ներս:

Գեղեցկագիտական հասկացողութիւնները «վերանորոգած» ֆրոյտիզմի վերլուծման նուիրուած Շարլ Պոտուանի գիրքը Շաւարշ Նարդունիի գնահատութեամբ «ուսումնասիրութիւնն է արուեստագէտներու հոգեբնախօսական վիճակին, որուն արտայայտութիւնն է իրենց գործը···»: Այս տեսակէտով է, որ կ'ըսէ Շաւարշ Նարդունի. «Այսօր բազմաթիւ են գրագէտները, որոնք հոգեվերլուծական բնութագրութիւն մը կը կատարեն արուեստի բոլոր գործերուն վրայ»:

Այդ գրագէտներէն մին ալ հայ գրականագիտական մտքին համար Շաւարշ Նարդունին եղաւ, բայց իր հոգեբնախօսական ուսումնասիրութիւնները կարգ մը հայ գրողներու վրայ յայտող արդիւնքի չյանգեցան, ինչպէս պատահած էր ան եւրոպական գրականութեան համար:

Վազգէն Շուշանեանի անդրադարձները ժամանակակից գրական հարցերու եւ գիրքերու մասին, գրականագիտական մօտեցումներէ աւելի, տպաւորապաշտ դպրոցին կը պատկանին: «Մենք»ի թիւերուն մէջ, ան իր հիացական տպաւորութիւնները,— զեղուն եւ յորդ արտայայտութիւններով,— կամ հիասթափութիւնները՝ ճաղկիչ եւ անխնայ որակումներով գրած է Ժօրժ Տիւհամելի «Տեսարաններ Ապառնի կեանքի», «Բանաստեղծութիւններ Ամերիկեան Բանուորներու», Աղեքսանդր Պուշկինի «Ցեղափոխական Բանաստեղծութիւններ», Տ. Ռիազանովի «Ամուսնութիւն եւ Համայնավարութիւն», «Տասներկու Բանաստեղծներ» հատորներու մասին: Քաղքենիական բարքերու եւ քաղքենիացած մտայնութիւններու դէմ ինքզինք որերիմ հակառակորդ հռչակած համակրելի ըմբոստը, որ եղած է Վազգէն Շուշանեան, քննադատական ակնարկներուն մէջ եւս կ'արտայայտէ նոյն ոգին: «Բանաստեղծութիւններ Ամերիկեան Բանուորներու» հատորին մէջ գինք խորապէս տպաւորողը անոնց ընկերային խորքին հետ լեզուական նորարարութիւնն է, «առօրեայ ամերիկերէն»ի գործածութեամբ, ուր «հետզհետէ կը զարգանայ նկարագեղ, հում ու լի գեղեցկութեամբ լեզու մը, որ Շէյլիի կամ Շէյքսփիրի անգլերէնը չէ բոլորովին»: Բանաստեղծութիւններէն համակրանքը կ'անցնի բանուորներու առօրեայ տառապալից կեանքին, «որ կը մաշին իրենց հանապազօրեայ աշխատանքէն եւ որ կը զգան նաեւ թէ երկնակարկառ պիտինկներու երկրին մէջ՝ իրենք է որ պիտի բերեն լուսաժպտ ապառնին»: Ասիկա ալ, կ'ըսէ Վազգէն Շուշանեան, գրականութիւն է եւ որ կրնայ յաղթութեամբ տոկալ բազմաթիւ քաղքենի մրցակցութեանց:

«Տասներկու Բանաստեղծներ» հատորին բովանդակութիւնը եւս նոյն ակէն խմած ըլլալով իր ջուրը՝ կ'արժանանայ Վազգէն Շուշանեանին համակրալիր վերաբերումին: Ձախակողմեան բանաստեղծներ են, որոնք նաեւ որպէս յեղափոխութեան բարեկամ մտաւորականներ թշնամիներն են քաղքենիութեան: Անոնցմէ իւրաքանչիւրին բանաստեղծական էութիւնը բնորոշելէ ետք, կու տայ նաեւ հաւաքական դիմագիծը. «Այս տասներկու բանաստեղծները, իրենց երկրին մէջ ուր դեռ կը յամենայ, բաղցր տրտմութեամբ մը, յեղափոխութեանց ու թափուած արեան յիշատակը, անշուշտ աւետաբեր թռչուններն են վաղուան: Եկած յեղափոխութեան՝ մեծ մասով բըշ-

ճամի բանակէն, անշուշտ անոնք չունին բիրտ ու դաժան իրականութեան անմիջական զգացումը՝ զոր կը յատկանշէր այն ամերիկեան բանուորները, որոնց վրիժառու երգերէն նմոյշներ տուինք «*Մենք*»ի առաջին թիւին մէջ»։

Ո՛չ միայն հետաքրքրական, այլեւ՝ իր գրականութեան սրամտութեամբ յագեցած են Շահան Շահնուրի Jerome K. Jerome-ի «Trois Hommes Dans Un Bateau»ի եւ Claude Farrère, Lotiի մասին գրած քննադատական ակնարկները։

Առաջինը՝ դրախօսական իր բնոյթով գիրքին բովանդակութեան անդրադառնալէ եառ, որ զուեչտական է իր խորքով, Շահնուր կը յարէ. «դասական գիրք մըն է ըսին, հեղինակը Անգլիոյ արդի լուագոյն զուեչտագիրն է ըսին ականջս ի վար, գիտնալով որ թէ՛ դասականները կը սիրեմ եւ թէ՛ զուեչտագիրները։ Ձայն կարդալով չխնդացի սակայն. կամ շատ փիչ։ Պէտք է խոշոր ճիգ մը ընել եւ կատարեալ աճգլիացի դառնալ (իմ գործս չէ), անոնց մորթը հագնիլ, կարենալ խնդալու համար։ Պաղած ապուր պատմութիւններ»։

Իր եզրակացութեան մէջ, Շ. Շահնուր պատկերաւոր բնորոշումով մը, որ կը յիշեցնէ Յ. Օշականի «կապար դարձաւ ձեռքիս մէջ» արտայայտութիւնը, կու տայ խտացեալ իր տպաւորութիւնը. «երբեմ հերոսները վերապրած են երկրորդ գրքի մը մէջ որ կը կոչուի «Les trois hommes en Allemagne»։ Ուզողը կրնայ կարդալ։ Բայց ես չպիտի կարդամ։ Ակռայիս մէջ փուշ մնաց»։

Թուրքիոյ սիրահար գրագէտին պատմական խեղաթիւրումին առընչութեամբ, Շահան Շահնուր իր ակնարկը՝ նիւթը ամփոփ գիծերու մէջ խտացնելէ եառ՝ կ'եզրակացնէ. «ի՞նչ ըսիր, Համբարձում. էֆրե՞մ, կ'արժէ՞»։ Քֆրելու իսկ արժանի չտեսնելու Շահնուրեան այս արհամարհական կծու ոճը դատապարտութիւնն իսկ կը կազմէ ֆրանսացի գրագէտներու հաչուենկատ թրքասիրութեան։

«Մենք»ի «Գրականութեան եւ Արուեստի Լրատու» բաժինը կ'արձագանգէ նաեւ նկարչական, թատերական եւ երաժշտական հարցերու եւ ձեռնարկներու, բայց անոնք մասնաւոր նպաստ մը չեն բերեր «Մենք»ի գեղագիտական ու քննադատական մտքի յառաջապահութեան։

***

«Մենք»ի գեղարուեստական բերքին մէջ բանաստեղծականը կը մնայ վտի՛տ՝ իր որակով եւ քանակով։ Բանաստեղծութիւնն ու բանաստեղծները տիրապետող ներկայութիւն չեն «Մենք»ի մէջ։ Բա-

նաստեղծական այն քիչ աշխատակցութիւնները, որոնք ստորագրուած են՝ Արշամ Տատրեանէ, Ոստանիկէ, Ղ. Մելոյեանէ, Փայլակ Միքայէլեանէ, Բիւզանդ Թօփալեանէ եւ Յ. Կոստանդեանէ՝ չե՛ն արդարացներ «Մեմֆ»ով արտայայտուած ո՛չ հաւաքական դիմագիծը, ո՛չ ալ գրական-գեղարուեստական նոր մտածողութեան յաւակնութիւնները: Տարբեր ճաշակի եւ արտայայտչաձեւերու տէր բանաստեղծներ են, որոնց ստորագրած բանաստեղծութիւններուն վրայ հիմնուելով, կարելի չէ բնութագրել սփիւռքահայ բանաստեղծութեան ֆրանսահայ դպրոցին դիմագիծը, հոգեխառնութիւնը:

Բանաստեղծներու եւ բանաստեղծութեան հիմնական տեղ արուած չէ «Մեմֆ»ի մէջ: Սփիւռքահայ գրականագիտական մտքին համար, որ ֆրանսահայ բանաստեղծութիւնը յառաջապահի դեր մը իրագործած է արեւմտահայ քերթողական վաստակին վրայ, իր բանները դարու կչռոյթին եւ ձգտումներուն հաղորդ իմացական խորքով եւ նորարար ոճով՝ բացակայ է «Մեմֆ»ի էջերէն: Ֆրանսահայ արդիապաշտ բանաստեղծութիւնը յատկանշող բանաստեղծներէն՝ Նիկողոս Սարաֆեան, Բիւզանդ Թօփալեան, Ահարոն Տատուրեան, Գրիգոր Ճիզմէճեան, Յարութ Կոստանդեան՝ կան միայն երկուքը: Հակառակ, որ Նիկողոս Սարաֆեան «Մեմֆ»ին մասնակից գրողներու խումբէն է, բայց իբր բանաստեղծ բացակայ է անոր էջերէն: Յ. Կոստանդեան իր աշխատակցած մէկ բանաստեղծութեամբ ոչինչ կը զգացնէ իբր ստաւորութիւն: Փայլակ Միքայէլեանին տեղը ֆրանսահայ գրական վաստակին մէջ չի յատկանշուիր իր քերթողական նախափորձերով: Ոստանիկին աշխատակցութիւնները «Մեմֆ»ին կը տառապին խորքի նիհարութենէ եւ աւանդական կերպի կրկնութենէ: Ղեւոնդ Մելոյեան, հակառակ որ քերթողական նոր զգայնութեան եւ ոճի ճաշակ մը կը զգացնէ, բայց «Մեմֆ»ի երկու բանաստեղծութիւններով չ'արդարացներ իր նորաշունչ ձգտումը:

Տարբեր է «Մեմֆ»ի բանաստեղծ աշխատակիցներէն Արշամ Տատրեանի պարագան: Իր մտաւորական եւ մշակութային խորութեան հաղորդ իմացական խորք ունին իր բանաստեղծութիւնները՝ արեւմտահայ աւանդական ոճին դրսեւորումով՝ իբր ոճ: Ընդհանրապէս, Արշամ Տատրեանի բանաստեղծական ուրոյնութիւնն ու տեղը Սփիւռքահայ բանաստեղծութեան մէջ, անտեսուած է Սփիւռքահայ գրականագիտական մտքին կողմէ:

Ի՞նչ կը վերաբերի Բիւզանդ Թօփալեանին, «Մեմֆ»ի իր բանաստեղծական աշխատակցութիւններով արտայայտած ձգտումները չեռագային չարունակելով ո՛չ միայն քերթողական վաստակ մը իրագործած են, այլեւ՝ մտքին գերակայութեամբ բանները դարը յատկանշող եւ մարդու բարդ ներաշխարհը վերարտադրող ինքնատոյգ

բանաստեղծութեան մը խորութեամբ յատկանշուած են, մնալով հանդերձ անհազորդական։

«Մենք»ի արձակ ստեղծագործական էջերու բերքը աւելի ճոխ ու բեղուն է՝ որակ մը յատկանշող նուաճումով։ Ֆրանսահայ տադանդաւոր արձակագիրներու սերունդէն հոն են. Շահան Շահնուր, Վազգէն Շուշանեան, Զարեհ Որբունի, Նշան Պէշիկթաշլեան, Շաւարշ Նարդունի։

Բացակայ են Հրաչ Զարդարեան, որ հետու մնալով չէ մասնակցած «Մենքեան» չարժումին, իսկ Նիկողոս Սարաֆեան՝ ինչպէս քերթողական աշխատակցութեան, նոյնպէս արձակի բաժնին մէջ ներկայ չէ։

Շաւարշ Նարդունին աւելի չատ տեսական–քննադատական միտք ներկայ է, քան գեղարուեստական գրականութեամբ։ «Բաբելոն Աշտարակ» աշխատակցութիւնը նախաճաշակը չի կազմեր յետագային իրագործուած իր գեղարուեստական արձակին։

Եւրոպական գրականութեան սրտին՝ Փարիզի գրական–իմացական մթնոլորտին անհազորդ արձակ էջեր են Գեղարքունիի, Յ. Ֆրէնկեանի, Հրաչ Սարգիսեանի, Ռաֆայէլ Զարդարեանի, Յ. կոստանդեանի, Պ. Զարոյեանի գրութիւնները՝ որոնք հակառակ որ ֆրանսահայ կեանքի այդ օրերու զգայնութիւններէն եւ բարքերէն վերբերուած պահեր, տեսեռումներ կը ցոլացնեն (Պ. Զարոյեանի «Հատուած մը», Յ. Ֆրէնկեանի «Մէկը անցաւ») բայց զուրկ են ֆրանսահայ արձակի ներկայացուցիչներուն խորութենէն ու գեղեցկութենէն։

Նշան Պէշիկթաշլեան «Մենք»ի մէջ համակրելի ներկայութիւն մըն է, ո՛չ միայն իր երգիծական չնորհքին եւ խառնուածքին փայլատակումներով, առողջ ծիծաղի եւ հեգնանքի սրամիտ զարձուածքներուն տիրապետած ոճով, այլեւ՝ արձակին գեղեցիկ փայլով։ Իր երգիծանքին թիրախը հայ կեանքն ու մարդիկն են՝ մենքեան վերանորոգիչ ձգտումին երգիծական կիրարկումով։

Խորհրդածական իր բնոյթով «Մենք»ի էջերուն մէջ Արշամ Տաթրեանի «Սիրելիդ իմ Հրանդ» արձակը, քննադատական հայեցողութեամբ կը վերլուծէ հայ մտքին սահմանափակութիւնը, յետամնացութիւնը՝ պահանջելով, որ ան յենի գիտութեան բացած խորութեան, զարգացումին, լոյսին։ Փիլիսոփայական եւ գիտական պաշարի մը յենած լուսամիտ մտաւորականը կ'ըսէ իրա՛ւ մը. «Կէս գիտութիւն մը շատ աւելի վնասակար է ու վտանգաւոր քան ամբողջ տգիտութիւն մը։ Նայէ՛ մանուկներուն ու իրենց անմեղութեան։ Կէս գիտութիւնն ալ մեր բաղաքական ու գրական կեանքին փորձանքներէն մէկն է»։

«Մեմֆ»ի քննադատական վերաբերումին հետ քայլ պահող խոհական արձակի յատկանշական նմոյշ մըն է Արշամ Տատրեանի «Սիրելիդ իմ Հրանդ»ը, որ նաեւ «Մեմֆ»ի մնայուն էջերէն մին կը կազմէ:

Ջարեհ Որբունի իր արձակի լաւագոյն ստեղծագործութիւններով չէ որ աշխատակցած է «Մեմֆ»ին: Բայց իր «Գրպանի Տետրակ» օրագրային իւրայատուկ էջերով, որ շահեկան մտածումներ կը բովանդակէ արուեստի, կեանքի եւ փիլիսոփայական հարցերու մասին, բերած է իր նպաստը «Մեմֆ» շարժումին: Նմոյշ մը իր մտածողութենէն. «Ի՞նչը եւ ինչպէսը: Ահա՛ փորձաքարը գեղարուեստի կռիւներուն: Ի՞նչպէս կարելի է երկուքը իրարմէ զատել: Առանց ինչին ինչպէսը չի կրնար ըլլալ: Ինչը անկախ է ինչպէսէն, քանի որ ան գիտնականն է, իսկ ինչպէսը արուեստագէտը: Արդ արուեստագէտը երկուքն ալ է, այսինքն եթէ կայ ինչպէսը, փնտռեցէք միւսը եւ պիտի գտնէք»:

«Մեմֆ»ի գեղարուեստական արձակի երկու տիրական դէմքերը կը հանդիսանան Շահան Շահնուրն ու Վազգէն Շուշանեանը:

Վազգէն Շուշանեանը՝ խորհրդածականը քնարականին խառնած յորդաբուխ արձակով փնտռուած գրողն է ֆրանսահայ արձակին: Ցաճախ կծու եւ հատու ոճին սլաքները, որոնք անխնայ ուժգնութեամբ ուղղուած են հայ կեանքի արատաւոր երեւոյթներուն եւ նեղմտութիւններուն, իր չէշտին անկեղծութեամբ եւ սրտցաւութեամբ վարակելով, տագնապեցուցած են հայ մարդը: «Մեմֆ»ի տարբեր թիւերուն մէջ տպուած «Կը պարսաւեմ բառերը», «... Ու կը ջատագովեմ բռնութիւնը», «Վասն Տարածութեան եւ Ցաղթանակի» «... Ու ներկայութիւն ընդդէմ բոլոր փախուստներուն», ինքնուրոյն արձակի գեղեցիկ նմոյշներ են, որքան ոճային առանձնայատկութիւններով, նոյնքան խորքի խռովիչ տուայտանքներով:

Առաջին անգամ «Մեմֆ»ի մէջ լոյս տեսած են Շահան Շահնուրի գրականութիւնը, ֆրանսահայ արձակը եւ ընդհանրապէս հայ գեղարուեստական արձակը հարստացուցած «Լիւքսէնպուրկի Պահապանները», «Պարապ Սենեակին Պատճառաւ», «Պույնուզլըները», «Պճեղ մը Անուշ Սիրտ»ը:

Արուեստագէտ արձակագիրի եւ նորարար պատմուածագիրի տաղանդը ցոլացնող գործեր են Շահան Շահնուրի «Մեմֆ»ի աշխատակցութիւնները, որոնք՝ որքան ալ գոհացուցած ըլլան գրական բարձր ճաշակի տէր եւ արուեստովորին հակամէտ գրասէրները, անոնցմէ ոմանք չեն զգացած գայթակղեցուցիչ հակազդեցութեամբ ընդունելէ՝ բարոյական ըմբռնումներու դէմ իբր մեղանչում:

«Մեմֆ»ի մէջ, այդպիսի գայթակղեցուցիչ գրութիւն մըն էր «Պույնուզլըները», որ պատճառ եղած է նաեւ պառակտումի: Հայ

ժողովուրդի բարոյական վարքին եւ հասկացողութեան դէմ բացայայտ վիրաւորանք եւ սրբապղծութիւն համարելով Շահան Շահնուրի «Պուլնուզլըները» գեղարուեստական գրութիւնը, անոր տպագրութենէն առաջ, հրատարակութեան համար, թէ՛ հրատարակութենէն ետք իր տպաւորութեամբ դատապարտելի եւ մեղադրելի նկատուած է հեղինակը։ Չէ մարսուած Շահնուրի յանդգնութիւնն ու համարձակութիւնը, որ ընթացիկ բարոյականութենէ վեր մտածողութեամբ անբարոյական արարքներու հեղինակ դարձուցած է հայ լէգէոնականները։ Անոնք, ազգային վրէժխնդրութենէ եւ ատելութենէ թելադրուած եւ մղուած ստիպած են երկու քոյր եւ եղբայր թուրքեր սեռային յարաբերութեան հակաբնախօսական եւ հակամարդկային արարքը գործելու։ Ախտավարակ կիրքի սովորութիւնը չարունակուած է յետագային անբարոյացուցիչ նուաստացումով։

Մինչեւ իսկ «աղբահաւաք գրականութիւն» որակումով եղած գրոհները Շահնուրին եւ «Մենք»ին դէմ մեծ աղմուկ բարձրացուցած են, որմէ ետք «Մենք»ը Դ. եւ Ե. միացեալ համար մըն ալ հրատարակութեան տալով, դադրած է։

«Մենք»ի պատմութեան համար հետաքրքրական վկայութիւն մըն է Շահան Շահնուրի վկայութիւնը «Մենք»ին իր յարումին մասին. «Մենք–ը ձախողանք մըն էր։ Ես որեւէ ընկերակցութեան մաս չեմ կազմած ու վստահութիւն ալ չունիմ։ Այդ շրջանին ալ հիւանդ էի եւ կը մեկնէի արձակուրդ մը առնելու համար։ Մեկնումիս նախօրեակին, Նարդունին պնդեց որ մաս կազմեմ խումբին։ Տուի գրութիւն մը եւ վերադարձիս ականջ ստանձնեցի նաեւ խմբագիրի պաշտօնը, որովհետեւ խումբին մէջ շատ իրարու համաձայն չէին եւ թերթը մնացած էր առանց խմբագիրի։ Շուշանեան, օրինակ, կ'ատէր Նարդունին։ (Գ. Քէօսէեանի անտիպ նօթերէն, 1974)»։ *Տեսնել՝ Գ. Շահինեան «Կենսագրութիւն եւ Մատենագիտութիւն Շահան Շահնուրի», էջ 33։*

Հակառակ «Մենք»ի գործօն մասնակիցներէն, խմբագիրի պաշտօն վարած եւ անոր Ա. Թիւֆենքեաթին տակ ստորագրած Շահան Շահնուրի հաստատումին «Մենք»ի ձախողանքին մասին, եւ հակառակ նաեւ անոր կարճատեւ հրատարակութեան միջոցին՝ 1931–1932 ընդամէնը չորս գիրք, վերջինը՝ միացեալ համար մը Դ. եւ Ե.՝ «Մենք»ը իբր չարժում եւ գեղագիտական նոր մտածողութիւն իր իւրայատուկ տեղը կը գրաւէ Սփիւռքահայ գրական մամուլի պատմութեան մէջ։ Իւրայատուկ տեղ մը, որ ստեղծագործական բերքէն աւելի կը յատկանշուի իր նորարար չունչով, Սփիւռքի հոգեխառնութիւնը նշող գրական–գեղագիտական նոր հայեցողութեամբ։ Սփիւռքի լինելութեան որոնումով։

Պ. Ս.

ԺԸ. ԴԱՐԻ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

ՀԵՆՐԻԿ ԲԱԽՋԻՆԵԱՆ
Բանասիրական Գիտութիւնների դոկտոր

ԺԸ. Դարում՝ առաւել ճիւղաւորւում, ծաւալւում եւ նոր բովանդակութիւն է ստանում նախորդ դարում վերանորոգուած հայ մշակոյթը թէ՛ բուն հայրենիքում եւ թէ՛ յատկապէս գաղթավայրերում: Ցատկանշական է, որ նախորդ հարիւրամեակի համեմատ քառապատկւում է տպագիր գրքերի թիւը, որի մէջ աւելի մեծ տեսակարար կշիռ են կազմում հայ եւ օտար հեղինակների գիտական եւ գեղարուեստական երկերը:

Ղազար Ջահկեցի, ապա Սիմէոն Երեւանցի կաթողիկոսների օրօք՝ ամրապնդւում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիրքերը, քաղաքական եւ տնտեսական առումով, որի չնորհիւ այն նոր ուժով շարունակում է հայ կրթական եւ մշակութային կեանքի կազմակերպչի իր դերը:

Հիմնականում, Նոր Ջուղայի հայ գաղթօջախի տնտեսական ու մշակութային հիմքի վրայ բարգաւաճում է նաեւ հնդկահայ համայնքը: Հնդկական մի շարք քաղաքներում ընդօրինակւում են հայերէն գրչագիր գրքեր, ապա նաեւ սկիզբ է առնում հայերէն տպագրութիւնը եւ բացւում են հայկական դպրոցներ: Աչխուժանում է նաեւ վիրահայոց կեանքը: Քարթլիի մայրաքաղաք Թիֆլիսը, ուր հայեր են ապրել նրա հիմնադրումից ի վեր, վերածւում է ուրոյն բարքերով ու մշակոյթով մի ինքնօրինակ հայկական կենտրոնի: Հայկական խո-

չոր գաղթօջախներ են ստեղծում նաեւ Հիւսիսային Կովկասի եւ Ռուսաստանի մի շարք քաղաքներում, որտեղ բացւում են դպրոցներ եւ գարկ է արւում հայկական տպագրութեանը:

Հայ տպագրական գործը, սակայն, մի աննախընթաց վերելք է ապրում պոլսահայ իրականութեան մէջ: Ջափաղանց բեղմնաւոր գրահրատարակչական գործունէութիւն են ծաւալում Գրիգոր Մարզուանեցին, Աստուածատուր Կոստանդնուպոլսեցին, Պօղոս Արապեանը եւ շատ ուրիշներ: Պոլսահայ տպագրական եւ առհասարակ կրթական եւ մշակութային գործի ծաւալմանը մեծապէս խթանել է Ցովհաննէս Կոլոտ Բաղիշեցին, որը 1715–1741 թուականներին վարել է Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի պաշտօնը: Նրա գործը լաւագոյնս շարունակեցին Ցակոբ Ջմմառացի Նալեանը եւ Ջաքարիա Կաղզուանցի Փոքուզեանը:

Իրենց գործունէութիւնը Կ. Պոլսում են սկսել նաեւ ժամանակի երկու խոշոր գրական–մշակութային գործիչներ՝ Խաչատուր Էրզրումեցին եւ Մխիթար Սեբաստացին, որոնց շնորհիւ հետագայում մի նոր ծաղկում ապրեց Վենետիկի հայ գրական եւ կրթական կեանքը, տարածուելով Տրիեստ, Վիեննա, եւ գարկ տալով եւրոպական հայագիտութեան նոր վերելքին:

Միջազգային կապերի, թարգմանութիւնների եւ զարգացող հասարակական պահանջմունքի թելադրանքով՝ եւրոպական գիտական ու գեղարուեստական միտքն առաւել լայնօրէն է թափանցում հայ իրականութեան մէջ: Եւրոպական լեզուներից հայերէն են թարգմանւում աստուածաբանական, բնագիտական, պատմական եւ գեղարուեստական բազմաթիւ երկեր, որոնք տպագրւում են ժամանակի գրեթէ բոլոր հայկական տպարաններում...

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԱՐՋԸ

• Ահա՛ այս կրթական–լուսաւորական վերընթաց չարժման մթնոլորտում մի կողմից, եւ ազգային–ազատագրական պայքարի բովում՝ միւս կողմից, նոր ուժով ու որակով ծաւալուեց նաեւ հայ գեղարուեստական գրականութիւնը: Եւ այս անգամ էլ հայ գրական–գեղարուեստական միտքն իր լաւագոյն դրսեւորումը գտաւ բանաստեղծութեան մէջ:

ԺԸ. դարի հայ քերթութեան մէջ արդէն նկատելի է քնարական տիպերի որոշ բեւեռացում: Որոշակիօրէն տարբերակւում են ազգային դասական բանաստեղծութիւնը եւ ժողովրդա–գուսանական կամ աշուղական քնարերգութիւնը: Իր դերը գրեթէ սպառում է աչխարհիկ տաղերգութիւնը, որը տարրալուծւում է նշուած ուղղութիւնների մէջ:

Ազգային դասական քերթուքիւնը՝ նախորդ հարիւրամեակի կրօնա-հայրենասիրական բանաստեղծութեան զարգացման արդիւնք էր: Այն արծարծում էր նոր ժամանակի կրօնա-ազգային, լուսաւորական, ազատագրական, հայրենասիրական տրամադրութիւնները՝ քիչ տեղ յատկացնելով սիրոյ, բնութեան ու վայելքի մոտիւներին: Այս բանաստեղծութեան ներկայացուցիչներն, ընդհանուր առմամբ, քերթողական արուեստի մէջ առաւել հմտացած, «մասնագիտացած» բանաստեղծներ էին, որոնք առաւել լրջօրէն ուսումնասիրում ու կեանքի էին կոչում անցեալի գրական աւանդոյթները, մշակում դասական լեզուն՝ գրաբարը, եւ գրականացնում աշխարհաբարը: Ըստ այդմ, հայ քերթուքիւնը չարունակելով թօթափել իր էութեանը խորթ արեւելեան մշակոյթի քաղաքականօրէն պարտադրուած նատուածքները, ձգտում է մի կողմից դէպի իր ազգային արմատները, միւս կողմից դէպի արեւմտեան մշակոյթը, որի հետ գտնւում է տիպաբանական ընդհանրութեան մէջ:

Ժամանակի հայ գրականութեան զարգացման մայրուղին ներկայացնող բանաստեղծական այս ուղղութիւնը ներառում է հիմնականում ազգային-կրօնական, հայրենասիրական, ուսուցողական մոտիւներ ու թեմաներ, ասպարէզ հանելով նաեւ նոր տիպի քնարական եւ խոհական երգեր: Այս անգամ էլ հայ քերթուքեան ասպարէզում հանդէս են գալիս թէ՛ չարքային եւ թէ՛ խոշոր բանաստեղծական անհատականուքիւններ:

• Ազգային դասական բանաստեղծութեան մէջ մեծ կշիռ է ձեռք բերում «վարդապետական քերթողուքիւնը» կամ ուսուցողական բանաստեղծուքիւնը: Վերջինիս նպատակն էր չափաբերուած դիւրըմբռնելի խօսքով ամենատարբեր գիտելիքներ հաղորդել ընթերցողներին, յատկապէս մտավարժ մանկանց:

Խաչատուր Էրզրումեցի

Բանաստեղծական այս թեւի խոշորագոյն ներկայացուցիչը Խաչատուր Էրզրումեցին է (կարնեցի, Առաքէլեան· 1666–1740): Նա կրթուել է Հռոմում, քարոզչական գործունէուքիւն է ծաւալել Կ. Պոլսում, ապա դարձել է Վենետիկի Հայոց հոգեւոր առաջնորդ: Հայերէն ու լատիներէն լեզուներով գրել է փիլիսոփայութեանը, տնտեսագիտութեանը, բարոյագիտութեանը, քերականութեանը, բնագիտութեանը, մաթեմատիկային եւ այլ բնագաւառներին վերաբերող ուսումնասիրուքիւններ, որոնց մեծ մասը լոյս է տեսել նրա կենդանութեան օրօք վենետիկեան տպարաններում: Ի դէպ, Էրզրումեցու լատիներէն երկու աշխատուքիւնները — «Ներածումն ս. քրիստո-

նէական կատարելութիւն» եւ «կարճառօտագունեղ համառօտութիւն ընդհանրականի աստուածաբանութեան» — հայերէն է թարգմանել ու տպագրել (Վէնետիկ, 1733, 1736) մեզ յայտնի առաջին հայ թարգմանչուհին՝ Մարիամ Կոստանդնուպոլսեցի Գարագաշեանը, որ նաեւ հեղինակ է «Ակն Հոգւոյ» կրօնական գրքի (Վէնետիկ, 1728)։

«Ի մէջ այլազգաց եւ ի մէջ գերութեան» գոյատեւող հայութեան կեանքում, Մաշտոցը էրզրումեցին իրաւամբ բացառիկ տեղ է յատկացրել ուսմանն ու գիտութեանը, իբրեւ հուժկու զէնք, որով «առաւել կարեն յաղթել զթշնամիս»։ Այս միտքը նա արտայայտել է դեռեւս 1696 թուականին տպագրած իր «Գիրք քերականութեան» աշխատութեան առաջաբանում, ուր յայտնել է իր մտադրութիւնը՝ հայ ժողովրդին հաղորդակից դարձնել բոլոր գիտութիւններին։ Կատարելով իր խոստումը, նա քերականութիւնից յետոյ իրար հետեւից հրապարակ է հանում մեկնողական, բարոյագիտական, աստուածաբանական ուսումնասիրութիւններ եւ ապա, 1711 թուականին, լոյս է ընծայում իր ամենախոշոր երկը՝ «Համառօտական իմաստասիրութիւն» երկհատոր հանրագիտարանային ուսումնասիրութիւնը, ուր անդրադարձել է ժամանակի բոլոր գիտութիւններին։ Իր այս հանրագիտարանը՝ հեղինակը չարագրել է հիմնականում չափածոյ, առաւել դիւրըմբռնելի լինելու նպատակադրումով։ Այդպիսով ստեղծուել է ուսուցողական բանաստեղծութեան եւ չափածոյ տրակտատների մի շատ ուշագրաւ ժողովածու, որի նպատակն է սահմանել ու բնութագրել գիտութեան եւ արուեստի ճիւղերը՝ թէ՛ ազգային եւ թէ՛ եւրոպական տեսական մտքի դիրքերից։

Մեզ համար, բնականաբար, առաւել կարեւոր են Մաշտոց էրզրումեցու հայեացքները գրականութեան մասին։ «Համառօտական իմաստասիրութիւն» աշխատութեան մէջ, մի ամբողջ գլուխ է յատկացուած բանաստեղծութեան տեսութեանը (մի բաժինը՝ չափածոյ չարագրմամբ)։ Էրզրումեցին գտնուել է կլասիցիզմի խոշորագոյն տեսաբանի՝ Նիկոլա Դեպրէօ-Բուալոյի հայեացքների անմիջական ազդեցութեան տակ, որով եւ պայմանաւորուած է գրականութեան հայ տեսաբանի ռացիոնալիստական հայեցակէտը։ Ըստ վերջինիս՝ պոէզիան ծագում, ձեւաւորւում եւ ներգործում է առաւելապէս բանականութեան ոլորտում։ Էրզրումեցին առորաբաժանում է պոէզիայի արտացոլման առարկան, այլեւ բանաստեղծական տեսակները, կլասիցիզմի գեղագիտութեան կանոնականութեան դիրքերից դնելով բանականութեամբ կարգաւորուած կառուցուածքի պահանջը։ Միաժամանակ նա խրախուսում է բարձրարուեստ, ճարտասանական ձեւերով հարուստ բանաստեղծութեան տեսակը։ Նրա նախընտրած քերթութիւնը

Բանաւորաբար գետեղէ·
Ըմբռնաբար դասաւորէ·
Գեղեցիկ սկսումն առնէ·
Պայծառաբար պատմաբանէ·
Գեղեցկաբար առաջադրէ
Եւ յանդիման կացուցանէ:
Ըստ իրողութեան ընծեռէ
Եւ զառարկութիւն լուծանէ:
Յարմարաբար վերջաբանէ
Եւ զբան վերջացուցանէ···
Ճոխաբանութեամբ զարդարէ·
Զբան գեղեցկացուցանէ···

Սակայն գեղեցիկ ձեւը պիտի սոսկ նպաստի բովանդակութեանը՝ իմաստի ներգործութեանը: Բանաստեղծութեան մէջ բանականութեան միջոցով պիտի չափաւորուին ծայրայեղ կրքերը, արտայայտուին բարձր բարոյական գաղափարներ, հաստատուին բարին ու գեղեցիկը, մերժուին չարն ու այլանդակը: Այսինքն՝ պոէզիայի առաջնային նպատակը պէտք է լինի մարդկանց բարոյապէս դաստիարակելը: Մեր «Հայ Բուալոյի» տեսութեամբ, բանաստեղծը

Զառաֆինիսն գովաբանէ·
Եւ զառաֆինութիւն գովէ:
Զվատթար անձինս վատաբանէ
Եւ զմոլութիւնս պարսաւէ:
Զախտակրութիւնս ծանուցանէ·
Աչաց մերոց առաջադրէ···
Զարիութիւն զարթուցանէ,
Տածէ զնա եւ պահպանէ:
Զերկչոտութիւն նա տարագրէ
Եւ զնա արտասահմանէ···

Նաչատուր Էրզրումեցին, ըստ էութեան, առաջինը լինելով՝ կատարել է մեզանում բանաստեղծութեան ամբողջական տեսական քննութիւնը, ներմուծելով կլասիցիզմի գրական-գեղագիտական ըմբռնումները: Սակայն կլասիցիզմը իբրեւ յատակօրէն գիտակցուած եւ որոշակի գրական արտադրանք տուող գեղարուեստական ուղղութիւն՝ հայ գրականութեան մէջ պիտի ձեւաւորուէր եւ հաստատուէր Նաչատուր Էրզրումեցու ուսմունքի երեւան գալուց շատ աւելի ուշ, հիմնականում Մխիթարեանների գրական անդաստանում:

Ղազար Ջահկեցի

ԺԸ. դարի առաջին կէսի կրօնա-ազգային բանաստեղծութեան ականաւոր դէմքերից է Ղազար Ջահկեցին (+ 1751), որը եղել է Ամենայն Հայոց Կաթողիկոս (1738-ից) եւ նպաստել հայութեան համախմբմանը Երեւանի եւ Նախիջեւանի գաւառներում: Նա ամրապնդել է էջմիածնի դիրքերը եւ ձեռնարկել որոշ չինութիւններ: Ջահկեցին հեղինակ է աստուածաբանական եւ գաւանաբանական երկերի, որոնք լոյս են տեսել նրա կենդանութեան օրօք Կ. Պոլսի տպարաններում — «Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի» (1735), «Գիրք ազօթից, որ կոչի Աստուածաղերս» (1744): Հեղինակի կենդանութեան օրօք է լոյս տեսել նաեւ նրա բանաստեղծական ժառանգութեան մեծ մասն ամփոփող «Գիրք նորաբոյս, որ կոչի երգարան» ժողովածուն (Կ. Պոլիս, 1737):

Ղազար Ջահկեցու տաղերը հիմնականում ունեն կրօնական բովանդակութիւն, գրուած են աստուածաշնչեան թեմաներով կամ ձօնուած են համաքրիստոնէական եւ ազգային սրբերին ու սրբութիւններին: Դրանց մէջ հեղինակն արտայայտել է իր՝ ջերմեռանդ հաւատացեալի զգացմունքներն ու կրօնական գաղափարները, այլեւ արծարծել լուսաւորական եւ ազատագրական տրամադրութիւններ: Յատկանշական է, որ Ջահկեցին ինքը իր կաթողիկոսութեան օրօք միաժամանակ հալածուել է պարսիկների կողմից եւ գտնուել աքսորի մէջ՝ կիսելով իր համայնքի տխուր ճակատագիրը: Ուստի եւ նա չէր կարող չփայփայել ժողովրդի ազատագրական տենչերը: Այսպէս, Մարիամ Աստուածածնին ձօնուած տաղերից մէկը՝ բանաստեղծն աւարտել է այսպիսի հայցմամբ.

Տառապեալ ազգիս Հայոց՝ միշտ խաղաղութիւն.
Բանտարկելոց եւ գերելոց՝ տո՛ւր ազատութիւն.
Աստուածածին ծնո՛ղ Միածնին, փրկեա՛:

Որպէս Ամենայն Հայոց կաթողիկոս եւ էջմիածնի բարեկարգիչ՝ Ղազար Ջահկեցին ներբողական տաղեր է ձօնել նաեւ Մայր Աթոռին, գովերգել նրա «զարմանատիպ յօրինուածը», «յահեղահրաշ մեծ փառքը», որը «ամէն ազգաց եւ աշխարհաց է բաղձալի» եւ ուրախութիւն ու պարծանք է «մերոյ ազգիս Թորգոմեան»: Ուշագրաւ է յատկապէս Հայոց լուսաւորիչներին ձօնուած երգը, որտեղ Հայոց մէջ քրիստոնէական հաւատի տարածումը եւ հաստատումը ցոյց է տրուած մի գեղեցիկ այլաբանութեամբ: Առաքեալները հերկել են Հայոց հոգեւոր անդաստանը եւ դրել հաւատի հիմքերը որպէս խաղողի տուն-

կեր, Գրիգոր Լուսաւորիչն իր «օձատանջ արեամբ» ջրել է այդ տունկերը, ապա

Վրթաճէս հիմնեալ, Արիստակէս պատէր,
Գրիգորիս փակեալ՝ ներսէս յորդեալ մաքրէր,
Իսահակ պատուաստեալ եւ Մեսրոպ զարդարէր:
Թարգմանչօք մերովք գտունկս ծաղկեալ տերեւէր,
Եւ վարդապետօք գեղառոգկոյզս պտղէր:
Յօհան Օձնեցին ի հնձանս կուտակէր,
Եւ Որոտնեցին իմաստ բանիւք ճմլէր:
Արդ Տաթեւացին կարասեալ եւ պարզէր,
Գինի անապակ՝ սուրբ բաժակաւ բաշխէր:

Ահա՛ այսպէս, դարերի ընթացքում հայ մեծիմաստ վարդապետների ստեղծած հոգեւոր սուրբ գինին, որպէս ազգային ոգի եւ իմաստութիւն, փոխանցուել է սերունդներին՝ որոշարկելով նրանց ազգային դիմագիծը, մարդկային առաքինութիւններն ու հակումը դէպի լոյսը, ճշմարտութիւնը, առաջաւորը: Հետեւաբար, նման լուսաւորիչ վարդապետներին՝ Ջահկեցին առանց չափազանցութեան կոչել է

Աստեղք լուսափայլք Հայոց արեգակունք,
Քարիւք պատուականք եւ զանազան ակունք:

Նման տողերով Ղազար Ջահկեցին ձգտել է մի կողմից ճանաչել տալ ու պանծացնել անցեալի ազգային խոշոր հոգեւոր գործիչներին, միւս կողմից ջատագովել ազգային դպրութիւնը, գիտութիւնն ու լուսաւորութիւնը: Սա որոշակի արձագանգ էր հայ իրականութեան մէջ արդէն լայնօրէն ծաւալուած լուսաւորական շարժման:

Ջահկեցին անդրադարձել է նաեւ անցեալի հայ ազատագրական պայքարի հերոսներին՝ խանդավառ երգեր ձօնելով Վարդանանց եւ Աւոտմանց քաջերին: Մէկ այլ տաղի մէջ, նա օգնութեան է կանչում Արշակունեաց հզօր գահակալին՝ Տրդատ Մեծին, արտայայտելով Հայոց պետականութեան վերականգնման իղձը·

Մեծ թագաւորդ Արշակունեաց,
Պետ եւ իշխան Հայոց մեծաց,
Յաղթօղ արիդ ի մէջ բաջաց,
Ո՛վ սուրբ Տրդատ արքայդ հզօր, հզօր,
Օգնեա՛ մեզ այսօր:

Ղազար Ջահկեցու բանաստեղծական ժառանգութեան մէջ ամենաարժէքաւորը թերեւս «Ողբ ի վերայ Հայաստան աշխարհին» հայրենասիրական եղերերգութիւնն է, որը գրուած է ԺԶ. դարում ստեղծուած եւ հետագայում զանազան տարբերակներով տարածուած «Տաղ արարածոց» երկի հետեւութեամբ: Ջահկեցու ողբը, սակայն, առաւել ջերմ է, առաւել հերոսական.

Զողբալի երկի՛րըս Հայոց, ո՞ւր են նախկին հարքն ամենայն,
Գեղաշուք եւ ջոկափառ՝ պայազատ որդիք Ցարէթեան:
Աղեղնաւոր մեծն Հայկ եւ հզօրըն Արամ հրսկայն,
Հերձօղ նիզակաւ գերկաթ եւ գեղեցկափայլըն Տիգրան:
Ո՞ւր են ցեղքն Աբրահամու՝ շառաւիղքն բեռուրական,
Տիեզերասաստն Արշակ եւ Վաղարշակն արիական:
Վանիչ պարսիցն Խօսրով եւ Տրդատ հրզօր մեծ արքայն,
Որ զբշնամիս պատառէր՝ այլ որպէս առիւծ եւ գազան:
Ցաղթօղ ազգն Արշակունեաց եւ Պարթեւաքն որ զօրացան.
Վա՛յ եւ եղո՛ւկ մեզ եղեն, որ ի մէնջ նոքա սպառեցան:
Ո՞ւր են փառազարդ իշխանքն զօրեղ եւ հզօրն Անգեղտան,
Քաջամարտիկն Մուշեղ սպառազեն եւ Գայլն Վահան,
Որ պատերազմին վասն մեր, ազատեն զգերեալս ամենայն,
Փրկելով զազգս եւ զագինս եւ համայն գերկիրն Հայաստան:

Ջահկեցու ողբի բուն նպատակը սոսկ երանելի անցեալը՝ աւարդելի ներկային հակադրելը չէր: Բանաստեղծը Հայոց պատմութեան հերոսական դրուագների եւ անունների յիշատակումով ձգտել է նաեւ ոգեշնչել իր ժամանակակիցներին, տոգորել հայրենասիրական, ազատասիրական ոգով: Նա ասես, յանձինս անցեալի հերոսների, ցանկանում է արթնացնել հայութեան քնած ուժերը, ազատագրելու՝ գերուած հայրենիքը:

Պաղտասար Դպիր

ԺԸ. դարի հայ ազգային դասական քերթութեան խոշորագոյն ներկայացուցիչը Պաղտասար Դպիրն է (*Կոստանդնուպոլսեցի, Կեսարեան, Գիւրգուրեան*· 1683–1768): *Պոլսեցի այս բեղմնաւոր մտաւորականը ծաւալել է հրատարակչական, մանկավարժական, գիտական եւ գրական չափազանց լայն գործունէութիւն:*

Պաղտասար Դպրի հեղինակած առաջին գիրքը («Գրգուկս չահաւէտ»), որ առաջին անգամ հրատարակուել է չուրջ 1720 *թուակա-*

նին, քրիստոնէական ուսմունքի վերաբերեալ մի քաղագրական աշխատանք է: Այնուհետեւ նա հրապարակ է հանել պատմագրական, պատմագիտական երկեր, որոնց մի մասը ցաւօք չի պահպանուել: Ժամանակին լայն տարածում են գտել եւ մեծ դեր են կատարել Մանկավարժ-Դպրի հեղինակած ու տպագրած քերականութեան դասագրքերը՝ գրաբար (1736) եւ աշխարհաբար (1760): Ցայտնի է նաեւ նրա «Համառօտ մեկնութիւն տրամաբանութեան» երկը եւ յատկապէս ճանաչողական ու գեղարուեստական մեծ արժէք ունեցող «Բարեւագիրքը» (Կ. Պոլիս, 1752): Աստուածաշնչեան համաբարբառի առաջին տպագիր փորձերից է Պաղտասար Դպրի «Գրքոյկ, որ կոչի ճանկ գիրք Նոր Կտակարանին» աշխատանքը (Կ. Պոլիս, 1753): Իր բեղմնաւոր գրիչը Պաղտասար Դպիրը ծառայեցրել է նաեւ քրքախօս հայութեանը, որի համար տպագրել է երկու գիրք, նպատակ ունենալով մայրենի լեզուն մոռացած հայրենակիցների մէջ ամրապնդել քրիստոնէական հաւատի, լուսաւորչական դաւանանքի հիմքերը, բարձրացնել նրանց ազգային ինքնագիտակցութիւնն ու արժանապատուութիւնը...

Պաղտասար Դպրի բանաստեղծական ժառանգութիւնը հիմնականում ամփոփուած է նրա տաղարաններում, որոնք զանազան փոփոխութիւններով ու լրացումներով՝ հեղինակի կենդանութեան օրօք հրատարակուել են մի քանի անգամ (համատեղ հրատարակութիւնը՝ Կ. Պոլիս, 1768): Ընդհանուր թուով յայտնի են նրա 200-ից աւելի մեծ ու փոքր ծաւալի չափածոյ գործերը՝ տաղեր, ներբողներ, քառեակներ, երկտողեակներ եւ այլն: Դրանց մի զգալի մասը հոգեւոր երգեր են, որոնք ունեն անձնական եւ կրօնա-ազգային բնոյթ: Ահա՛ մի հատուած նրա չատ ինքնատիպ մի հոգեւոր երգից, որը նորօրինակ կրօնական բանաստեղծութեան նմոյշներից է.

Ի սկզբանէ հոգւոյս ոսոխն աղտեղի
Չկեղրն մեղաց տայ՝ ի հոգիս բոր առնէ:

Եւ ոչ յագի մի եւ երկու առնելով,
Այլ հաճապազ կըրկնակըրկնէ, գոր առնէ:

Եւ մինչ ի միտս իմ գամ գերիս եղկելիս,
Զոչումն իմ ուժգնակի յաչերս բոր առնէ:

Հասցէ՛, Տէ՛ր իմ, յողորմելիս շրնորհ Ֆո,
Որ գիմ նըմանն սեւ ագռաւունս յոր առնէ:

Պաղտասարի անձնական–ապաշխարական բանաստեղծութեան վրայ մեծ ազդեցութիւն է գործել յատկապէս Գրիգոր Նարեկացու «Ողբերգութեան Մատեանը»: Միջնադարի հայ քերթութեան այս խոշորագոյն յուշարձանը, որ գրչագրութեան եւ տպագրութեան միջոցով նոր կեանք էր առել ժէ. դարում, լայնօրէն ծաւալւում է ԺԸ. դարում, ունենալով մէկ տասնեակից աւելի հրատարակութիւններ: Ընդ որում, Նարեկի 1726 թուականի Պոլսի հրատարակութեան գործին՝ իր չա՛տ նշանակալից նպաստն է ներդրել Պաղտասար Դպիրը:

Գրիգոր Նարեկացու ի խորոց սրտի բխած ողբն ու մարդու կատարելագործման գաղափարը նորովի է հնչում ԺԸ. դարի բանաստեղծի չուրթերից: Մեր առջեւ դեռեւս միջնադարի մարդն է, որն զգում ու ողբում է իր մեղսականութիւնը, ձգտում ապաշխարել, սրբագործուել, եւ չմնալ, Նարեկացու խօսքերով ասած. «իբր զանզգայ պաճարս անասնոց»: Ընդ սմին, Պաղտասար Դպիրն իր մեծ նախորդին սոսկ կրկնողի ու հետեւողի կրաւորական դիրքում չէ, այլ այս կամ այն չափով դրսեւորում է իր բանաստեղծական անհատականութիւնը՝ թէ՛ բովանդակութեան եւ թէ՛ բանարուեստի մակարդակներում.

Լալով երգեմ երգ հառաչման իմ ընմանեալն ի վերայ.
Որ անասնոց հանգուցացեալ անմրտանան յարակայ·
Արտելանել ո՛չ ախորժեն ի տրմարդի գընացից,
Դէպի գիւմեանս կապեալ ունին թիւրաշաւիղ ընթացից:
Լայնելով գիւրեանց ախորժակն՝ ուր կամին, անդ ընթանան,
Զերկնայինն փառսն ո՛չ յիշելով, իմիմեակամ անդրնդանան:
Իրրեւ ըզմարդ գոն, երեւին, շըրջագային, բարբառին,
Բայց ի բարուց հառոտանեաց ո՛չ բնաւ զանազանին:

Որպէս միջնադարեան բանաստեղծ՝ Պաղտասար Դպիրն արծարծել է նաեւ հոգու եւ մարմնի ներհակութեան խնդիրը, չկարողանալով գտնել որեւէ հաշտութեան եզր, եւ ի՛նքն էլ տառապելով որպէս «երկու կամաց ծառայ» (Կոստանդին Երզնկացի).

Ի մէջ երկոքին ներհակաց անկեալ տարաբերիմ գերիս,
Ո՛հ, ո՛հ տարաբերիմ,
Երբեմն միոյն, երբեմն միոյն խղճալապէս, ո՛հ, գերի
Գերիմ գերիս,
Ո՛հ, ո՛հ գերի գերիմ:
Այսպէս հանապազ կրկին դիմաց ունիմ տառապանս,
Ո՛հ, ունիմ տառապանս,
Ուստի յարաժամ, անդադար, անդուլ գերբերիմ գերիս,
Ո՛հ, ո՛հ, գերբերիմ:

• Պաղտասար Դպիրն իր կրօնական-ազգային երգերով առաւել ուղղակիօրէն արձագանգել է ժամանակի ազգային հրատապ խնդիրներին: Գրիգոր Լուսաւորչին ձօնուած տաղերում, օրինակ, նա արծարծել է հայրենի հողի վրայ ժողովրդի համախմբման, ներքին միաբանութեան ու միասնականութեան գաղափարը.

Արդ, առ ինձ գոչեմ, ո՛վ հայրդ գըթած,
Հայցեա՛ ի Տեառնէ մեզ ողորմութիւն.
Նեղեալ, տառապեալ տոհմիս խըղճալուդ
Տալով գերեզոցն գերեզարմութիւն.
Ըստ աղերսանաց սուրբ Մարգարէին՝
Ի մեր հայրենիս անդրէն ժողովին:

Պաղտասար Դպիրն, ըստ էութեան, իւրացնելով միջնադարի հայ հոգեւոր բանաստեղծութեան լաւագոյն աւանդոյթները՝ այն զարգացրել ու հասցրել է մի բոլորովին նոր որակի, որով իսկ նոր կեանք պարգեւել այդ երգին: Դա պայմանաւորուած էր մի կողմից բանաստեղծի տաղանդով ու կատարման վարպետութեամբ, միւս կողմից՝ հայ իրականութեան մէջ կրօնական երգերի յարաճուն կենսական պահանջով:

Պաղտասար Դպիրն ունի նաեւ անձնական-կենսագրական բնոյթի երգեր, որոնք յաճախ ձեռք են բերում անանձնական հնչեղութիւն: Նա որոշ տաղեր է հիւսել քաղաքի անիրաւ դատաւորի կողմից իր ամբաստանութեան, բանտարկութեան եւ չարչարանքների կապակցութեամբ, կարողանալով բացել մեր առջեւ ժամանակի քրքական մայրաքաղաքի պատկերը, այլեւ իր՝ հալածանքների զոհ դարձած բանաստեղծի հոգեկան խռովքը.

Կիսամեռ անկեալ բաւալիմ խըղճալի դիմօք,
Զի յոտից միճչեւ ցգլուխ իմ լըցեալ եմ վիրօք,
Եղկելի եղեալ տառապիմ ցաւալի կենօք,
Ահա՛, վասն այն աղաղակեմ, հառաչեմ եւ լամ:

Եւ ահա՛ նա իր մեծ նախորդի՝ Ֆրիկի նման գրուցում է իր անձի՝ հոգու եւ մարքի հետ, խորհրդածելով անցողիկ կեանքի մասին, ձգտելով խաղաղեցնել իր ալեկոծ ներաշխարհը.

Անձն իմ, ընդէ՞ր հառաչմամբ ի հոգ մըտաց վարաձիս,
Կամ զի՞ ի խոր տըրտմելով, ոգոց հանեալ տառապիս.
Մի՛ լար, մի՛ լար, մի՛ հոգար,
Այս ամենայն անցանէ...

Մէկ այլ տաղի մէջ, բանաստեղծն իր անձը համեմատում է ներքին պատերազմներից աւերուող քաղաքի հետ, որի հիմունքները քայքայում են, պարիսպները փլուզւում, եւ ինքը, որպէս իր աւերուող քաղաք-ներաշխարհի անմիտ իշխանը, բացականչում է. «Վա՛յ քեզ, ո՛վ քաղաք անբախտ, որոյ արքայն մանուկ իցէ, աւա՛ղ»:

Մարդուն, եւ առաջին հերթին՝ իր ժողովրդին արատներից մաքրուած տեսնելու մտահոգութեամբ, Պաղտասար Դպիրը գրել է մի շարք խրատական տաղեր, քառեակներ ու երկտողեակներ, որոնք մեծ մասամբ սփռուած են նրա հրատարակած զանազան գրքերում: Բանաստեղծ-ուսուցիչը յորդորել է չտարուել սոսկ արտաքին փայլով, այլ «հոգւոյ մասունս պճնել ի ներքուստ», եւ հասնել բարոյական կատարելութեան: Ահա՛ մտավարժ մանկանց ուղղուած մի քառեակ.

Լե՛ր իմաստուն կամ հետեւող իմաստնոց,
Կալով ի բաց ի մարդակերպ անասնոց,
Զի գիտութիւնն է իմաստնոց ճառագայթ,
Տգիտութիւնն՝ անիմաստից որոգայթ:

• Պաղտասար Դպրի բանաստեղծական ժառանգութեան ամենաարժէքաւոր մասը այն չարքն է, որ բանաստեղծը խորագրել է «Տաղիկներ սիրոյ եւ կարօտանաց»: Այստեղ ընդգրկուած երգերը, դատելով դրանց վերնագրերից եւ արտաքին յատկանիշներից, ընկալուել են իբրեւ սիրոյ երգեր: Մինչդեռ իրականում՝ Պաղտասարը սիրոյ երգիչ չէ: Նրա «սիրոյ եւ կարօտանաց» բոլոր տաղերը ձօնուած են հայրենիքին, այլաբանական-հայրենասիրական երգեր են: Բանաստեղծն ինքը իր տաղարաններից մէկում՝ նման երգերի համար ծանուցել է. «Ծանի՛ր ասա, ո՛վ սիրելի ընթերցող, զի քանի մի ինչ յետին եղեալ երդեցմունքս մինչ ցաստ թէպէտ՝ ըստ արտաքին կերպարանքն ցուցանին երգեցմունք մարմնաւոր ուրախութեան, սակայն ըստ ներքին զօրութեան համայնքն առ հոգեւորն վերաբերին: Եւ յետ այնոցիկ են, որք միշտ զհոգւոյն խորհին»: Փաստօրէն Պաղտասար Դպիրը «մարմնաւոր ուրախութեան» երգերի այլաբանութեամբ՝ արտայայտել է հայրենիքի հանդէպ սէրը, որն ունի անչուշտ առաւել հոգեւոր բովանդակութիւն եւ որն աւելի բարձր հոգեկան մակարդակի սէր է: Եւ այդ սէրը երբեմն դուրս է ցայտել այլաբանական չղարչից. յատկապէս նկատի ունենք «Ի ննջմանէդ արքայական» նշանաւոր երգը, որն իրբեւ հայրենասիրական երգ է ընկալել արդէն Պաղտասարի ժամանակակից եւ գրական աշակերտ Պետրոս Ղափանցին[1]:

«Ի ննջմանէդ արքայական» երգը յօրինուած է 1708 թուականին, երբ բանաստեղծն ընդամէնը 25 տարեկան էր: Պահպանուել է

Նաեւ այդ երգի եղանակը, որի շատ մօտ հնչերանգով է երգւում Սա-յաթ-Նովայի նշանաւոր «Դուն էն գլխէն»ը: Այդ վսեմ ու հանդիսաւոր եղանակն իսկ ինքնին հաւաստում է, որ խնդրոյ առարկայ տաղը իսկապէս ո՛չ թէ սիրերգ է, այլ բարձր հայրենասիրական բանաստեղծութիւն.

Ի նիջմանէդ արքայական
Զարթի՛ր, նագելի՛ իմ, զարթի՛ր,
Էհաս նշոյլն արեգական,
Զարթի՛ր, նագելի՛ իմ, զարթի՛ր:

«Արքայական» մակդիրն այստեղ ժողովրդի մեծութիւնն ու վսեմութիւնը բնորոշելուց զատ՝ թերեւս ակնարկում է Հայոց պետականութեան զարթօնքի գաղափարի մասին: Դարասկզբին, երբ ստեղծուել է այս երգը, հայ իրականութեան մէջ խմորւում էր ազգային-ազատագրական պայքարը, եւ Թիւրքիոյ մայրաքաղաքից՝ ազգի մեծ բանաստեղծը այլաբանօրէն կոչ է անում արթնանալ, քանզի արդէն «էանց գիշերն մթին» եւ հասաւ «նշոյլն արեգական», որ ազատագրութեան յոյսն է: «Արեւակէզ գուցէ լինիս», տագնապում է բանաստեղծը, քանզի թշնամիները որպէս «տապ եւ խորշակ ժամանեցին» եւ կամենում են այրել վարդ-հայրենիքի գեղեցիկ թերթերը: Երգի իւրաքանչիւր տունը եզրափակւում է «Զարթի՛ր, նագելի՛ իմ, զարթի՛ր» տողով, որով բանաստեղծն առաւել ուժգին է հնչեցնում արթնացման իր կոչը, որը քերթուածին հաղորդում է մարտական ոգի, եւ մղելով ողբի ու կոծի տրամադրութիւնը:

Մէկ այլ համանման տաղում, որ հաւանաբար գրուած է նոյն այդ ժամանակ, բանաստեղծը նոյն արթնացման կոչն է արել.

Արի՛, սէ՛ր իմ, արի՛, արի՛,
Զարթի՛ր ի բնոյդ:

Այստեղ էլ սիրուհի-հայրենիքը օժտուած է արքայական վեհութեամբ, որպէս «թագուհի ամէն ծաղկանց»: Այստեղ էլ բանաստեղծն ազդարարում է. «Գարունն էհաս, ձմեռն էանց», վստահեցնելով, թէ «Չի՛ խարչէ զքեզ չողն արեւուն»: Նոյն այլաբանութեամբ ու տրամադրութեամբ է յօրինուած նաեւ «Գարունն եկեալ, անուշ հովերն հնչեցին» տաղը, որտեղ կարդում ենք.

Գիշերն էանց, առաւօտն երեւեցաւ,
Արեւն ահա՛ յարեւելից մօտեցաւ,
Յերեկոյէն ի վեր սըրտիկս հալեցաւ.

Բացուի՛ր, իմ նազելի՛,
Տեսոյդ կարօտ եմ, կարօտ եմ.
Զարթի՛ր, իմ աննըմա՛ն,
Դեղոյդ կարօտ եմ, կարօտ եմ:

Այսպիսով, հայ քնարերգութեան մէջ նոր ուժով ու չնչով հնչում է «արքունացումի երգը», փոխանցուելով միւս բանաստեղծներին:

Յատկանշական է, որ հայ միջնադարեան ժողովրդական երգերի մէջ՝ արդէն կան սիրերգերի այլաբանութեամբ յօրինուած հայրենասիրական երգեր: Դրանցից է ուշ միջնադարում զանազան տարբերակներով լայնօրէն տարածուած «Առաւօտուն քամին ելնէ, մաղէ դիս» երգը: Այս երգի անմիջական ազդեցութեամբ է Պաղտասար Դպիրը գրել իր «Զիս քո սիրոյն, ո՛վ նազելի, հովերն առեր՝ կու մաղէ» տաղը: Հետեւելով այդ ժողովրդական երգի որոշ յատկանիշներին, բանաստեղծը փաստօրէն որդեգրել է նաեւ նրա այլաբանական բովանդակութիւնը՝ սիրուհուց զրկուած սիրահարի կերպարով պատկերելով հայրենազուրկ հայ երիտասարդին, իրե՛ն: Այստեղ էլ, ինչպէս նախորդ տաղերում, հայրենիքը բնորոշւում է «նազելի» մակդիրով եւ կարմիր վարդի այլաբանութեամբ. մինչդեռ ինքը՝ հայրենաբաղձ բանաստեղծը «սիրահար» սոխակ է (երգնակ).

Զիս ըո սիրոյն, ո՛վ նազելի, հովերն առեր՝ կու մաղէ,
Օտարի լեզուն աւելի ցաւ եղեր՝ գիս կու տաղէ, կու տաղէ,
Այս կարօտուս չի դիմացուիր, միշտ գհոգիս կու բաղէ...
Խրոճալի այն եւ ցաւալի թըռչնակին ես նըմանեմ,
Որ սիրովն իմ կարմիր վարդին յարակ ի սուգ մըտանեմ,
մըտանեմ,
Ի սար, ի ձոր շրջաբերիմ, խընդրեմ եւ ո՛չ գըտանեմ.
Դէպի երկիրն իմ սիրելոյն
Առնէր, տանէր հովըն գիս, հովըն գիս,
Դէպի յայգին իմ նազելոյն
Փըչէր, տանէր բամին գիս, բամին գիս:

Սա, ըստ էութեան, նաեւ «կարօտանաց» երգ է, որտեղ արտայայտուած են նազելի հայրենիքից հեռու, օտարութեան մէջ տառապող հայ երիտասարդի տեսլերը՝ հասնելու հայրենի երկրին, «զի ինքն այլ տեղ, հոգին այլ տեղ, ո՞վ կարէ կալ դադարիլ»: Հայրենիքն, ուրեմն, ըստ բանաստեղծին, մարդու հոգին է, եւ նրա նմանօրինակ երգերը, յիրաւի, «առ հոգեւորս վերաբերին»: Ի դէպ, «Զիս քո սիրոյն» երգի եղանակով են գրուած Գրիգոր Օշականցու եւ Սիմէոն Երեւան-

ցու որոշ հայրենասիրական երգերը. սա մի աւելորդ անգամ ապացուցում է, որ Գաղտասար Դպրի այս «Սիրոյ տաղիկը» եւս ժամանակին ընկալուել է որպէս հայրենասիրական բանաստեղծութիւն:

Մէկ այլ տաղում, որ յիշեցնում է Սայաթ-Նովայի «Ուսաի՛ գուքաս, զարիր բլբուլ» երգը, Գաղտասար Դպիրը գուգահեռ է անցկացրել իր՝ սիրուհի-հայրենիքը որանոզ սիրահարի եւ վարդին փնտռող սոխակի միջեւ՝ առաջ քաշելով հայրենիքի անփոխարինելիութեան գաղափարը.

Ֆո կարօտեալ սիրուն ո՛չ է միմիակ,
Ջի բէ միճճ՝ ո՛չ, գուցէ գոյ այլ նըմանակ,
Սակայն այն, որ իմս է, է՛ մի միայնակ...

«Սիրոյ եւ կարօտանաց» տաղերում բանաստեղծը հիմնականում պատկերել է իր՝ հայրենաթաղծ սիրահարի անհանգիստ, սառանդական վիճակը, իր բուռն կարօտն ու սէրը հեռուստ ու անհաս սիրեցեալ-հայրենիքի հանդէպ: Ուստի եւ նրա այդ տաղերն ունեն առաւել յուզական-քնարական հիւսուածք: Եւ դրանց մէջ կրկնակրկներգերի առատութիւնն աւելի լսելի է դարձնում նրա ցաւի ու կարօտի ճիչն ու հառաչները.

Սիրահա՛ր, սիրահա՛ր, սիրահա՛ր սիրովդ եղեալ եմ, եղեալ եմ,
Հրահա՛ր, հրահա՛ր, հրահա՛ր հրովդ եռեալ եմ, եռեալ եմ:

Թէ յամէ՛ն, թէ յամէ՛ն, թէ յամէ՛ն վայելս արօտիմ, արօտիմ,
Կարօտի՛մ, կարօտի՛մ, տէ՛ր իմ, տէ՛ր, տեսոյդ կարօտի՛մ,
կարօտի՛մ:

Յատկանշական է, որ նմանօրինակ մի տող է գրել բանաստեղծը եօթանասունն անց հասակում: Տասնեակ երկար ու ձիգ տարիներ յետոյ էլ չի՛ խամրել նրա հայրենաթաղծութիւնը, անսահման կարօտից նրա հոգու եռքը, որ մինչեւ մահ բորբոքել է նրա զգայուն հոգին.

Ֆանի աչքն իմ ի ֆո տեսոյդ հեռանի՛, հեռանի՛,
Որպէս զջուր իրր ի կաթսայս եռանի՛, եռանի՛, եռանի՛,
Եւ զի՞նչ ասեմ, բէ մեռանի՛, մեռանի՛, մեռանի՛,
Ուստի արժան է ինձ ասել՝ մեռանի՛մ, մեռանի՛մ, մեռանի՛մ:

Ունայնութեամբ զանցեալ օրերս ցրեցի՛, ցրեցի՛,
Հոգոյս իմոյ եւ ո՛չ զօր մի ձրեցի՛, ձրեցի՛, ձրեցի՛,
Տարիքն իմ զեօթանասուն անցեալ գրեցի՛, գրեցի՛,
Աւա՛ղ, աւա՛ղ, միշտ գոչելով՝ ձերե՛ր իմ, ձերե՛ր իմ,
ձերե՛ր իմ:

Այսպիսով, ուրեմն, Պաղտասար Դպիրը ժողովրդական եւ աշուղական սիրերգերի որոշ յատկանիշների իւրացմամբ ստեղծել է խիստ անհատական այլաբանական-հայրենասիրական նորօրինակ երգեր: Առաջինը նա էր, որ հայրենիքը երգեց վարդի ու սոխակի այլաբանութեամբ: Իր այս երգերով՝ նա արձագանգեց ժամանակի ազգային-ազատագրական չարժումներին, ժողովրդի տենչերին, մեր հայրենասիրական երգը բարձրացնելով մի նոր աստիճանի:

Պաղտասար Դպրի տաղերը հիմնականում յօրինուած են այս կամ այն եղանակով երգուելու համար: Իր մի շարք երգերի եղանակները նա ինքն է ստեղծել: Բանաստեղծի կարծիքով, տաղերը կարդացուելիս «ո՛չ այնքան համեղ երեւին», մինչդեռ «ի վերայ գուշացն (եղանակների — Հ.Բ.) վայելչանան»: Ընդ որում, դրանք առաւել «ճոխափայլ» են արտաբերւում, երբ հնչում են իրենց «իսկական գունովն»: Սակայն չնայած Պաղտասար Դպիրն իր տաղերը յարմարեցրել է եղանակներին (եւ ոչ հակառակը), այնուհանդերձ դրանց մէջ չկայ բոնազբօսիկութիւն, եւ յիրաւի «կարդացուելիս էլ նրա երգերը ցուցադրում են իրենց գեղարուեստական արժէքը» (Գ. Լեւոնեան): Անհրաժեշտ է նշել, որ իր երգերի բառագանձը բանաստեղծը զգալիօրէն մաքրել է արեւելեան լեզուներից եկող եւ մեր տաղերգութեան մէջ (յատկապէս աշուղական երգերում) թափանցած բառերից ու դարձուածներից, առաւելապէս սնուելով ազգային բանաստեղծութեան մաքուր ակունքներից:

Պաղտասար Դպրի տաղերն ունեն նոր շրջանի քերթութեանն առաւել մերձ, ամփոփ եւ կառուցիկ յօրինուածք: Դրանք, ինչպէս տեսանք, հարուստ են կրկնակ-կրկներգերով եւ առհասարակ տաղաչափական այլեւայլ ձեւերով, ճոխ հանգերով ու հանգիստութեամբ: Ահա թէ որքա՛ն, իր խօսքերով ասած, «համեղ երեւին» առձաղանչքներով ու բաղաձայնոյթներով հարուստ նրա բանաստեղծական տաղերը.

Փըրկի՛չ, փըրկեա՛ ի փորձանաց, որ փըրկողդ ես փորձութեանց···
Գերիս գերեալ գոռամ, գոչեմ,
Աղաղակեմ, լամ, հառաչեմ,
Կամիմ լինիլ, ահա ո՛չ եմ,
Այո՛, այո՛, այո՛, եղէ եղկելի՛, եղկելի՛···

Միանգամայն ճշմարիտ է Պաղտասար Դպրի տաղերի հետեւեալ գնահատականը, որ տուել է նրա կրտսեր ժամանակակիցն ու հետեւորդը՝ Պետրոս Ղափանցին.

Երգեր բոյին երգոց ևարօտ
Եւ դիպակեայ ձիր պարեգօտ,
Իւրաքանչիւր բառին ոսկեզօդ,
Արանց գիտնոց անհատ արօտ:

Պաղտասար Դպիրը՝ ժողովրդի նուիրական աւանդների արտայայտիչը, կարողացել է միահիւսել հայ քնարերգութեան տարբեր կենսունակ երակները եւ ստեղծել մի նորօրինակ ազգային բանաստեղծութիւն, գառնալով իսկապէս մի նորարար երգիչ, հիմնելով բանաստեղծական մի ամբողջ դպրոց:

Մովսէս Կարնեցի

Պաղտասար Դպրի դրական դպրոցին այս կամ այն չափով հետևել են բազմաթիւ յայտնի եւ անյայտ բանաստեղծներ: Դրանցից մէկը պիտի համարել դարի առաջին կէսին հանդէս եկած եւ նոյնպէս Դպիր մականունը կրած բանաստեղծ Մովսէս Կարնեցուն (էրզրումցի), որի տաղերը յայտնաբերել է ափիւռքահայ անուանի բանասէր Յ. Ոսկեանը («Զօրս հայ տաղասացներ եւ անոնց տաղերը», Վիեննա, 1966, էջ 139–175): Ըստ երեւոյթին՝ Մովսէս Կարնեցին էլ որոշ ժամանակ եղել է հայրենիքից հեռու, տարագրութեան մէջ, «վշտակիր մարմնով» թափառել է օտար ափերում եւ հայրենիքի ու հարազատների հանդէպ կարօտն արտայայտել սրտառուչ բանաստեղծութեամբ.

Մեկնեցայ հայրենեացն իմ աստ մնալով՝
Յօտար երկիր թափառելով, մաշելով,
Պանդուխտ եւ անցաւոր վըշտակիր մարմնով,
Ի ընտանեաց, եղբարց կարօտ մընալով:

Բանաստեղծը թէեւ ընկել է ինչ–որ «հեռաւոր յերկիր բարեւից», սակայն նրա համար չեն այդ բարիքները: Ահա՛ նրա տառապալից վիճակը, որ ընդհանրական էր ողջ տարագիր հայութեան համար.

Վիշտս ի աւազակաց, վիշտս ի սուտ եղբարց,
Վիշտս ի հրապուրանաց անօրէն ազանց,
Արհաւիրք ահարկուք, գետ ջուրց հոսանաց՝
Պաշարելով անձն իմ, մնացի կարօտով:

Երերեալ դեգերիմ ի այս կենցաղում,
Պահ մի ուրախանամ, հազար պահ՝ տրտում,
Ցայգ եւ ցերեկ տագնապ, ահ եւ հառաչում,
Աւաղելով ի հոգս մնացի կարօտով:

Եւ քանի որ ողջ աշխարհացրիւ հայութիւնն էր զանազան նման տատանեալ ու տառապեալ վիճակում, ուստի եւ այս քանաստեղծը նա ո՛րերորդը լինելով, ողբում է կրկին Հայոց աշխարհին" իր «Ցաղ է վերայ ազգին մերոյ» քերթուածի մէջ, որի իւրաքանչիւր տունը աւարտում է հայ ժողովրդի փրկութեան աղերսանքով-

Մթապատ մառախուղ տիրեաց մերայնոց,
Ոչ ժուժելով բազմաց ելիւն ի հաւատոց-
Լալով առ բեզ դիմեմ, Տէ՛ր արարածոց,
Ա՛յց արա տառապեալ ազգիս մեր Հայոց:

Օտարազինք ի վերայ մեր բազմացան,
Որպէս զկատաղի գէտ գարբեալ գազան,
Ո՛վ բաղցրագոյն Յիսուս, կենաց գտապան,
Ա՛յց արա տառապեալ ազգիս մեր Հայոց:

Յակոբ Նալեան

Ինչպէս յայտնի է, Պաղտասար Դպրին բանաստեղծութիւնից զատուել եւ Գում Գափուի Մայր դպրատան տեսուչ է կարգուել Գ- Պոլսի Պատրիարք, բեղմնաւոր մատենագիր Յակոբ Նալեանը (1706–1764)", որը իր մեծ ժամանակակցի ու դրչակցի ազդեցութեամբ" ձեռք է գրել նաեւ քերթուածնը: Հեղինակել է մի քանի տասնեակ չափածոյ ներբողներ, խրատականներ, հարիւրաւոր քառեակներ ու երկտողեակներ, այլեւ բազմաթիւ հայատառ թուրքերէն երգեր: Նալեանի փոքրածաւալ ոտանաւորները հիւսուած են ժողովրդական խոշորի ոգով ու ոճով եւ հիմնականում ունեն խրատական բովանդակութիւն: Բանաստեղծի հիմնական պատուիրանն է պարզասիրտ ապրիլ աշխատանքով, լինել չափաւոր ու զգաստ, ըստ այլոյ ձգտելով լսանել հոգու եւ մարմնի երկպառակութեան դժուարին խնդիրը: Ահա՛ մի նմոյշ նրա քառեակներից.

Կամի՞ս ցնծալ սրտիւ, հոգով,
Ա՛րր զգինին հանդարտարար,

Կամի՞ս ողջ կեալ հոգով, մարմնով՝
Ա՛րր զսակաւն զգաստաբար:

Իր խրատների մեծ մասը՝ մանկավարժ-բանաստեղծը ուղղել է մանուկներին: Մի տեղ, նա զպրոց ոտք դնող եօթնամեայ մանկանը հետևեալ պիտեցիկ համեմատութիւններով ձգտել է սիրելի դարձնել դպրատունը.

Տարիդ եօթնեակ՝ յարմար ուսման,
Է՛ եղանակ իրրու գարնան,
Անտի ըսկիզբն արար վարժման,
Չի իցես դու հասուն յաշնան:
Ցորժամ երթաս ի դպրատան,
Կարծիր գնալ ի բուրաստան,
Կուտել ծաղիկ դու զանազան,
Առնել պսակ Բոյդ գագաթան[2]:

Ուշագրաւ է, որ գիտնական բանաստեղծը, երբեմն իր խրատական խոսքն առաւել հետաքրքիր եւ ուսանելի դարձնելու համար՝ դիմած է անոնիկ հերոսների ու հեղինակների օրինակին: Իսկ մի ա-ռիթով, ի հաստատումն իր քարոզներից մէկի, նա մէջ է բերել նախանձի մասին Հռոմէացի մեծ բանաստեղծի Օվիդիոսի քառեակը՝ իր թարգմանութեամբ.

Նախանձն է լի դառնութիւն եռեղեալ ի բերանի,
Նախանձոտին աչքն է թիւր, ոչ երբեք ուղիղ հայի,
Ժանգառեալ է ատամք ի մաղձին դառնութենէ,
Պատճն է լի լեղի մաղձիւն ոչ պաղեալ յօշարակէ:

Յակոբ Նաղաշը, բնականաբար, առաւել հակուած է եղել դէպի հայ միջնադարեան տեսական ու գեղարուեստական միտքը: Նչենք, որ նա է հրատ Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»ի առաջին ուսումնասիրողն ու հրատարակիչը: Նա է հեղինակել նաեւ նարեկացիագիտական առաջին խոշոր ուսումնասիրութիւնը: 1745 թուականին, Կ. Պոլսում լոյս տեսած այս աշխատանքն ընդգրկում է Նարեկացու «Մատեան ողբերգութեան»ի եւ «Ներբողեան»ների բանասիրական, տաղաչափական ու գաղափարական մեկնութիւնը: Այստեղ էլ Նաղաշն իր մեկնութիւնները լրացրել ու ամփոփել է նարեկացիական չնչով պրատած չափածոյ հատուածներով: Ինչպէս նչեցինք, նարեկացիական տաղը նորովի հնչեցրեց Պաղտասար Դպիրը եւ, ինչպէս կը տեսնենք, նաեւ Պետրոս Նախիջեւանցին:

Ցիշարժան է նաեւ Ցակոբ Նալեանի «Կատակ չարչարանաց» երկը՝ նուիրուած Քրիստոսի խաչելութեան պատմութեանը: Սա արձակ չարադրութեամբ եւ չափածոյ ընդմիջարկումներով մի գեղեցիկ քերթուածն է, եկեղեցում բեմադրելու համար գրուած մի դրամատիկական պոեմ, որը քերեւս բեմականացուել է նաեւ եկեղեցուց դուրս:

Առանձին ուշադրութեան է արժանի Ցակոբ Նալեանին վերագրուած «Աւե անձն իւր» բանաստեղծութիւնը, որի հեղինակ է համարուել նաեւ ԺԸ. գարի մէկ այլ բանաստեղծ՝ Ցովհաննէս Քեբրիացին: Այստեղ բառական ինքնատիպօրէն եւ ժողովրդա-աշուղական երգերի որոշ ազդեցութեամբ արտացոլուած են ժամանակի հասարակութեան բարոյական պատկերը, ընկերային հակասութիւնները, որոնց իւրովի անդրադարձել են նաեւ ժամանակի այլ բանաստեղծներ (Նաղաշ Յովնաթան, Ցովհաննէս Կարնեցի, Սայաթ-Նովա): Բանաստեղծի հոգին կծկուում, առանձնանում է ինքն իր մէջ, քանի չրջապատող աշխարհը կորցրել է իր բարոյական արժէքները: Մարդկութեան մէջ՝ վերից վար իշխում է կեղծիքը, վերացել են արդարութիւնը, իրաւունքը, ազնուութիւնը: Այդ ամենին՝ գումարուում են պատերազմները, ազգամիջեան կռիւները.

Ազգ ի վերայ ազգի դիմեալ,
Աիեղ գումարք յաճախեալ,
Ամէն կուսէ մարտ, արիաւիրք՝
Խաղաղութիւն չի մրնաց:

Հրոսակք յորդեալ, աւազիք ծակեալ,
Շէնիք աւոզորմ խանգարեալ,
Սմբակակոխ սահմանիք եղեալ,
Եւ այս ցաւոց դեղ չի մրնաց:

Սրածութիւնիք, սով եւ ժանտախտ
Արդէի զմեզ պաշարեալ,
Քառեղանակք խանգարեալք՝
Անդորրութիւն չի մրնաց:

Եւ այս սրհաւիրքներն առաւել կործանաբար են պատահական ինքնութիւնից զրկուած հայութեան համար, որի հոգեւոր առաջնորդները ո՛չ միայն չեն բարւոքում իրենց թշուառ հօտի վիճակը, այլեւ պատուհաս են դառնում նրա գլխին եւ

«Տգրկապէս ծրծեն գարիւն գազգիս
Խնամօղ մարդ չի մրնաց»:

Պետրոս Նախիջեւանցի

Պաղտասար Դպրի չնորհալի հետեւորդներից է նաեւ Պետրոս Նախիջեւանցին (Բերդումեան, Ագամալեան. + 1784): Նաղիր-կուլի խանի ասպատակութիւնների հետեւանքով, Պետրոսը քսանամեայ հասակում, իր բազմաթիւ հայրենակիցների հետ, ստիպուած թողել է Նախիջեւանը եւ տարագրուել: Հաստատուելով Կ. Պոլսում, նա Գումգափուի նորաբաց դպրոցում աշակերտել է Պաղտասար Դպրին եւ այստեղ էլ սկսել իր բանաստեղծական կեանքը: Որոշ ժամանակ անց, տարագիր բանաստեղծը հաստատուել է Ղրիմում, ապա վերադարձել հայրենիք, մինչեւ կեանքի վերջն ապրելով Էջմիածնում, հաչակուելով իբրեւ գիտնական աստուածաբան:

Պետրոս Նախիջեւանցին թողել է չուրջ քսան հատոր կազմող քառազան արձակ եւ չափածոյ երկեր, որոնց մեծ մասը, ցաւօք, մինչեւ այժմ մնացել է անտիպ: Բայց սա չի նշանակում, թէ նրա գրական ժառանգութեանը՝ ժամանակակիցներն ու յաջորդ սերունդները մնացել են անհաղորդ: Նրա երկերի չուրջ 170 գրչագիր օրինակներ գտնուում են միայն Մաշտոցեան Մատենադարանում, իսկ աստուածաբանական, մեկնողական երկերից մի քանիսն էլ լոյս են տեսել անցեալ դարում[3]:

Պետրոս Նախիջեւանցին իր ժամանակի թերեւս ամենաարգասաւոր բանաստեղծն է: Նրա գրչին են պատկանում չուրջ 300 մեծ եւ փոքր ծաւալի բանաստեղծական երկեր, որոնք հիմնականում ամփոփուած են «Երգարան երկուք» եւ «Աղօթական բանք» խորագրերը կրող գրչագիր մատեաններում: Դրանք կրօնական եւ կրօնա-հայրենասիրական բովանդակութեան քերթուածներ են, որոնք բանաստեղծը կեանքի է կոչել որոշակի նպատակադրումով՝ ի չահ ազգային լուսաւորութեան, հայրենի կարգերի վերանորոգութեան, որի հեռանկարը ժողովրդի քաղաքական ու հոգեւոր-բարոյական ազատագրումն էր: Իր խօսքը ժողովրդին հասցնելու համար՝ Պաղտասար Դպրի այս արժանի հետեւորդը եւս ձեռք է զարկել ժողովրդական եւ աշուղական բանարուեստին, ստեղծելով կենդանի ու նորօրինակ հոգեւոր երգեր:

Ահա՛ «անթագաւոր» ազգի բանաստեղծի մորմոքը·

Ամենախնամ Տէ՛ր երկնաւոր,
Հայեա՛ց ի յազգս անթագաւոր,
Պատեալ վշտօք հազարաւոր,
Ցո՛չ ումեքէ նպաստաւոր:

Որպէս յղի ծննդական,
Երկուցի պատեալ, պաշարեալ կսե-
Ո՛չ ոք ունիմի մեզ օգնական,
Աղաղակեմի ողբմական···

Ժողովրդի դաժան ճակատագրից ալեկոծուած բանաստեղծի հոգին ձգտում է դէպի անհունը, դէպի անապա՛տ հոգեւոր առաքինութիւնն ու հայ ազգի երբեմնի ընտրեալներից հանգոյն՝ ճգնելու եւ նոր աւիւնով լցուելու համար.

Սուրբ աղօթով մշամրմունջ աղաւնեաւմ fո պարուց,
Սիւն աշխարհի հաստատութեան՝ ազգիս, մանաւանդ, Հայոց,
Սի՛րտ իմ, բաղձա՛ հաղորդակցիլ, ընտրեալ որդոց fոց բարուց·
Մոլորեալ եմ, բնկա՛լ եւ զիս ի fո սուրբ ծոցդ, անապա՛ս:

Նորօրինակ անձնական-քնարական բանաստեղծութեան մի դեղեցիկ նմոյշ է ստեղծել Գեարօս Նախիջեւանցին իր ծերութեան օրօք, ուր զրուցում է իր անձի հետ այսպիսի գեղեցիկ համեմատութիւն-փոխաբերութիւններով.

Իբրեւ արծիւ բարձրաթռիչ, սրաթեւ,
Խոյանալով, սլանալով հրաձեւ,
Այլ ամփոփեա՛ արդէն զթեւ fո զfեւ,
Որովհետեւ, տեա՛, ծերացար, ա՛ճմճ իմ:

Էիր ստոյգ ի մանկութեան վարդ գարնան,
Եղեր ծաղկեալ եւ պտղալից յամառան,
Այլ թօթափեալ ի ժամ աշնան ծերութեան,
Իբրու ծմեռն ալեօf ձիւնացար, ա՛ճմճ իմ:

Ինչպէս մի ժամանակ Սիմէոն Ջուղայեցին, Գեարօս Նախիջեւանցին եւս իր տաղերից մէկում ի դէմս իր անձի այլաբանօրէն պատկերել է հայ ժողովրդին: Ընդ որում այստեղ այլաբանութիւնը կրկնակի է: Ժողովրդի կերպարը կրող բանաստեղծը երբեմնի երկնագոյց թռչուն է, որին նեաւահար են արել զարանակալ որսորդները: Եւ ահա՛ նա առնչւում է.

Վա՛յ, թէ տայր Տէրն իմ ոգեսէր հզօր իճն թեւ աղաւնեաց,
Զի առ երթերն իմ լուսաճեմ վերաթռուցէր թեւն զիս, թեւն զիս:

Սա հայ ժողովրդի ազատագրական ոգորման բանաստեղծական ամենագեղեցիկ արտայայտութիւններից է: Այդպիսին է նաեւ Նա-

խիջեւանցու հետեւեալ քառատողը, ուր ասես արդէն պայքարի ելած հայ մարտիկների զէնքերի զրնգոցն է լսւում.

Գարծաւիք համայն գինաւորաց՝ զօրագլուխ հաւատոյ,
Որ գինեցիր գինաւորս՝ գինու Խաչին խորհրդոյ.
Ջինեա՛ եւ գիս, գինաբափուրս զօրեղ այսու գինու fո,
Խոցել զգլուխ չար վիշապին գինու Խաչին պարծանաց:

• *Գեղրոս Նախիջեւանցու ստեղծագործութեան մէջ ակնառու տեղ է գրաւում յատկապէս «Աղօթական բանք» մեծածաւալ պոէմը, որը գրուած է Գրիգոր Նարեկացու աղօթամատեանի անմիջական ազդեցութեամբ ու հետեւութեամբ: Նախիջեւանցին ստեղծում է իր «Ողբերգութեան մատեանը», վերստին արծարծելով մարդու աստուածանմանութեան, կատարելագործման խնդիրը, որին ակայն, հաղորդում է արդիական հնչեղութիւն: Նրա աղօթքն ունի շատ մեծ ժողովրդի բարոյական կատարելագործմանը, եւ բանաստեղծի չուրթերով աղօթում ու ապաշխարում են հայութեան տարբեր խաւերի ներկայացուցիչները, յատկապէս հոգեւորականները, որոնք թէեւ կոչուած են լինել ազգի ուսուցիչ–դաստիարակ, բայց իրենք իսկ բարոյալքուած են եւ արատաւորուած: Ահա՛ հայ վարդապետի ապաշխարական խօսքը.*

Ո՛չ իրրեւ առաջնորդ ի կենաց ուղիս առաջնորդեսցի,
այլ՝ իբր զկոյրդ ի խորխորատս ներհիս ընկեսցի.
Ո՛չ իրրեւ գհայր խաղցրագութ եղեալ խնամաւ խրատեսցի,
այլ՝ իբր զրոնուցս խստասրտութեան յուսահատեսցի.
Ո՛չ իրրեւ զքաջ եւ հսկող զաճձն իմ առ հոտին եդի,
այլ՝ իբր զվարձկան ի դիմել գայլոցն զփախուստ առի.
Ո՛չ իրրեւ զդէտ արթուն զգալուստ չարի զեկուցի,
այլ՝ իբր զկուրհ յարձակիլ հինին պապանձեալ կացի···
Ո՛չ իրրեւ զտեսուչ յաւուրս մառախղոյ զգոյշ պահեսցի,
այլ՝ իբր տարտամ, տառապարտարօտ անկեալ նիրհեցի.
Ո՛չ իրրեւ գլուխ կենդանի զանդամս առողջ պահեսցի,
այլ՝ գոլով մեռեալ նեխութեան վարուք ապականեսցի···

Գեղրոս Նախիջեւանցու աղօթամատեանն արծարծում է նաեւ աշխարհացրիւ հայութեան համախմբման, ներքին միաբանութեան եւ արտաքին թշնամեաց դէմ մարտնչելու գաղափարը: Այստեղ էլ երբեմն ողբի ու կոծի արտայայտութիւնները տեղի են տալիս պայքարի ոգուն, եւ աղօթող բանաստեղծը հայցում է.

Ջօրացո՛ գիս, Տէ՛ր, զօրութիւնն իմ,
եւ զէն գինուորութեան իմոյ,

ի հանդէս մարտի, այնմ յատենի
արիապէս ճակատամարտել ընդ այսս չարութեանց
եւ յաղթել բաջապէս օգոյս իշխանին հակառակութեանց:

Այս բանաստեղծը եւս իր ազգասիրական խօսքն ուղղել է հայութեան ապագային՝ էջմիածնի Մայր տաճարին, որը նրա բնաբոլմամբ, փրկարար ապագան է, աշխարհակ հզօր,

Գաւնէշ տեառր յերկինս բշնամեաց,
Աշտանակ ոսկի լուսատու մըտաց,
Տուն լցեալ բարեօք, լցիչ ազգատաց,
Վարժարան բնտիր գիմաստ սիրոդաց···
Մագնիս սրտաքաշ հեռաւոր ազանց,
Լեառն բարձրացեալ ի վերայ լերանց,
Մեծ ուխտատեղի ի մէջ աշխարհաց···

Սրտաուչ է յատկապէս նախիջեւանցու այն ազգը, որակց էջմիածինը, իբրեւ սրդեհորոյս մայր եւ ազատար այրի, աւազում է իր ծանր վիճակը: Անգամ ազան են մեացել Հայոց այգեստաններից, եւ

Սրբակառոյց օրբատօրէ պարիսպ ճոցին պատառի,
Մուտքս գործէ ոտից պղծոց տաճկաց խոզից անտառի,
Ա՛յց արա, Տէ՛ր, այգեստանիացս, զորս եղծեն երէք վայրի·
Վա՛յ եւ եղո՛ւկ մօրս լուսոյ, զի եղէ արդ որդեզուրկ:

Մէկ այլ ազգում, բանաստեղծն իր աւազչի՝ Գազատար Դպրի կիրառած այլաբանութեամբ, էջմիածնին գիմում է որպէս սիրած էակի, ինչն էլ հանգէս գալով իբրեւ սիրահար ու քափառիկ երդնակ·

Ի մէջ լուսաւորաց ցանկալի արեգակն եա դու, ա՛ր իմ,
Ցորէիաման առհմիս փաթելի համայն լուսատու·
Ջմիդսխատան անձն իմ տարփալի լուսաւորիա՛ դու, ա՛ր իմ,
Ես՝ քափառիկ երդնակս, տար սրտովդ այրիմ արդ, ա՛ր իմ···

Գեղրա Նախիջեւանցու առաջնադրծութեան մէջ առանձնանում է Գայծառ արփին արդ բարձրացաւ» ակաւոտքով տաղը, որը համարւում է նրա ամենայաջողուած առաջնադրծութիւնը եւ որը երկար ժամանակ վերագրուել է Գեղրա Ղափանցուն: Այս տաղը վերարտադրում է բնութեան գարնանը, գարունը՝ բուռ երեւոյթին արոշ այլաբանական ենթատեքստով: Այն համակուած է կենսախինդ տրամադրութեամբ եւ յորինուած է ժողովրդական երգերի քնքշութեամբ ու պարզութեամբ, ուսոի եւ առաջին հերթին ընկալւում է որպէս բնութեան եւ ուրախութեան երգ, ինչպէս եւ խորագրուած է·

Գայծառ արփին արդ բարձրացաւ,
Կարմիր վարդին ոստ կակղեցաւ,
Հալմաճ սառին ժամ է արդէն,
Մաղկմաճ ծառին ժամ է արդէն:

Տալ գրաժին ի փշրանաց,
Լնուլ գծոցս տճանկաց՝
Սփռել կաթօտ խեղճ ադֆատաց,
Տո՛ւր գձեռին, ժամ է արդէն:

Ուրախութեամբ ուտել գհաց,
Զուարճանալ անուշ գինեաց,
Վարել գկեանս ըստ սիրելեաց,
Զսուրբ տառին ժամ է արդէն:

Սիրել, ճերել աշակերտաց,
Կոչել գդասս երաժշտաց,
Ուճկն դնել եղանակաց,
Քաղցրաբանիլ ժամ է արդէն:

Գեորգ Ղափանցի

Գաղաստաբ Դպրի գրական գպրոցի միւս երեսնյի ներկայացուցիչը Գեորգ Ղափանցին է (*Սիւնեցի*· + 1784)։ Նա իրրեւ Էջմիածնի նուիրակ՝ առաքուել է Ռուսիոյ եւ Ղրիմ, այնուհետեւ հաստատուել կ· Գալատիա։ *Որպէս վիճաբանուէ գործել է Ազրիանապոլսում* (1772 թ·), *իսկ* 1780–*ին՝ իրրեւ հայր հանճարեղ, բանիբուն եւ աստուածաբանութեան անաստուէ քարոզիչ», նշանակուել է Նիկոմիդիայի թեմի առաջնորդ։*

Համագործակցելով Սիմէոն երեւանցի եւ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսաններին, Գեորգ Ղափանցին ծաւալել է եկեղեցական, կրթական–լուսաւորական եւ գրական լայն գործունէութիւն, ըստ ե–բեւոյթին ենթարկուելով հալածանքների ու գրկանքների։ Կայ վարկած, որ Գեորգ Ղափանցին աշակերտել է Գաղաստաբ Դպրին Գեղգեփուի գպրոցում։ Ցաւեննալին դէպս որոշակի է, որ Ղափանցին եղել է վիրջինիս գրական աշակերտը, գնանուլով նրա քնարերգութեան ազդեցութեան տակ եւ ուսուցչի մահուան առիթով՝ գրել է մի գրաւոտական ոտր, որից մի քառատող բերելիք վերեւում։

Գնարտա Ղափանցու բանաստեղծական ժառանգությունն ամփոփող հիմնական ժողովածուն՝ «Գրքոյկ կոչնցեալ երգարանդը լոյս է տեսել նրա կենդանության օրոք, 1772 թուականին, Կ. Պոլսում: Այդ երգերը նա ժամանակ առ ժամանակ է ստեղծել որոշ դեպքերի վրայ եւ երգելով՝ յայն առթիւն ունկնդրել է թէ՛ իր ժամանակի եւ թէ՛ հետագայում: Ղափանցու հեղինակությամբ այժմ յայտնի են 160-ից աւելի փոքր ու մեծ ծաւալի բանաստեղծություններ՝ կրօնական-խրատական, այլաբանական-հայրենասիրական եւ անձնական-քնարական բովանդակությամբ:

Գնարտա Ղափանցու քնարերգության ամենաարժէքաւոր մասն, անշուշտ, կազմում են այլաբանական-հայրենասիրական երգերը: Այս քնարերգուն արդէն իր այդ երգերի խորագրերում նշում է, որ դրանք ձօնուած են հայրենիքին, ազգին («Առ ազգն իւր սիրելի», «Առ ազգն իմ պատուելի»): Յատկապէս Գազատար Դպրի «Ի ննջմանէդ արքայական» երգի անմիջական ազդեցությամբ է նա դրել որոշ այլաբանական-հայրենասիրական տաղեր, որոնց մէջ դրսեւորել է իր անհատականությունը: Գազատար Դպրի նշուած տաղից ուղիղ 64 տարի յետոյ է գրուած Ղափանցու «Ո՛վ իմ ազնիւ, դիւցազնացոյս քէ հարցանեաց» սկզբնատողով երգը: Եթէ Գազատարի տաղը յօրինուած է հայ ազատագրական կռիւների նախօրէին, ապա Ղափանցու երգը գրուած է այդ կռիւների պարտութիւնից յետոյ: Բայց յուսահատուած չէ բանաստեղծը: 1768-ին սկսուած ռուս-թրքական պատերազմը եւ դրանից Հայաստանում ու հայ գաղթավայրերում նոր թափ առած ազատագրական շարժումը նոր յոյսեր էր վառել ժողովրդի մէջ: Եւ Ղափանցին, որ ժողովրդի այդ յոյսերի արտայայտիչ բանաստեղծն էր, անհամբեր սպասում էր հայութեան ներհոգ ուժերի նոր արթնացումին.

Լուսազարդեալ յայսմիկ գարնանս բերկրաբերի,
Լի՛ց գիափամ սրտի իմոյ դու աճքերի,
Դու բազաւոր, ես ո՛ն ծառայ եւ հէգ գերի,
Թէ հանիցիս՝ փարթամանամ դարըն բոլոր:

Ի բանիլ ո՛ն յո՛յժ դանդաղեալ անագանիս,
Անեալ փառօք՝ զարդըս լուսոյ ո՛չ ագանիս,
Ի ննջմանէդ միշչ ո՛չ փութով զարթուցանիս,
Ես սատանեալ միշտ դեգերիմ տարին բոլոր:

Գազատար Դպիրն իր տաղերում արդէն դծել էր արքայատիպ, ազնիւ, նազելի, աննման վարդ-հայրենիքի այլաբանական պատկե-

բը: Գետաս Ղափանցին էլ հայրենիքը երգել է վարդի այլաբանությամբ, կամ իր խոսքերով ասած՝ վարդհրգաբար նշանակությամբ վարդի: Նրա տաղերում էլ գործում է Գազաստար Դպրի նշանաւոր երգի ոճով եւ խորշակը արդէն հայ ժողովրդի քնամեայ խորհրդանիշ.

Է՛, իմ վարդիկ, գիեզ ողրամ ամի–ամի,
Քումըդ գեղոյ բշնամի է ամէն համի,
Թուփըդ խըլել, բերրըդ ցըրել ի բաց կամի.
Ձեա համեա՛,
Ձիեզ պահեա՛
Եւ գիս շահեա՛:
Տաղ եւ խորշակն ի էն ի բաց ո՛չ հեռանան,
Գեղով հոյիս ի յախտս իւրեանց յորդ չերանան...
Բարակ–բարակ բերրից հոյոց ցըրրատեսակ՝
Ձէն տալ չանան տապախառնեալ հողմն եւ խորշակ,
Վասն այն ի լաց եւ ի սուգ կամ գերիս յարակ...

Այսուհ էլ ազատասանդ բանաստեղծը վարդ–հայրենիքին կոչ է անում արթնանալ, համարձակ անփական լոյս էութիւնը, վանել ցուրտն ու խաւարը.

Սահման կալեալ, բանակ արկեալ՝ օթեւանի՛ր,
Միճչեւ անցցէ ձիւն եւ ձմեռըն՝ այդրէն խնամի՛ր.
Ձիեզ ծանի՛ր,
Լուսոյ ճամանի՛ր,
Փոյթ մի՛ բանիր:
Հոգւոյ իմոյ զա՛նձ անըսպառ եւ բիւր բարի՛,
Ջարթի՛ր փուրով, ուռկըն մատո՛ ի լուր արի,
Տե՛ս, թէ գիարդ ցուրտն յերեսացդ ի բաց վարի...

«Ես ազգն իւր սիրելի» խորագիրը կրող տաղում էլ՝ բանաստեղծը արդէն դժբախտ երգնակ անհամբեր ապառում է նոգելի վարդ–հայրենիքի բացուելուն–արթնանալուն:

Մարտն էանց, ապրիլն եհաս,
Ակն ուճիմ, երեւս գաս,
Ձի՞ է ինձ, գի՞ ոչ զգաս.
Նոգելի վա՛րդ, վա՛րդ,
Միճչ գոչեմ զօր ամենայն:

Գևորգ Չոփանցին էլ իր աշխարհական–հայրենասիրական տագնապում ամենասաթրքեր ձևերով յայտնում է իր անհուն սէրն ու կարօտը հայրենիքի հանդէպ, յաճախ տանջծելով այսպիսի ինքնազրոյցներ.

Ի հրոյ սիրոյդ վառեալ հոգիս՝ վառի եւ ո՛չ հովանայ,
Հառաչելով յարակ ողբայ եւ ո՛չ այնու զովանայ,
Գետ արտասուացս իջեալ յաչացս՝ այգուն–այգուն ծովանայ.
Իմ աննման վա՛րդ, վա՛րդ...
Հառաչելով, աղաչելով՝ ծայնիւ մաղթեմ յալագին,
Զգուշացի՛ր, յորժամ հնչէ դժնեայ հողմըն սատակագին,
Մինչ դու թափիս՝ ես մեռանիմ, մի է իմ եւ ֆո հոգին.
Իմ աննման վա՛րդ, վա՛րդ...

Խոսքէս որ բանաստեղծը հզգացմունքների մի ամբողջ ծով ունի սրտի մէջ», հզգացմունքի մի վեհ քնքշութիւն» (Լէօ): Քանի որ մի է իր եւ հայրենիքի հոգին, ուստի եւ բանաստեղծն իր անձնական բարօրութիւնը կապում է հայրենիքի բարգաւաճման հետ, նրա մէջ դանելով իր գօրութեան արմատը: Օտարութեան մէջ նստած է նա չի սուզ եւ կոծ կծկեալ», ամէն կողմից նեղուած ու մերժուած, հալածուած ու քարկոծուած եւ աչքը յառած նայում է հայրենիքի առաջխոզացմանը, ասելով.

Եթէ տեսից զֆեզ բարեաւ՝ զբւարճանամ,
Վաղվաղակի զայս ամենայն ես մոռանամ,
Վերադարձեալ ի հնութենէ նոր նորանամ.
Քեւ յօրանամ,
Ցոյժ զօրանամ
Եւ տիրանամ:

Անձի եւ հայրենիքի միասնականութեան զգացումը այսպիսի խորութեամբ առաջին անգամ էր արտայայտւում հայ քնարերգութեան մէջ:

Ցատկանշական է, որ Գևորգ Չոփանցին աշխարհական–հայրենասիրական տագնք է ճանել նաեւ կուսասանդնուպոլսին, որի ազատագրումը սամանեան բռնապետութիւնից՝ նա գիտում է իր հայրենիքի ազատագրման ընդհանուր շղթայի մէջ: Ուստի եւ Բիւզանդիոն–Պոլսին նա գիմում է այնպէս, ինչպէս իր վարդ–հայրենիքին.

Զֆեզ խորշակ, գիս կարօտ ֆո չարչարէ,
Զօրէն ծովուց յայս կոյս, յայն կոյս հարիարէ,

Ի սար, ի ձոր հողմավարեալ տարտարէ...
Գարնան արե՛ւ եւ շաղարեր առաւօ՛տ,
Խաւարեցիր հո՛վ գովարար, հեւագօս-
Տապ եւ խորշակն եղեն արդէն մահամօտ-
Բացի՛ր, բացի՛ր, իմ կարմիր վա՛րդ աճմամբ,
Դեղդ ճմաց արեգական վառվառմամբ:

Ինչպէ՞ս ահռելի ենք, այսօրէդ էլ նոյն խորհրդանիշներն են, նոյն տապն ու խորշակը եւ անհման վարդը: Գոլիոը, ինչպէ՞ս եւ նրա ազատագրման խնդիրն առաջին անգամ չէ, որ արծարծւում է հայ քնարերգութեան մէջ- յիշենք Աբրահամ Անկիւրացու, Առաքել Բաղիշեցու, Երեմիա Քեամխրճեանի համապատասխան երկերը: Սակայն կ. Գալօի, որպէս հայութեան գաղափար պատմամշակութային օրգանի եւ հոգիւոր հայրենիքի մի մասի այսօրինակ այլաբանական եւ ջերմ քնարական պատկերումը՝ յիրաւի նորութիւն էր մեր գրականութեան մէջ:

Գնարան Ղափանցին հայրենիքը երգել է ո՛չ միայն վարդի ու ոսկեակի, այլ նաեւ բնութեան տարբեր երեւոյթների այլաբանութեամբ, այսինքն՝ ո՛չ միայն սիրոյ, այլեւ բնութեան երգը՝ գործածել է հայրենասիրական զգացումների արտայայտման միջոց: Այսպէս, նրա տպաւորիչ մէկն ունի այսպիսի խորագիր- «Ձմեռնակրութիւնէ հայրենեաց մերոց, ի գէմս գանագանից համառութեանց»: Այստեղ առերեսւում հայրենիքի խորհրդանիշը հոգմահարեւող բնութիւնն է, իսկ յալահառաչ հեղինը ու ցաւն՝ երամ-երամ հառաչները նրա տղերացող աշխարհացրիւ որդիներն են.

Կործանիցցաւ, անկաւ պարիսպ պարտիզաց,
Թեր անկեալ, բայբայեալ շուրջ-շուրջանակի,
Ցամաքիցաւ ամպերն, ո՛չ ցօղեն առատ,
Գարբ հաւուց եւ թռչնոց լաւ՝ երամ-երամ:

Այս տպն էլ, տակաւին, համակուռած է լաւատեսական շնչով: Վերջին քառատողում բանաստեղծը՝ գիմելով գարնան, այն է՝ հայրենիքի փրկութեան աւետարեր արտաւրիկին, ասում է.

Արի՛, իմ արտուտի՛կ, կամ յոջ, կամ յահեակ,
Տարածեա՛ զթեւսդ հողմովս յաջողակ,
Միճչեւ հասցէ առ ինձ աւետաց գուշակ,
Ձախր առեալ առ՛ւր ասատէն մաճ՝ երամ-երամ:

Մէկ այլ տպում՝ գարնան եւ հայրենիքի աւետարեր է նախշուն կաքաւը, որի ձայնին է անձնւում հայրենակարօտ բանաստեղծը.

Արդ, բարձրացո՛ զձայն fո ըստ իս,
Եւ փարատեա՛ զսուգ սրտիս,
Հայցմամբ fոյոյ երգարանիս·
Ցայդ լեռներէն ի վայր փուքաս,
Յաւուր գարնան պարեալ ցնծաս,
Նախշուն ծագերով շուրջ կու գաս,
Արագ–արագ ոստոստելով,
Ծաղկանց վերայ թաւալելով,
Վասն ո՞յր բրոչիս,
Ընդէ՞ր փախչիս,
Կամ գի՞ թագչիս,
Կողկողալով ձայն արձակես,
Գա՛խգըդա, գա՛խգըդա, գա՛խգըդա,
Միշտ հառաչես ու կարկաչես:

Հայրենիքի այլաբանական պատկերը՝ քէ՛ վարդի եւ քէ՛ արտասուկի, կաքաւ ու կռունկ քաչունների միջոցով, հայ անհատական բանաստեղծութիւնը որդեգրել է միջնադարեան ժողովրդական երգերից, որոնց բառն ու բանը, չունչն ու ոգին են թեւածում Գեորգ Ղափանցու այս տաղերում:

«Զվշտակրութիւնէ հայրենեաց մերոց» այլաբանական–հայրենասիրական տաղի հակազատկերն է «Զգիղեցկութիւնէ բուսոց եւ անկոց» խորագրով տաղը: Եթէ առաջինի մէջ հայրենիքն ու նրա զաւակները հանդէս են բերւած հոգմահար բնութեան եւ յալհատաչ հաւքերի պատկերով, ապա երկրորդում՝ պատկերւում են մայիսեան փթթող բնութիւնը եւ ուրախ խայտացող հաւքերը, այսինքն՝ հայրենիքի փրկութիւնն ու ժողովրդի ցնծութիւնը·

Այդ լեռներու դէմ յանդիման դաշտերուն,
Դէ՛պ զառ ի վեր, եւ զառ ի վայր ծորերուն,
Շարուճակեալ եւ վարսագեղ ծառերուն,
Արմաւենեաց, եղեւնեաց եւ սօսերուն·
Սիրահարեալ ի սէր ցոցա կանչելով,
Հոյլի կաքաւուց առ մերձենալ գոչելով,
Ի վեր, ի վայր ոստոստեն կարկաչելով,
Ներ հովանեաց մաքուր ծաղկանց թագչելով:

Բանաստեղծն իր նուիրական երազանքը պատկերել է որպէս արդէն կատարւած իրողութիւն, ինչպէս տաղի խորագրում է ասւած՝ «ի միխիթարութիւն ախվայութեամբ արամեցելոց»:

Գետրոս Ղափանցին յօրինել է նաեւ վարդի ու սոխակի այլաբանութեամբ կրօնական երգեր, որոնք ոչնչով չեն տարբերւում նոյնատիպ այլաբանական-հայրենասիրական երգերից: Ուստի եւ հեղինակը, ճիշտ հասկացուելու համար՝ այդ տաղերի խորագրերում նշել է դրանց կրօնական իմաստը: Այդ տաղերից մի քանիսի մէջ, ինչպէս նկատել է Շ. Նազարեանը, «բանաստեղծը հաւատքի եւ հայրենիքի ազատութեան խորհուրդը կապում է երկնային ուժերի հետ, հոգեւոր դարնան, բնութեան աստուածային վերածննդի հետ»[4]:

Ինչպէս Գաղտասար Դպրի, այնպէս էլ Գետրոս Ղափանցու հայրենասիրական եւ կրօնական այլաբանական տաղերում այնքան խորն է իրականութեան, բնութեան զգացողութիւնը, որ դրանք իրենց ներքին իմաստներից զատ ունեն նաեւ սիրոյ եւ բնութեան երգերի արժէք: Ղափանցին հեղինակել է նաեւ բազմաթիւ զուտ կրօնական երգեր, որոնցից չատերի մէջ նոյնպէս նա «գեղեցիկ նկարագրող, սըրտառուչ տրամադրութիւն ներշնչող մի բանաստեղծ է. դարձեալ եւ դարձեալ աչխարհի մարդ» (Լէօ):

Գետրոս Ղափանցու գրական ժառանգութեան մէջ գտնում ենք նաեւ որոշ կրօնա-ազգային բովանդակութեան տաղեր: Նա եւս անդրադարձել է «առ պարծանքն Հայաստանեայց եկեղեցւոյ» սուրբ Էջմիածնին, որին մի տաղի մէջ, ինչպէս Գետրոս Նախիջեւանցին, գովերգել է իբրեւ սիրած էակի: Այստեղ էլ նրա խօսքը յուզառատ է ու գեղեցիկ.

Իբր եղջերու յոյժ տապացեալ
Ծարաւիմ, սէ՛ր իմ, ծարաւիմ,
Ցոյժ-յոյժ կարօտով խանդակաթեալ սիրով Քոյին՝
Տոչորիմ, սէ՛ր իմ, տոչորիմ.
Ներսուցապէս համայն կըրիւ
Պապակիմ, սէ՛ր իմ, պապակիմ.
Ցոյժ-յոյժ կարօտով ակն ունելով ճախնի սիրոյդ
Արդ, այրի՛մ սիրով Քով, այրի՛մ:

Ճիչեցնելով ժողովրդի երբեմնի անկախութիւնն ու հզօրութիւնը եւ այդ ժամանակ Էջմիածնի՝ որպէս հոգեւոր առաջնորդի վիճակարի դերը, Գետրոս Ղափանցին կոչ է անում այդ նիրհող «դչխոյին» արթնանալ եւ համախմբել իր չուրջը ողջ հայութեանը.

Զտարագրեալս ա՛ծ առ տեղի
Հայրենիին, սէ՛ր իմ, հայրենիին...
Զարթի՛ր, գըթա՛ տառապելոյ Քոյոյ հօտին
եւ ժողովեալ ընկա՛լ ի Քոյդ սուրբ անկողին:

Ղափանցին մի գեղեցիկ տող է ձօնել նաեւ Սուրբ Թարգմանչաց յիշատակին, գնահատելով յատկապէս նրանց լուսաւորական գործունէութիւնը, կոչելով նրանց «կրկնակի արեգակունք հոգւոց մերոց ի խոր մթան», «խաչազարդ ամոլք Հայոց», «արշալոյսք մեզ ներհեղիչք», «ի հնութենէ նոր նորոգիչք»: Ըստ բանաստեղծի, այս հայրենանուէր լուսաւորիչների անունն ու գործը յիշելն անհրաժեշտ է «խոր թշուառութեան» մէջ տառապող ժողովրդի համար: Մեր լուսաւոր ու առաքինի նախնիների օրինակով պէտք է կրթել ու դաստիարակել նոր սերունդներին, վերացնել հասարակութեան արատները, սերմանել բարութիւն, հաւատ, պարկեշտութիւն, չափաւորութիւն. բոլոր այն առաքինութիւնները, որոնք բնորոշ են եղել մեր հայրերին: Այս է խրատում եւ յորդորում Պետրոս Ղափանցին իր մի շարք տաղերում, քառեակներում, երկտողեակներում:

«Ո՛չ կարեմ կեալ եւ ապրիլ ես այլազգաբար»: Այսպէս բացականչում է բանաստեղծը՝ ազատասիրական ոգով տոգորուած իր տաղերից մէկում, ի դէմս իրեն՝ ներկայացնելով իր ազգային կեանքով ապրել ցանկացող հայ ժողովրդին: Ղափանցին, առհասարակ, հետեւելով իր ուսուցչին՝ Պաղտասար Դպրին, յօրինել է անձնական-զգացական բնոյթի երգեր, որոնց մէջ բանաստեղծի անձը մերթ ներկայացնում է հայրենաբաղձ պանդուխտին, մերթ ջերմեռանդ հաւատացեալին, մերթ խելամիտ քարոզիչ-խրատատուին, մերթ տառապող անհատին: Ահա՛ նա՝ անձնական, ազգային ու հասարակական հոգսերից ու ցաւերից տառապող մարդը.

Գողուղի կալեալ բայլեմ,
Կաղիկաղ, կամա՛ց-կամա՛ց,
Տրտմութեան կառք եւ սայլ եմ,
Հին ցաւով՝ ամաց-ամաց:

Ո՛չ գիտեմ, առ ո՞վ երթայց
Եւ առ ո՞վ բողոք կալայց,
Այս ցաւովըս շըրջեցայց
Բախտըն գիս՝ ամաց-ամաց:

Պետրոս Ղափանցուն, ինչպէս Պաղտասար Դպրին ու վերջինիս գրական դպրոցի միւս հետեւորդներին բնորոշ են պարզ գրաբարը, կրօնա-հայրենասիրական, ազատասիրական տենչերը, գեղեցիկ ոճն ու հարուստ տաղաչափական ձեւերը: Այս ամէնը, սակայն, դեռեւս բաւարար հիմք չի հանդիսանում ասելու, թէ այդ հեղինակները հայ քնարերգութեան մէջ սկզբնաւորեցին կլասիցիզմի ուղղութիւնը: Թէ՛ Պաղտասար Դպրի եւ թէ՛ Պետրոս Ղափանցու եւ միւսների երգերին

առաւել բնորոշ է խոր յուզական-զգացական չեչտը եւ ո՛չ թէ բանական-ռացիոնալիստական բնոյթը, որ իւրայատուկ է կլասիցիզմին: Եւ առհասարակ՝ վէրջինիս բնորոշ գաղափարներն ու բանաձեւերը չեն գործում նշուած բանաստեղծների երգերում, եւ առաւել եւս ժամանակի աշուղական բանաստեղծութեան մէջ: Ճիշտ է, արդէն դարասկզբին, ինչպէս տեսանք, Խաչատուր Էրզրումեցին առաջինը լինելով, հայ իրականութեան մէջ ներմուծեց կլասիցիստական գեղագիտութեան հիմնական սկզբունքները, սակայն Գաղտասար Դպրի ու նրա գրական դպրոցի բանաստեղծների երկերը ձեւուած չեն այդ սկզբունքների վրայ:

• • •

ԺԸ. դարի բանաստեղծութեան մէջ այս կամ այն չափով իրենց ներդրումն ունեն նաեւ Հայաստանի եւ հայ գաղթավայրերի տարբեր կենտրոններում հանդէս եկած քնարերգուներ: Սիմէոն Երեւանցին, Գէորգ Մուրովը, Յովհաննէս Բերիացին, Սարգիս Բալուեցին, Սարգիս Ապուչեխցին, Յակոբ Շահամիրեանը, Գրիգոր Օշականցին, Յովհաննէս Կարնեցին, Սերովբէ վարժապետը եւ շատ ուրիշներ:

Սարգիս Բալուեցի

Բանաստեղծական համեստ շնորհքի տէր է եղել Սարգիս վարդապետ Բալուեցին, որն արժանայիշատակ է յատկապէս այնու, որ եղել է ժամանակի կիլիկիահայութեան գրական-հասարակական կեանքի առաջատարներից մէկը: Նա աշակերտել է Կիլիկիայի Հայոց Կաթողիկոս Միքայէլ Ա. Աղապահեանին (1737–1758), գրել է նրա կենսագրութիւնը, ապա ուսուցանել է նրա եղբօրորդուն՝ Կիլիկիայի ապագայ կաթողիկոս Եփրեմ Աղապահեանին (1771–1784): 1770 թուականին, թուրքերի կողմից դաժանօրէն սպանուել է Կիլիկիայի մէկ այլ կաթողիկոս՝ Գաբրիէլ Աղապահեանը (1758–1770), եւ այդ առիթով Բալուեցին գրել է մի ողբերգական տաղ:

Սարգիս Բալուեցու մեզ յայտնի տաղերը հրատարակել է Տ. Պալեանը «Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թիւրքիայ» ձեռագրացուցակի Ա. հատորում («Ցուցակ հայերէն ձեռագրաց սուրբ Սարգսի վանուցն ի Կեսարիա», կ. Պոլիս, 1892, էջ 16–22): Այդ տաղերի զգալի մասը սիրոյ երգեր են, որոնք ինչ-որ չափով յիշեցնում են Նաղաշ Յովնաթանի երգերը, թէեւ չունեն նրանց հմայքն ու գոյների ճո-

խութիւնը: Իսկ բանաստեղծական արուեստով, Բալուեցին հարազատ է իր մեծ ժամանակակցին՝ Պաղտասար Դպրին: Ահա՛ մի հատուած Բալուեցու մի սիրերգից.

Սիրայորդոր ծաղկանց հոտոյն
Է՛ջ ի պարտէզ առաւօտուն,
Ա՛ռ զիս ընդ ինձ, իմ ցնծութիւն,
Ուրախ լեր, սէ՛ր իմ սիրասուն...
Բամեալ սիրով բազմիմիմ սեղան
Հետ սիրելեաց զարմանազան,
Դրուատեսցուք երգ հաղցրածայն,
Ուրախ լեր, սէ՛ր իմ անմման:

Սարգիս Բալուեցու աշակերտ Եփրեմ Աջապահեանը եւս կիլիկիահայ բանաստեղծներից է, որն ի թիւս այլ քերթուածների՝ հեղինակել է իր տոհմի արձակ եւ չափածոյ պատմութիւնը:

Սիմէոն Երեւանցի

Անհամեմատ խոշոր, համազգային դէմք է եղել Սիմէոն Երեւանցին (1710–1780), որը սովորել ու դասաւանդել է Էջմիածնի հոգեւոր դպրոցում, իբրեւ նուիրակ շրջագայել Թուրքիայի, Պարսկաստանի եւ Հնդկաստանի Հայոց թեմերում, եւ 1763–ին ընտրուել Ամենայն Հայոց Կաթողիկոս: Իր 17–ամեայ գահակալութեան ընթացքում, նա ամրապնդել է Էջմիածնի քաղաքական եւ տնտեսական դիրքերը, նպաստել հայութեան համախմբմանը, բանակցութիւններ վարել ռուսական արքունիքի հետ...

Սիմէոն Երեւանցին հեղինակել է աստուածաբանական, մեկնողական եւ պատմական բովանդակութեամբ երկեր: Հեղինակ է նաեւ կրօնա–ազգային բովանդակութեամբ տաղերի, որոնք հիմնականում լոյս է ընծայել ինքը 1772–ին (ապա՝ նաեւ 1777–ին) Էջմիածնի իր հիմնադրած տպարանում, «Տաղարան փոքրիկ» խորագրի տակ:

Սիմէոն Երեւանցին եւս, ըստ երեւոյթին, իր բանաստեղծական ուղին սկսել է Կ. Պոլսում, ուր գտնուել է որպէս նուիրակ: Ճամենայն դէպս, որոշակի է, որ նրա տաղերը Պաղտասար Դպրի գրական դպրոցի կնիքն են կրում:

Սկսած 1747 թուականից, երբ սպանուեց Նադիր–Շահը, պարսկական քայքայուող պետութեան անիշխանութեան պայմաններում՝ Հայաստանը վերստին դառնում է արիւնալի մարտերի թատերաբեմ: Այս ժամանակ է, ահա, Սիմէոն Երեւանցին գրել իր մի հայրենասի-

բական եղերերգութիւնը, «Նորին հառաչանք առ Աստուած վասն Քշուառութեանցն երկրիս Հայոց եւ Սրբոյն Աթոռոյս ի Թուականի մերում ՌՃՂԶ (1747)»: Ահա՛ Հայոց Քշուառութեան պատկերը.

Բարձաւ ի մէնջ հովիւ արթուն եւ իրաւունք մերժեցաւ,
Արբ իմաստուն եւ ուսուցիչ յազգէս մերմէ սպառեցաւ,
Աստուածապաշտ իշխանիքն մեր ահա իսպառ վերջացաւ...
Սուգ զգեցաւ երկիր երկիւր վասն մերոյ կորստեան,
Որոց եւ երկիր ձայնակցեալ՝ զքշուառութիւնս մեր ողբաւ,
Չի գիւր արեան Ստեղծողիդ յանօրինաց վատնեցաւ...
Մանկունք սորին եւ պաշտօնեայք ի բշնամեաց գերեցաւ,
Որդիք սորին շնորհածիւք ի ձեռս նեղչաց մատնեցաւ,
Միանգամայն հօտ էն փոքրիկ կայ ի յետին դառնութեան...

Ինչպէս յայտնի է, Սիմէոն Երեւանցի Կաթողիկոսը մահմեդական տէրերի հետ չափազանց զգուշաւոր քաղաքականութիւն է վարել եւ առերես դատապարտել ազգային-ազատագրական շարժումները: Սակայն նա իրրեւ բանաստեղծ՝ քաղաքական համակերպութեան քարոզ չի արել եւ երբեմն բարձրացրել է առ Տէր իր բողոքի ձայնը.

Նախատինք նախատչաց զմեօք պատեցին,
Եւ զսուրբ տեղիսդ գարշութեամբ լցին,
Մինչեւ յե՞րբ համբերես արարմանց նոցին,
Թէպէտ չարիք մեր զեզ բարկացուցին:

Նշանաւոր է յատկապէս Սիմէոն Երեւանցու «Արի Աստուած հարցն մերոց» երգ-բանաստեղծութիւնը, որը ժամանակին լայն տարածում է գտել ժողովրդի մէջ: Ինչպէս գրում է Լէօն. «Հայ ժողովրդի դարաւոր տառապանքները, դարաւոր արտասուքներն են լալահառաչ եւ պաղատագին խօսում այն համեստ եւ պարզ երգի իւրաքանչիւր տողից: Եւ նա իրրեւ հայցուածք մտաւ եկեղեցու մէջ, երգւում էր պատարագի վերջում, երգւում էր «ցասման ժամին», երբ ամբողջ ժողովուրդը ծնկաչոք աղաչում էր եւ երբ յաճախ այդ հառաչանքները փոխւում էին կանանց սուգ ու շիւանի»[5]:

Արի՛ Աստուած հարցն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց·
Հա՛ւս օգնութեան ծառայից քոց
Անօգնական ազգիս Հայոց:

Միջնորդութեամբ սրբոյ Խաչիդ
Եւ անարատ սուրբ Ծնողիդ

Ցիշեա՛ զհեղումն արեան Փրկչիդ,
Ե՛լ ի խնդիր փոխու հոտիդ:

Զի գիտացաք մեք հաւաստեաւ,
Որ չափ մեղաց մերոց լցաւ,
Ուստի Տէրդ մեր բարկացաւ,
Առ ի խրատել զմեզ զարթեալ:

Արդ, անկանիմք առաջի ոյ,
Գոչեմք մեղա՛յ Տեառնդ մերոյ,
Դարձո՛ ի մէնջ զցասումն ոյ
Վասն անսպառ գթութեան ոյ:

Այսպէս, իր բանաստեղծի եւ հոգեւոր բարձրագոյն առաջնորդի չուրթերով աղօթում-աղաչում էր ողջ հայ ժողովուրդը, ազգը Հայոց, ակնկալելով իր փրկութիւնը: Ցիրաւի, Սիմէոն Երեւանցու քերթուածինը քաղաքական զարթօնքի ծնունդ էր: Բանաստեղծն ի դէմս Գրիգոր Լուսաւորչի, դիմել է ողջ հայ ժողովրդին եւ Պաղտասար Դպրի հետեւութեամբ արթնացման կոչ արել.

Զարթի՛ր, զուարթուն անուն,
Մինչեւ ե՞րբ ննջես դու ի քուն...

Ինչպէս տեսանք, ԺԸ. դարի բանաստեղծութեան մէջ (Ղազար Ջահկեցի, Պաղտասար Դպիր, Պետրոս Ղափանցի, Պետրոս Նախիջեւանցի) բաւական մեծ տեղ է գրաւում Էջմիածնի թեման: Դա մի նոր դրսեւորում էր, այսպէս կոչուած՝ «Արարատեան հայրենասիրութեան»: ԺԹ. դարում արդէն Ստեփանոս Օրբելեանը «Ի դիմաց Ս. Կաթուղիկէին» նշանաւոր պատմական ողբում, Էջմիածինը՝ Արարատեան երկրի սիրտը, գովերգում է որպէս ողջ հայութեան, հայ պետականութեան ու հոգեւոր կեանքի կենտրոն: Էջմիածնի թեման առաւել մեծ տեղ է գրաւում Սիմէոն Երեւանցու թէ՛ արձակ եւ թէ՛ չափածոյ երկերում: Նկատի ունենք նրա աստուածաբանական-դաւանաբանական «Պարտաւճարը», պատմա-վիճակագրական «Ջամբռը» եւ մի քանի տաղեր: Ուշագրաւ է յատկապէս այն տաղը, ուր Էջմիածինը դիտուած է որպէս հայ ազգի խորհրդանիշ, գորովագութ մայր, որին դիմում են տարագիր որդիները՝ նրա չուրջը համախմբուելու իղձով.

Ի գիրկ ծնողիդ մերոյ հանգչիլ ե՞րբ իցէ, ո՛վ մայր, ե՞րբ իցէ,
Եւ տեսութեամբ քով զմայրիլ ե՞րբ իցէ, ո՛վ մայր, ե՞րբ իցէ:

Ո՛հ զմայրական սէրդ ի գործ արկեալ ե՞րբ իցէ, ո՛վ մայր, ե՞րբ իցէ·

Զձագուցս ֆո ժողովել ե՞րբ իցէ, ո՛վ մայր, ե՞րբ իցէ:

Ինքը՝ Սիմէոն Երեւանցին երկար ժամանակ գտնուել է հայրենիքից հեռու եւ այդ ընթացքում յօրինել է հայրենաբաղձ պանդխտութեան երգեր: Դրանցից մէկում էլ նա դարձեալ ի դէմս էջմիածնի դիմում է մայր հայրենիքին, ասելով·

Էջմիածի՛ն, ֆաղցրիկ անուն՝ շտեմարան շնորհաց,
Զորս յորդօրէն գերափայլես ի միտս ֆոյոց զաւակաց,
զաւակաց:

Ո՛հ, աւա՛ղ ինձ, որ ես միայն զրկիմ ի ֆոց խրախճանաց,
Ընկա՛լ, ո՛վ սուրբ էջմիածին, զխորդացեալ որդիս ֆոյ,
որդիս···

Նոցա ասեմ ես երանի, որ ֆան բազմեալ ի ծոց ֆոյ,
Ցորոց յետին ն է լաւ ֆան զիս, որ եմ ի էն արտաքոյ,
արտաքոյ:

Թող չիցէ ինձ բոլոր աշխարհ, որ առանց ֆեզ չէ պիտոյ·
Ընկա՛լ, մա՛յր իմ էջմիածին, զխորդացեալ որդիս ֆոյ,
որդիս···

Ինձ սեւ լինիցէր ժամըն այն, յորում ի ծոցոյդ ելի·
Եւ խաւարին խորհուրդըն այն, որ արար զիս խղճալի,
խղճալի:

Զլուսաճայցէր օրըն այն, յորում ես զֆեզ թողի·
Ընկա՛լ, մա՛յր իմ, զիս վերստին՝ զաարտուցեալ որդիս
ֆոյ, որդիս:

Մէկ այլ «կարօտանաց» երգում, Սիմէոն Երեւանցին իր մեծ գրական նախորդի՝ Գաղտասար Դպրի նման, իր՝ հայրենաբաղձ երգչի տխուր հոգեվիճակը ցուցադրել է վարդի համար տառապող սոխակի զուգահեռով, ըստ այդմ այլաբանօրէն արտայայտելով սեփական վիշտն ու տառապանքը: Սակայն բանաստեղծը, որ արքունացման կոչ է արել եւ հայրենեաց փրկութեան յոյսեր փայփայել, մէկ այլ տաղում՝ յորդորում է հայ պանդուխտին ի զուր լալով ու ողբալով չվատել ուժերը, արիանալ, թողնել «զանօգուտ խոկմունսն», եղրայանգելով, որ

... վայել է բազպիսեաց ի գտանել զելս իրաց,
եւ թէ իմին ոչ բաւիցէ, բողուլ յԱստուած:

Այսինքն՝ ժողովուրդն ինքը պիտի գտնի իր փրկութեան ելքը, ապաւինելով նաեւ ամենակարող Աստծուն: Սա է, ահա՛, բանաստեղծ Սիմէոն Երեւանցու քաղաքական հաւատամքը:

Գրիգոր Օշականցի

ԺԸ. դարի դասական քերթութեան խոշոր դէմքերից է նաեւ Գրիգոր Օշականցին (1757–1799)[6]: *Ինչպէս երեւում է մականունից, ծնուել է Օշական գիւղում, հիմնաւոր կրթութիւն է ստացել էջմիածնի դպրոցում, Սիմէոն Երեւանցու օրօք: Վերջինիս կողմից երիտասարդ հասակում ստացել է վարդապետական աստիճան, իսկ Ղուկաս Կաթողիկոսի օրօք արդէն կարգուել է արքեպիսկոպոս եւ որպէս նուիրակ, 1795–1799 թուականներին, շրջագայել է Հայաստանի տարբեր քաղաքներում: Այցելելով Կարինի, Բասենի, Եկեղեաց, Բաբերդի, Մուշի եւ այլ գաւառների եկեղեցիներն ու բերդերը, նա պատերի վրայ թողել է չափածոյ արձանագրութիւններ եւ հայրենի բնութեան ու հնութիւնների տպաւորութեան տակ՝ հիւսել հայրենասիրական բանաստեղծութիւններ: Իր շրջագայութիւնների ժամանակ նա հիւանդացել է ժանտախտով եւ 42 տարեկան հասակում վախճանուել է ու թաղուել Կարինում...*

Գրիգոր Օշականցին ինքը կազմել է իր երգերի ժողովածուն, «Ցաղարան վայելուչ եւ գեղեցիկ», եւ 1787 թուականին հրատարակութեան է պատրաստել էջմիածնի տպարանում: Սակայն գրքի տպագրութիւնն ինչ-ինչ պատճառներով չի իրագործուել: Իր «Ցաղարան»ը բանաստեղծը նուիրել է իր հայրենի գիւղում թաղուած «գերահռչակ մեծ իմաստուն» Մեսրոպ Մաշտոցին, որին համարել է իր չնորհատուն եւ ուղեցոյցը, որին դիմելով ասել է. «Լե՛ր ինձ ուղեկից յայսմ ճանապարհորդութեան, խօսեա՛ց յականջս ծառայի քո զօգտակարն եւ զպիտանին, մատակարարեա՛ ինձ զգինին ուրախարար՝ արբեցուցանելով ի քո իմաստս եւ զօրացո՛ զիս ընթացս ճանապարհիս այսորիկ»:

Եթէ Մեսրոպ Մաշտոցը Գրիգոր Օշականցու համար եղել է իմաստութեան ու բարեպաշտութեան առաջին մեծ ուսուցիչը, ապա քերթողական արուեստի մէջ նրա անմիջական ուղեցոյցը եղել է Պաղտասար Դպիրը: Վերջինիս նման՝ Օշականցին էլ թէ՛ կրօնական եւ թէ՛ հայրենասիրական մոտիւներն արծարծել է նաեւ այլաբանօրէն,

իր բառով ասած «խորհրդաբար», սիրերգութեան եւ վարդի ու սոխակի այլաբանութեան ձեւի մէջ: Ահա՛ մի տուն նրա մի կրօնական տաղից, որի խորագիրն է «Տաղ սիրոյ խորհրդաբար ոգեալ ի դիմաց Հարսին եկեղեցւոյ առ ամենամաքուր փեսայն Քիստոս»:

Գեղեցիկ ես, մերձաւոր իմ, յամենայնի գովելի,
Իմ աննման եւ անարատ ագնուագոյն սիրելի՛, սիրելի՛,
Խանդակաթ եմ ի սէր ձոյին՝ իմ միայնակ անճկալի·
Ձքեզ գովէ, ի՛մ աննման, իմաստունն հոգելի՛, հոգելի՛,
Ձնոյն եւ իմ ձեզ ընծայեալ երգարանեմ, նազելի՛, նազելի՛:

Պաղտասար Դպրի «Ի ննջմանէդ արքայական» եւ միւս այլաբանական տաղերից եկող «նազելի» փոխաբերութիւնը, որ նրա մօտ հայրենիքի ցուցիչն է, տուեալ այլաբանական տաղում՝ մատնանշում է Քրիստոսին: Օշականցու մէկ այլ տաղում էլ այդ փոխաբերութեամբ գովերգւում է հայ ժողովրդի լուսաբեր Գրիգոր Լուսաւորիչը·

Արթուն անուն՝ ցանկալի, նազելի,
Ազգիս Հայոց լուսաբեր···
Գրիգոր ազնիւ, նազելի՛, նազելի՛:

Նոյն այդ փոխաբերութիւնը լայնօրէն գործում է նաեւ բանաստեղծի այլաբանական-հայրենասիրական «կարօտանաց» տաղերում, ինչպէս·

Նետիւ հարայ անկարծակի,
Աւա՛ղ, աւա՛ղ,
Ձհետ ձոյին, նազելի՛,
Մինչ գալ կամէի:

Գնացք ոտից իմ կաղացան,
Աւա՛ղ, աւա՛ղ,
Եւ ես ի էն, նազելի՛,
Ցո՛յժ, յո՛յժ հեռացայ:

Ինձ բաց ի էն ո՛չ ոք ունիմ,
Աւա՛ղ, աւա՛ղ,
Ի սէր ձոյին, նազնլի՛,
Տապիմ եւ մաշիմ···

Մէկ ուրիշ տաղում, հայրենիքը ցուցաբերուած է նազելի Թռչնակի այլաբանական պատկերով, որի հանդէպ իր բուռն սէրն ու կարօտն է արտայայտում «սիրահարեալ» բանաստեղծը·

Արփիափայլ տիպ գեղեցիկ,
Իմ նազելի, պայծառ հաւի՛կ,
Վարդակարմիր պատկեր բաղցրիկ,
Երեւացո՛ զերեսս բո ինձ,
Որ փափագիմ:

Միւս տներում «Որ փափագիմ» վերջնատողին փոխարինում են, համապատասխանաբար, «Որ կարօտիմ», «Որ դեգերիմ», «Որ տագնապիմ», «Որ նուաղիմ» եւ «Որ մեռանիմ» տողերը, որոնք աստիճանաբար սաստկացնում են քերթուածի յուզական չեչտը: Ի դէպ, այս տաղը, իր իսկ՝ բանաստեղծի ծանուցմամբ, յօրինուած է Պաղտասար Դպրի «Իմ աննման յոյժ գովելի» երգի եղանակով, այլեւ որոշակի ազդեցութեամբ: Դա Պաղտասար Դպրի «Հոգեւոր սիրոյ», այն է՝ այլաբանական-հայրենասիրական եւ այսպէս ասած՝ «արքունացուսմի» յայտնի երգերից է, ուստի եւ Գրիգոր Օշականցու խնդրոյ առարկայ տաղը եւս՝ իսկապէս հայրենասիրական-այլաբանական երգ է եւ ո՛չ թէ սովորական սիրերգ, ինչպէս դիտուել է մինչեւ այժմ:

Պաղտասար Դպրի մէկ այլ նշանաւոր այլաբանական-հայրենասիրական տաղի՝ «Ձիս քո սիրոյն, ո՛վ նազելի» եղանակով՝ Գրիգոր Օշականցին գրել է իր «Գոչեմ, ողբամ, միշտ հառաչեմ» երգը: Օտարութեան մէջ՝ թշուառ պանդուխտը վշտաշարշար տառապում է «անկեալ ի մահճի» եւ ամէն ինչից զրկուած՝ «ջրոյ անգամ կարօտի»: Ջունի նա «մխիթար, խնամող եւ օգնական»: Նրան կողոպտում ու ծեծում են աւազակները, իսկ տեսնողներն անցնում են անտարբեր: Եւ նա, ասես մահուան մահճից՝ տենչում ու կանչում է իր նազելի հայրենիքին, որպէս խնամածու հարազատի.

Գոչեմ, ողբամ, միշտ հառաչեմ,
Զօրն ողջոյն, գիշերն ողջոյն,
Ի խոր խոցեալ աղեկիզիմ
Ի սէր իմոյ սիրելւոյն, սիրելւոյն:
Իբրեւ նետիւ վիրաւորեալ
Վշտանամ ես ի ցաւոյն,
Ո՛հ, ո՞վ փութայր առ անձկալին,
Ագդէր նմա ողբալով, ողբալով,
Ո՛հ, ո՞վ փութայր առ սիրելին,
Կոչէր զնա գալ առ իս, գալ առ իս:

Բենական սիրով լցեալ
Սիրելի՛դ իմ բաղցրագոյն,
Զայս աղէտ մինչ լուիցես,

Փութա՛ առ իս կանխագոյն, կանխագոյն,
Թերեւս մինչչեւ մեռեալ իցեմ,
Եղէց արժան ցոյդ տեսոյն,
Ո՛հ, ո՞վ փութայր առ տարփալիս,
Պատմէր զինէն ողբալով, ողբալով,
Ո՛հ, ո՞վ փութայր առ սիրելիս,
Կոչէր զնա՝ գալ առ իս, գալ առ իս:

Ըստ երեւոյթին, մահուան գաղափարը միշտ հետապնդել է բանաստեղծին, որն ասես կանխագուշակել է իր վաղաժամ վախճանը: «Ահա՛, այսօր կոչէ զքեզ կոչնատէրն, կոչնատէրն, կոչնատէրն», տագնապած բացականչում է նա իր տաղերից մէկում: Թերեւս իր անբուժելի հիւանդութեան ժամանակ է Օշականցին գրել այն տաղը, որտեղ պատկերացրել է իր մօտալուտ մահը, սարսափելով այդ մտապատկերից.

Օրհաս մահուն յանկարծակի ինձ հասեալ,
Անձն իմ դողայ եւ սարսափի գարհուրեալ,
Աւա՛ղ հիմոյս, որ ի մահին կամ անկեալ
Եւ ի դուռն դառն մահու ժամանեալ:

Շողայ արդէն ի վերայ իմ աւասիկ
Հրաման էին սուր երկսայրի պողվատիկ,
Բառնի այսօր արեւ կենացս իմ բաղցրիկ,
Եւ բայբայի կերտուած մարմնոյս գեղեցիկ:

Նշանաւոր է Գրիգոր Օշականցու ողբը՝ նուիրուած Անի քաղաքին: Ինչպէս իմանում ենք ողբի ծանուցում-խորագրից, իր շրջագայութիւնների ժամանակ բանաստեղծը եղել է նաեւ Անիի աւերակներում, քայլել աւեր պարիսպների լայնքով ու երկայնքով: Եւ դիտելով երբեմնի չէն ու չքեղ ապարանքների ու տաճարների աւերակները, արտասուելով գրել է այդ ողբը: Այստեղ բանաստեղծը պատկերել է Հայոց համբաւաւոր մայրաքաղաքը, որպէս հայկական երբեմնի հզօր պետականութեան պատուար.

Համայն ազանց դու գովելի, բաղաքդ Անի՛ պանծացեալ,
Ասպնջական թագաւորաց եւ զօրաց՝ արդ մեռնացեալ,
Իրրեւ այրի լքեալ, թողեալ, կոխան ոտից ընկեցեալ:
Բնակիչք քոյ աշխարհ օտար հեռացան,
Աւա՛ղ, տարագիր, տարագիր, ո՛հ:

Այրիացած Անին մի ժամանակ «զայեկաբար» սնուցել է իր որդիներին «զգուանօք», որից եւ չար նախանձով լցուած՝ «նետողաց

ազգը» զօրագումար յարձակուել է նրա վրայ, խորտակել նրա «զգեղեցիկ եւ զբարձրաբերձ» պարիսպները, «զհոյակապ եւ զգմբէթեայ» շինութիւնները: Այնուհետեւ՝

Օտարածայն գոչիւն զօրաց խուժադուժ մինչ բարձրացան,
Ձայն գուսանաց եւ նուագաց որդւոց Ֆոց ի սուգ դարձան,
Եւ օրհնութիւնք ժամերգութեանց յեկեղեցեայց լռեցան,
Բնակիչք Ֆո յաշխարհ օտար հեռացան,
Աւա՛ղ, տարագիր, տարագիր, ո՛հ:
Ղամպարազարդ գահաւորակք եւ տաճարք Ֆո մանկալիցք,
Ցորս վեհագինք եւ պայազատք էին ճոխք եւ հացալիցք,
Այժմ անասունք տեղակալեալ շրջանին ի բեզ խաղցալիցք,
Բնակիչք Ֆո յաշխարհ օտար հեռացան,
Աւա՛ղ, տարագիր, տարագիր, ո՛հ:

Ցայտնի է, որ Ներսէս Շնորհալին իր նշանաւոր «Ողբ եդեսիոյ» պոէմում մի քանի տողով անդրադարձել է Անիին: Մարտիրոս Ղրիմեցին էլ (ԺԷ· դար) իր «Պատմութիւն Ղրիմայ երկրի» չափածոյ երկում՝ մի քառատող է ձօնել Հայոց պանծալի մայրաքաղաքին: Մինչդեռ Գրիգոր Օշականցին, որքան մեզ յայտնի է, առաջի՛նն է, որ ամբողջական բանաստեղծութիւն է ձօնել Անիին:

Նշանաւոր է նաեւ Գրիգոր Օշականցու քառերգը՝ նուիրուած տարուայ չորս եղանակներին: Նա ներկայացրել է բնութեան չորս պատկերներ, որոնք սակայն ընդհանրական բնապատկերներ չեն, այլ արտացոլում են Արարատեան երկրի բնաշխարհը, որը մարմնաւորում է հայրենիքի գաղափարը: Պատկերուող տարուայ եղանակներն էլ ունեն նաեւ մի ներքին այլաբանական իմաստ, որ արտայայտում է հայրենիքի պատմական տարափոփոխ ճակատագիրը:

Առաջին տաղում պատկերուում է գարունը, որ նաեւ Հայաստանի երանելի անցեալի խորհրդանիշն է: Ահա՛ փթթում են Հայոց բնաշխարհի ծառերն ու ծաղիկները, ուրախ յանկերգում են հազարաւոր հաւքերը·

Բամեալ կաֆաւ եւ արագիլ համածայն, համածայն
Կարկաչելով եղանակեն միածայն, միածայն,
Յոպոպ բեկբեկ ղօղանջելով տարածայն, տարածայն,
Զգալուստ գարնան մեզ գուշակէ·
Արի՛ Ֆ, եղբա՛րք, եւցուք այսօր յայգեստան, յայգեստան:

Սա ամենից առաջ, անշուշտ, բնութեան կենդանի պատկեր է, բնութեան գարթօնքի նկարագրութեան եւ ստեղծագործ աշխատանքի

լծուելու կոչ: Երկրորդ տաղում արդէն, որ նուիրուած է ամրան եղանակին, պատկերւում է այդ ստեղծագործ աշխատանքը եւ նրա բարերար արդիւնքը·

Ահաւասիկ վարձմ մշակաց
Եւ երկմ բտանց երկրագործաց
Եւ տոհմականմ անդաստանաց
Լցաւ յաշխարհ համատարած:

Գերանդազէն համայն եղեալ,
Մշակմ անդոց գան ժողովեալ,
Զի արտորայմ սպիտակեալ,
Կան աւադիկ ի հունձս հասեալ:

Որմ մշակեն զայգիս բտամբմ
Եւ զջրարբի պարտէզ երկամբմ,
Դարձեալ ի տուն բարձեալ բեռամբմ,
Ոմանմ իշով, ոմանմ եզամբմ:

Սա կարելի է ընկալել նաեւ որպէս աշխատանքային երգ, որի վրայ մենք նկատում ենք Նաղաշ Յովնաթանի որոշ ազդեցութիւնը: Ի դէպ, Գրիգոր Օշականցու տաղերի հրատարակիչ Ց. Ոսկեանը եւս Յովնաթանի ազդեցութիւնն է նկատել նախորդ տաղի վրայ: Ասենք նաեւ, որ ամրան եղանակին ձօնուած այս տաղն էլ թերեւս ունի որոշ ներքին այլաբանական իմաստ: Այն արտացոլում է հայ ժողովրդի խաղաղ ստեղծագործ աշխատանքը, նիւթական ու հոգեւոր բարիքներ ստեղծելու նրա կամքն ու եռանդը: Եւ գարնանն ու ամրանը ստեղծուած այդ բարիքները ոչնչանում, հոդմահարւում են աշնանն ու ձմրանը: Ահա՛ ցրտաշունչ աշունը·

Զօրեղ փչումն ուժգին հողմոյ
Եկն ի լերանցն հիւսիսոյ,
Հարան համայն ծառմ ի տապոյ,
Ո՛հ, իցէ՞ արդեօմ, ո՛հ, իցէ՞ արդեօմ
Ծաղկիլ սոցա վերստին:

Ձմրանը նուիրուած երգը՝ բանաստեղծը վերնագրել է «Տաղ աղէտական»: Երգի իւրաքանչիւր տուն աւարտւում է «Մարսափմամբ սասանի անձն իմ վշտացեալ» տողով: Առհասարակ, այս քառերգի մէջ բանաստեղծը, բնապատկերները գծագրելիս, յաճախ արտայայտել է նաեւ իր անձնական վերաբերմունքը, որպէս կոչ, տագնապ, թախիծ կամ սարսափ: Հայոց աշխարհի հովիտներն ու

առապարները ծածկուել են ձիւնով, գօսացել են ծառերն ու բոյսերը: կենդանի գոյներով պատկերուած այդ ձմեռը նաեւ խորհրդանշում է Հայաստանի աղէտալի ներկան: Ահա՛ վերջինիս խորհրդանիշ՝ Արագած եւ Արարատ թագուհի-լեռները անհուն սգի մէջ, տխրահայեաց դուստր եւ նաժիշտ-լեռներով շրջապատուած.

Գեղեցիկ Արագած ծաղկափայլ լերինն
Երեսք սքօղեցեալ ծածկութիւ ծածկին,
Նուրջանակի անձամբ մառախուղ ձգին,
Սարսափմամբ սասանի անձն իմ վշտացեալ:

Բամեալ լերինք համայնք դստերք դշխոյին
Նուրջանակի զնովաւ պատեալ պարսպին,
Անգարդ, անշուք դիմօք դէպ ի նա հային.
Սարսափմամբ սասանի անձն իմ վշտացեալ:

Ի գուես անկեալ յերկիր Արայն աղախին
Վերահայելով միշտ առ իւր իսկուհին,
Բողոք բարձեալ գոչէ յամպոց մթագին.
Սարսափմամբ սասանի անձն իմ վշտացեալ:

Գերագոյն պանծալի լերանց թագուհին,
Նստարան եւ տեղին Նոյեան տապանին,
Երեւի ձիւնազգաց յոյժ ամենեւին,
Սարսափմամբ սասանի անձն իմ վշտացեալ...

Զափազանց յուզիչ եւ իսկապէս սարսափազդու է Հայոց լեռների այս համընդհանուր ողբը, որ նման է վիթխարի հողմի ձիւնաբեր գոչման, որից ցաւագնօրէն բեկւում է բանաստեղծի սիրտը, «գուշակելով զտագնապ աւուրն ահեղին»: Սակայն Օշականցին էլ, որ մեր ամենաթախծոտ բանաստեղծներից է, յոռետես չէ եւ հաւատում է Տիրոջից. «Դարձո՛ ի մեզ գարուն՝ բնութեանց նորոգիչ»: Այսինքն՝ նա եւս հաւատացել է երկնաւորից հայ ազգի փրկութիւնը, եւ եթէ հաւատացել է, ուրեմն նաեւ հաւատացել է այդ փրկութեանը...

Յովհաննէս Կարնեցի

Գրիգոր Օշականցին, որպէս բանաստեղծ, մեծ համբաւ է ունեցել իր ժամանակին, եւ նրա վարքագիր Յովհաննէս Կարնեցին, անշուշտ որոշակի չափազանցութեամբ, բայց միանգամայն անկեղծո-

ըէն, այսպէս է բնութագրել նրան. «Ցօրինիչ գեղեցիկ երգոց եւ տաղից, չարաղրող իմաստալից ոտանաւորաց, վասն որոյ կարելի է եւ չէ յանդգնութիւն ասել նմա նորայայտ Շնորհալի եւ կոչել զնա երկրորդ Նարեկացի»:

ԺԸ. Դարը եզրափակող շնորհալի բանաստեղծներից է նաեւ ինքը՝ Գրիգոր Օշականցու վարքագիր Ցովհաննէս Կարնեցին (Նոտար, Հաննա), որը ստեղծագործել է 1770-ական թուականների սկզբից մինչեւ 1820-ական թուականների սկիզբը: Եղել է նշանաւոր մանկավարժ եւ գրիչ: Հեղինակել է վիպական ու քնարական բնոյթի չափածոյ երկեր[7]: Վիպական երկերից մի քանիսը չափածոյ վկայաբանութիւններ ու վկայաբանական տաղեր են, մէկը՝ Կարինի սովը (1813) պատկերող մի պատմական ողբ: Դրանց գրապատմական հիմնական արժէքն այն է, որ այդ երկերը եզրափակում են միջնադարեան վկայաբանական գրականութիւնը եւ հարում նոր շրջանի էպիկական պոէմի ժանրին: Դրանք որոշ արժէք են ներկայացնում նաեւ այնու, որ վերարտադրում են ժամանակի արեւմտահայութեան կեանքի պատկերը: «Մըսըր կոչեցեալ Սահակ մանկանը» նուիրուած վկայաբանական պոէմում, օրինակ, բանաստեղծն այսպէս է բնութագրել իր ապրած «զաժանեալ դարը».

Համայնի առ միմեանս թշնամիի եղեալ,
Ի'անհնազանդութեամբ զիրեարս ոխացեալ,
Ընկերն առ ընկերն ննջգիւ մախացեալ,
Եղբայրն ընդ եղբօրն իրր օտար զինեալ:

Նաեւ արուեստ իսկ են խարդախեցեալ,
Կերտիչ եւ կերտուածծ բոլորն են կեղծեալ,
Ի յաոս եւ տուրս սուտն բազմացեալ,
Ժիրն հազիւ ապրեալ, խեղճն անճարացեալ:

Եթէ Ցովհաննէս Կարնեցու պոէմները բանաստեղծական կատարման առումով առանձնապէս աչքի չեն ընկնում, ապա նրա քնարական երգերը այդ առումով բաւական շահեկան են: Նրա շուրջ 130 երգերի գերակշիռ մասը ունի սիրային բովանդակութիւն:

Կարնեցու գրական ուսուցիչն էլ եղել է Պաղտասար Դպիրը, որի հետեւութեամբ նա իր սիրային երգերին հաղորդել է որոշ այլաբանական իմաստ, ծանուցելով, թէ դրանք «եթէ հոգեւոր սիրոյ դիտմամբ ասասցի՝ ո՛չ վրիպի, զի մի է ճշմարիտ սէրն»: Ժեւոր է ասել, թէ Ցովհաննէս Կարնեցին իր սիրային տաղերում այլաբանօրէն արտայայտե՞լ է նաեւ հայրենասիրական զգացումներ: Ցամենայն դէպս՝ Պաղտասար Դպրի համանման երգերի ոգու, ոճի ու պատկերների ազ-

գեցուքիւնը որոշակի է այդ տաղերում: Նագելի հայրենիքին ուղղուած արձնացումի երգ կարելի է համարել նրա տաղերից մէկը, որտեղ կարդում ենք.

Ի ստիպմանէ սիրոյ ֆոյին, գեղեցիկ սէ՛ր իմ, սէ՛ր իմ,
Ի խնդիր ֆոյ ելեալ շրջիմ, նագելի՛, ելեալ շրջիմ.
Ի սար, ի ձոր միշտ վարանիմ, ո՛վ սիրասուն իմ...
Զարքի՛ր, սէ՛ր իմ, զարքի՛ր, եհաս առաւօտ,
Նագելի՛, արեւածագն է մօտ:

Կարնեցու սիրային տաղերի մեծ մասն, անշուշտ, ընկալւում է որպէս աշխարհիկ սիրերգութիւն: Դրանք գրուած են ժողովրդական եւ աշուղական երգերի որոշ բանաստեղծական յատկանիշների օգտագործմամբ, պարզ ու մեկին ոճով: Այս քնարերգուն Պաղտասար Դպրի գրական դպրոցի վերջին չնորհալի ներկայացուցիչն է եւ առհասարակ միջնադարի դասական քերթուքիւնը եզրափակող դէմքերից մէկը:

• Ընդհանուր առմամբ, միջնադարի հայ քնարերգութիւնը եզրափակող խոշորագոյն դէմքը, անտարակոյս, մնում է Սայաթ-Նովան, որին կ'անդրադառնանք ստորեւ, դիտելով նրան՝ ժողովրդագուսանական կամ աշուղական եւ դասական բանաստեղծութեան միասնութեան մէջ:

Անհրաժեշտ է նշել նաեւ, որ ԺԸ. դարի վերջերին՝ գրական ասպարէզ են իջել նաեւ առաջին Մխիթարեան բանաստեղծները (Ղուկաս Ինճիճեան, Գաբրիէլ Աւետիքեան, Մանուէլ Ջախջախեան), որոնք նախ եւ առաջ խոշոր գիտնական-հայագէտներ էին: Այդ բանաստեղծների գրական ժառանգութեամբ էլ սկիզբ է առնում հայկական կլասիցիստական պոէզիան, որն արդէն հայ նոր գրականութեան երեւոյթ էր եւ դուրս է միջնադարի եւ մեր ուսումնասիրութեան շրջանակներից: Նոյն պատճառաբանութեամբ, այստեղ չենք անդրադառնում նաեւ դարավերջին հնդկահայ գաղութում հանդէս եկած բանաստեղծներին (Յակոբ Շահամիրեան, Թադէոս Ջուղայեցի Սոգինեանց), որոնք սկզբնաւորեցին հայ նոր քաղաքական, լուսաւորական պոէզիան:

ԱՇՈՒՂԱԿԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Ազգային դասական բանաստեղծութեանը զուգահեռ եւ երբեմն գերկընդհանուր, ԺԸ. դարում վերելք է ապրում նաեւ աշուղական քնարերգութիւնը, որ կազմաւորուել ու սկսել էր ծաւալուել արդէն նախորդ հարիւրամեակից: Աշուղական բանաստեղծութիւնը, չնայած

իր որոշակի կաղապարայնութեան, մի չարք չնորհաշատ աչուղների չնորհիւ՝ կարողանում է առաւել լայնօրէն ընդգրկել իրականութիւնը, արտացոլել ժողովրդի յոյզերը, կատարել հասարակական ուսուցչի ու խրատատուի իր պատմական առաքելութիւնը:

Բաղեր-Օղլի Ղազար

Դեռեւս ԺԷ. դարի կէսերին հանդէս եկած անուանի աչուղներ Ղուլ Էգազն ու Ղուլ Արզունին, որոնք հիմնադրել էին նոր Ջուղայի աչուղական դպրոցը, չարունակում են ստեղծագործել նաեւ ԺԸ. դարի առաջին տասնամեակներին: Նրանց կողքին հրապարակ են իջնում այդ դպրոցի նորանոր չնորհալի աչուղներ, որոնց մէջ ամենանշանաւորն է Բաղեր-Օղլի Ղազարը՝ ծնուած 1690–1700-ական թուականների միջեւ, նոր Ջուղայում: Նա, ըստ երեւոյթին, հիմնաւոր կրթութիւն չի ստացել. զբաղուել է գզրարութեամբ: Տեսել ու կրել է բոլոր այն տառապանքները, որոնց ենթարկուել է հայութիւնը 1743–1748 թուականների ընթացքում՝ Նադիր-Շահի ու նրա յետնորդների դաժան քաղաքականութեան հետեւանքով: Այդ ժամանակաշրջանում ծաւալուած քաղաքական իրադարձութիւնները նա կարողացել է իւրովի վերարտադրել իր «դաստան»ներում. «Ախաղ հարստահարութեան Նադէր Շահի», «Ախաղ թուին ՃԼԱ», «Ախաղ վասն աւերածոյ Ջուղայու», «Ախաղ վասն Նադէր Շահի սպանման», «Ախաղ վասն նեղութեան Ջուղայու» (Տես «Հայ աչուղներ», Երեւան, 1961, էջ 104–141): 1740-ական թուականների սկզբին, երբ Նադիր-Շահը արդէն մեծ աւարով վերադարձել էր Հնդկաստանից, նուաճել Միջին Ասիան եւ պատժիչ արշաւանքի ելել դէպի Դաղստան, նոր թափով վերսկսուեց բնակչութեան ընդհանուր աչխարհագիրը եւ հարկման ենթակայ տնտեսութիւնների հաչուառումը ամբողջ երկրում: Ըստ աղբիւրների, հարկերի գանձումը կատարուում էր բազմապատիկ չափերով: Այդ կործանարար հարկահանութեան մասին վկայել է նաեւ Բաղեր-Օղլին, գրելով.

Աստուա՛ծ, դու մեզ մին ճար արայ,
Շահը թամամ աշխարհ ա ուզում.
Երկիր բանդում վարայ, վարայ,
Ողջ ղզար, ղզար ա ուզում...
Չի կշտացել Հնդստանայ,
Նոր լալ ու գոհար ա ուզում...
Բշխում երեք տարուայ մալն.
Տասն էդչանիք թօմար ա ուզում:

Շահի հարկապահանջները սպաննում են դիմադրողներին, գերեվարում, «ամէն գեղից մի ղուլ տանում»: Բռնակալը չի խնայում ո՛չ իր ժողովրդին («Ուր ազգին չքաղեց հալ ու աղբաթ») եւ ո՛չ էլ յատկապէս իր այլազգի հպատակներին («Ջահիր ա թուրք, խայ, ջխուդըն»): Եւ աչուղը ողջ կեղեքուող ժողովրդի անունից, նրա լեզուով ու անկեղծութեամբ բողոքում է ընդդէմ անողոք շահի.

Դարբէդար աւնում ա գերի,
էդ ի՞նչ ծէս ա թագաւորի···

Աչուղի բողոքի ձայնն աւելի է սաստկանում միւս «դաստան»ում, ուր նա բռնակալին բացայայտօրէն կոչում է «չուն Նադըր»: Այդ «դաստան»ը գրուած է 1746 թուականին, երբ Նադիր-Շահը առանց յաջողութեան աւարտում է թուրքերի դէմ սկսած պատերազմը եւ առաւել ուժեղացնում ժողովրդի կեղեքումը: Հեղինակն այստեղ կարեւոր տեղեկութիւններ ու որոշ մանրամասներ է հաղորդում ժամանակի տնտեսական կեանքի մասին, վերարտադրելով ժողովրդի ծանր կացութիւնը.

Սուլուկ կերաւնք, ընդուր մեր շունչն պարզեց,
Շատ մարդ մեռաւ՝ շունն կերաւ, չթաղուեց,
Տէրտէրանին փախաւ՝ մուղդուսին կախուեց,
Դադ կանչեց Գաբրէլ, Մուհէլ հրեշտակն:

Դադ կանչեց, թամամ աշխարհս սուգ բռնեց ազայ,
Համ խալխի տկլորում ա, համ տալման ջազայ,
Տասն, բսան մուստարաթն նոր բացել ա թազայ,
Դաո կիսատ ա, չեմ կարկատել միւն ծակն:

Ցաջորդ խաղում այդ աղէտալի կեղեքումները յիշատակւում են Նոր Ջուղայի աւերածութեան նկարագրութեամբ: Դեռեւս առաջին «դաստան»ում, աչուղը փորձելով գտնել փրկութեան ճանապարհ, միջնադարեան մեր շատ քնարերգուների նման, այն ակնկալել է երկնաւորից: Ջուղայի աւերածութիւնը պատկերող խաղն էլ ամբողջութեամբ Աստծուն ուղղուած աղերս-յորդոր է, որպէսզի կրկին վերակենդանանայ Հայոց վաճառաշահ քաղաքը, որպէսզի «մենք ուրախութեամբ գոնք նստենք մէջլիս»:

Տարիներ առաջ (1730թ.) Բաղեր-Օղլին ինքը մի ծաւալուն ներքողական տաղ էր նուիրել Նոր Ջուղային, որի տէրն այն ժամանակ մեծահամբաւ Սահակ Փալանթարն էր: Զարգացած արհեստագործութեան ու միջազգային առեւտրի չնորհիւ հարստացած հայաքաղաքը լի էր, փարթամ ու չէն.

Արհեստով միջի մարդ՝ խոնարհով ան շատ,
Բսանչորս եկեղեցի, վանքն եւ անապատ,
Տէրտէր ու վարդապետ կանգնել հադրեհադ,
Նրանց ժամ պատարագն ըլնի եարն Զուղու:

Սովդագարն բանի կայ, դուս գոն նաւերն,
Կուշտացնի fon ու անգալ կաղերն,
Գարունք լուսանայ, խոտ գոյ բաղերն,
Բացուեն ծաղկունքն գօլչարն Զուղու:

Եւ ահա՛, 15–16 տարի անց՝ ներքոզագիր աշուղը ստիպուած է եղել դառնալու ողբագիր, գրելու տաղեր «վասն աւերածոյ» եւ «վասն նեղութեան Զուղու»: Անտէր-անտիրական է մնացել արդէն երբեմնի մեծահարուստ Զուղան («Զուղուս մին տէր չունենք դըլ-սուզ») եւ այնքա՛ն է աղքատացել, որ քաղաքի երեխաները փողոցներն ընկած ծախու քար են փնտռում: Իր կենսախնդութիւնը չկորցրած ա-շուղը՝ հայրենի քաղաքի թշուառութիւնը ձգտել է պատկերել որոշ հումորով.

Քանի լուրջ անք՝ բար կ'ծախենք,
Երբ կ'էֆովնանք՝ կ'փախնենք,
Մենք դառ պէտ ա Զուղա պահենք,
Զուղու մին սահարբար չըկայ:

Բաղեր-Օղլու մեզ յայտնի սիրային ու խրատական տաղերում, խիստ նուազ է հեղինակի անհատական կնիքը՝ թէ՛ գեղարուեստական կատարման եւ թէ՛ արտայայտուած խոհերի ու զգացմունքների առումով: Մանաւանդ, երբ դրանք դիտում ենք ճիշդ նոյն այդ ժամանակ ասպարէզ իջած եւ իբրեւ աշուղ ստեղծագործող Սայաթ-Նովայի համանման խաղերի կողքին: Քիչ թէ չատ ինքնատիպ տողերի հանդիպում ենք Բաղեր-Օղլու «Լզքան գեղեցկութիւն հօսն ու սաֆաքն» սկսուածքով սիրերգում.

Աչէդ արեգական, լուսնի սասանի,
Լուսնակը շաւիդդ տեսնի փաս անի...
Քրտունքդ անմահական ջուր ասեմ գուլաբ,
Դրախտի շօրն ամէն բեզ է՞ր ետ Աստուած:

Այսուհանդերձ, իր խաղերով ու «դաստան»ներով Բաղեր-Օղլին ժամանակին մեծ դեր է խաղացել յատկապէս պարսկահայութեան կեանքում, արծարծելով աշուղական կաղապարների մէջ հանդէս եկող հազարամեայ հայ ժողովրդա-գուսանական երգը:

• *Այս կամ այն չափով, նոյն դերն են կատարել նաեւ նոր Ջուղայի միւս չնորհալի աշուղները՝ Ամիր-Օղլին, Աբդին-Օղլի Հայրապետը, Ղուլ Յովհաննէսը, Յարթուն-Օղլին եւ ուրիշներ: Նրանք իրենց նախորդ աշուղների համեմատ բաւական ընդլայնեցին աշուղական երգերի թեմատիկան եւ բանարուեստը, յօրինեցին աշխարհիկ ու կրօնական բովանդակութեան երգեր, նկարագրեցին հասարակական աղէտները ու արհաւիրքները, զանազան հակադրութիւններով արծարծեցին հոգու եւ մարմնի աւանդական վէճը, պարսաւեցին ու ներբողեցին, արտայայտեցին հայ պանդուխտի տուայտանքները, իրենց ամենատարբեր հոգեվիճակները, խոհերն ու խրատները...*

Նոյնպիսի երգերով հանդէս եկան նաեւ Թիֆլիսի, Կ. Պոլսի եւ միւս վայրերի հայ աշուղները: Թիֆլիսի առաջին աշուղներից է եղել Դոստին, որի մի քանի թուրքերէն խաղերի վերնագրերը յիշատակել է Սայաթ-Նովան: Մինչդեռ Թիֆլիսի մեզ յայտնի առաջին հայագիր աշուղը ինքը՝ Սայաթ-Նովան է, որին եւ պէտք է համարել Թիֆլիսահայ աշուղական դպրոցի հիմնադիրը: Մեծանուն աշուղը, որ նաեւ խոշոր բանաստեղծական անհատականութիւն էր, մեծ ազդեցութիւն է ունեցել Թիֆլիսահայ գրեթէ բոլոր աշուղների վրայ, որոնցից ԺԸ. դարում քիչ թէ չատ աչքի են ընկել Շամչի Մելքոն, Քիչիք-Նովան, Բուդաղ-Օղլանը, Ֆրեյդունը: Վերջիններիս մէջ էլ չահեկանօրէն տարբերւում է Շամչի Մելքոն, որը Սայաթ-Նովայի նման ստեղծագործել է երեք լեզուով (հայերէն, վրացերէն, թուրքերէն): Նշանաւոր է յատկապէս նրա այն «դաստան»ը, ուր նկարագրւում է 1795 թուականին Աղա-Մահմադ շահի կողմից Թիֆլիսի աւերումը («Հայ աշուղներ», էջ 296–300): Աշուղն ինքը եղել է այդ աղէտի ականատեսը եւ պաշտպանական կռիւների մասնակից, ուստի եւ նրա խաղն ունի հաւաստի սկզբնաղիւրի արժէք: Ահա՛ թէ ինչպէս է նա գծագրել Թիֆլիսի առման եւ աւերման պատկերը.

Քաղաքը, որ ներս էկաւ հարիւր հազար զգլբաշը,
Մէկ մէկումէն չոգեցին ողջ մէտի ոհում դարդաշը,
Քահանաներուն շունն էր ուտում, ոչ միսը չմտաւ նաշը,
Գիտի պէս արիւն էր գնում, բօստան էր աթմորթու լաշը,
Որդին մօրիցն էին խլում, էր սուգ ու շիվան քաղաքիս:

Աշուղն, անշուշտ, հայրենի քաղաքի կործանումը չէր կարող սառն ու անտարբեր գրչով պատկերել, ուստի եւ միաժամանակ ար-

տայայտել է նաեւ իր ցաւը, ափսոսանքը եւ զայրոյթը: Ահա թէ ինչ երանութեամբ է նա յիշում երբեմնի չէն մայրաքաղաքը, մի քանի տողով վերակենդանացնելով հին կենսուրախ Թիֆլիսը.

Ո՞ւր ին բաղի ջոգած տղերքն, որ դաստերով ման գուբէին,
Մէկ մէկուն աղպեր ասելով, տէ՛ս ինչ սէրով ման գուբէին,
Քէֆխուդա աղայ մարդիքը շախշուրներով ման գուբէին,
Ով որ կարողութիւն ուներ նոխարներով ման գուբէին,
Նրանցմէն մէկն էլ չիմ տեսնում հիմի մէ նշան բաղաբիս:

Սայաթ-Նովա (*)

ԺԸ. դարի հայ բանաստեղծութեան մէջ մի խիստ ինքնատիպ երեւոյթ է Սայաթ-Նովան (1722–1795): Նրա մկրտութեան անունը եղել է Արութին (Յարութիւն): Մնուել է Թիֆլիսում: Նրա հայրը՝ մահտեսի Կարապետը (Ծագումով՝ ադանացի), Հալէպից գաղթել է Թիֆլիս եւ այստեղ ամուսնացել հալաբարցի Սառայի հետ (Ծագումով՝ սանահնեցի): Պատանի Արութինը սովորել է ջուլհակութիւն եւ արդէն տասնչորս տարեկան հասակում եղել է հմուտ արհեստագործ: Նա մանուկ հասակից կապուել է նաեւ երգ-երաժշտութեանը, սովորել է նուագել մի քանի լարային գործիքներ: Ապագայ բանաստեղծի նախնական կրթութիւնն, ըստ երեւոյթին, սահմանափակուել է գրաճանաչութեամբ եւ այն տարրական գիտելիքների իւրացմամբ, որ կիսաճոխ (գլէխի) պատանին կարող էր ստանալ ընտանիքում կամ այն ժամանակուայ Թիֆլիսի հայոց դպրատներից մէկում: Հետագայում նա իր իմացութիւնները խորացրել է հիմնականում ինքնակրթութեամբ, իսկ երբ արդէն նուիրուել է աշուղական արուեստին, համապատասխան գիտելիքներ ու փորձ է ձեռք բերել իր վարպետ-ուսուցչից: Մի բան որոշակի է, որ Սայաթ-Նովան իմացել է երեք այբուբեն (հայկական, վրացական, արաբական) եւ տիրապետել առնուազն չորս լեզուի (հայերէն, վրացերէն, պարսկերէն, թուրքերէն):

Որոշ տուեալների հիման վրայ ենթադրւում է, որ Արութինը պատանի հասակում գերի է տարուել եւ մինչեւ տասնինը տարեկան հասակը՝ դեգերել է Արեւելքի որոշ երկրներում: Գերեվարութեան նման դէպքերը սովորական էին աւարառու ցեղերի կողմից պարբերաբար ասպատակուող Քարթլիի տարածքում. այս մասին վկայում են հայ եւ վրացական աղբիւրները: Ենթադրւում է նաեւ, որ գերի տարուած Արութինը, ըստ երեւոյթին, որպէս երգի-նուագածու, մասնակցել է Նադիր-Շահի հնդկական արշաւանքին (1738–1739

(*) Սայաթ Նովայէն մէջբերուած տաղերուն բովանդակութիւնն ու ուղղագրութիւնը պահպանած ենք հեղինակին ձեռագրին համաձայն (Հ. Հ.):

թթ.)։ Դրանից մէկ-երկու տարի անց, Արութինը փրկագնուել է արքայազն Հերակլի կողմից եւ ընդունուել է վրացական արքունիք որպէս երգիչ-երաժիշտ։ Այստեղ էլ հենց քսանամեայ երգիչը սիրահարուել է Հերակլի քոյր Աննա Բատոնիշվիլուն, եւ սկսել ստեղծագործել նախ վրացերէն ու թրքերէն՝ ընտրելով Սայաթ-Նովա (Սայադի թոռ) աշուղական մականունը։

Մինչեւ երեսուն տարեկան հասակը՝ Սայաթ-Նովան ուսանել եւ հմտացել է իր բարդ արուեստի մէջ եւ արդէն երեսուն տարեկան հասակում, ըստ ընդունուած կարգի, դարձել է վարպետ աշուղ՝ մասնակցելով մրցավէճերին։ Դա հանգուցային շրջան էր բանաստեղծի կեանքում. այս ժամանակն է, որ նա սկսել է ստեղծագործել նաեւ մայրենի լեզուով։ Նոյն այս ժամանակ՝ հանգամանքների բերումով, բանաստեղծի սէրը ողբերգական ընթացք է ստացել, եւ դա նպաստել է երգչի մի շարք գլուխգործոցների երեւան գալուն։

Լինելով Հերակլ Բ. թագաւորի հովանաւորեալը, Սայաթ-Նովան որոշ մասնակցութիւն է ունեցել վրաց միապետի ծաւալած պետական գործունէութեանը, իր երգիծական-պարսաւական սուր խօսքով՝ վաստակելով հոգեւոր ու թագաւորական դասի որոշ ներկայացուցիչների թշնամանքը։ Վերջիններս նշաւակ դարձնելով երգչի յանդուգն սէրը արքայադրոջ հանդէպ, ամբաստանել ու վարկաբեկել են նրան Հերակլի առջեւ, հասնելով այն բանին, որ երգիչը նախ երկու տարով (1752–1754 թթ.) ապա վերջնականապէս (1759) վտարուել է արքունիքից։ Պալատական բանաստեղծն օծուել է քահանայ, ապա կնոջ մահից յետոյ ընդունել կուսակրօնութիւն, իբրեւ Հաղպատի միաբանութեան անդամ։ Ստեփանոս անունով վերամկրտուած Արութին Սայաթ-Նովան իր մահկանացուն կնքել է 1795 թուականին, Թիֆլիս ներխուժած Աղա-Մահմադի հրոսակների սրերի ներքոյ...

Սայաթ-Նովայից պահպանուել են շուրջ 70 հայերէն, աւելի քան 120 թրքերէն եւ 30-ի չափ վրացերէն խաղեր[8]։ Իր այս ժառանգութեամբ նա բացառիկ տեղ է գրաւում գրականութեան պատմութեան մէջ։ Նա բացառիկ է նաեւ իր հեղինակային տիպով, քանզի համատեղում է իր մէջ աշուղին եւ բանաստեղծին. այսինքն՝ նրա մէջ ներհիւսուել են ժողովրդա-գուսանական (աշուղական) եւ անհատական բանաստեղծական տարրերը։ Ինչպէս բոլոր աշուղները, Սայաթ-Նովան էլ սիրերգել ու խրատաբանել է՝ օգտագործելով աշուղական բանաձեւեստն ու մեղեդիները։ Բայց նա սոսկ աշուղական երգերի ու թեմաների մշակող-ձեւարար չէ, այլ ստեղծել է իրե՛ն եւ միայն իրեն բնորոշ պատկերներ, դրանց մէջ դնելով իր անձնական խոր ներշնչանքը եւ ապրումները, իր ներաշխարհն ու անհատականութիւնը։ Սայաթ-Նովան առաջինը եւ ամենից լաւ ինքն է խօսել իր անհատա-

կանութեան, «ուրիշութեան» մասին, գրելով իր ամենանշանաւոր տողերը.

Ամէն մարդ չի կանայ խմի՝ իմ ջուրըն ո՛ւրիշ ջրրէն է.
Ամէն մարդ չի կանայ կարդայ՝ իմ գիրըն ո՛ւրիշ գրրէն է.
Բունիաքըս աւազ չիմանաս, բարափ է, բարուկըրէն է...

Սայաթ-Նովան քաջ գիտակցել է իր այդ ուրիշ՝ անհատական գրի, բանաստեղծական խօսքի ամուր հիմք-բունիաքը, ուժն ու արժէքը եւ այդ մասին նշել է այս անգամ վրացերէն վաղ շրջանի խաղերից մէկում, որի վերջին քառատողը բերում ենք թարգմանաբար.

Դուն չասիս, թէ էս խիղճ սազանդարն ո՞վ ա.
Խօսքիս տէրն իմ, հունարըս էլ գըրով ա.
Արո՛ւթինն իմ, ինձ կոսին Սայաթ-Նովա.
Հենց բան կոսիմ, վուր ամպերում ձէն հանի:

Եւ ահա՛, իր այդ զօրեղ խօսքով, իր անհատականութեամբ, որ բանաստեղծութեան էութիւնն է, Սայաթ-Նովան աչուղից վերաճել է բանաստեղծի, եւ նրա ստեղծագործութիւնը դարձել է իր ապրած պատմական ժամանակաշրջանի, ազգային կեանքի ու մտածողութեան գեղարուեստական ինքնատիպ արտայայտութիւնը: Ճիրաւի նա «իր հանճարի զօրութեամբ ժողովրդական երգչի արհեստը վերածեց բանաստեղծի վեհ կոչման» (Վ. Բրիւսով):

Սայաթ-Նովան ստեղծագործելով աչուղական բանարուեստով, հայ քնարերգուների մէջ ամենից աւելի է գտնուել արեւելեան պոէզիայի ազդեցութեան տակ: Սակայն նա էլ առաւելապէս արտաքին հանդերձանքով է արեւելեան, մինչդեռ բովանդակային խորքով, պատկերային համակարգով, իմաստի արտայայտման եղանակներով եւ բուն գաղափարներով՝ միանգամայն տարբեր է Արեւելքի բանաստեղծներից եւ հարազատ է ազգային մշակոյթի ոգուն: Նրա երգերում «տեսնում ենք Արեւելքը՝ հայկական բեկումով... հայկական անհատականութեան միջով անցած» (Աւ. Իսահակեան):

Սայաթ-Նովային բնորոշ է նաեւ հոգեկան-աշխարհայեացքային երկուութիւնը, երկփեղկուածութիւնը, որպէս հին եւ նոր ժամանակների սահմանագծին կանգնած բանաստեղծի: Նրա քնարերգութեան մէջ զուգակցուած են միջնադարեան աշխարհայեացքն ու բարոյաբանութիւնը եւ նոր ժամանակների մարդու ոգին ու ազատասիրական տենչերը: Իր այս հոգեկան երկուութեամբ, այլեւ իրականութեան պատկերման իր հիմնական գեղագիտական սկզբունքներով, աչուղ-բանաստեղծի գրական ժառանգութիւնը տեղակայւում է ուշ միջնադարի մշակոյթի սահմաններում:

Սայաթ-Նովայի ստեղծագործութիւնը ընդգրկելով լեզուական երեք համակարգ, ներկայացնում է որակական, գեղարուեստական տարբեր մակարդակներ: Լինելով վրաց արքունիքի բանաստեղծը, նա ինչ-որ չափով տուրք է տուել այն պալատական-ներբողական ոճին, որն ընդունուած էր պարսկական պալատական բարքերի ազդեցութեան տակ գտնուող վրաց արքունիքում: Երգիչը վրացերէն է գրել նաեւ իր զաւեշտական-պարսաւական խաղերի զգալի մասը, որոնք հիմնականում յօրինուել են՝ պատասխան տալու համար օրուայ խընդիրներին: Որոշ չափով տարբեր է նաեւ Սայաթ-Նովայի վրացերէն սիրերգը: Արքունական բանաստեղծն իր սիրած կնոջ հետ հաղորդակցուել է նախ եւ առաջ նրա մայրենի լեզուով՝ իր վրացերէն սիրերգերն անմիջականօրէն ուղղելով նրան: Ըստ այդմ՝ այդ երգերն ունեն առաւել նեղ-անձնական, մտերմիկ-նամակագրական բնոյթ: Կարդանք վրացերէն սիրերգերից մէկը՝ Մ. Հասրաթեանի թարգմանութեամբ.

Էսօր ես էնդուր խօսեցի,
Վուր սիրուն ձէյրանըն տեսայ.
Հուրի-փերին մէջըն պառկած,
Օսկէ օրորանըն տեսայ:

Դիր գըրեցի, վուր խըճայիս,
Մէ գամ շուտ գաս ու ինձ ճայիս.
Փա՛ռք Աստծու, վուր հիմայ ես
Էկայ ու ֆիզ տանըն տեսայ:

Ասի՝ թէ ֆիզ հուրն է ծրնի,
Ինձ մի՛ վառի, մի՛ չորցընի,
Արիվն ի՞նչ է, վուր ֆի անցնի՝
Ծեգի հուրհուրանըն տեսայ:

Թէ ինձ արժան թայ իս գալի,
Արի խաղանք կօլի-կօլի.
Բանանք վարդի խար փօթօլի.
Գոյնըզգոյն շուշանըն տեսայ:

Սայաթ-Նովէն ֆի դուլ դառնայ.
Սուրաթըդ լուսնակից լաւն ա.
Անունըս Սէ ու Թո տառն ա.
Վը-ի վերջումն Անի-ն տեսայ[9]:

Թրքերէն խաղերը, աւելի քան վրացերէն եւ հայերէն երգերը, գրուած են աշուղական բանաստեղծի կաղապարներով եւ մեծ մասամբ ստեղծուած են աշուղական մրցավէճերի համար: Ուստի այստեղ Սայաթ-Նովան աւելի շատ աշուղ է, քան բանաստեղծ: Որպէս օրինակ բերենք մեր թարգմանութեամբ նրա թրքերէն խաղերից մէկը՝ գրուած աշուղական երգի այն տեսակով, որի բոլոր տողերը սկսւում եւ աւարտւում են միեւնոյն տառով.

Դօշար ու շամար իս, ճարաք իս ու դանդ,
Դուն սիմ խօսիր ունիս, բերանդ է հադիդ,
Դա՛մ արա, ֆու լիզուն ունէ հազար փանդ,
Դարծիլ իս մինճ վարպիտ, հետեւիր փիրիդ:

Դադա իս պատուական, ֆի՛զ ունիմ ումուդ,
Դիքա, զար կու առնիս, կու ծախիս մահուդ,
Դուխանդար իս փանդով, լաւն է մաքահրդ,
Դարայի-խարայ է տեսակն ապրանքիդ:

Դաստան էլար, պիտիս երգի դուն հինգ բանդ,
Դո՛ւրս եկ՝ գըցում իմ ես թամբը ոսկեզարդ,
Դարդի՛ման, չասիս թէ ես գըտա փըրսանդ,
Դա՛րձի եկ, ճանա՛չիր դու ֆու համբարիդ:

Դրրո՛ւստ կաց, հետեւի՛ր դուն մարդուն ջոմարդ,
Դօշըդ թող չըխուցէ մէ անդարման դարդ,
Դաղուեց, էրուեց սիրտըս, չիմ անի փիրեադ,
Դօստի սիրտըն դաւ է, կարօտ համբուրիդ:

Դօվա կոնիս, հո՛ւր, ջո՛ւր ու օ՛դ կոսիս, մա՛րդ,
Դառաւ հոգիս մաս-մաս, էլաւ ֆար ու ֆանդ,
Դէ վուր, Սա՛յաթ-Նովա, մարդն ըլի ճամարդ,
Դառըն խօսիր կոսէ, կու կըպչէ եախիդ:

Մինչդեռ Սայաթ-Նովան կատարեալ աշուղ-բանաստեղծ է իր հայերէն խաղերի մէջ: Այստեղ նրա վրձնահարուածները ազատ են ու վստահ, գոյները՝ չչնչող ու չլացուցիչ, զգացմունքը՝ անմիջական ու թրթռուն: Նրա հայերէն սիրերգը նման է անմնացորդ ինքնայրման, խրատական խօսքը զերծ է ձանձրալի խրատաբանութիւնից, բողոքը ցասկոտ է եւ տառապանքը՝ վարակիչ: Այստեղ նրա տաղանդը դուրս է յորդում աշուղական կաղապարներից, եւ անճնական զգացմունքը ձեռք է բերում ընդհանրական, համամարդկային

արժէքը: Անհրաժեշտ է նշել, որ իր որոշակի նպաստը բերելով հանդերձ վրացական եւ թրքական գրականութեան, Սայաթ-Նովայի այլալեզու ստեղծագործութիւնը նրա հայերէն ժառանգութեան հետ միասին՝ անկապտելի ամբողջութիւն է կազմում: Լեզուական, գրական ու կիրառական տարբերութիւններով հանդերձ նրա եռալեզու ստեղծագործութեան մէջ դրսեւորուել է միեւնոյն բանաստեղծական անհատականութիւնը՝ իր ընդհանուր աշխարհայեացքով, ազգային նկարագրով, գեղագիտական, բարոյական ընկալումներով ու կենսազգացողութեամբ:

Ուշագրաւ է, որ Սայաթ-Նովան ազգային-հայրենասիրական թեմաներով ո՛չ մի երգ չի գրել, բայց նրա մարդկային ու բանաստեղծական անհատականութիւնը զգալիօրէն պայմանաւորուած է ուրոյն ազգային դիմագծով, որ հիմնականում արտայայտւում է նրա մտածողութեան, պատկերային համակարգի, զգացմունքների ու խոհերի մատուցման եղանակի մէջ: Ըստ այդմ նա «խիստ չեչտուած, զարմանալի հայ արուեստագէտ է» (Մ. Հասրաթեան), «ազգային է Գողթան երգիչների չափ» (Գ. Սեւակ):

• Սայաթ-Նովեան երգերի եղանակներն էլ իրենց հիմքում հայկական երաժշտութեան ձայնեղանակների համակարգին հարազատ ստեղծագործութիւններ են: Ահա իր այս ազգային խորքով ու բովանդակութեամբ է, որ սայաթնովեան երգը խօսել է հայ մարդու սրտի հետ եւ շարունակում է խօսել...

Յատկանշական է, որ հենց թրքերէն խաղերում է աշուղ-բանաստեղծը արժանապատուութեամբ ու հպարտութեամբ նշել իր հայկական ծագման ու հաւատի, այլեւ ազգային սրբութիւնների մասին.

Սայաթ-Նովէն իմիը հայ է՝
Իր հաւատիմն ամուր կանգնած:

կամ՝

Իրեմ հարուր վաթսուն ու վից սուրբի աղօթքը մերն է.
Ցիսուսին մեզ Տէրն է ղրգիլ՝ լուսն ու շափաղը մերն է.

Սիոնի սուրբ գերեզմանը, ապրելու տեղը մերն է.
Էջմիածնայ Մայր աթոռը եւ ազիզ ցեղը մերն է:

Որպէս աշուղ-բանաստեղծ, Սայաթ-Նովան ունեցել է երկու հիմնական սնուցարան՝ բանահիւսութիւն եւ գրականութիւն: Նրա եռալեզու ստեղծագործութիւնը խարսխուած է հոգեւոր-մշակութային հարուստ հիմքի վրայ, որն այս կամ այն չափով՝ ներառում է հայ բազմադարեան եւ բազմահարուստ ժողովրդական բանահիւսութիւնը, քրիստոնէական-եկեղեցական գրականութիւնը, միջնադար-

եան հայ տաղերգութիւնն ու ժողովրդա-գուսանական քնարերգութիւնը, վրաց բանահիւսութիւնն ու գրականութիւնը, աշուղական բանարուեստը, ընդհանուր արեւելեան բանահիւսութիւնն ու գրականութիւնը:

Ելնելով ժողովրդից, Սայաթ-Նովան ժառանգել է նրա կենսազգացողութիւնն ու ոգին, իւրացրել դարերի ընթացքում նրա կուտակած իմաստութիւնը: Սրանով է նա դարձել յիրաւի մեծ ու ճշմարիտ ժողովրդական բանաստեղծ:

Սայաթ-Նովայի աշխարհայեացքի, կենսափիլիսոփայութեան, լեզուի եւ գրական ճաշակի վրայ որոշ չափով ներգործել է հոգեւոր-կրօնական գրականութիւնը: Նրա համար՝ բարոյականութեան լաւագոյն ուսուցարան են եղել Աւետարանը, Ճայտմաւուրքը, Հարանց վարքերը·

Թէկուզ իմանաս, գիտենաս աստղերու համբարիըն սիրուն,
Անբարի գուրծըն կորած է՝ Կա՛րթա Հարանց վարին սիրուն,
Ավիտարանի խօսիիրըն մարգարիտ է, կարգըն սիրուն·
Մի՛ ածի խուզի առջիվըն լալ ու գովհար, Սա՛յաթ-Նովա:

Ինչպէս յայտնի դարձաւ վեռջերս, Սայաթ-Նովան քահանայ կարգուելուն պէս՝ ձեռնարկել է Գրիգոր Նարեկացու «Ողբերգութեան մատեանի» ընդօրինակութիւնը: Այս ընտրութիւնը պիտի պատահական չհամարել: Նա, անտարակոյս, մինչ այդ ծանօթ է եղել Նարեկին, որը չէր կարող ազդեցութիւն չունենալ նրա յախուռն ներաշխարհի վրայ: Ինչպէս նշեցինք, Նարեկացու Մատեանը խոր ազդեցութիւն է ունեցել ԺԸ· դարի գրեթէ ողջ ազգային դասական քերթուածեան վրայ: Այս առումով էլ, ահա, աշուղ-բանաստեղծ Սայաթ-Նովան ձայնակցում է այդ քերթուածեանը:

Սայաթ-Նովան տաղերգուներից է ժառանգել միջնադարի բանաստեղծութեանը բնորոշ թեմաներն ու մոտիւները, մի չարք քերթողական յատկանիշներ: Իր բանաստեղծական խառնուածքով, մտածողութեամբ ու կենսազգացողութեամբ, նա առաւել մօտ ու հարազատ է Կոստանդին Երզնկացուն: Մեր այդ երկու քնարերգուներին էլ առաւել բնորոշ են հոգու տառապալից երկփեղկուածութիւնը, համանման սէրն ու պաշտամունքը գեղեցիկի ու լոյսի հանդէպ, նոյն բարոյական համոզմունքները: Ճայտնի չէ, թէ Սայաթ-Նովան անմիջականօրէն հաղորդակցուե՞լ է արդեօք Երզնկացու կամ Թլկուրանցու եւ Աղթամարցու քնարերգութեանը· դա կարելի է միայն ենթադրել, նկատի ունենալով նրանց գեղարուեստական ու գաղափարական ընդհանուր յատկանիշները: Մենք պարզել ենք, որ Սայաթ-Նովան իր երգերից մէկը յօրինել է ԺԷ· դարի կրօնա-հայրենասիրական բա-

նաստեղծութեան ներկայացուցիչներից մէկի՝ Յովհաննէս Կաֆացու մի տաղի անմիջական հետեւութեամբ: Ապացուցուած է նաեւ, որ իր երգերից մէկն էլ աչուղ-բանաստեղծը գրել է ուշ միջնադարի մէկ այլ տաղասացի՝ Զաքարիայի ազդեցութեամբ: Սակայն նա առաւել քաջածանօթ է եղել իր ականաւոր նախորդին՝ Նաղաշ Յովնաթանին, որի ստեղծագործութիւնն էլ հիմնականում այն օղակն է, որով Սայաթ-Նովան կապւում է միջնադարի հայ տաղերգութեանը՝ դառնալով նրա վերջին խոշոր ներկայացուցիչը:

Աչուղ-բանաստեղծը հաղորդակցուել է նաեւ արեւելեան աւանդազրոյցների մէջ միջնադարեան հայ քնարերգուների ներմուծած կաֆաններին, այլեւ ժողովրդա-գուսանական հայրէններին, որոնց որոշ հետքեր գտնում ենք նրա խաղերում: Միւս կողմից էլ նա իւրացրել ու զարգացրել է հայ աչուղական քնարերգութեան լաւագոյն աւանդոյթները: Ըստ այսմ, միանգամայն ճշմարիտ է սիփւռքահայ բանասէր Օ. Սարգիսեանի այն դատողութիւնը, թէ Սայաթ-Նովայի «վաստակին մէջ հաստատած են Գրիգոր Նարեկացիի աստուածախանդութիւնը, Ֆրիկի այրող բողոքը, Յովհաննէս Երզնկացիի իմաստաբանութիւնն ու խորաթափանցութիւնը, Կոստանդին Երզնկացիի բնութեան ու սիրոյ օրհներգութիւնը, Մկրտիչ Նաղաշի խորհրդածող ու ըմբոստ ոգին, Նահապետ Քուչակի մարդկայնութիւնն ու պանդխտութեան ծով դառնութիւնը, Նաղաշ Յովնաթանի վշտոտ տրտունջքն ու լուսաւորութեան քարոզը: Ակամայ աչակերտեր է չատերուն, բայց դարեձիր է անգերազանցելի ուսուցիչ»[10]:

Մեծ մարդասէր ու մարդերգու է Սայաթ-Նովա, եւ դրա մէջ է ամենից առաջ նրա ստեղծագործութեան կենդանութեան եւ անմահութեան գաղտնիքը: Աչուղ-բանաստեղծի մարդասիրութիւնը, բնականաբար, առաւել վառ արտայայտութիւն է գտել նրա ստեղծագործութեան լաւագոյն մասը կազմող սիրերգութեան մէջ: Թումանեանի խօսքերով ասած. «այդ հոյակապ սիրահարը՝ բռնուած ու բռնկած սիրոյ հրդեհով», սիրոյ լոյսի տակ է տեսնում մարդուն ու աշխարհը:

Սայաթ-Նովայի պատկերած կինը կատարելութեան կնիք է կրում, սակայն չի վերածւում ինչ-որ վերացականութեան. դա իրական ու կենդանի մարդն է՝ որպէս բնութեան զարդն ու գլուխգործոցը: Բանաստեղծը դրսեւորել է նաեւ որոշ ձգտում՝ տեսնելու եւ պատկերելու սիրած կնոջ բնաւորութեան որոշ գծեր. «Կուզիմ սիրտըդ չանց տաս, տեսքըդ ամէն մարդ հա՛ կու տեսնէ»: Եւ երգիչը երբեմն փորձել է նաեւ վեր հանել սիրուհու ներքին գեղեցկութիւնը.

Հայալու իս, աղար ունիս, ար ունիս...

Այսինքն՝ ամօթխած ես, համեստութիւն ունես, ինքնասիրութիւն ունես։ Սակայն առաւելապէս միջնադարեան գեղագիտական սկզբունքներին հետեւող Սայաթ-Նովայի սիրերգերում գերակշռում է սիրուհու արտաքինի նկարագրութիւնն ու գովքը։ Հետեւելով միջնադարեան տաղերգութեան եւ աշուղական պոէզիայի աւանդոյթներին, Սայաթ-Նովան յաճախ կնոջը պատկերել է՝ օգտագործելով որոշ ընդհանուր պատկեր-կաղապարներ։ Ըստ այդմ, բնականաբար, նրա բանաստեղծական անհատականութիւնը որոշ չափով ետ է մղուել։ Բայց միայն որոշ չափով։ Սայաթ-Նովեան գովերգը շատ գծերով էլ անհատական է։ Նա պատկերել-գովերգել է, որովհետեւ սիրել է։ Եւ քանի որ սայաթ-նովեան սէրը խորն է ու խորապէս անհատական, ուստի եւ նրա գովերգը, որ այդ սիրոյ ծնունդն է եւ ինչ-որ տեղ նաեւ համարժէքը, նոյնպէս հիմնականում անհատական է եւ գրեթէ նոյնքան յուզիչ, որքան նրա սիրոյ տառապանքը։ Միայն անսահման սիրոյ ոգեշնչմամբ կարելի է ստեղծել մի այսպիսի գեղեցիկ գովերգական տաղ։

Պատկիրիդ դալամով բաշած, թահրդ ռանգէ-ռանգ իս անում,
էրեսդ խալըն ծածկում է, մագիրդ խափանգ իս անում։
Բացուիլ իս կարմիր վարդի պէս, բլլբուլի հետ հանգ իս անում։
Ակռէրդ օսկումըն շարած, պըռոշըդ մահանգ իս անում։

էրեսդ նուր լուսնի նըման բանի կեհա, կու բոլըրվի,
Դաստամազդ նամ չի ուզի՝ առանց հուսիլ կու օլըրվի,
էնդու համա բու տեսնողըն իր ճամփեմէն կու մոլըրվի։
Իփ մըտնում իս մէճլիսումըն, շանկ-շուխի-շապանկ իս անում։

էրեսդ տեսնելու գուբան բաղաբ-բաղկով, գիդ՝ գիդի պէս։
Միտնողըն բիզմէն կու առնէ անմահական դիդ՝ դիդի պէս։
Իփ տիդեմեդ ժաժ իս գալի, շրխշրխկում իս ջիդջիդի պէս։
Ի՞նչ կոնիս սանքուր-բամանչեն՝ գուգսդդ չոնգուր-չանկ իս անում։

Ծուցիդ մէջըն վարդ, մանիշակ, սըմբուլ ու սուսան իս շինի։
Քու տէրըն բաղըն ի՞նչ կոնէ՝ բու հուտըն ռեհան իս շինի։
Քամին մէջըն անց է կենում՝ մագիրդդ եյբան իս շինի։
Աշխարհն ծով, դուն մէջըն նաւ, ման իս գալի, լանկ իս անում։

Տասնեմէդ մէկըն չին ասի, թէկուզ աշխարհըս բիզ գովին։
Նովափար, ծա՛դիկ ծովայինն, մանիշակ՝ բաց արած հովին։

Բաս ինչ էշխին վո՞ւնց դիմանամ· ջուրըն տանէ Սայաթ–Նովին.
Թէ տեսնողըդ մէկ էլ տեսաւ՝ տիվանա–տապանկ իս անում:

Սայաթ–Նովայի գեղագրած կանացի պատկերը կենդանի է, չարժուն ու յարափոփոխ: Նա նորալուսնի նման գնալով բոլորւում է, ծագող արեւի պէս աստիճանաբար ճառագայթում–զարգանում է, կոկոնի պէս բացւում է, փարթամանում եւ «օրն ի օրըն չատանում»:

Երգչի վազ շրջանի խաղերում սիրուհին, որ դեռեւս աղջնակ էր, երեւում է մեզ քարայծի նման սար ու չոլերում միայնակ շրջելիս, աստղալոյսի տակ զբօսնելիս, ծաղկած այգում սիրահար բանաստեղծի հոգու հետ չարաճճիօրէն խաղալիս, ապա նաեւ տեսնում ենք նրան բարուրը ձեռքին, ոսկէ օրորոցի առաջ կամ՝ ոսկէ վարսակալ կապած խոպոպները ոսկեջրած մկրատով յարդարելիս: Տեսնում ենք միայնակ կամ նաժիշտների հետ, վարսերն առագաստի նման քամուն տուած, այգում զբօսնելիս կամ պատշգամբին կռթնած՝ մազերը կախած ցանակապատից: Տեսնում ենք առլասէ խաս վերմակի տակ քնած կամ հազար ու մի հանդերձանքի ու զարդարանքի մէջ: Նա մտնում է մէճլիս, զուարճանում է ու կատակում, խօսում է՝ «բերնէմէն կրակ թափելով», քանի որ քուրա–քուրա խօսք ունի եւ «հազար բարաթ բառ»: Բայց նաեւ հպարտ է նա, եւ երբեմն տեսնում ենք նրան արհամարհանքը դէմքին, մարդկանց բարեւին պատասխան չտալով, շահի պէս «ջառ բացարած» քայլելիս: Այս վսեմութեամբ էլ մի արտակարգ չուք է ստանում սիրուհու գեղեցկութիւնը·

Եարըս Հրնդու շահի իխտիար ունէ,
Ամէն հուխմը գլուխ բերող ճար ունէ,
Պրօլէ սիմով անգին ակ ու բար ունէ,
Սըրով, նիգով դուռը պահող ջան ունէ···

Սայաթ–Նովան մի կողմից օգտագործելով ու զարգացնելով ընդհանրական, աւանդական պատկերները, միւս կողմից՝ իր բանաստեղծական վառ երեւակայութեամբ ստեղծելով նոր, ինքնօրինակ, անհատական պատկերներ, կարողացել է ըստ ամենայնի իր խօսքի ուժով վերարտադրել կանացի կատարեալ գեղեցկութիւնը: Այլ կերպ ասած, նա իւրացրել է իր նախորդ սիրերգուների լաւագոյն գեղարուեստական փորձը եւ հարստացրել ու կատարելութեան հասցրել կնոջ արտաքին գեղեցկութեան գովքը, որ ի վերջոյ մի փառաբանութիւն ու օրհներգ է՝ ուղղուած մարդ–արարածին, մարդկային գեղեցկութեանը: Դա աչուղ–բանաստեղծի գրական ժառանգութեան կարեւորագոյն գեղարուեստական արժանիքներից մէկն է:

Սայաթ-Նովան նաեւ սիրոյ զգացման, սիրոյ տառապանքի ինքնատիպ երգիչ է: Նրա հոգում իշխող ամենաուժգին զգացմունքը սէրն է այն կնոջ հանդէպ, որին պաշտել ու աստուածացրել է իր գովերգերի մէջ: Եւ բանաստեղծը իր սէրը երգում է «զուտ անձնական չեշտերով..., եւ այդ սէրը մի իդէալական գաղափար չէ» (Մ. Աբեղեան): Բանաստեղծն արտայայտել է իրական զգացմունքները, եւ նրա գրեթէ բոլոր խաղերն այս կամ այն դիպուածի, այս կամ այն հոգեվիճակի գեղարուեստական արտայայտութիւն են: Եւ այդ անձնական զգացմունքները երգիչը արտայայտել է բանաստեղծական մեծ վարպետութեամբ, ուստի եւ նրա սիրերգը դուրս է եկել անձնականութեան շրջանակներից, ձեռք բերելով համամարդկային հնչեղութիւն:

Բանաստեղծի ու սիրուհու մի կոնկրետ հանդիպման ու զրոյցի (1754, Ապրիլի 1) առիթով են ստեղծուած «Աչխարումս ախ չիմ քաշի» եւ «Ինձ սիրեցիր էշխըն ընգար» հանրայայտ հարց ու պատասխան խաղերը: Բերենք դրանց առաջին տները, տեսնելու համար, թէ որքան վսեմ ու ոգեղէն է սիրահարների այդ զուգերգ-երկխօսութիւնը.

Աշխարումըս ախ չիմ քաշի, քանի վուր ջան իս ինձ ամա,
Անմահական ջրրով լիքըն օսկէ փրնջան իս ինձ ամա,
Նրստիմ, վըրէս շրվաֆ անիս՝ զարպապ վըրան իս ինձ ամա.
Սուչս իմացի, է՛նենց սպանէ՝ սուլթան ու խան իս ինձ ամա:

Ինձ սիրեցիր, էշխըն ընգար, խաղի դաւթար իմ էիզ ամա.
Մի՛ խաղի փըշի ծաղիկըն՝ վարդ, սուսանբար իմ էիզ ամա,
Չիմ թողնի արեգակումըն՝ պաղչի սաճար իմ էիզ ամա.
Ես ու մահըն վո՞ւնց կու խընդրիմ՝ նուղլ ու շահար իմ էիզ ամա:

Հետեւելով երգչի կենսագրութեան մեզ յայտնի դրուագներին եւ դրանց ուղղակի արձագանգը հանդիսացող սիրերգերին, տեսնում ենք, թէ ինչպէս աստիճանաբար վերանում է նախապէս «սիրող ու սիրող» երգչի վայելքի ծարաւն ու բերկրանքի ձգտումը, տեղի տալով թախծին, վշտին, տառապանքին ու ողբերգութեանը: Եթէ Սայաթ-Նովայի սէրը չունենար ողբերգական ընթացք, եւ նա մնար որպէս սոսկ սիրոյ վայելքի, «փոխադարձօրէն ըմբռնուած» երջանիկ սիրոյ երգիչ, ինչպիսին համարել են նրան որոշ ուսումնասիրողներ, ապա մենք չէինք ունենայ այն մեծ ողբերգու-բանաստեղծին, որպիսին է իրականում Սայաթ-Նովան:

Արքունիքից առաջին անգամ վտարուելուց յետոյ յօրինած խաղերից մէկում՝ ճակատագրի հարուածից խենթացած սիրահար բանաստեղծը գրել է։

Եա՛ ինձ կորցըրէք, եա՛ մէ բան արէք,
Խրփեցէ՛ք, մի տիղըս մէ ընշաւ արէք,
Թէկուզ էստու համա բարասպան արէք։
Չի՛մ կըշտանում կօզալի հիտ խօսալով։

Եւ գնալով աւելի է ահագնանում այդ «սովը» («Աչխարհըս աչխարհով կըշտացաւ, ես քիզանից սով, աչքի լոյս»)։ Սակայն անհնարին է հասնել «թագաւուր եարին», նրա հանդէպ ունենալ «արք ու իխտիար»։ Եւ այդ անհնարինութեան ծանր զգացումից ծնուել են մի չարք խաղեր եւ յատկապէս հետեւեալ քառատողը, որ մի իսկական բանաստեղծական գիւտ է։

Ղալամըն գիրըս չէ գրում՝ մէ չուրացած թանի ընման,
Խօսիրըս մէմէկ չի ասուի՝ իմաստուններու բանի ընման,
Մէջըն չիմ կանացի մըտնի, ծովի ծածկած վանի ընման։
Խոստովնահէրըս հիռացաւ, միղի համա իմ լալի։

Այսպէս, վիշտ ու տառապանքից, սպասումից ու կարօտից եւ զանազան ծանր ու հակասական զգացմունքներից փոթորկուել է սիրահար բանաստեղծի զգայուն սիրտը, յայտնագործելով բանաստեղծական անխամրելի պատկերներ, ինչպէս։

Գիշեր-ցերեկ ման իմ գալի՝ էշխէդ եա՛նա-եանա, կո՛զալ,
Անկաճ արա՛, մա՛տաղ իմ ֆիզ, մէ ֆիչ կա՛մաց գընա, կո՛զալ,
Աչխարհըս ո՞ւմն է մնացի, վուր ինձ ու ֆիզ մընայ, կո՛զալ,
Մակամ միռա՞ւ Սայաթ-Նովէն՝ անկաճըդ խաղին կարօտ է։

Ցիշենք նաեւ վրացերէն խաղերից մէկի առաջին տունը, որը նոյնպէս նախորդի նման մի անպաճոյճ ու կենդանի բանաստեղծական խօսքի գեղեցիկ նմոյշ է, որպիսի օրինակներով Սայաթ-Նովան առաւել մօտենում է նոր չրջանի քերթուքեանը։

Հենց իմացար սոված էի, լի սեղանի համա էկա՞յ։
Ֆիզիտ խօսիլ էի ուզում՝ մօտըդ դամի համա էկայ,
Ասի, ֆիզիտ լուսացընիմ, ուրախ ժամի համա էկայ։
Մոռացիլ իմ··· լաւ միտըս չէ, թէ ի՛նչ բանի համա էկայ։

Ի սկզբանէ, սիրահար բանաստեղծին հետապնդել է մահուան գաղափարը, որ գնալով աւելի է առարկայանում, ձեռք բերում առաւել տեսանելի, որոշակի կերպարանք: Արբեցնող-այրող ու խոցող սէրը վերածւում է սուր մանգաղ կրող մահուան խորհրդանիշի: 1759-ին, երկրորդ վտարումից անմիջապէս առաջ, Սայաթ-Նովան յօրինել է մի չափազանց ախուր սիրերգ, որտեղ տակաւին քառասունը չբոլորած սիրահար բանաստեղծը, ասես մահուան մահճում, հրաժեշտ տալով, ողբում է ծանր մղձաւանջի պէս անցած իր «ումբր»-կեանքը: կարդանք այդ սիրերգն ամբողջովին.

Ինձ ու իմ սիրեկան եարին մէ տարի բերած գիտենամ.
Ա՛խ ֆաշելէն սըրտիս մէջըն արունըն մերած գիտենամ.
Գիշեր-ցերեկ եարի խաբրու ճիկարըս էրած գիտենամ.
Աչէրս թաց, բերանըս ցամաք, լիզուս հիդհերած գիտենամ:

Սիրտըս փուրումըս թուլացաւ անկալներու գախ անելէն
Ուշ ու միտըս խառնուեցաւ խուրձ-խուրձ խաղ հանելէն,
Աչեմէս ճուհարըն գընաց եարէն կարօտ ա՛խ անելէն.
Էլ ապրելու ումիկ չունիմ, իմ օրըս կերած գիտենամ:

Էրած-խորուած մանի իմ գալիս, մէ տիղ չըկայ մար ունենամ,
Լիզվով չիմ կանացի ասի, թէկուզ խօսքըս փար ունենամ,
Ափսուսալու հազար ափսուս, ես էս դատա դար ունենամ.
Էշխէն ուշ ու միտըս կապած, ինձ չըրի տարած գիտենամ:

Սիրտըս փուրումըս սրճուր է, ալ աչկիրըս լաց է անում,
Ծովըն ընգած ամպի նըման տօշս ու եախէս թաց է անում,
Քանի վուր մրիլամ իմ դրնում, տուկունս էլ խիստ բաց է անում,
Հալուեցա՛յ, արնամամ էլայ՝ եարէս հիդարած գիտենամ:

Ով տեսնում է, էս է ասում՝ Վա՛յ ֆու դարին, Սայաթ-Նովա,
Համաշա ֆիզ պիտի տեսնինիք՝ աչերդ արի՞ն, Սայաթ-Նովա,
Ինչո՛վ չէլաւ, չըռաստ էկար մէ լաւ եարին, Սայաթ-Նովա,
Ումբրըս էրազի պէս գընաց՝ ծառըս չըխերած գիտենամ:

Սայաթ-Նովան, սակայն, իր անյոյս տառապանքի մէջ էլ ինչ-որ բանով, որեւէ թելով կապած-կապուած է մնում կեանքին, երբեք չկորցնելով իր կենսասիրութիւնը: Ուստի եւ որքան էլ նրա սէրը մահուան դրոշմ է կրում, որքան էլ ծանր ու անամոք է նրա ցաւը, որ-

քան էլ ազեկտուր են նրա սիրոյ ճիչերը, այնուհանդերձ, նրան բնորոշ չէ զառը յոռետեսութիւնը եւ մռայլ մելամաղձը: Նա, ինչպէս բնութագրել է Ցովհ. Թումանեանը, «զգում է, որ էրւում, վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անչար ու անաչառ, վեհ ու վսեմ, որպէս աչխարհքի ու մարդու մեծ բարեկամը, հաստատուն սիրով ե՛ւ դէպի էն «զալումը», որ իրեն կրակ տուեց ու միշտ մնաց անտարբեր, ե՛ւ դէպի նրանց, որոնք չորս կողմից տաքացան ու հրճուեցին էն կրակով, որի մէջ էրւում էր ինքը, ե՛ւ դէպի նրանց, որոնք հազար ու մի տեսակ իրեն վչտացրին կեանքում: Ձայրացաւ, բայց երբեք չչարացաւ, ցաւեց, բայց երբեք չանիծեց»:

Իր անհատական, բանաստեղծական ինքնատիպ քնարով երգելով սիրոյ տառապանքը, Սայաթ-Նովան կատարելութեան հասցրեց հայ սիրերգութիւնը, որ դարեր շարունակ մշակուել ու հարստացել էր հայ ժողովրդական ու գուսանական երգերում, այլեւ միջնադարեան տաղերգութեան մէջ:

Սայաթ-Նովայի սիրոյ ողբերգութեան հիմքն ի վերջոյ իչխող ընկերային ու դասային անհաւասարութիւնն էր, որի դէմ ծառացել է աչուղ-բանաստեղծը, ստանձնելով հասարակական արատները խարազանողի դերը: Նա Մեծն Ֆրիկի եւ իր անմիջական նախորդ Նաղաչ Ցովնաթանի նման «արձանագրել է» անհաւասար հասարակութեան վիճակը, անչուչտ, ներքուստ անհաչտ եւ անհամաձայն լինելով այդ ամենին.

Մարդ կայ ուրախ, մարդ կայ տրխուր ու փոչման,
Մէկին՝ մըսխալ, էն մէկելին՝ հինգ բաթման...
Վո՛ւրըն աղճատ, վո՛ւրըն օսկով մէ զանգին,
Վո՛ւրին գինի, վո՛ւրին աղու մէ բանգի...
Մէկին դամ ու վայիլ, մէկին՝ ցաւ ու սուգ:

Ժողովրդական բանաստեղծի զգայուն սիրտը «նուրմէկանց» այրուել, տառապել է՝ տեսնելով, թէ ինչպէս են ոտնահարւում արդարութիւնն ու ճչմարտութիւնը: Այն իրականութեան մէջ, ուր իչխում են չարն ու չարիքը, բարոյալքւում է ողջ հասարակութիւնը, փակւում է ճչմարտութեան ճանապարհը.

Հէֆիմ ու դատաստան չըկա՛յ, մէ դըրուստ ատալաթ չըկա՛յ...

Երբեմն աչուղ-բանաստեղծը հասարակական ու մարդկային արատներին անդրադարձել է իրեն բնորոշ նուրբ երգիծանքով: Սակայն ունենալով առաւել ողբերգական խառնուածք՝ նա աւելի շատ

հակուած է եղել դէպի արտունջն ու բողոքը: Եւ իր վերջոյ, «Հարուր ցաւ ու դաղ» վաստակած բանաստեղծն այլեւս յոգնում-բեզարում է աշխարհից, անգամ իր արուեստից եւ ինքն իրենից: Հոգեկան այդ աշխարհի ծանր վիճակն էլ վերածուել է յուզիչ ու բարձրարժէք բանաստեղծութեան, ինչպիսին է նշանաւոր «Աշխարհս մէ փանջարա է» երգը, որը կարելի է համարել բանաստեղծի անձնական ու հասարակական ցաւերգութեան մի հանրագումար: Ահա՛ երկու տուն այդ խաղից.

Ո՞վ կոսէ, թէ ես կու ապրիմ առուտեմէն ինչրու մուտքն
Աստրծու ձիռումքն հիշտ է մարդու աշխարհէ ելումուտքն.
Ղուրթս էնդուր ճամփա չէ գնում՝ շատացիլ է խալխի սուտքն.
Քսա՛նըն՝ մէ դուլ չին պահում՝ աղերումէն բեզարիլ իմ:

Սայաթ-Նովէն ասաց՝ տարտրս կանց մէ ճարրն շատացիլ է.
Զունիմ վաղուան բաղդըր փառէրս, հիմի դարրն շատացիլ է.
Բլլրուլի պէս էնդուր կու լամ, վարդիս խարրն շատացիլ է.
Չին թողնում վախտին բացուելու, բաղերումէն բեզարիլ իմ:

Սայաթ-Նովան իր անհատականութեամբ ու մարդասիրութեամբ փայլել է նաեւ խոհախրատական երգերում, քարոզելով ու ջատագովելով բարոյական գեղեցիկը, որ գիտակցել է իր փորձով եւ իմաստութեամբ: Նրա հոգեչահ խրատները նոյն բարձր մարդասիրութիւնից բխող անկեղծ ու սրտացաւ յորդորներ են, որոնց մէջ արձագանգ է գտել նաեւ ժամանակի կրթական-լուսաւորական չարժումը («Գի՛ր սիրէ, զա՛լամ սիրէ, զա՛ւթար սիրէ»):

Միջնադարեան բարոյախօսութեան հիմքի վրայ բանաստեղծն արծարծել է համամարդկային գաղափարներ, կատարելով ժողովրդական երգչի իր բարոյակրթիչ առաքելութիւնը: Ահա՛ նրա լաւագոյն խրատական խաղը.

Ա՛րի համով դուլուղ արա, խալխի ճոխար Սա՛յաթ-Նովա,
Ամէն մարդ չի կանայ ճանկի շահ ու շըխար, Սա՛յաթ-Նովա,
Ով ֆիգի լիղի պարգիւէ, դուն տու շահար, Սա՛յաթ-Նովա,
Ղա՛ստ արա՝ շուշէդ չըկոտրին, չըխըփին խար, Սա՛յաթ-Նովա:

Թէկուզ դըպրատանըն պահ տաս՝ ծեծով չի խըրատուի խիվըն.
Ինչրու անձնէն չըդուս էհայ անախտիլի էն չար դիվըն,
Բեդասլըն ասլ չի դառնայ, բոլով չի սիպտակի սիվըն,
Ծուռըն փէտրն չի դըրըստի ռանտան, դո՛ւրգար Սայաթ-Նովա:

Թէկուզ իմանաս, գիտենաս աստղերու համբրաւիքըն սիրուն,
Անթարի գուրծըն կորած է՝ կարթա հարանց Վարիքըն սիրուն,
Աւիտարանի խօսքիրըն մարգարիտ է, կարգըն՝ սիրուն,
Մի՛ ածի խուզի առջիւրըն յալ ու գովհար, Սա՛յաթ-Նովա:

Թէ էս կենաց փառիքըն չուզիս՝ էն կենաց ալմասըն կուտաւ,
Թէ հոգուդ խաթիր շալ հագնիս՝ գար բաշած ատլասըն կուտաւ,
Թէվուր յալով զըղջում անիս՝ անմահացըն մասըն կուտաւ,
Խոստովանիս արած միդրդ՝ չանիս ինձար, Սա՛յաթ-Նովա:

Վուրտիդ հարսնիք, վուրտիդըն սուգ, վուրտիդ սօյպաթ խաղ
է ըլում,
Վուրտիդ ժամ, վուրտիդ պատարագ, վուրտիդ սիրով տաղ
է ըլում,
Թէվուր հոգուդ կամըն իս անում, մարմինդ պէտամաղ է ըլում·
Վո՞ւր մէ տարտին կու դիմանաս, դուն ջըրատար Սա՛յաթ-
Նովա:

Սայաթ-Նովայի սէրը, տառապանքն ու մարդասիրական գաղափարները գուրկ կը լինէին յուզական ներգործութիւնից, եթէ աշուղ-բանաստեղծն ըստ ամենայնի չհիրապետէր իր արուեստի «գործիքին»՝ գեղարուեստական խօսքին: Նա ձեռք է զարկել աշուղական պարզ ու բարդ երգերի բազմաթիւ տեսակների, որոնց մէջ կատարողական առումով դրսեւորուել է բանաստեղծ Սայաթ-Նովայի աշուղական վարպետութիւնը:

Երգիչը կարողացել է կանոնիկ ձեւերի ու չափերի մէջ ստեղծել ռիթմական բազմազանութիւն՝ օժտելով իր խօսքը հարուստ ու խոր յանգերով, առաձայնոյթներով ու բաղաձայնոյթներով՝ աշուղական երգը յաճախ վերածելով երաժշտական եղանակներից անկախ, հաճելիօրէն հնչող ու ընթերցուող բանաստեղծութեան: Այստեղ արդէն դրսեւորուել է աշուղ Սայաթ-Նովայի բանաստեղծական վարպետութիւնը: Այն ըստ ամենայնի արտայայտուել է նաեւ երգչի գործածած պատկերաւորման միջոցների ու հնարանքների մէջ: Դրանք բխելով ժողովրդա-գուսանական բանարուեստից ու միջնադարեան տաղերգութիւնից, անցել են երգչի խոր անհատականութեան միջով, յաճախ ձեռք բերելով առանձնայատուկ գոյն եւ երանգ: Այդպիսին են նրա չափազանցում-հիպէրբոլները, անակնկալ, գեղեցիկ համեմատութիւնները, ծաւալուն, երբեմն ենթատեքստային բնոյթի փոխաբերութիւնները: Երգչի գեղարուեստական խօսքին բնորոշ են նաեւ զուգահեռականութիւնը, անձնաւորումը եւ յատկապէս այլաբանութիւն-

ները: Աչուղ-բանաստեղծի գրչի տակից առատօրէն դուրս յորդած հոմանիշ մակդիրները, համեմատութիւնները, փոխաբերութիւնները նրբերանգներով լրացնում են իրար՝ ստեղծելով ներքին բազմազանութիւն: Երգչի բուռն զգացմունքը եւ բանաստեղծական կայուն հնչերանգը նրա խաղերի յաճախ արտաքնապէս ցրիւ տողերն ու տները զօդում են իրար ներքին կուռ ամբողջականութեան մէջ:

Ստեղծագործելով թիֆլիսահայ բարբառով, Սայաթ-Նովան այն դարձրեց բարձրարժէք քնարերգութեան լեզու: Հաւատարիմ մնալով իր կոչմանը՝ աչուղ-բանաստեղծը գրել է հանրութեանը հասկանալի լեզուով՝ սակայն, ձգտելով նաեւ տուրք չտալ ցածր ճաշակին, հետեւելով գեղագիտական բարձր չափանիշների: Ահա՛ թէ ինչու նրա ոճը «վեհ է, հանդիսաւոր, բայց ոչ վերամբարձ: Նա գրում է պարզ, յստակ, սահուն եւ առանց մտքերի խճողմունքի եւ առանց պաթոսի» (Գ. Լեւոնեան):

Եւ այսպէս, մեծ սէր ու տառապանք, մարդասիրական բարձր գաղափարներ՝ արտայայտուած բանաստեղծական գեղեցիկ ու ինքնատիպ ձեւերի մէջ. ա՛յս է ահա, աչուղ-բանաստեղծ Սայաթ-Նովայի մեծութիւնը:

• Ընդունուած է ասել, որ Սայաթ-Նովան վերջաւորում է միջնադարի հայ քնարերգութեան զարգացումը եւ սկզբնաւորում հայ նոր գրականութիւնը: Ճիշտ է, մեծ քնարերգուն նշանակալից ազդեցութիւն է ունեցել հետագայ շրջանի բազմաթիւ հեղինակների վրայ եւ իր որոշ նպաստը բերել հայ նոր գրականութեան ձեւաւորման գործում, սակայն նրա ստեղծագործութիւնը իր հիմնական տիպաբանական յատկանիշներով միջնադարեան է, որպէս ուշ միջնադարի անհատական եւ ժողովրդա-գուսանական բանաստեղծութեան մի իւրօրինակ համադրական դրսեւորում: Մինչդեռ նոր գրականութեան սկզբնաւորողներին, ինչպէս արդէն նշել ենք, պիտի որոնել դարավերջի Մխիթարեան եւ Հնդկահայոց գրական անդաստաններում:

ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆԵԱՆ
Բանասիրական գիտութիւնների դոկտոր

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Այս խնդրի շուրջ տես՝ Պաղտասար Դպիր, *Տաղիկներ Սիրոյ եւ Կարօտանաց*, Երեւան, 1958, էջ 44–51 եւ 59։ Գ. Լեւոնեան, *Երկեր*, Երեւան, 1963, էջ 298։ Շ. Նազարեան, *Պետրոս Ղափանցի*, Երեւան, 1969, էջ 28–29, 369 եւ 379)։ *Հայ ժողովրդի Պատմութիւն*, Հտ. Գ., Երեւան, 1972, էջ 555–556։ Պաղտասար Դպիր, *Տաղիկներ*, Երեւան, 1985, էջ 139։
2. Ճակօր Նալեան, *Գրքուկս Կոչեցեալ Հոգեշահ*, Կ. Պոլիս, 1746, էջ 43։ Տես նաեւ՝ Ճակօր Նալեան, *Գիրք Կոչեցեալ Քրիստոնէական*, Կ. Պոլիս, 1747, էջ 84 եւ հմմ.։ Բ. Կիւլպենկեան, *Յուցակ Ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային Մատենադարանի*, Անթիլիաս, 1961, էջ 143։ *Պատմաբանասիրական Հանդէս*, թիւ 1, Երեւան, 1984, էջ 80–94։
3. *Աստուածանմանութիւն*, Կալկաթա, 1827։ *Աղբիւր բացեալ*, Էջմիածին, 1845։ *Մեկնութիւն Յայտնութեան Ս. Յովհաննու Առաքելոյ*, Կալկաթա, 1846։ *Մեկնութիւն Քրիստոյ Պօղոսի Առ Եփեսացիս*, Երուսաղէմ, 1850։ *Պատմաբանասիրական Հանդէս*, 1981, թիւ 3, 1982, էջ 2։
4. Շ. Նազարեան, *Պետրոս Ղափանցի*, Երեւան, 1969, էջ 72։
5. Լէօ, *Երկերի Ժողովածու*, երրորդ հատոր, գիրք երկրորդ, Երեւան, 1973, էջ 561։
6. Տես Ց. Ոսկեան, *Զորս Հայ Տաղասացներ եւ Անոնց Տաղերը*, Վենետիկ, էջ 61–136։ *Պատմաբանասիրական Հանդէս*, թիւ 4, Երեւան, 1964, էջ 101–116։
7. Տես՝ *Բազմավէպ*, Վենետիկ, 1884, էջ 118–122։ Ց. Մանանդեան եւ Հ. Աճառեան, *Հայոց Նոր Վկաները*, Վաղարշապատ, 1902, էջ 572–604 եւ հմմ.։ Ցովհաննէս Կարնեցի, *Տաղարան*, Երեւան, 1962։ Ց. Ոսկեան, *Զորս Հայ Տաղասացներ եւ Անոնց Տաղերը*, էջ 55 եւ հմմ.։
8. Տես՝ Սայաթ Նովա, *Տաղեր*, Երեւան, 1987։ Մէջբերումները կատարում ենք արեւմտահայ հնչագրութեամբ՝ բիբլիստահայ բարբառով ստեղծագործած երգչի խաղերի հընչողութիւնը աւելի ճիշտ հասորդելու համար մեր ընթերցողին։
9. Տաղի վերջին երկու տողերում Սայաթ–Նովան, ինչպէս իր մի ֆանի այլ երգերում, ծածկագրել է իր եւ իր սիրած կնոջ (Աննա–Անի) անուններր։ Սայաթ–Նովեան ծածկագրերի մեր վերծանութիւնները տես՝ *Հանդէս Ամսօրեայ*, Վիեննա, 1987, էջ 833–839։
10. Օ. Սարգիսեան, «Պարոյր Սեւակ, *Սայաթ Նովա*, Երեւան, 1969»։ *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Պէյրութ, 1971, էջ 307։ Նոյն այս հանդէսի ԺԱ. հատորում (1991, էջ 180–252) հրապարակել ենք մեր «Սայաթ–Նովան եւ Սփիւռք» ուսումնասիրութիւնը։

ARMENIAN POETRY IN THE XVIII CENTURY
(Summary)

Dr. HENRIG PAKHCHINIAN

The eighteenth century witnessed an amazing flourishing of the Armenian poetry which in the seventeenth century had already laid down the groundwork towards the secularization and advance of the modern Armenian poetry. The period under the scope of discussion presents a time of transition between the Armenian Middle Ages and the modern times, with it at times personal, moral, religious, social and political, and especially mundane, expressions. There exists almost no Armenian poet who has not dealt with the problem of the liberation of the fatherland. At times, even those songs and poems, which clearly pertain to personal and emotional aspects of the individual poet, are allegorical and hence portray the conditions, beauty, the past and present, the daily struggle, the loss of hope and the invitation to struggle for the present and future of the fatherland, where foreigners have captivated every possible walk of life and enslaved the beloved : the fatherland. Consequently most of the poets of the XVIII century Armenian poets have dedicated themselves to the work of liberation, in spite of the fact that at first glance most of their poetical work seem personal, romantic and, at times, religious.

The article delves deep into the poetical worlds of Khachadour of Erzeroum (= Garin), Ghazar of Djahoug, Baghdassar Depeer, Movses of Garin, Bedros of Nakhitchevan, Bedros of Ghapan, Sarkis of Paloo, Krikor of Oshagan, Hovhannes of Garin, Simeon of Yerevan (the one-time Armenian Catholicos of Etchmiadzin), and Hagop Nalian (the one-time Armenian Patriarch of Constantinople). Besides these figures, some of whom are also renouned as historians, grammarians, commentators, philosophers and translators, the author of the article deals with the songs of certain Armenian *ashooghs*, who, in the XIII century, continued and modernized the poetical and musical legacy bequeathed them by the *koossans* of the Armenian antiquity. Of the *ashooghs* Dr, Pakhchinian analyses the works of Ghazar, the son of Bagher (Bagheroghli Ghazar), Shamshi Melkon, and Sayat-Nova; the latter being the greatest of all *ashooghs* of all times, and having written and sung some more than 180 songs in Armenian, Tartar (Azeri) and Georgian languages. The author has dedicated to him a considerable section of his study.

ՀԱՅ–ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԼՈՅՍԻ ՏԱԿ
(20րդ դարի սկիզբ)

Դոկտ. Ա. Հ. ԹՕՓԱԼԵԱՆ

1.

Իր դարաւոր պատմութեան ընթացքում հայ ժողովուրդն ունեցել է քաղաքական, առեւտրական, տնտեսական եւ մշակութային առնչութիւններ չատ ժողովուրդների հետ, այդ թւում նաեւ իր աշխարհագրական միջավայրին պատկանող արաբների հետ:

Հայ–արաբական յարաբերութիւնների պատմութեան ակունքները մեզ տանում են դէպի հեռաւոր անցեալը:

Հայ մատենագրութեան էջերում արաբների, եւ արաբ պատմիչների ու աշխարհագիրների աշխատութիւններում հայերի եւ Հայաստանի մասին պահպանուած մեծածաւալ նիւթը կենդանի վկան է երկու ժողովուրդների հնագարեան չփումների առկայութեան: Այս պայմանաւորուած է ինչպէս պատմական եւ աշխարհագրական՝ այնպէս էլ քաղաքական հանգամանքներով:

Հայերը եւ արաբները պատկանում են միեւնոյն աշխարհագրական միջավայրին: Եւ ահա, վաղնջական ծանօթութեամբ, նրանց միջեւ հաստատուել են տարաբնոյթ՝ այլ սերտ կապեր:

Երկու ժողովուրդների միջեւ վաղագոյն ժամանակներից ըստեղծուած վերոյիշեալ պատմական կապերի մէջ առանձնայատուկ տեղ են գրաւում քաղաքական յարաբերութիւնները, որոնք ձեւա–

ւորուել են դարերի ընթացքում եւ անցել պատմական տարբեր շրջաններ: Այդ ժամանակաշրջաններից իւրաքանչիւրը բնութագրուել է իր իւրայատուկ դիմագծով եւ գլխաւոր նպատակով:

Հայ–արաբական քաղաքական յարաբերութիւնները իրենց առաջին հանգրուանին ունեցել են միջպետական բնոյթ, եւ «պետական մակարդակով քաղաքական յարաբերութիւններ են հաստատուել հայերի ու արաբների միջեւ, որ[ոնք] սկսուել են Տիգրան Մեծից [եւ] հասել մինչեւ կիլիկիայի թագաւորութեան անկումը»[1]: Ժամանակի առումով՝ այս շրջանն ընդգրկեց «մ.թ.ա. 1–ին դարից մինչեւ մ.թ. 14–րդ դարը»[2]:

Հայ–արաբական քաղաքական, ինչպէս նաեւ տնտեսական եւ մշակութային, կապերը զգալիօրէն ուժեղացան եօթներորդ դարում, երբ Բիւզանդական կայսրութիւնը կրկին մէջտեղ բերեց Հայաստանում քաղկեդոնականութեան տարածման հարցը եւ Հայոց Աշխարհում ստեղծեց քաղաքական լարուած կացութիւն: Իր այդ կեցուածքով՝ Բիւզանդիան զուտ կրօնականից բացի հետապնդում էր նաեւ քաղաքական նպատակներ: Այդ ուղիով նա ձգտում էր ապահովել կայսրութեան քաղաքական դիրքերը Հայաստանում եւ թոյլ չտալ օրըստօրէ հզօրացող Արաբական Խալիֆայութեան քաղաքական ազդեցութեանը տարածման Հայկական Լեռնաշխարհում:

Այդ ժամանակաշրջանին Հայաստանում նշմարուեց առկայութիւնը հասարակական եւ քաղաքական երկու հոսանքների: Այն պարզորոշ կերպով արտայայտուեց 648–ին Դուինում հրաւիրուած եկեղեցական յատուկ ժողովում, ուր քննութեան դրուած էր Բիւզանդական Դաւանանքի ընդունման հարցը: Ժողովին մասնակցում էին աշխարհիկ եւ հոգեւորական բարձրաստիճան ներկայացուցիչներ: Աշխարհիկ մասնակիցներին գլխաւորում էր եօթներորդ դարի նշանաւոր զօրավար եւ քաղաքական գործիչ Թէոդորոս Ռշտունին, որը ղէմ էր քաղկեդոնական դաւանանքի ընդունման առաջարկութեանը: Դուինի վերոյիշեալ ժողովում յաղթանակ տարան Թէոդորոս Ռշտունին եւ իր կողմնակիցները[3]:

Հայ–բիւզանդական քաղաքական յարաբերութիւնների այսպիսի լարուած մթնոլորտում Հայոց համար ցանկալի էր եւ ձեռնտու արագ կերպով բանակցութիւնների մէջ մտնել հզօրացող Արաբական Խալիֆայութեան հետ:

Եւ ահա՝ հայ–արաբական քաղաքական մերձեցման առաջին քայլերը, որոնք ձեռնարկուեցին 648 թուականից սկսեալ՝ պաշտօնական տեսք ստացան 652 թուականի հայ–արաբական յատուկ պայմանագրով: Քաղաքական եւ գիւնուորական բնոյթի այս առաջին պայմանագիրը բովանդակում էր հետեւեալ հիմնական կէտերը.

«1. Հայաստանը թօթափում էր բիւզանդական տիրապետութիւնը եւ ընդունում Արաբական Խալիֆայութեան հովանաւորութիւնը:

«2. Հայաստանը երեք տարի ազատւում էր Խալիֆայութեան նկատմամբ հարկային որեւէ պարտաւորութիւն կատարելուց, իսկ սահմանուած ժամկէտն անցնելուց յետոյ, հայերը պէտք է [որ] վճարէին արքունի հարկ եւ «սակը», որի չափն ու քանակը որոշուելու էին հայերի հայեցողութեամբ:

«3. Արաբական Խալիֆայութեան համաձայնութեամբ եւ թոյլտւութեամբ, հայերը կարող էին ունենալ 15,000-անոց հեծելազօր...:

«4. Այնուհետեւ, օտարերկրեայ յարձակումների դէպքում, Արաբական Խալիֆայութիւնը պարտաւորւում էր Հայաստան ուղարկել այնքան զօրք՝ որքան կը պահանջուէր հայերի կողմից:

«5. Պայմանագրով Խալիֆայութիւնը խոստանում էր չմիջամտել Հայաստանի ներքին գործերին, եւ որպէս դրա լաւագոյն երաշխիք՝ յատուկ կէտով պարտաւորութիւն էր ստանձնում ոչ միայն զօրք չմտցնել Հայաստան՝ այլեւ երկրի բերդերում չտեղաւորել ոչ մի պաշտօնեայ, արաբական սպայ կամ թէկուզ մէկ հեծեալ զինուոր»[4]:

Վերոյիշեալ պայմանագրով սկսուած Հայ-արաբական քաղաքական մերձեցումը այդ հանգրուանին ունեցաւ կարեւոր նշանակութիւն Հայաստանի համար, այսինքն՝ առժամանակ ապահովեց անոր անվտանգութիւնը արաբական ասպատակութիւնից, իսկ միւս կողմից՝ հայ ազնուականները եւ նախարարները պահպանելով իրենց սեփականատիրական, ժառանգական եւ այլ կարգի արտօնութիւնները՝ դրանով իսկ մասամբ ապահովեցին Հայաստան Աշխարհի ներքին ինքնավարութիւնը:

Հայ-արաբական փոխյարաբերութիւնները չարունակուեցին արաբների կողմից Հայաստանի նուաճումից յետոյ ալ: Մօտ երկու դար Հայաստանը գտնուելով Արաբական Խալիֆայութեան կազմում՝ գործուն մասնակցութիւն ունեցաւ Խալիֆայութեան տնտեսութեան աշխուժացման եւ քաղաքական յարաբերութիւնների զարգացման մարզերում:

2.

Տասնվեցէն տասնեօթներորդ դարերի ընթացքում արդէն հիմք է դրւում Հայ-արաբական քաղաքական առնչութիւնների պատմական երկրորդ շրջանին, որ գոյատեւեց մինչեւ Առաջին Աշխարհամարտի աւարտը եւ Օսմանեան Կայսրութեան վախճանը: Մինչ այդ կործան-

ուած էին Արաբական Խալիֆայութիւնը եւ Կիլիկիայի Հայկական Թագաւորութիւնը, եւ հայ եւ արաբ ժողովուրդներին վիճակուած էր քաղաքական նոյն ճակատագիրը: Թէ՛ հայերի եւ թէ ալ արաբներուն համար մղձաւանջային շրջան էր: Ներանք ընկած էին օսմանեան լծի տակ: Այս պայմանների մէջ արաբները եւ հայերը իրենց քաղաքական յարաբերութիւնները իրագործում էին «որպէս իրենց պետականութիւնը կորցրած եւ միեւնոյն բռնակալական՝ օսմանեան լծին ենթակայ երկու ժողովուրդներ»[5]:

Ահա ա՛յս էլ հանդիսացաւ հայ-արաբական քաղաքական յարաբերութիւնների այս շրջանի իւրայատկութիւնը:

Պատմական այս հանգրուանին, երբ հայ եւ արաբ ժողովուրդների ճակատագրերը քաղաքական առումով սերտօրէն խաչաձեւում էին իրար՝ աւելի արդիւնաւէտ բնոյթ ստացան հայ-արաբական քաղաքական կապերը: Ու ծնունդ կարեւոր մի ճշմարտութիւն, այն՝ որ գոյութիւն ունի մի ընդհանրութիւն արաբ եւ հայ ժողովուրդների քաղաքական շահերի միջեւ: Եւ օսմանեան բռնատիրական լծից ազատագրուելու գաղափարը հետզհետէ դարձաւ երկու ժողովուրդների քաղաքական հիմնական նպատակը, եւ հիմք հանդիսացաւ քաղաքական յարաբերութիւնների զարգացմանը նրանց միջեւ:

Ահա ազգային ու քաղաքական այս ընդհանուր նպատակը մղեց հայ եւ արաբ ժողովուրդներին միաւորել իրենց ջանքերը եւ միմիանց նեցուկ դառնալ օսմանեան բռնատիրութիւնից ազատագրուելու համար մղուող պայքարում:

Այս առումով յիշատակութեան արժանի է Արաբական Հայրենիքի Լիկայի գլխաւոր կոմիտէի 1905-ին հրապարակած եւ «Արաբական երկրները արաբներին» վերնագրուած կոչը, որ ուղղուած էր «Եւրոպայի [եւ] Հիւսիսային Ամերիկայի քաղաքակիրթ, լուսաւորեալ եւ մարդասէր ազգերին», եւ ուր նշում էր թէ «Թուրքիան գրաւում է խաղաղ ճանապարհով տեղի ունենալիք մեծ փոփոխութեան նախօրէին: Արաբները, որոնց Թուրքերը բռնանում էին նրանց երկպառակելով կրօնադաւանական աննշան հարցերում, գիտակցել են իրենց ազգային, պատմական եւ ազգագրական միատարրութիւնը եւ ցանկանում են անջատուել Օսմանի փտած ծառից՝ միաւորուելու մի անկախ պետութեան մէջ:

«... Թուրքիայից մեր անջատման փաստի չնորհիւ, ճնշուած բոլոր ազգերը՝ քրտերը, հայերը, ալպանացիները եւ այլն եւ այլն իրենց ազատութիւնը պիտի ձեռք բերեն, քանի որ արաբների միջոցով է, որ սանձահարում են ալպանացիներին, եւ ալպանացիների ձեռքով է որ ճգմում են պուլղարներին: Դարձեալ արաբների ձեռքով է որ նրանք ճնշում են քրտերին եւ քրտերի ձեռքով է որ ջարդում են հա-

յերին: Հետեւաբար՝ հենց որ մենք լքենք Սուլթանին[6]՝ ամէն մի ազգ պիտի իր անկախութիւնը հռչակի եւ աշխարհը պիտի փրկուի երկպառակութեան այն աղբիւրից՝ որ Արեւելեան Հարց է կոչուում»[7]:

Հայ–արաբական յարաբերութիւնները մեկնող ուշագրաւ փաստաթուղթ է արաբական քաղաքական յայտնի գործիչ Նեճիպ Ազուրիի 15 Ապրիլ 1905 թուակիր նամակը, որ առաքուեցաւ հայ հասարակական գործիչ եւ Լ'Արմենի թերթի հրատարակիչ եւ խմբագիր Մինաս Չերազին[8]: Նամակում Ազուրին գրում է.

«Սիրելի հրատարակիչ,

«Ձեզ եւ Ձեր գնահատելի թերթի հետ կապ հաստատելու հաճելի պարտականութիւնը ստանալով՝ ես ապաւինում եմ Ձեր համակրանքին, յոյս ունենալով, որ օգնելու էք ինձ՝ տեղադրելով Ձեր թերթում այս մի քանի տողը, որով ցանկանում եմ հրապարակօրէն արտայայտել իմ չնորհակալութիւնը Ձեր եւ Ձեր աշխատակիցներին այն խանդավառութեան համար, որով դիմաւորեցիք արաբների հայրենիքի զարթօնքը եւ այն վեհանձն կամպանիայի (արշաւի) համար, որ բարեհաճել էք ձեռնարկել ի նպաստ մեր ազգային չարժման:

«Նոյն չնորհակալութիւնը յղում եմ Ձեր բոլոր հայրենակիցներին, որոնք, հիմք ունենալ կարծելու, նոյն զգացմունքն ու համակրանքն ունեն մեր հանդէպ»[9]:

Շարունակելով իր նամակը Ազուրին դեռ չեչտում է հայ եւ արաբ ժողովուրդների ընդհանուր չահերի առկայութեան եւ հայերի ունեցած արժանիքի հանգամանքները: «Քաջաբար առաջարկելով ամբողջ ուժով օժանդակելու արաբներին Թուրքական Պետութեան դէմ՝ միւս կուսակցութիւններից առաջ, հայերը մի անգամ եւս ցոյց տուեցին, որ գիտակցում են մեր ընդհանուր չահերը: Նրանք նոյնպէս ցոյց տուեցին իրենց արժանիքը միւս ազգութիւնների համեմատ, որոնք Օսմանեան կայսրութիւն կոչուած այդ անհետեւողական կառավարման ճնշման տակ են գտնուում դեռ:

«Այս արժանիքը դեռեւս բաւականին ճանաչուած չէ: Իմ կարծիքով այդ արժանիքը կայանում է նրանում, որ հայերը չեն վախեցել տասը տարի առաջ[10] արթնացնելու իրենց ազգային զգացմունքը ասիական ժողովուրդների մէջ Թուրքիա–չերքէզական բռնակալութեան դէմ, այնպէս՝ ինչպէս յոյները 19–րդ դարի սկզբում համարձակութիւն ունեցան ազդանշան տալ պալքանեան ժողովուրդներին ազատագրուելու քմահաճ փաշիչահների դաժան բռնակալութիւնից: Եւ Թուրքերը երբեք չեն կարող ջարդերի մէջ խեղդել հայերի օրինական ձգտումները, [այնպէս՝] ինչպէս [որ] Եւրոպայի, Ասիայի եւ Աֆրիկայի միացեալ ուժերը չկարողացան խեղդել Յունական

Ապստամբութիւնը, որի բարիքները տարածուեցին ամբողջ Պալքանների վրայ: Հայ հերոսների արիւնով թրջուած հողից բարձրացել են երկու մեծ հսկաներ՝ քրդերի հայրենիքը եւ արաբների հայրենիքը, որոնք հիմա բարձրացնում են իրենց ծանր մահակները՝ իջեցնելու համար բռնակալի գլխին»[11]:

Նամակի մէջ ուշագրաւը արաբ գործիչների եզրայանգումն է, որը բնորոշ է արաբների զարթօնքի ժամանակաշրջանի արաբ ազգային քաղաքական գործիչներին: «Հետեւաբար», եզրակացնում է Ագուրին, «պէտք է ճանաչենք եւ հասկանանք իրար, եւ պէտք է միանանք յարձակուելու համար ընդհանուր թշնամու դէմ, որը այնքան չատ օգտուեց մինչեւ հիմա մեր անհամաձայնութիւնից մեզ առանձին-առանձին ջախջախելու համար: Նա Ալպանիայի, Մակեդոնիայի, Հայաստանի, Հաուրանի, Նեճաի, Եմենի եւ Հիճազի յեղափոխական տարբեր ուժեր մէկը միւսին դէմ կանգնեցրեց: Այսպիսով՝ ոչ մի ազգ Թուրքիայում չի ցանկանում այլեւս ստրուկ լինել, քանի որ բոլորն էլ ապստամբուել են մէկը միւսի յետեւից: Իրար չհասկանալն է նրանց պահում ստելի լծի տակ: Բայց այսօր արաբական բոլոր նահանգները միացած են նոյն հայրենասիրական զգացմունքով, մէկ զեկավարութեան տակ: Հայերը արդէն միացել են մեզ հետ: Ուրիշ խմբաւորումները նոյնպէս միանում են մեզ եւ ազատագրութեան օրը այնքան հեռու չէ՝ որքան կարող են կարծել»[12]:

Տրուած այս հատուածներում հիանալի կերպով արտայայտուած են արաբ եւ հայ ժողովուրդներու քաղաքական չահերի ընդհանրութիւնը եւ նրանց միասնաբար հանդէս գալու անհրաժեշտութիւնը:

Քսաներորդ դարի սկիզբին հայ-արաբական յարաբերութիւնների զարգացման մասին է վկայում 18–23 Յունիս 1913-ին Երիտասարդ Արաբների կազմակերպութեամբ Փարիզում հրաւիրուած Արաբական Քոնկրէսի որոշումները[13]:

Քոնկրէսին մասնակցել են էլ-լէ-մերքեզիէի, Պէյրութի Բարեկործութիւնների Լիկայի եւ Ամերիկայում գործող Արաբական Հայրենակցական Միութեան 24 պատգամաւորները եւ 200 հիւրեր: Քոնկրէսն «չափազանց անհրաժեշտ» է նկատել «էական բարենորոգումները Օսմանեան կայսրութեան համար», եւ որ «նրանք պէտք է իրագործուեն արագ կերպով»[14]: Նոյն ատեն՝ մասնաւոր կէտով մը Քոնկրէսն իր դիրքորոշումը արտայայտեց հայ ժողովուրդի ազգային արդար պահանջների նկատմամբ, եւ չեչտեց, որ «8. Քոնկրէսը հաւանութիւն է տալիս եւ իր համակրանքն է արտայայտում Թուրքիայի

հայերի պահանջներին, որոնք հիմնուած են ազգակեղրոնացման սկզբունքների վրայ եւ նրանց պատուիրակի միջոցով ողջոյն է յղում նրանց...»[15]:

Արաբ եւ հայ ժողովուրդների ազգային չահերի ընդհանրութեան գաղափարը, որ յատկօրէն գծուած ենք գտնում քաներորդ դարասկիզբին՝ դարձաւ առանցքը հայ-արաբական քաղաքական յարաբերութիւնների: Փաստական նիւթի ուսումնասիրութիւնը մեզ յանգեցնում է այն հետեւութեան, որ համամման մղձաւանջային իրադրութեան մէջ հայերը եւ արաբները հանդէս եկան որպէս բնական դաշնակիցներ՝ մեկնակէտ ունենալով իրենց ազգային չահերի ընդհանրութեան գաղափարը: Ահա այս հանգամանքն էր որ այս հանգրուանին մեծ դեր խաղաց հայ-արաբական քաղաքական յարաբերութիւնների ամրապնդմանը եւ անոնց յետագայ զարգացմանը մէջ: «Այս հանգրուանին», գրում է արաբ յայտնի մտաւորական Դոկտ. Հիւսէին Ալի Եթիմը, «հայոց աչխոյժ օժանդակութիւնն ու մասնակցութիւնը անցողիկ պարագայ մը չէր միայն, այլ՝ պայքարային մասնակցութիւն մը հասարակաց եւ դառն ազդակներու հանդէպ, որոնցմէ տառապեցան արաբ եւ հայ ժողովուրդները»[16]:

3.

Հայ եւ արաբ ժողովուրդները մեծագոյն ողբերգութիւնն ապրեցին Առաջին Աչխարհամարտի տարիներին: Օգտուելով պատերազմի բնաճեռած հնարաւորութիւնից՝ երիտասարդ-Թուրքերի կառավարութեան զեկավարները «որոչեցին որ հասել է յարմար պահը վերջ տալու երկու ուժեղ ազգային չարժումներին՝ արաբական ազգայնականների չարժմանը Սիրիայում, Իրագում եւ Հիճազում, եւ հայկական չարժմանը՝ Արեւելեան Անատոլիայում»[17]:

Հայկական եւ արաբական հարցերը լուծելու համար Երիտասարդ-Թուրքերը դիմեցին ռազմական ուժի եւ որդեգրեցին բնակչութեան զանգուածային տեղահանման եւ բնաջնջման քաղաքականութիւնը: 1915-ի Ապրիլին նրանք սկսեցին կենսագործել հայ ժողովուրդի ամբողջական ոչնչացման ոճրագործ ծրագիրը: Մօտ մէկուկէս միլիոն հայ ոչնչացնելով՝ երիտասարդ-Թուրք ոճրագործները արաբական անապատները քչեցին մնացած հայ բնակչութեանը: Իսկ արաբ ասպնջական ժողովուրդը լայն բացեց իր գիրկը հարիւր հազարաւոր հայ գաղթականների առջեւ եւ նեցուկ եղաւ նրանց:

Մահուան ճիրաններից փրկուած հայ տարագիրները ապաստան գտան Սիրիայում, Լիբանանում, Յորդանանում, Եգիպտոսում եւ արաբական այլ երկրներում:

Հաստատուելով այդ երկրներում՝ հայ ժողովուրդը սերտ յարաբերութիւններ հաստատեց արաբ ժողովուրդի հետ:

Լաւապէս ըմբռնելով որ արաբ ժողովուրդը պատրաստ է ապստամբութեամբ Թուրքիայից անջատուել եւ նուաճել իր անկախութիւնը՝ Թուրք ոճրագործները որոշեցին նոյնը իրագործել արաբական երկրներում, եւ 1916-ի գարնանը նրանք փորձեցին հաշուեյարդար տեսնել արաբների հետ: «1916 թ. գարնանը Դամասկոսի եւ Պէյրութի հրապարակները ծածկուեցին կախաղաններով: Մահապատիժի ենթարկուեց մօտ 800 մարդ՝ արաբական ազատագրական շարժման գործիչներից»[18]: Արաբ բնակչութիւնը ենթարկուեցաւ նաեւ բռնի տեղահանման: «Ճեմալ Փաշայի կարգադրութեամբ տասնեակ հազարաւոր արաբներ իրենց ընտանիքներով բռնի քչուեցին անապատում ստեղծուած համակենտրոնացման ճամբարները»[19]: Հայերը եւ արաբները դարձեալ զոհը դարձան միեւնոյն քաղաքականութեան: Սակայն հակառակ իր դէմ գործադրուած ահաւոր ցեղասպանութեան՝ արաբական երկրներում եւ ընդհանրապէս ամէնուրեք վերապրող հայ ժողովուրդը հետապնդեց իր ազատագրութեան նուիրական դաւը: Իսկ արաբ ժողովուրդը չհրաժարուեց ապստամբութեան դրօշ բարձրացնելէ՝ վերջնականապէս ազատագրուելու համար Թուրքիայի տիրապետութիւնից:

Հայ-արաբական փոխյարաբերութիւնների այս հանգրուանը յատկանշուեց զինական համագործակցութեամբը հայ եւ արաբ ժողովուրդների: Գործնական գետնի վրայ այն իր արտայայտութիւնը գտաւ Արեւելեան Լէգէոն անունով զինուորական խումբի ստեղծման մէջ, որը բաղկացած էր հայերից եւ սուրիացիներից[20]: Խումբը ձեւաւորուեց կամաւորական սկզբունքով: Հայ կամաւորների թիւը կազմեց 3000[21]:

Արեւելեան Լէգէոնի ստեղծման որոշումը ընդունուեց Ֆրանսիայի Արտաքին Գործոց Նախարարութեան եւ Հայ Ազգային Պատուիրակութեան միջեւ 1916-ի Նոյեմբեր 26-ին գոյացած համաձայնութեան հիման վրայ[22]: Համաձայնութեան մէջ չեչուած էր, որ «Ֆրանսական կառավարութիւնը որոշած է դրապէս քաջալերել հայ եւ սուրիացի ժողովուրդների «Թուրքին դէմ պայքարելու բաղձանքները»[23]: Լէգէոնը պիտի մասնակցէր «Ասիական Թուրքիոյ մէջ տեղի ունենալիք գործողութեանց եւ պիտի դրուի Սուրիոյ Նաւային Զօրաբաժինը գլխաւորող Մովակալի բարձր հրամանատարութեան ներքեւ»[24]:

Լէգէոնի ընդհանուր հրամանատար նշանակուեցաւ Ֆրանսիական բանակի գնդապետ Ռոմիոն[25]:

Առաջին Համաշխարհային Պատերազմի աւարտման շրջանին Արեւելեան Լէգէոնը մասնակցեց օսմանեան լծից արաբ ժողովուրդի ազատագրման համար մղուած պայքարին:

1918 Սեպտեմբեր 19-ին, երբ անգլիական բանակը Պաղեստինում յարձակման անցաւ Ռաֆաթի[26] եւ Արաբայի շրջաններում՝ «Արեւելեան Լէգէոնը ռազմական դիրքեր գրաւեց Արաբա սարի մօտ՝ Նապլուսից հարաւ»[27]: Հայ եւ արաբ ռազմիկները դիմադրեցին թուրքերին եւ ի վերջոյ ստիպեցին նրանց փախուստի դիմել: Խօսելով Արաբայի մօտ Արեւելեան Լէգէոնի մարտական գործողութիւնների մասին՝ գնդապետ Ռոմիոն չէշտեց հետեւեալը, թէ «աւելի քան տասներկու ժամուան ընթացքին վաշտին աքանչելի կեցուածքը, հակառակ իր կորուստներուն, կարելի ընծայեց իրականացումը Թշնամին կասեցնելու իր առաքելութիւնը, որով կռուին չարունակութիւնը վաշտին կողմէ աւելորդ եղաւ»[28]: Աւելի'ն «մենք հպարտ մխիթարութիւնն ունինք հողին յանձնելու հայ հերոսները, բոլորն ալ առաջին գծին վրայ ինկած, իրենց երեսը դէպի Թշնամին, օրինակ հանդիսանալով: Անոնք բոլորն ալ արժանի են Պատերազմական Խաչի (Croix de Guerre), ամէնքն ալ պաշտպան սուրբերն են Արեւելեան Լէգէոնին»[29]:

Այս փաստը ուշագրաւ է այն առումով, որ տուեալ հանգրուանին հայը կարողացաւ ցուցաբերել քաղաքական ճկուն իմաստութիւն եւ նեցուկ հանդիսացաւ արաբ ժողովուրդի ազգային արդարացի պայքարին: Հայը որպէս գինուոր արեան իր մկրտութիւնն ստացաւ արաբական հողի վրայ արաբ գինուորի կողքին, իրականութիւն մը, որ ծառայեց հայ-արաբական քաղաքական համագործակցութեան ամրապնդման:

Հայ-արաբական յարաբերութիւնները սերտացման շրջան ապրեցին, երբ Թօփալեղով օսմանեան տիրապետութիւնը՝ արաբական երկրները պայքար ծաւալեցին իրենց ազգային, անկախ եւ ինքնուրոյն պետութեան ստեղծման համար:

Այս առնչութեամբ հետաքրքրական է Սիրիայի արաբ ժողովուրդի պայքարը իր ազգային պետութեան ստեղծման համար, որի դէմ, այդ հանգրուանին, հանդէս եկաւ Ֆրանսիան:

Սիրիացի արաբ ժողովուրդի պայքարի ղեկավարութիւնը ըստանձնեց Էմիր Ֆէյսալը, որ 9 Մայիս 1919-ին ուղերձով դիմեց Դամասկոսի քաղաքապետարանում հաւաքուած ինչպէս Սիրիայի՝ այդպէս էլ Պաղեստինի, Ցորդանանի եւ Լիբանանի ազգային առաջնորդներին, թէ հաւանութիւն տալի՞ս են նրա դիրքորոշմանը եւ քաղաքականութեանը»[30]: Ներկաները տուին դրական միաձայն պատասխան:

Ի պատասխան Էմիր Ֆէյսալի հարցադրման՝ ելոյթ ունեցաւ նաեւ Սիրիայում տեղաւորուած հայ գաղթականների հոգեւոր առաջնորդը, որ ներկայ էր հաւաքին։ Պաշտպանելով սիրիացիների ազգային անկախութեան համար մղած պայքարը՝ նա միաժամանակ չընորհակալութիւն յայտնեց արաբներին՝ վերջին չորս տարուան ընթացքում հայ գաղթականների նկատմամբ նրանց լաւ վերաբերմունքի համար եւ եզրակացուց, թէ «հայերի պատմութեան մէջ արաբների անունը կը գրուի ոսկէ տառերով»[31]։

Պատուիրակները լսելուց յետոյ՝ Էմիր Ֆէյսալը շարունակեց իր ճառը, եւ կանգ առաւ երկրի կառավարման ձեւի վրայ։ «Ես կարծում եմ, որ աւելի շատ ուշադրութիւն է դարձուելու փոքրամասնութիւնների իրաւունքներին, որպէսզի սրանով վերացուեն ատելութիւնը եւ կրօնական թշնամանքը, զորս ստեղծել էին Թուրքերը, եւ դրանց փոխարէն ցանել սիրոյ եւ եղբայրութեան սերմեր տարբեր կրօնի պատկանող մարդկանց միջեւ»[32]։

Ըմբռնելով արաբ ազգնջական ժողովուրդի մարդասիրական դիրքորոշումը իր հանդէպ՝ Թրքական գեհէնից ճողոպրած եւ արաբական երկրներում ապաստան գտած տարագիր հայութիւնը առանց վարանելու պաշտպան կանգնեց եւ մասնակցեց նրա ազգային անկախութեան համար մղած պայքարին։

Քաղաքական այս կեցուածքով՝ հայերը ապացոյցը տուին գերագոյն զոհողութեան։

Այսպիսով հայ եւ արաբ ժողովուրդները ցուցաբերելով քաղաքական խոր իմաստութիւն՝ քսաներորդ դարի առաջին երկու տասնամեակներին կարողացան հիմնել արիւնով նուիրագործուած քաղաքական սերտ յարաբերութիւններ, որոնք իրենց զարգացման վերելքը ունեցան նաեւ յետագայ տասնամեակներին եւ շարունակւում են ցայսօր։ Հայ եւ արաբ ժողովուրդների միջեւ առկայ եւ դարերից եկող պատմական եւ քաղաքական կապերը եւ միացեալ դիրքորոշումները էական եւ ճակատագրական հարցերի նկատմամբ այսօր հաստատում են կարեւորութիւնը երկու ժողովուրդների միջեւ քաղաքական, տնտեսական եւ մշակութային փոխյարաբերութիւնները էլ աւելի զարգացնելու եւ խորացնելու անհրաժեշտութեան։

Ա. Թ.

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ն. Ցովհաննիսեան, «Հայ-արաբական բաղաքական համագործակցութեան պատմութիւնից», *Արարատ*, Պէյրութ, 14 Ցունիս 1989:
2. Նոյն:
3. Այս մասին տես՝ Վազգէն Ցակոբեան, *Կանոնագիրք Հայոց*, հտ. Բ., Երեւան 1971, էջ LXXII-LXXIII, իսկ այս առիթով ընդունուած կանոնագրին համար տես՝ նոյն, էջ 200-215:
4. Ս. Տ. Մելիք-Բախշեան, *Հայաստանը 7-9-րդ դարերում*, Երեւան, 1968, էջ 69-70:
5. Ցովհաննիսեան, *Արարատ*, 14 Ցունիս 1989:
6. Կ'ակնարկուի Սուլթան Ապտուլ Համիտ Բ.-ին:
7. Eugene Jung, *Les Puissances devant la Révolte Arabe : La Crise mondiale de demain*, Paris, 1906, p. 22-24. տես նաեւ «Արաբական մի շարք փաստաթղթեր արաբաբրբառական յարաբերութիւնների վերաբերեալ», Հ. Ս. Սարգսեան եւ Ա. Հ. Թոփալեան [իրգմ.], *Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ*, հտ. VI, *Արաբական երկրներ*, Երեւան, 1974, էջ 217-218: Ասկէ ետք կը նշուի որպէս *Փաստաթղթեր*:
8. Երուսաղէմի կառավարիչի օգնական եւ *Արաբ ժողովուրդի Զարթօնքը Ասիական Թուրքիայում* գրքի հեղինակ Նեճիպ Ազուրիի նամակին համար տես *Փաստաթղթեր*, էջ 219-220, եւ *L'Arménie*, Paris, 15 Avril 1905:
9. *Փաստաթղթեր*, էջ 219:
10. Կ'ակնարկուի Պոլսոյ 1895-ի դէպքերուն եւ ապտուլհամիտեան բռնատիրական շրջանին:
11. Տես՝ *Փաստաթղթեր*, էջ 219-220, տես նաեւ *L'Arménie*, Paris, 15 Avril 1905:
12. *Փաստաթղթեր*, էջ 220:
13. Փարիզի Արաբական Ժողկրէի մասին ընդհանրապէս տես՝ *Փաստաթղթեր*, էջ 222, եւ احسان هندي. كفاح الشعب العربي السوري. ١٩٤٨ - ١٩٢٨. دمشق. ١٩٦٢. ص. ٢٠٢ - ٢٠١.
14. *Փաստաթղթեր*, էջ 222:
15. Նոյն, էջ 222-223:
16. *Զարթօնք*, Պէյրութ, 14 Ցունիս 1989:
17. Էմին Սաիտ, *Քառասերդ Դարու Արաբական Յեղափոխութիւնները*, Մոսկուա, 1964, էջ 79 (ռուսերէն թարգմանութիւն՝ امين سعيد. ثورات العرب في القرن العشرين).
18. Ն. Ց. Ցովհաննիսեան եւ Հ. Ս. Սարգսեան, *Սիրիան Անկախութեան Համար Մղուած Պայքարում*, Երեւան, 1975, էջ 22:
19. Նոյն:
20. Տ. Ց. Պօյաճեան, *Հայկական Լէգէոնը* (պատմական յուշագրութիւն), Ուտքըրբաուն, 1965, էջ 9: Արեւելեան Լէգէոնի ստեղծման եւ կազմակերպման մասին տես՝ Arthur Beylerian, *Les Grandes Puissances, L'Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises*, (1914-1918), Paris, 1983, p. 278-283:
21. Պօյաճեան, էջ XXII:
22. Նոյն, էջ 15-16:
23. Նոյն, էջ 9:
24. Նոյն, էջ 10:
25. Նոյն, էջ 21:

26. Ֆրանսական պաշտօնական աղբիւրներ զայն կը ճանչնան որպէս Բաֆահ. տես՝ Beylerian, p. 92 եւ 672:
27. Ցովհաննիսեան եւ Սարգսեան, էջ 32:
28. Գոյաճեան, էջ 129:
29. Նոյն:
30. Այս մասին տես՝ Great Britain, Foreign Office, *Documents on British Foreign Policy*, 1919-1939, vol. IV, London, 1952, pp. 267–272: Տես նաեւ՝ *Փաստաթղթեր*, էջ 229–230:
31. *Documents*, p. 272:
32. *Փաստաթղթեր*, էջ 230:

ARAB-ARMENIAN POLITICAL RELATIONS ACCORDING TO SOME ARAB DOCUMENTS (Early XX Century)

(Summary)

Dr. A. H. TOPALIAN

Making use of Arab, Armenian and foreign diplomatic documents the author of the article examines the roots of the Arab-Armenian political relations in the early twentieth century, though, as a background, Dr. Topalian sheds some light on these relations both in the antiquity and in the early Middle Ages. The author asserts that the main concern of these relations was but the liberation of the two peoples' respective homelands from the Ottoman domination and yoke, a purpose towards the fulfillment of which the Arabs and the Armenians did not decline of shedding blood and sacrificing their lives for each others' political aspirations.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐԸ

(Նիւթեր յետագայ ուսումնասիրութեան համար)

ԱՐԱ ՍԱՆՃԵԱՆ

Ցարական Ռուսաստանի հասարակական-քաղաքական միտքի զարգացման իւրայատկութիւններէն մէկն այն է, որ աշխատաւոր խաւերու չահերն արտայայտել յաւակնող ընկերվարական կուսակցութիւններու կազմաւորումը նախորդեց գոյառմանը ազատականութիւն (լիպերալիզմ) դաւանող կուսակցութիւններու, որոնց հետեւորդները առաջին հերթին քաղաքային միջավայրի մէջ հասակ առնող արդիւնաբերող եւ առեւտրական խաւերն էին:

Կովկասահայ իրականութիւնն ալ բացառութիւն չկազմեց: 1887-ին Ժընեւի մէջ ծնունդ առած Հնչակեան Կուսակցութիւնը, ապա՝ 1890-ին Թիֆլիսի մէջ ստեղծուած Հայ Յեղափոխականների (1892-էն ետք՝ Յեղափոխական) Դաշնակցութիւնը սկզբնական շրջանին գլխաւորաբար արեւելահայ երիտասարդներէ կազմուած էին, որոնց համար ընկերվարական գաղափարախօսութիւնը հայ ժողովուրդի վէրքերուն լաւագոյն սպեղանին կը հանդիսանար: Թէեւ զոյգ կուսակցութիւններն ալ առաջին տարիներուն իրենց ուշադրութիւնը սեւեռած էին Արեւմտահայաստանի ազատագրութեան հարցին վրայ՝ 1903-ին ցարական կառավարութեան կողմէ Հայաստանեայց Եկեղեցւոյ կալուածներու բռնագրաւումն ու 1905-1907 Թուականներու համառուսաստանեան պուրժուա-դեմոկրատական առաջին յեղափոխութիւնը փոփոխութեան ենթարկեցին այս դրութիւնը, եւ հնչակ-

եանները ու դաշնակցականները իրենք զիրենք գտան ցարական կառավարութեան ընդդիմադիր ընկերվարական կուսակցութիւններու չարքին։ Այս դիրքորոշումը քիչ թէ շատ անխախտ մնաց մինչեւ ցարականութեան վերջնական տապալումը։ Հնչակեան Կուսակցութեան եւ Հ. Յ. Դաշնակցութեան կողքին, կովկասահայ իրականութեան մէջ իրենց հետեւորդները ունեցան Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական Կուսակցութեան երեք (պոլշեւիկ, մենշեւիկ, «սպեցիֆիկ») թեւերն ու Ռուսաստանի Սոցիալիստ-Յեղափոխական Կուսակցութիւնը։

Համառուսաստանեան առումով, ժողովրդավարական-ազատական գաղափարախօսութիւնը կրող Ժողովրդական Ազատութեան Կուսակցութեան հիմնադիր համագումարը տեղի ունեցաւ Մոսկուայի մէջ 12–18 Հոկտեմբեր 1905-ին։ Կուսակցութեան — որ աւելի հանրածանօթ էր Քատէթ անունով, կրճատումը՝ Քոնսթիթուցիոնալ (սահմանադրական) – Դեմոկրատ որակաւորման — ծրագիրը հաստատուեցաւ 5–11 Յունուար 1906-ին Ս. Պետերսպուրկի մէկ կայացած երկրորդ համագումարի ընթացքին։ Քատէթները կը պահանջէին, որ Ռուսաստանը դառնար սահմանադրական միապետութիւն, եւ ուր յարգուէին բոլոր դեմոկրատական ազատութիւնները։ Ռուսաստանի ընկերային-տնտեսական զարգացումը խոչընդոտող հողային հարցին որպէս լուծում՝ կ'առաջարկէին սակաւահող եւ հողազուրկ գիւղացիութիւնը ապահովել հողով, պետական ու վանքապատկան հողերու հաշուին, ինչպէս նաեւ «արդարացի» (ոչ չուկայական) գիներով փոխհատուցուած մասնատիրական հողերու մասնակի օտարմամբ։ Ցիշենք, որ ընկերվարական գաղափարախօսութիւնը դաւանող Ռուսաստանեան Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական Կուսակցութիւնը ստեղծուած էր 1898-ին, իսկ Սոցիալիստ-Յեղափոխական Կուսակցութիւնը՝ 1901–1902-ի սկիզբը։

Քատէթական Կուսակցութեան հետեւորդներուն մէջ բնականաբար կային նաեւ հայեր։ Սակայն, կուսակցութիւնը իր ծրագրին մէջ Ռուսաստանի ազգային խնդիրներուն վերաբերեալ արմատական լուծում չէր առաջարկեր։ Ընդհակառակը, մաներ ազգութիւններուն կը խոստանար միայն ընդհանուր քաղաքացիական ազատութիւններ եւ ազգային-մշակութային ինքնավարութիւն, առանց դոյզն իսկ փոփոխութեան ենթարկելու Ռուսական Կայսրութեան միատարր պետական ու վարչական կառուցուածքը։ Կուսակցութեան դեկավարութեան այս սկզբունքին վրայ հաստատ մնալը, յատկապէս 1905–1907-ի յեղափոխութեան ամբողջ ընթացքին, երբ դասակարգային գիտակցութեան աճին զուգահեռ սկսաւ ակնյայտ դառնալ ազգային գիտակցութեան զարթօնքը նաեւ, պատճառ հանդիսացաւ, որ հայ քատէթ-

ները, յատկապէս այսպէս կոչուած «մշակական» (Թիֆլիսի մէջ հրատարակուող Մշակ թերթին անունով) հոսանքի ներկայացուցիչները փորձ կատարէին ստեղծելու քաղաքական աշխարհահայեացքով՝ բա՛յց հայկական ինքնուրոյն կուսակցութիւն մը[1]:

1906 Յունուարի 3–ին այդ նպատակն իրագործելու համար հրաւիրուեցաւ «Սահմանադրական–Դեմոկրատիական Կուսակցութեան Հայ Արմատական Ֆրակցիա»ի հիմնադիր ժողովը, որուն մասնակցեցան Յովսէփ Ամիրխանեանը, Համբարձում Առաքելեանը, Ալեքսանդր Խատիսեանը, Պ. Ղամբարեանը, Լեւոն Ղուլեանը, Սոկրատ Մելիք–Ադամեանը, Ալեքսանդր Մելիք–Ազարեանը, Սամսոն Յարութիւնեանը, Լեւոն Սարգսեանը, Կարապետ Ստեփանեանը, Յովհաննէս Ապենդիարեանը, Յ. Փիրալեանը եւ Ալեքսանդր Քալանթարը, մասնագիտութեամբ՝ մէկ արդիւնաբերող, չորս փաստաբան, երկու գրականագէտ, երկու բժիշկ, մէկ տնտեսագէտ, մէկ ճարտարագէտ եւ երկու գիւղատնտես: Որոշուեցաւ իբրեւ նոր ստեղծուելիք կուսակցութեան ծրագրի հիմք ընդունիլ ռուս քաղէմներու ծրագիրը, առաւել՝ պահանջել Անդրկովկասի համար երկրամասային ինքնավարութիւն[2]: 1906–ի վերջաւորութեան այս կուսակցութիւնը տակաւին կազմաւորման ընթացքի մէջ էր: Նոյեմբերին ծանուցուեցաւ ժամանակաւոր բիւրոյի կազմաւորման մասին, որու անդամ ընտրուեցան Ալ. Քալանթարը, Մ. Աթաբէգեանը, Ֆ. Վերմիշեանը, Կ. Ստեփանեանը, Յ. Սպենդիարեանը, Հ. Առաքելեանը եւ ուրիշներ: Անոնք հրապարակեցին յայտարարութիւն մը, ուր անգամ մը եւս կը նշուէր թէ նորաստեղծ կուսակցութիւնը ընդունելու էր քաղէմներու ծրագրին սկզբունքային կէտերը[3]:

Յեղափոխութեան պարտութիւնը եւ պահպանողական ուժերու վերահաս ճնշիչ վարչակարգը պատճառ հանդիսացան, որ կովկասահայ ինքնուրոյն Սահմանադիր–Դեմոկրատական Կուսակցութեան ստեղծումը յետաձգուէր մինչեւ 1917–ի Փետրուարեան Յեղափոխութիւնը:

Այստեղ կ'արժէ հարեւանցի կերպով մատնանշել, թէ նոյն աստեն ուրոյն ազգային դեմոկրատական–ազատական կուսակցութիւններ ստեղծելու փորձ կատարեցին Կովկասի միւս ազգութիւններուն ներկայացուցիչներն ալ: Օրինակ, 1905–1906–ին ստեղծուած Ռուսական Իսլամներու Միութիւնը (Իթթիֆաք), որ թէեւ կը յատկանէր ներկայացնել Ռուսական Կայսրութեան բոլոր մահմետականներուն շահերը, ըստ իրողութեան, սակայն, Վոլգայի եւ Ուրալի թաթարական քաղքենի դասի եւ մտաւորականութեան կուսակցութիւնն էր միայն, որ կրկնելով Քաղէմական Կուսակցութեան ծրագրային սկզբունքները՝ յաւելեալ ըլլալով կը պահանջէր մահմետականներու հա-

մար ազգային ու կրօնական իրաւունքներու հաւասարութիւն, տեղական ինքնակառավարման մարմիններու լիազօրութեանց ընդլայնում եւ տեղական լեզուներով կրթութեան ազատութիւն: Իթթիհատի 15 հոգինոց կեդրոնական կոմիտէէն ներս կար միայն մէկ ազրպէյճանցի՝ Թոփչիպաշեւը: Գրեթէ նոյն ատեն կազմաւորուեցաւ Իսլամական Սահմանադրական Կուսակցութիւնը՝ Քատէթական Կուսակցութեան Պաքուի մասնաճիւղին կից: Պաքուցի իսլամ ազատականները կը պահանջէին, որ Անդրկովկասը դառնար ինքնավար շրջան մը՝ իր օրէնսդիր մարմնով (Սէյմ) եւ ցեղային միատարր վարչական բաժանումներով: Երկու կուսակցութիւններն ալ, իրենց հայ գաղափարակիցներուն նման, փաստօրէն հրապարակէն չքացան 1905–1907-ի յեղափոխութեան պարտութենէն ետք[4]:

Կովկասահայ ինքնուրոյն Սահմանադիր-Դեմոկրատական կուսակցութիւն ստեղծելու աշխատանքներն անգամ մը եւս թափ առին 1917-ի համառուսաստանեան փետրուարեան պուրժուա-դեմոկրատական յաղթական յեղափոխութենէն անմիջապէս ետք՝ նոյն տարուան Մարտ-Մայիս ամիսներուն[5]: Նորաստեղծ կուսակցութիւնը կոչուեցաւ Հայ Ժողովրդական Կուսակցութիւն: Սկզբնական շրջանին, անիկա ամբողջովին կ'ընդունէր քատէթական ծրագիրը: Պարզապէս աւելի լայն դրուած էր հայ ազգային հարցը — հայաբնակ շրջաններու համար տեղական ինքնավարութիւն, եկեղեցական կալուածներ եւ Արեւմտահայաստանի Մնդիրը: Կուսակցութեան տեսաբաններէն Երուանդ Ճարուխիւնեանի բառերով՝ «Նոր կուսակցութիւնը միայն կազմակերպչական ձեւով էր հայկական: Ըստ էութեան՝ նա Կադետական Կուսակցութեան հայկական ֆրակցիան էր... քանի որ նրա ծրագրի մէջ ազգային հարցը երկրորդական տեղ էր բռնում. Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը գերազանցապէս ռուսական պետական կուսակցութիւն էր»[6]:

Փետրուարեան Յեղափոխութիւնը Ռուսաստանն առժամաբար դարձուց աշխարհի ամենէն դեմոկրատական երկիրը, բայց չկարողացաւ պատրաստի դեղամիջոցներ տրամադրել երկրի երկարամեայ հիւանդութեանց: Հետզհետէ արմատականացան քաղաքական համոզումները: Գոյացաւ քաղաքական ուժերու բեւեռացում: Այս մթնոլորտին մէջ փոփոխութեան ենթարկուեցան նաեւ Հայ Ժողովրդական Կուսակցութեան ծրագրային սկզբունքները: 27–30 Սեպտեմբեր 1917-ին, Թիֆլիսի մէջ տեղի ունեցաւ կուսակցութեան առաջին համագումարը, որ պաշտօնապէս վաւերացուց ծրագիրը: Կուսակցութիւնը որոշեց դուրս գալ Ռուսական կայսրութեան սահմաններէն եւ իր գործունէութիւնը տարածել «ամէն տեղ, ուր կայ հայութիւն, բայց ամէն տեղ էլ յարմարելով տեղական պայմաններին»[7]: Այլեւս կուսակ-

ցութեան կրնային անդամակցիլ ոչ միայն ռուսահպատակ՝ այլեւ բոլոր հայերը: Աւելի արմատականացան հայ ազգային պահանջները (Անդրկովկասի սահմանազատում՝ ըստ ազգային կազմի, ազգային-տարածքային ինքնավարութիւն՝ Ռուսաստանի կազմէն ներս, Ռուսահայաստանէն դուրս բնակող հայոց համար ազգային-մշակութային արտատարածքային ինքնավարութիւն)[8]:

Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը նոր իրադրութիւն ստեղծեց Ռուսական Կայսրութեան համայն տարածքին վրայ, ուրեմն՝ նաեւ Անդրկովկասի մէջ: Անդրկովկասի երեք ազգութիւններուն ներկայացուցիչները ստեղծեցին տեղական օրէնսդիր իշխանութեան մարմին մը՝ Սէյմը եւ անոր հաշուետու կառավարութիւն մը: Ասոր տրամաբանական յաջորդ քայլը եղաւ Անդրկովկասի անկախութեան հռչակումը: Յետոյ, օսմանեան բանակի դէպի Պաքու յաղթական արշաւին հետեւանքով անդրկովկասեան այս կարճատեւ պետութիւնն ալ տարաքաղաքրուեցաւ երեք ազգային միաւորներու՝ Վրաստանի, Ատրպէյճանի եւ Հայաստանի:

Հայ Ժողովրդական Կուսակցութիւնն ալ, բնականաբար, պիտի ազդուէր քաղաքական այս սրընթաց փոփոխութիւններէն: Կուսակցութեան կեդրոնատեղին կը շարունակէր մնալ Թիֆլիս, ուր հաստատուած էր հայ քաղքենի դասակարգը, սակայն ան կը գիտակցէր թէ գործելու եւ ուռճանալու հնարաւորութիւն կրնար ունենալ միայն Հայաստանի մէջ: 1918–ի Օգոստոսին անիկա սկսաւ հրատարակել Ժողովուրդ թերթը Երեւանի մէջ, որուն առաջին թիւերուն մէջ հրատարակելով առաջին համագումարի ընթացքին վաւերացուած ծրագիրն ու կանոնագրութիւնը՝ անոր իբրեւ ծանօթագրութիւն կը կցէր տող մը, ուր ընթերցողին կը թելադրուէր ծրագրին մէջ հանդիպող «Ռուսաստանում» բառը կարդալ միշտ՝ «Հայաստանում», իսկ «ռուսերէն» բառը՝ «հայերէն»[9]: Այս կարճ նախադասութեան մէջ ամփոփուած էր Հայ Ժողովրդական Կուսակցութեան ամբողջ աշխարհահայեացքի եւ գործելակերպի արմատական չրջադարձը: Ռուսահայկական Կուսակցութենէն անիկա կը վերածուէր հայաստանեան կուսակցութեան մը:

Հայ Ժողովրդական Կուսակցութիւնն ունէր 6 ներկայացուցիչ 47 անդամ հաշուող Հայաստանի Մորհուրդէն ներս, որ նորաստեղծ Հայաստանի Հանրապետութեան առժամեայ օրէնսդիր իշխանութեան դերը կատարող նշանակովի մարմին մըն էր: 1918–ի Նոյեմբեր 4–ին Ժողովրդականները մտան Յովհաննէս Քաջազնունիի գլխաւորած Կոալիսիոն կառավարութեան մէջ, բայց սա, ըստ էութեան, չփոխեց կուսակցութեան ընդդիմադիրի իրավիճակը հանրապետութեան քաղա-

քական կեանքէն ներս։ Կոալիսիոն կառավարութիւնն ստեղծուած էր գրեթէ բացառապէս արտաքին երեւոյթները փրկելու համար եւ զայն գոյացնող Հ. Յ. Դաշնակցութեան ու ժողովրդականներու միջեւ չէր համաձայնեցուած երկրի ընկերային–տնտեսական քաոսային վիճակը մեղմելու ձգտող որեւէ ծրագիր։ Միայն ժողովրդականներու աջակցութիւնն ապահովելու համար դաշնակցականները յօժարած էին հողային բարենորոգման հարցը յետաձգել մինչեւ սահմանադիր ժողովի կամ խորհրդարանի գումարումը[10]։ Մինչ Հ. Յ. Դաշնակցութիւնը կը նախատեսէր կերտել նոր Հայաստան մը՝ հիմնուելով 1917–ի Փետրուարեան Յեղափոխութեան ընկերային–տնտեսական նուաճում–ներուն վրայ՝ Հայ Ժողովրդական Կուսակցութեան տեսակէտը բոլորովին տարբեր էր։ «Մեզ, Հայաստանի քաղաքացիներիս համար ռուսական յեղափոխութիւնը դադարել է դեռ 1918 Թ. ամառուան ամիսներից», կը գրէր Ժողովուրդը, «երբ մենք վերջնականապէս անջատուեցինք Ռուսաստանից եւ մեր անկախութիւնը ձեռք բերինք...։ Մեզ համար նա գոյութիւն ունի որպէս դրսի աշխարհում կատարուող քաղաքական երեւոյթներից մէկը...։ Ռուսական Յեղափոխութեան այս կամ այն ընթացքը մեզ համար անմիջական գործօն չի կարող լինել։ Նրա հետեւանքները կարող են մեր ազգի եւ պետութեան համար անուղղակի նշանակութիւն ունենալ միայն»[11]։ Երբ 6 Դեկտեմբեր 1918–ին Հայաստանի Խորհուրդին ներկայացուեցաւ օրինագիծ մը, որուն համաձայն Ռուսական Փետրուարեան Յեղափոխութեան ընթացքին ընդունուած բոլոր օրէնքները հաւաքաբար կիրարկելի պիտի դառնային Հայաստանի մէջ՝ Ժողովրդականները դէմ քուէարկեցին, բայց մնացին փոքրամասնութեան մէջ[12]։

Քաղաքական նոր իրավիճակը անհրաժեշտ կը դարձնէր, որ Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը որոշակի փոփոխութեանց ենթարկէր եթէ ո՛չ իր քաղաքական սկզբունքները՝ գոնէ իր ծրագրային սկզբունքները։ Այս հարցով զբաղեցաւ 27 Ապրիլ–1 Մայիս 1919–ին Երեւանի մէջ գումարուած Կուսակցութեան Հայաստանի կոմիտէներու ներկայացուցիչներու խորհրդակցութիւնը։ Զեկուցող Ցովհաննէս Սեւեփանեանը յայտնեց թէ նախորդ երկու տարուան քաղաքական զարգացումներուն պատճառով իրենց իմաստը կորսնցուցած էին Ռուսահայաստանին ու Տաճկահայաստանին վերաբերող ծրագրային կէտերը, քանի որ արդէն քաղաքական հրապարակի վրան էր Միացեալ եւ Անկախ Հայաստանի ստեղծման խնդիրը։ Այս մէկը, ինչպէս նաեւ հողային, արտահայաստանեան հայերու եւ այլ ծրագրային խնդիրներ, ըստ Սեւեփանեանի, պէտք էր որ վերաքննուէին եւ ծրագրի ինքնաբերաբար կատարուելիք միւս փոփոխութիւններուն հետ վաւերացուէին յաջորդ համագումարին կողմէ։

Այդ երկրորդ համագումարը տեղի ունեցաւ 9–15 Սեպտեմբեր 1919–ին՝ Երեւանի մէջ։ Մինչ այդ Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը դուրս եկած էր կառավարութեան կազմէն եւ նոյնիսկ հրաժարած՝ խորհրդարանական ընտրութիւններուն մասնակցելէ։ Այսուհանդերձ, համագումարը խորացուց Հայ Ժողովրդական Կուսակցութեան հայաստանեան կուսակցութիւն դառնալու գործընթացը։ Կուսակցութեան կեդրոնատեղին փոխադրուեցաւ Երեւան, իսկ Ժողովուրդը դարձաւ կուսակցութեան պաշտօնաթերթը։ Համագումարի քննարկած կարեւորագոյն ծրագրային խնդիրը հողային հարցն էր։ Կուսակցութիւնը որոշեց առաջարկել հողը դարձնել պետական սեփականութիւն, որ ժառանգաբար օգտագործուելու համար համամասնաբար պիտի տրուէր աշխատաւոր գիւղացիութեան։ Պետութիւնը արդարացի (ո՛չ չուկայական) գնահատութեամբ սեփականատէրերէն պիտի գնէր աշխատաւորական չափը գերազանցող հողերը, բացի տուներու, գործարաններու, այգիներու եւ բանջարանոցներու համար օգտագործուած հողերէն, եւ զանոնք բաշխէր աշխատաւոր գիւղացիութեան եւ արգիլէր հողի առուծախը[14]։ Անհրաժեշտ փոփոխութեան ենթարկուեցաւ ազգային հարցերուն վերաբերող բաժինը։ Մնացեալ փոփոխութիւնները կը կ՚էին թաքթիկական բնոյթ՝ ձգտելով կուսակցութեան քաղաքական սկզբունքները յարմարեցնել անկախ Հայաստանի առկայ գոյավիճակին։

Հայ Ժողովրդական Կուսակցութեան երրորդ համագումարը նախատեսուած էր գումարել 27 Օգոստոս 1920–ին։ Քաղաքական անկայուն իրավիճակին պատճառով ան յետաձգուեցաւ Սեպտեմբեր 12–ին, ապա՝ Հոկտեմբեր 10–ին, եւ վերջապէս՝ երբեք չկայացաւ Թրքական արշաւանքի ու Հայաստանի խորհրդայնացման հետեւանքով։ Համագումարի օրակարգի ութերորդ կէտը կը վերաբերէր ծրագրային խնդիրներուն։ Դժբախտաբար կարելի չեղաւ պարզել թէ ծրագրային ո՛ր հարցերը նկատի առնուած էին կուսակցութեան ղեկավարութեան կողմէ։

* * *

Այս համառօտ նախաբանով երբեք նպատակ չունեցանք շարադրելու պատմականը Հայ Ժողովրդական Կուսակցութեան գաղափարախօսական եղափոխութեան։ Ցոյս ունինք, որ ան կը փոխանցէ էական նախնական տուեալներ միայն, որոնք անհրաժեշտ են հրատարակուող ծրագրային փաստաթուղթերը լաւ հասկնալու եւ արժեւորելու համար։

Հայաստանի մէջ նախորդ տասնամեակներուն տիրող գաղափարախօսութիւնը թոյլ չէր տար, որ Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը, իրրեւ «պուրժուական», «քաղէթական» կուսակցութիւն արժանանար առարկայական հետազօտութեան: 70 տարուան ընթացքին, Հայ Ժողովրդական Կուսակցութեան վերաբերող որեւէ պատմագիտական ուսումնասիրութիւն լոյս չէ տեսած: 1987–ին, Երեւանի մէջ, Դ. Ս. Խեչումեանը պաշտպանեց Հայ Ժողովրդական Կուսակցութեան գաղափարախօսութեան ու գաղափակալութեան ընդհատական վերլուծութիւնը (1917–21 թթ.) ատենաճառը, պատմական գիտութիւններու թեկնածուի աստիճան, բայց այս գործը ընթերցող հասարակութեան մատչելի չէ տակաւին:

Վաչէ Ղազարեանը Ժամկավար Ազատական Կուսակցութիւն, հիմնական ծրագրեր, կանոնագրեր եւ վաւերագրեր (Պէյրութ, 1988) ժողովածուն կազմելու ատեն մտադրած էր ընդգրկել նաեւ Հայ Ժողովրդական Կուսակցութեան ծրագիրն ու կանոնագրութիւնը, բայց այդ օրերուն Հայաստանի մէջ բռնկած Արցախեան Պահանջատիրական Շարժումը պատճառ հանդիսացաւ, որ սոյն փաստաթուղթերու առաքումն ուշանար եւ Ղազարեանին գործը տպարան երթար առանց Հայ Ժողովրդական Կուսակցութեան համար նախատեսուած բաժինին: Անճամբ տեղեակ ըլլալով Վաչէ Ղազարեանի չիրականացած ցանկութեան, անցեալ տարի, երբ Երեւանի Ազգային Գրադարանին եւ Մատենադարանին մէջ պրպտումներ կը կատարէի Երեւանի Պետական Համալսարանի պատմութեան բաժանմունքէն ներս աւարտական աշխատանքս պատրաստելու միջոցիս՝ յայտնաբերելով այս կուսակցութեան 1917 եւ 1919 թուականներու ծրագիրներն ու կանոնագրութիւնները՝ որոշեցի զանոնք գուգահեռ հրապարակել՝ յետագայ ուսումնասիրողներու գործը հեշտացնելու նպատակով:

1917 թուականի ծրագիրը քաղած եմ Կուսակցութեան Երեւանի պաշտօնաթերթ Ժողովուրդի 1918 թուականի Սեպտեմբեր 26–ի եւ 29–ի թիւերէն, իսկ 1919–ի ծրագիրը՝ նոյն թուականին հրատարակուած յատուկ գրքոյկէ մը: Ցիշեմ նաեւ, թէ 1919–ի ծրագիրը մաս առ մաս լոյս տեսաւ Ժողովուրդի 6, 8 եւ 13 Փետրուար 1920–ի թիւերուն մէջ: Ուղղագրութիւնն ու կէտադրութիւնը պահած եմ անփոփոխ: Որոշ փոփոխութեան ենթարկած եմ տարբեր բաժիններու եւ կէտերու հերթականութիւնը՝ որպէսզի ընթերցողը կարողանայ աւելի դիւրութեամբ բաղդատել թէ ինչպիսի՞ փոփոխութիւններու ենթարկուած է ծրագիրը եւ միաժամանակ խորհի թէ ինչո՞ւ: Ծրագրի բաժինին մէջ իրրեւ հիմք ընդունած եմ 1917–ի ծրագիրը, իսկ 1919–ի ծրագրի ներքին յաջորդականութիւնը յարմարեցուցած եմ առաջինին: Կանոնագրութեան պարագային՝ հիմք ընդունած եմ 1919–ինը, պարզապէս

որովհետեւ ներքնապէս աւելի կուռ է անիկա: Ընթերցողին ուշադրութեան կը յանձնեմ կատարուած կանոնադրական կարեւոր բարեփոխութիւնները եւ աւելցած կազմակերպչական նոր օղակները: Շարժառիթը, բնականաբար, Ռուսական կայսրութեան տարբաղադրումն էր, անդրկովկասեան երեք հանրապետութիւններու եւ յատկապէս՝ անկախ Հայաստանի ստեղծումով:

Ա. Ս.

ՀԱՑ ԺՈՂՈՎՐԴԱՑԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԱՑԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐԻ ԲԱՂԴԱՏԱԿԱՆԸ

ՀԱՅ. ԺՈՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

վերաքննուած առաջին համագումարում 1917 թ. Սեպտ. 27-ին

1. Հայ Ժող. Կուսակցութիւնը համազգային է. նա կարող է ճիւղեր բանալ թէ Ռուսաստանում եւ թէ նրանց սահմաններից դուրս:

2. Հայ Ժող. Կուսակցութիւնը ապադասակարգային է. նրա մէջ անարգել կարող են մտնել հայ ազգին պատկանող բոլոր չափահաս անձերը, որոնք ընդունում են կուսակցութեան ծրագիրը, առանց սեռի, դաւանանքի եւ դասակարգի խտրութեան:

3. Ռուսաստանում բնակուող օտարահպատակ հայերը կարող են կուսակցութեան անդամ լինել, սակայն նրանք չեն մասնակցում պետական հարցերի լուծման եւ պետական հիմնարկութիւնների ընտրութիւններին:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ընդունուած երկրորդ համագումարում 1919 թի 7-15 Սեպտեմբեր, Երեւանում

Ա.

ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

I

Ընդունելով ազգը եւ նրա մշակոյթը որպէս սոցիալ-քաղաքական եւ կուլտուրական առաջնակարգ գործօն եւ համարելով նրանց զարգացումը համապատասխան պատմական պրոցեսին, քաղաքակրթութեան պահանջներին եւ անհատականութեան ձգտումներին՝ Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը իր գլխաւոր նպատակն է համարում պաշտպանել բովանդակ հայ ժողովրդի իրաւունքները եւ ծառայել նրա ազգային մշակոյթի ու պետականութեան զարգացման:

II

Ի նկատի ունենալով հասարակութեան եւ անհատի ներդաշնակ զարգացման անհրաժեշտութիւնը եւ ղեկավարելով ժողովրդապետութեան սկզբունքով, Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը ձգտում է հաստատել Հայաստանում իրաւական եւ պարլամենտական կարգեր:

III

Համարելով կապիտալիզմը մարդկութեան պատմական զարգացման ընթացքում անհրաժեշտ եւ անխուսափելի մի դարաշրջան եւ ընդունելով, որ նա մասնաւորապէս Հայաստանում դեռ սաղմային դրութեան մէջ է գտնւում եւ ունի կատարելու խոշոր շինարարական դեր՝ Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը նպաստելու է Հայաստանում կապիտալի հաստատման եւ նրա զարգացման յօգուտ հայ ժողովրդի եւ հայ պետութեան բարգաւաճման, իսկ սոցիալական բարդ պրոբլեմի արդար լուծման նպատակով Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը, չը հա-

մարելով դասակարգային հակամարտութիւնները որպէս վճռական միջոց սոցիալական խնդիրների լուծման համար եւ չը յենելով առանձնապէս եւ ոչ մի դասակարգային շերտաւորման վրայ, ձգտելու է սոցիալական յայն բարեփոխութիւնների միջոցով աստիճանաբար վերացնել մարդ անհատի շահագործումը միւսի կողմից։

IV

Համարելով էվոլիւցիան (բնաշրջումը) որպէս բնութեան եւ մարդկային հասարակութեան զարգացման անյողդողդ օրէնք՝ Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը իր բոլոր պահանջները իրագործելու է աստիճանաբար, իրաւական պարլամենտական ճանապարհով, հետեւելով բէալ քաղաքականութեան։

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ
Ա) ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

4. Ռուսաստանի բոլոր քաղաքացիները, առանց սեռի, կրօնի եւ ազգի խտրութեան, հաւասար են օրէնքի առաջ։ Բոլոր ազգերի դասային տարբերութիւնները եւ անձի ու ստացուածքի իրաւունքի սահմանափակումները, վերացում են։

5. Ամեն մի քաղաքացի վայելում է խղճի ու դաւանանքի ազատութիւն։ Չէ թոյլ տրւում ոեւէ հալածանք դաւանանքի կամ համոզմունքի, դաւանանքը փոխելու կամ նրանից հրաժարվելու պատճառով։

6. Ամեն ոք ազատ է կատարել իր կրօնական եւ աստուածապաշտական արարողութիւնները եւ քարոզել իր դաւանանքը, եթէ միայն սրանք չեն պարունակում այնպիսի գործողութիւններ, որոնք պատժելի են քրէական օրէնսդրութեամբ։

7. Ոչ մի եկեղեցի կամ դաւանութիւն պետութեան մէջ չը պէտք է վայելէ առանձին արտօնութիւն։ Եկեղեցին անջատ է պետութիւնից։

8. Ամեն ոք ազատ է արտայայտել իր մտքերը բերանացի կամ գրով եւ նրանց հրատարակել մամուլի կամ այլ միջոցով։ Գրաքննութիւնը,

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ
Բ.
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

1. Հայաստանի բոլոր քաղաքացիները առանց սեռի, կրօնի եւ ազգի խտրութեան հաւասար են օրէնքի առաջ։

2. Ամեն մի քաղաքացի վայելում է խղճի ու դաւանանքի ազատութիւն։ Չի թոյլատրւում որեւէ հալածանք դաւանանքի կամ համոզմունքի, դաւանանքը փոխելու կամ նրանից հրաժարւելու պատճառով։

3. Ամեն ոք ազատ է կատարել իր կրօնական եւ աստուածապաշտական արարողութիւնները եւ քարոզել իր դաւանանքը, եթէ միայն սրանք չեն պարունակում այնպիսի գործողութիւններ, որոնք պատժելի են քրէական օրէնսդրութեամբ։

4. Ոչ մի եկեղեցի կամ դաւանութիւն պետութեան մէջ չը պէտք է վայելէ առանձին արտօնութիւն։

5. Եկեղեցին անջատ է պետութիւնից։

6. Ամեն ոք ազատ է արտայայտել իր մտքերը բանաւոր կամ գրաւոր եւ հրատարակել նրանք մամուլի կամ այլ միջոցով։ Գրաքննութիւնը,

ընդհանուր կամ յատուկ, ինչ անուան տակ էլ որ լինի, վերացվում է եւ չէ կարող վերանորոգուել: Բերանացի կամ տպագրական խօսքի միջոցով կատարուած յանցանքների կամ օրինազանցութիւնների համար յանցաւորները պատասխանատու են միայն դատարանի առաջ:

9. Ռուսաստանի բոլոր քաղաքացիներին իրաւունք է տրվում կազմակերպել հրապարակական ժողովներ, բացօդեայ կամ փակ շինութիւնների մէջ՝ ամեն տեսակ հարցեր քննելու համար:

10. Ռուսաստանի բոլոր քաղաքացիներն իրաւունք ունեն հիմնելու միութիւններ եւ ընկերութիւններ, առանց այս մասին թոյլտուութիւն խնդրելու:

11. Պետիցիա տալու իրաւունք ունեն ինչպէս առանձին անհատները, այնպէս էլ ամեն տեսակ խմբակցութիւններ, միութիւններ ու ժողովներ:

12. Իւրաքանչիւր մէկի անձը եւ բնակարանը անձեռնմխելի են:

13. Մասնաւոր բնակարաններ մտնելը, խուզարկութիւններ կատարելը, իրեր վերցնելը, մասնաւոր գրագրութիւն բանալը, թոյլ են տրվում միայն օրէնքով ցոյց տրված դէպքերում, այն էլ միայն դատարանի վճռով: Ամեն մի ձերբակալված անհատ քաղաքներում եւ այն տեղերում, որ տեղ կայ դատարանական իշխանութիւն՝ 24 ժամուայ ընթացքում, իսկ միւս տեղերում երեք օրուայ ընթացքում, պէտք է կամ արձակուի, կամ յանձնուի դատական իշխանութեան: Ամեն մի ձերբակալում, որ տեղի է ունեցել առանց բաւարար հիմունքի կամ աւելի երկար է տեւել քան օրէնքով սահմանուած է, իրաւունք է տալիս տուժողին իր վնասների փոխարինութիւնը պահանջելու պետութիւնից:

14. Ոչ ոք չէ կարող հալածանքի եւ պատժի ենթարկուել այլապէս, քան օրէնքի հիման վրայ՝ դատական իշխանութեան եւ օրէնքով սահմանուած դատարանի միջոցով: Ոչ մի արտակարգ դատարան թոյլ չէ տրվում:

15. Ռուսաստանի հիմնական օրէնքը պետութեան մէջ բնակող բոլոր ազգութիւններին պէտք է երաշխաւորէ ազատ կուլտուրական ինքնորոշ-

ընդհանուր կամ յատուկ, ինչ անուան տակ էլ որ լինի, վերացում է եւ չէ կարող վերանորոգուել: Բանաւոր կամ տպագրական խօսքի միջոցով կատարուած յանցանքների կամ օրինազանցութիւնների համար յանցաւորները պատասխանատու են միայն դատարանի առաջ:

7. Բոլոր քաղաքացիներին իրաւունք է տրում կազմակերպել հրապարակային ժողովներ բացօդեայ կամ փակ շինութիւնների մէջ՝ ամեն տեսակ հարցեր քննելու համար:

8. Քաղաքացիներն իրաւունք ունին հիմնելու միութիւններ եւ ընկերութիւններ, առանց այս մասին թոյլտուութիւն խնդրելու՝ միայն յայտնելով ի գիտութիւն պետական իշխանութեան:

9. Պետիցիա տալու իրաւունք ունեն ինչպէս առանձին անհատները, այնպէս էլ ամեն տեսակ խմբակցութիւններ, միութիւններ եւ ժողովներ:

10. Իւրաքանչիւր մէկի անձը եւ բնակարանը անձեռնմխելի են:

11. Մասնաւոր բնակարաններ մտնելը, խուզարկութիւններ կատարելը, իրեր վերցնելը, մասնաւոր գրութիւններ բանալը թոյլ են տրում միայն օրէնքով ցոյց տրուած դէպքերում, այն էլ միայն դատարանի վճռով: Ամեն մի ձերբակալուած անհատ քաղաքներում եւ այլ տեղերում, որտեղ կայ դատարանական իշխանութիւն 24 ժամուայ ընթացքում պէտք է կամ ազատ արձակուի, կամ յանձնուի դատական իշխանութեան: Ամեն մի ձերբակալում, որ տեղի է ունեցել առանց բաւարար հիմունքի կամ աւելի երկար է տեւել, քան օրէնքով սահմանուած է, իրաւունք է տալիս տուժողին իր վնասների հատուցումը պահանջելու պետութիւնից:

12. Ոչ ոք չէ կարող հալածանքի եւ պատժի ենթարկուել այլապէս, քան օրէնքի հիման վրայ՝ դատական իշխանութեան եւ օրէնքով սահմանուած դատարանի միջոցով:

մաճ իրաւունք, այն է լիակատար ազատութիւն գործ ածելու հասարակական կեանքում զանազան լեզուներ եւ բարբառներ, ազատութիւն հիմնելու եւ պահելու ամեն տեսակ ընկերութիւններ եւ կրթական ու գիտական հիմնարկութիւններ, որոնք նպատակ ունին պահպանել ազգութիւնների լեզուն, գրականութիւնը եւ կուլտուրան:

16. Ռուսերէնը պէտք է լինի պաշտօնական լեզու, պետութեան կենտրօնական հիմնարկութիւնների, զօրքի եւ նաւատորմիղի մէջ:

17. Պետական լեզուի հետ միաժամանակ տեղական լեզուների գործածութիւնը պետական եւ հասարակական հիմնարկութիւնների մէջ եւ այն ուսումնարանների մէջ, որոնք պահպանվում են պետութեան կամ ինքնավար մարմինների հաշւով, կարգադրվում է պետական եւ տեղական օրէնքներով եւ հասարակական հիմնարկութիւնների ձեռքով՝ օրէնքի սահմաններում:

18. Ամեն մի վայրի բնակչութիւնը պէտք է իրաւունք ունենայ կրթութիւն ստանալու իր մայրենի լեզուով ուսման բոլոր աստիճաններում:

Բ) ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

19. Ռուսաստանը պէտք է լինի դէմօկրատական պարլամենտական հանրապետութիւն. օրէնդրական իշխանութիւնը պատկանելու է ժողովրդական ներկայացուցչութեան. գործադիր իշխանութեան գլուխ կանգնած պէտք է լինի հանրապետութեան նախագահը, որ ընտրուած կը լինի որոշ ժամանակամիջոցով, ժողովրդական ներկայացուցչութեան կողմից եւ կը կառավարէ երկիրը մինիստրութեան ձեռքով, որ պատասխանատու է ժողովրդական ներկայացուցչութեան առաջ:

20. Ժողովրդական ներկայացուցիչներն ընտրում են ընդհանուր, հաւասար, ուղղակի եւ գաղտնի ձայնատւութեամբ, առանց դաւանանքի, ազգի եւ սեռի խտրութեան, համեմատական սկզբունքով:

13. Հայերէնը պէտք է լինի պետական պաշտօնական լեզուն Հայկական Հանրապետութեան սահմաններում:

Ա.
ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Հայաստանը պէտք է լինի դեմոկրատական պարլամենտական հանրապետութիւն. օրէնդրական իշխանութիւնը պատկանելու է ժողովրդական ներկայացուցչութեան՝ պարլամենտին: Գործադիր իշխանութեան գլուխ կանգնած պէտք է լինի հանրապետութեան նախագահը, որը ընտրած կը լինի որոշ ժամանակով, պարլամենտի կողմից եւ կը կառավարէ մինիստրական խորհրդի միջոցով, որը պատասխանատու է պարլամենտի առաջ:

2. Պարլամենտի անդամները ընտրում են ընդհանուր, հաւասար, ուղղակի եւ գաղտնի ձայնատւութեամբ, առանց դաւանանքի, ազգի եւ սեռի խտրութեան, համեմատական սկզբունքով:

21. Ժողովրդական ներկայացուցչութիւնը մասնակցում է օրէնսդրական իշխանութիւնը իրագործելու, պետութեան ելեւմուտքը սահմանելու մէջ եւ վերահսկում է բարձր ու ստորին ադմինիստրացիայի գործողութիւնների օրինականութեան եւ նպատակայարմարութեան վրայ:

22. Ոչ մի որոշում, կարգադրութիւն, հրաման, ինչ անուն էլ որ կրէ եւ ումնից որ բղխէ, չէ կարող օրէնքի ոյժ ստանալ՝ եթէ հիմնուած չէ ժողովրդական ներկայացուցչութեան որոշման վրայ:

23. Պետական ելեւմուտքը որոշում է օրէնսդրական կարգով, ոչ աւելի քան մի տարի ժամանակով: Ոչ մի տեսակ սակ կամ տուրք յօգուտ պետութեան, նոյնպէս եւ պետական փոխառութիւնները չեն կարող սահմանուել, այլապէս քան օրէնսդրական կարգով:

24. Ժողովրդական ներկայացուցիչների ժողովի անդամներն իրաւունք ունին օրէնսդրական նախաձեռնութեան եւ հարցապնդումի:

Գ) ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԻՏՕՆՕՄԻԱ

25. Տեղական ինքնավարութիւնը կիրառւում է ամբողջ ռուսական պետութեան մէջ:

26. Տեղական ինքնավար մարմինների ներկայացուցչութիւնը պէտք է ընտրուի ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի եւ համեմատական ձայնատուութեամբ, առանց սեռի, դաւանանքի եւ ազգութեան խտրութեան:

27. Ստորին ինքնավար միութիւնների ժողովները կարող են ընտրել ու կազմել եւ բարձրագոյն ինքնավար միութիւնների ժողովներ: Նահանգական զեմստվօներն իրաւունք ունեն ժամանակաւոր եւ մշտական միութիւններ կազմել իրար հետ:

28. Տեղական ինքնավար մարմինների իրաւասութիւնը տարածվում է տեղական կառավարութեան բոլոր գործերի վրայ ի միջի այլոց եւ ապահովութեան ու բարեկարգութեան ոստի-

3. Պարլամենտը մասնակցում է օրէնսդրական իշխանութիւնը իրագործելու, պետութեան ելեւմուտքը սահմանելու մէջ եւ վերահսկում է բարձր ու ստորին ադմինիստրացիայի գործողութիւնների օրինականութեան եւ նպատակայարմարութեան վրայ:

5. Ոչ մի որոշում, կարգադրութիւն, հրաման, ինչ անուն էլ որ կրէ եւ ումնից էլ որ բղխէ, չէ կարող օրէնքի ոյժ ստանալ՝ եթէ հիմնուած չէ պարլամենտի որոշման վրայ:

4. Պետական ելեւմուտքը սահմանւում է օրէնսդրական կարգով ոչ աւելի, քան մի տարի ժամանակով: Ոչ մի տեսակ հարկ կամ տուրք յօգուտ պետութեան, նոյնպէս եւ պետական փոխառութիւնները չեն կարող սահմանուել այլապէս՝ քան օրէնսդրական ճանապարհով:

6. Պարլամենտի անդամները իրաւունք ունին օրէնսդրական նախաձեռնութեան եւ հարցապնդումի:

Ե.
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

1. Տեղական ինքնավարութիւնը կիրառւում է Հայաստանում ամենուրեք:

2. Տեղական ինքնավար մարմինների ներկայացուցչութիւնը պէտք է ընտրուի ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի եւ համեմատական ձայնատուութեամբ, առանց սեռի, դաւանանքի եւ ազգութեան խտրութեան:

Ծանօթ. Ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեն նրանք, որոնք որոշ ժամանակ ապրել են տեղում քաղաքում կամ շրջանում:

3. Ստորին ինքնավար միութիւնների ժողովները կարող են ընտրել ու կազմել բարձրագոյն ինքնավար միութիւնների ժողովներ:

4. Տեղական ինքնավար մարմինների իրաւասութիւնը տարածւում է տեղական կառավարութեան բոլոր գործերի վրայ, բացառութեամբ իշխանութեան այն ճիւղերի, որոնք պետական

կանութեան վրայ, բացառութեամբ կառավարութեան այն ճիւղերի, որոնք պետական կեանքի ներկայ պայմաններում անհրաժեշտ է պահել կենտրոնական իշխանութեան ձեռքում: Տեղական ինքնավար մարմինների օգտին պէտք է թողնուի պետական բիւջէի մէջ մտնող եկամուտներից մի մասը:

29. Կենտրոնական իշխանութեան տեղական ներկայացուցիչների գործն է՝ հսկել տեղական ինքնավար մարմինների գործունէութեան օրինականութեան վրայ: Այս առիթով ծագելիք վէճերի ու տարակուսանքների վերջնական լուծումը պատկանում է դատական հիմնարկութիւններին:

30. Հիմնադիր ժողովով պէտք է սահմանուեն տեղական ատօնօմիայ եւ շրջանային ներկայացուցչական ժողովներ օրէնսդրական իրաւունքով որոշ ճարցերի վերաբերմամբ, համաձայն ազգաբնակութեան պահանջներին:

31. Տեղական ատօնօմ երկիրների սահմանները ազգաբնակութեան ցանկութեամբ, կարող են փոփոխուել՝ աւելի միատարր ազգաբնակութիւն կազմելու համար ըստ ազգային յատկանիշի:

Դ) ԴԱՏԱՍՏԱՆ

32. Դատաստանական իշխանութիւնն անջատ է վարչականից: Դատաւորներն անփոփոխելի են եւ անկախ: Դատավարութիւնը հրապարակական է: Դատարանի առաջ բոլորը հաւասար են:

33. Երդեալների դատարանների իրաւասութիւնը որոշւում է միմիայն օրէնքով նախատեսուած պատիժների ծանրութեան աստիճանով, անկախ գործի տեսակից. յամենայն դէպս նրանց իրաւասութեան մէջ մտնում են բոլոր պետական ու տպագրական օրէնքի դէմ յանցանքները:

34. Ոչ ոք չէ կարող պատժի ենթարկուել առանց պատշաճաւոր դատարանի վճռի, որ օրինական ոյժ է ստացել:

կեանքի ներկայ պայմաններում անհրաժեշտ է պահել կենտրոնական իշխանութեան ձեռքում:

Տեղական ինքնավար մարմինների օգտին պէտք է թողնուի պետական բիւջէի մէջ մտնող եկամուտներից մի մասը:

5. Կենտրոնական իշխանութեան տեղական ներկայացուցիչների գործն է՝ հսկել տեղական ինքնավար մարմինների գործունէութեան օրինականութեան վրայ: Այս առիթով ծագելիք վէճերի վերջնական լուծումը պատկանում է դատական հիմնարկութիւններին:

Գ. ԴԱՏԱՐԱՆ

1. Դատաստանական իշխանութիւնը անջատ է վարչականից: Դատաւորներն անփոփոխելի են եւ անկախ: Դատավարութիւնը հրապարակական է: Դատարանի առաջ բոլորը հաւասար են:

2. Երդեալների դատարանների իրաւասութիւնը որոշւում է միմիայն օրէնքով նախատեսուած պատիժների ծանրութեան աստիճանով, անկախ գործի տեսակից. յամենայն դէպս նրանց իրաւասութեան մէջ են մտնում բոլոր պետական ու տպագրական օրէնքի դէմ յանցանքները:

3. Ոչ ոք չէ կարող պատժի ենթարկուել առանց պատշաճաւոր դատարանի վճռի, որ օրինական ոյժ է ստացել:

35. Արդարադատութեան մինիստրը իրաւունք չունի միջամտելու դատաւորներ նշանակելու կամ տեղափոխելու գործում կամ դատաստանական գործերի վարման մէջ:

36. Դատաւորները պարգեւներ չեն ստանում: Հաշտարար դատաւոր կամ երդուեալ ատենակալ ընտրուելու համար չէ պահանջվում ստացուածքային ցենզ:

37. Փաստաբանական մարմինը կազմակերպվում է իսկական ինքնավարութեան սկզբունքով:

38. Մահվան պատիժն անպայման եւ առմիշտ վերացվում է: Մտցվում է պայմանաւոր դատապարտութիւն: Մտցվում է պաշտպանութիւն նախնական քննութեան միջոցին: Դատարանին յանձնելու գործողութեան մէջ մտցւում է մրցողական սկզբունք:

39. Արդարադատութեան մերձաւորագոյն գործերը պէտք է լինին, քրէական օրինագրքի հիմնական վերաքննութիւնը, վերացումը այն որոշումների, որոնք հակասում են քաղաքական ազատութեան, եւ նրա մշակումը քաղաքացիական օրինագրքի:

Ե) ՖԻՆԱՆՍ. ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՋԱՂԱՋԱԿԱՆՈՒԹԻՒՆ

40. Վերաքննութիւն պետական ելքի բիւջէի, վերացնելու համար այն ծախսերը, որոնք անպատակայարմար են կամ շատ մեծ են, եւ առեւացնելու համար այն ծախսերը, որոնք ծառայում են ժողովրդի իսկական կարիքներին: Ոչընչացում յետգնման (.....) վճարքների:

41. Զարգացում ուղղակի հարկադրութեան ի հաշիւ կողմնակի հարկադրութեան եւ հետզհետէ վերացում կողմնակի հարկերի, որ դրուած են ժողովրդի համար գործածական իրերի վրայ:

42. Բարեփոխութիւն ուղղակի հարկերի՝ պրոգրէսիվ եկամտային եւ ստացուածքային հարկադրութեան հիման վրայ: Մանր վարկը զարգացնել: Պրոգրէսիվ հարկ սահմանել ժառանգութեան վրայ:

5. Արդարադատութեան մինիստրը իրաւունք չունի միջամտելու դատաւոր նշանակելու կամ տեղափոխելու գործում կամ դատաստանական գործերի վարման մէջ:

6. Դատաւորները պարգեւներ չեն ստանում: Հաշտարար դատաւոր կամ երդուեալ ատենակալ ընտրուելու համար չէ պահանջւում ստացուածքային ցենզ:

4. Փաստաբանական մարմինը կազմակերպւում է իսկական ինքնավարութեան սկզբունքով:

Դ.
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Զարգացում ուղղակի հարկադրութեան ի հաշիւ կողմնակի հարկադրութեան եւ հետզհետէ վերացումը կողմնակի հարկերի, որոնք դրւած են ժողովրդի համար գործածական իրերի վրայ:

2. Բարեփոխութիւն ուղղակի հարկերի՝ պրոգրեսիւ, եկամտային եւ ստացուածքային հարկադրութեան հիման վրայ: Մանր վարկի զարգացումն: Պրոգրեսիւ հարկի սահմանում ժառանգութեան վրայ:

43. Առաձնին արդիւնաբերութիւնների դրութիւնն ի նկատի ունենալով՝ պակասեցնել մաքսային տուրքերը, էժանացնելու համար ժողովրդական գործածութեան յատուկ իրերը, զարգացնելու արդիւնագործութիւնն ու երկրագործութիւնը:

Ծանօթ. Ռուսաստանում — պէտք է միշտ կարդալ Հայաստանում. ռուսերէնը հայերէն:

3. Առաձնին արդիւնաբերութիւնների դրութիւնն ի նկատի ունենալով՝ պակասեցնել մաքսային տուրքերը, էժանացնելու համար ժողովրդական գործածութեան յատուկ իրերը, զարգացնելու արդիւնագործութիւնն ու երկրագործութիւնը:

Զ) ՀՈՂԱՅԻՆ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԻՒՆ

44. Սակաւաճող եւ աճող գիւղացիների, ինչպէս եւ մանր տնտեսութիւն վարող այլ անձերի հողային կարիքը լրացնելու համար պէտք է յատկացնել պետական, ուդէլների, կաբինետային, վանքապատակաց, եկեղեցապատկան, գիւղական եւ ազնուականական բանկերին պատկանած հողերը, նոյնպէս եւ մասնաւոր սեփականատէրերի (ֆիզիկական եւ իրաւաբանական անձերի) հողերը՝ աշխատաւորական նորմայից բարձր, որոնք ենթակայ են ստիպողական գրաւման:

45. Ստիպողական գրաւման չեն ենթարկուի մանր կալուածները, որոնք աշխատաւորական նորմայից բարձր չեն, զեմստվային եւ այլ հիմնարկութիւնների հողերը, որոնք սահմանուած են կրթական, ընդհ. առողջապահական, գիտական եւ այլ հանրօգուտ նպատակների համար, նոյնպէս եւ ագարակները, պարտէզները, այգիները, բանջարանոցները եւ գործարանների տակ եղած հողերը:

46. Այս հողային պաշարից դուրս գալով պահպանուելիք անտառները եւ պետական մարմինների եւ հիմնաւարութիւնների կարգադրութեան տակ թողնուելիք մասերը, նախ եւ առաջ բաւարարութիւն կը տրուի տեղական աճող եւ սակաւաճող գիւղացիներին, սահմանուելիք նորմայով: Իսկ մնացորդը կը յատկացուի կամ տեղական ագգաբնակութեան յետագայ կարիքների համար կամ ուրիշ տեղերից եկող գաղթականների համար:

Գ)
ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԿ

1. Հողը եւ նրա ծոցում եղած հանքային հարստութիւնները կազմում են պետական սեփականութիւն:

2. Հողը տրւում է միայն այն հողագործին, որը մշակելու է նրան իր եւ իր ընտանիքի աշխատանքով:

3. Հողը չը պէտք է լինի վաճառքի եւ կապալի առարկայ:

4. Հողային անհատասարութիւնը վերացնելու համար սահմանւում է աշխատաւորական չափ:

5. Աշխատաւորական նորմաների չափը որոշւում է հողային կոմիտէների միջոցով ըստ տեղական պայմանների, այսինքն՝ հողի բանակի ու յատկութեան տեսակ շրջանում: Հողային աշխատաւորական չափը ենթարկւում է փոփոխութեան, եթէ փոփոխւում են հողային պայմանները:

6. Համաձայն աշխատաւորական չափի երկրագործին կամ գիւղատնտեսական այլ ճիւղով պարապողին տրւած հողաբաժինը մնում է նրա եւ նրա ժառանգների ձեռքում այնքան ժամանակ, որ նրանք մշակում են հողը:

7. Բոնագրաւած հողերից կազմւում է պետական հողային ֆոնդ:

8. Պետական հողային ֆոնդը աւելացնելու համար ենթարկւում են բոնագրաւման՝

а) Մասնաւոր սեփականատէրերի հողերը, եթէ նրանք աւելի են աշխատաւորական նորմայից.

Մանաւ.- Թէ՛ աշխատաւորական նօրմաճ եւ թէ լրացուցիչ հողաբաժինների նօրմաճ իւրաքանչիւր տեղում պէտք է որոշվի յատուկ հողային կոմիտէտների միջոցով, ըստ հողի քանակութեան, յատկութեան եւ օգտագործմաճ եղանակի:

47. Պետական հողերի պաշարը տրվում է կարօտ ազգաբնակութեան՝ մշտապէս (առանց պայմանաժամի) օգտուելու սկզբունքով, ինչպէս առանձին անհատներին, այնպէս էլ համայնքներին եւ հողագործական ընկերութիւններին, համաձայն տեղերում գոյութիւն ունեցող կարգերի եւ ազգաբնակութեան ցանկութեան:

48. Մասնաւոր սեփականատէրերից հողերը պէտք է գնուեն պետութեան հաշուով արդարացի (ոչ շուկայի) գնահատութեամբ, ի նկատի ունենալով ի միջի այլոց տիրապետութեան հիմունքները: Վճարումը պիտի կատարուի գնմաճ վկայաթղթերով, որոնց տոկոսի մի որոշ մասը կը ստացուի բաժանուած հողի վրայ նշանակուած տուրքից:

49. Պէտք է կազմակերպել պետական լայն օգնութիւն գիւղացիներին՝ գաղթականութեան, տեղափոխութեան եւ տնտեսութիւնը բարւոքելու համար, ինչպէս նաեւ բնութեան պատահարների եւ աղէտների դէպքում: Անջրդի հողերի ոռոգում պետական հաշուով:

50. Օրէնքի միջոցով բարւոքում արենդի պայմանների: Նուազում արենդի՝ օրէնքի սահմանուած նօրմայով:

51. Վերացում այժմ գոյութիւն ունեցող կարգերի երկրագործական մշակներ վարձելու վերաբերմամբ: Բանուորական օրէնսդրութեան տարածումը երկրագործական մշակների վրայ: Սահմանում երկրագործական հսկողութեան:

b) Բոլոր եկեղեցապատկան, վանքապատկան, վակուֆային եւ այլ կրօնական հաստատութիւններին պատկանող հողերը:

9. Հողերի բոնագրաւման դէպքում տրւում է վարձատրութիւն թէ մասնաւոր սեփականատէրերին եւ թէ հաստատութիւններին:

10. Վարձատրութեան քանակը որոշում են պետական հողանային շրջանային կոմիտէները: Վարձատրութիւնը տալիս է պետութիւնը կամ միանուագ, կամ որոշեալ տարիների ընթացքում, որպէս հողի միակ սեփականատէր եւ ոչ թէ գիւղացին կամ հողագործը, որը հանդիսանում է իրրեւ կապալառու պետութիւնից:

11. Բոնագրաւման չեն կարող ենթարկուել՝

a) Տեղական ինքնավարութիւնների, քաղաքների եւ այլ հաստատութիւնների հողերը, որոնք անհրաժեշտ են նրանց կուլտուրական, կրթական, բժշկա-սանիտարական կարիքների համար:

b) Օրինակելի կալուածքները, որոնք կրթական եւ կուլտուրական նշանակութիւն ունեն ազգաբնակութեան համար, առանց ի նկատի առնելու նրանց տարածութիւնները:

c) Գործարանների եւ այլ արդիւնաբերական հիմնարկութիւններին պատկանող հողերը, որոնք անհրաժեշտ են նրանց գործունէութեան համար:

d) Մասնաւոր անձանց եւ հասարակական-կուլտուրական հիմնարկութիւններին պատկանող այգիները, պարտէզները, բանջարանոցները, ցուցադաշտերը, փորձադաշտերը եւ գիւղատնտեսական բուծարանները:

Է) ԲԱՆՈՒՐԱԿԱՆ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԻՒՆ

52. Ազատութիւն բանուորական միութիւնների եւ ժողովների:

է.
ԲԱՆԻՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՑ

1. Ազատութիւն բանուորական միութիւնների եւ ժողովների:

53. Գործադուլի իրաւունք.

Գործադուլի ժամանակ կամ նրա առիթով կատարուած օրինազանցութիւնները պատժվում են օրէնքով սովորական հիմունքներով:

54. Բանուորական օրէնսդրութիւնը տարածել վարձու աշխատանքի բոլոր տեսակների վրայ: Սահմանել աշխատանքի տեսչութիւն, բանուորների ներկայացուցիչների մասնակցութեամբ, աշխատաւորների շահերը պաշտպանող օրէնսդրութեան իրագործման վրայ հսկելու համար:

55. Ութ ժամեայ բանուորական օր սահմանել օրէնսդրական կարգով: Այս նորմայի անմիջական ներմուծումը ամեն տեղ, ուր ներկայումս հնարաւոր է այս, եւ նրա հետզհետէ ներմուծումը միւս արդիւնագործութիւնների մէջ:

56. Արգելել գիշերային եւ նորմայից դուրս աշխատանքները՝ բացի այն դէպքերից, երբ այդպիսի աշխատանքներն անհրաժեշտ են տեխնիկապէս կամ ընդհանուր հասարակական տեսակէտից.

Կանանց եւ անչափահասների աշխատանքի պաշտպանութեան միջոցները ընդարձակել:

57. Սահմանել հաշտարար ատեաններ՝ բաղկացած աշխատանքի եւ կապիտալի կողմից հաւասար թուով ներկայացուցիչներից, վէճերը քննելու եւ վճռելու համար:

58. Պետութեան միջոցով պարտադիր ապահովագրութիւն մտցնել հիւանդութիւնների, դժբախտ դէպքերի եւ պրոֆէսիոնալ հիւանդութիւնների դէմ, ձեռնարկողների հաշուով:

59. Պետական ապահովագրութիւն ծերութեան եւ աշխատանքի անկարողութեան դէմ բոլոր աւձնական աշխատանքով ապրողների համար:

Ը) ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

60. Ժողովրդական լուսաւորութիւնը պէտք է կազմակերպուի ազատութեան, հասարակացման եւ ապակենտրոնացման սկզբունքներով:

2. Գործադուլի իրաւունք:

Գործադուլի ժամանակ կամ նրա առիթով կատարուած օրինազանցութիւնները պատժում են օրէնքով՝ սովորական հիմունքներով:

3. Բանուորական օրէնսդրութիւնը տարածել վարձու աշխատանքի բոլոր տեսակների վրայ: Սահմանել աշխատանքի տեսչութիւն, բանուորների ներկայացուցիչների մասնակցութեամբ, աշխատաւորների շահերը պաշտպանող օրէնսդրութեան իրագործման վրայ հսկելու համար:

4. Ութ ժամեայ բանուորական օր սահմանել օրէնսդրական կարգով: Այդ նորմայի անմիջական ներմուծումը ամեն տեղ, ուր հնարաւոր է ներկայումս եւ նրա հետզհետէ ներմուծումը միւս արդիւնագործութիւնների մէջ:

5. Արգելել գիշերային եւ նորմայից դուրս աշխատանքները՝ բացի այն դէպքերից, երբ այդպիսի աշխատանքները անհրաժեշտ են տեխնիկապէս կամ ընդհանուր հասարակական տեսակէտից:

6. Կանանց եւ անչափահասների աշխատանքի պաշտպանութեան միջոցները ընդարձակել:

7. Սահմանել հաշտարար ատեաններ՝ բաղկացած աշխատանքի եւ կապիտալի կողմից հաւասար թուով ներկայացուցիչներից՝ վէճերը քննելու եւ վճռելու համար:

8. Պետութեան միջոցով պարտադիր ապահովագրութիւն մտցնել հիւանդութիւնների, դժբախտ դէպքերի եւ պրոֆեսիոնալ հիւանդութիւնների դէմ՝ ձեռնարկողների հաշուով:

9. Պետական ապահովագրութիւն ծերութեան եւ աշխատանքի անկարողութեան դէմ՝ բոլոր աւձնական աշխատանքով ապրողների համար:

Ը.
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

1. Ժողովրդական լուսաւորութիւնը պէտք է կազմակերպի ազատութեան, հասարակացման եւ ապակենդրոնացման սկզբունքով:

61. Վերացնել դպրոց մտնելու բոլոր սահմանափակումները, որոնք հիմնուած են սեռի, ծագման եւ կրօնի վրայ:

62. Ջանալ որ տիպի դպրոցների մէջ մտցնել յաջորդականութեան կապ, որով դիւրացուի ստորին տիպի դպրոցից բարձրագոյնը մտնելը:

63. Ազատութիւն մասնաւոր եւ հասարակական նախաձեռնութեան՝ բանալու եւ կազմակերպելու ամեն տեսակի ուսումնավայրեր նաեւ արտաքոյ դպրոցական կրթութեան համար: Ազատութիւն լեզուի դասաւանդութեան:

64. Լիակատար ինքնավարութիւն եւ դասաւանդութեան ազատութիւն համալսարաններում եւ միւս բարձրագոյն դպրոցներում: Սրանց թիւն աւելացնել, վարձը պակասեցնել:

65. Ամեն տեսակ միջնակարգ դպրոցների թիւն աւելացնել. ուսման վարձը պակասեցնել: Տեղական հասարակական հիմնարկութիւնների մեծ մասնակցութիւն միջնակարգ դպրոցների տնտեսական, կրթական եւ դաստիարակչական գործում:

66. Ընդհանուր, ձրի եւ պարտադիր ուսուցում նախնական դպրոցներում:

67. Նախնական ուսուցման գործը պէտք է յանձնուի տեղական ինքնավարութիւնների կարգադրութեան:

II. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Ա) ՌՈՒՍԱՀԱՅԱՍՏԱՆ

68. Անդրկովկասի հայաբնակ վայրերում, որոնց սահմանները պէտք է փոփոխել ըստ ազգային համախմբումների, հայերը պէտք է ըստանան ազգային տերիտորեալ աւտօնօմեա՝ օրէնդրական մարմնով տեղական հարցերի վերաբերմամբ:

69. Հայկական աւտօնօմիայի իրաւասութեան ենթարկվում են տեղական բոլոր վարչական,

2. Ազատութիւն մասնաւոր եւ հասարակական նախաձեռնութեան՝ բանալու եւ կազմակերպելու ամեն տեսակի ուսումնավայրեր ինչպէս նաեւ արտաքոյ դպրոցական կրթութեան համար:

3. Ազատութիւն լեզուի եւ դասաւանդութեան:

4. Լիակատար ինքնավարութիւն եւ դասաւանդութեան ազատութիւն համալսարաններում եւ միւս բարձրագոյն դպրոցներում:

5. Ընդհանուր, ձրի եւ պարտադիր ուսուցում նախնական դպրոցներում:

6. Նախնական ուսուցման գործը պէտք է յանձնի տեղական ինքնավարութիւնների:

7. Ամեն մի վայրի բնակչութիւն պէտք է իրաւունք ունենայ կրթութիւն ստանալու իր մայրենի լեզուով ուսման բոլոր աստիճաններում:

I.

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ

1. Հայ Ժողովրդական Կուսակցութեան ընդունակ է Հայաստանի անջատուած մասերից ստեղծել Միացեալ եւ Անկախ Հայաստան իր սեփական ծովային ելքով:

2. Հայաստանի սահմաններից դուրս՝ այլ երկրներում ապրող հայերի համար Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը ձգտում է ձեռք բերել ազգային կուլտուրական աւտոնոմիա, հա-

տնտեսական, կուլտուրական ու դատաստանական գործերը:

70. Հայկական աւտօնօմիայի սահմաններում գործավարութեան պաշտօնական լեզուն համարվում է հայերէնը, ճանաչելով հանդերձ փոքրամասնութիւն կազմող ազգութիւնների լեզուների իրաւունքը:

71. Կենտրօնական կառավարութեան եւ նրա օրգանների, ինչպէս նաեւ ինքնավար մարմինների հետ պաշտօնական յարաբերութիւնները կատարվում են պետական՝ ռուսերէն լեզուով:

72. Հայկական աւտօնօմիայի սահմաններից դուրս գտնուող հայերը վայելում են անձնական ազգային-կուլտուրական աւտօնօմիա, հասարակական-իրաւական միութիւնների իրաւունքով: Նոյն իրաւունքները պէտք է վայելեն հայկական աւտօնօմիայի սահմաններում փոքրամասնութիւն կազմող ազգերը:

73. Եկեղեցական գործերում կուսակցութիւնը ձգտելու է, որ հայ ժողովուրդը, ինչ կրօնի եւ դաւանութեան էլ պատկանի, լիակատար ազատութիւն վայելէ իր եկեղեցական, կրօնական գործերը կարգադրելու մէջ:

74. Հայոց եկեղեցուն պատկանող կալուածները, որոնց արդիւնքով պահպանվում են հայ ժողովրդի հոգեւոր եւ կուլտուրական հաստատութիւնները, կազմում են համազգային անկապտելի սեփականութիւն:

Բ) ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

75. Հայկական հարցի (Թիւրքահայաստանի) նկատմամբ, ընդունելով որ դա միջազգային հարց է եւ կարող է լուծում ստանալ միջազգային կօնգրէսում, կուսակցութիւնը ամեն կերպ պէտք է աշխատի, որ այդ հարցը լուծուի ըստ թիւրքահայերի ցանկութեան:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ԺՈՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը հիմնական նպատակ ունի հաստատել Ռուսաստանում սարակական իրաւական միութիւնների իրաւունքներով:

Գ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ
I
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԾՐՋԱՆԸ

1) Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը գործում է Հայաստանում եւ նրա սահմաններից

դեմօկրատիական պարլամենտական հանրապետութիւն եւ բարւոքել ժողովրդի աշխատաւոր խաւերի տնտեսական դրութիւնը:

դուրս բոլոր հայաբնակ վայրերում:

2) Հայ Ժողովրդական Կուսակցութիւնն ունի իր ծրագիրը եւ կանոնադրութիւնը՝ հաստատուած կուսակցութեան բ. համագումարի կողմից:

II
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ ԵՒ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Կուսակցութեան անդամ կարող են լինել այն հայերը, որ ընդունում են կուսակցութեան ծրագիրը եւ համաձայն են ենթարկուելու կուսակցական կարգապահութեան, որպիսին սահմանվում է կուսակցութեան ծրագրով եւ կուսակցական համագումարների կողմից:

1. Հայ Ժողովրդական Կուսակցութեան մէջ կարող են լինել այն բոլոր հայերը, առանց սեռի, դաւանանքի եւ դասակարգի խտրութեան, որոնք ընդունում են կուսակցութեան ծրագիրն ու կանոնադրութիւնը եւ համաձայն են ենթարկուել կուսակցութեան կարգապահութեան:

Ծանօթութիւն. Հայաստանի սահմաններում Հայ Ժողովրդական Կուսակցութեան մէջ կարող են մտնել նաեւ Հայաստանի այլազգի քաղաքացիները:

Կուսակցութեան անդամներ ընդունում են թէ կենտրոնական եւ թէ այլ կոմիտէտները, ինչպէս նաեւ նրանցից լիազօրուած անձերը: Որեւէ կոմիտէտի կամ նրա լիազօրի կողմից ընդունուած անդամը մտնում է հէնց նոյն կոմիտէտին ենթարկուած կազմի մէջ:

2. Կուսակցութեան անդամներ ընդունում են թէ կենտրոնական եւ թէ տեղական կոմիտէները, ինչպէս նաեւ նրանց կողմից ուղարկուած լիազօրները այնպիսի վայրերում, ուր դեռեւս չեն կազմակերպուած կոմիտէներ:

3. Անդամագրութիւնը կատարում է համապատասխան կոմիտէն՝ եղած դիմումի հիման վրայ գաղտնի քւէարկութեամբ, նախօրօք խորհրդակցելով թեկնածուի ընդունելիութեան մասին:

Ծանօթութիւն. Կոմիտէները պարտաւոր են այն հին անդամներին, որոնք անդամակցական վճարը դեռ չեն մտցրել, ընդունել նոր կարգով:

4. Կուսակցութեան կարգապահութիւնը պարտադիր է կուսակցութեան բոլոր անդամների համար:

5. Կուսակցական անդամների միջեւ առաջացած կուսակցական վէճերը քննելու են ընկերական կամ միջնորդ դատարանի միջոցով:

Կուսակցութեան այն անդամները, որոնք ուղղակի կամ կողմնակի գործում են ի վնաս կուսակցութեան շահերի՝ արտաքսվում են նրա կազմից: Արտաքսումը կատարում է կենտրո-

6. Կուսակցութեան այն անդամները որոնք ուղղակի կամ կողմնակի կերպով գործում են ի վնաս կուսակցութեան շահերի՝ հեռացում են նրա կազմից: Հեռացումը կատարում է այն կո-

նական կոմիտէտը: Եթէ արտաքսածը ցանկանայ՝ վերջնական լուծումը կը յանձնուի կուսակցութեան համագումարին:

Կուսակցութեան անդամները պարբերական վճարքներ են հատուցանում կուսակցութեան գանձարանին, որուն քանակութիւնը որոշում են համագումարները:

Կուսակցութեան օրգաններն են ընդհանուր եւ տեղական համագումարները, կենտրոնական (Թիֆլիսում), շրջանային եւ քաղաքային կոմիտէտները:

միտէն, որի գործունէութեան շրջանի մէջ է գտնւում հեռացողը:

Ծանօթութիւն. Հեռացողը իրաւունք ունի հարցի վերջնական լուծումը ներկայացնել կենտրոնական կոմիտէի քննութեան եւ վերջնական որոշման:

7. Կուսակցական անդամները պարտաւոր են պարբերաբար տալ անդամակցական վճարներ, որոնց քանակը որոշում են զանազան վայրերի կենտրոնական կոմիտէները:

III

ՏԵՂԱԿԱՆ ՃԻՒՂԵՐ

1. Ամեն մի բնակավայրում (քաղաք, գիւղ եւ այլն), որտեղ կը լինեն 10-ից ոչ պակաս կուսակցութեան յարողներ՝ կազմակերպում է տեղական ճիւղ:

2. Տեղական ճիւղերը ունեն իրենց ընդհանուր ժողովները եւ տեղական կոմիտէները: Տեղական կոմիտէները, բաղկացած երեք անդամից գիւղերում եւ հինգ անդամից քաղաքներում, ընտրում են տեղական ընդհանուր ժողովի կողմից մի տարի ժամանակով:

Ծանօթութիւն. ա) տեղական կոմիտէները ժամանակից առաջ կարող են լուծել տեղական ճիւղերի ընդհանուր ժողովի առաջարկութեամբ եւ կենտրոնական կոմիտէի որոշումով:

բ) Թոյլատրւում է կոոպտացիայի իրաւունքով հրաւիրել իրենց կազմի մէջ գիւղական կոմիտէներից՝ մէկ անդամ, քաղաքային կոմիտէներից՝ երկու անդամ:

3. Տեղական կոմիտէները ունեն իրենց նախագահութիւնը՝ մի նախագահ, մի քարտուղար ու մի գանձապահ:

4. Տեղական կոմիտէները վարում են կուսակցութեան գործերը իրաքանչիւրը իւր վայրի սահմաններում, առաջնորդւելով թէ այն կանո-

նադրութեամբ եւ թէ այն հրահանգով, որոնք սահմանում են կուսակցութեան ընդհանուր համագումարների եւ նրա կենտրոնական կոմիտէների կողմից:

[5.] Իր[աք]անչիւր տարուայ վերջը տեղական ճիւղերը կազմում են առաջիկայ տարուայ իրենց ծախսերի նախահաշիւը, որը Հոկտեմբերից ոչ ուշ ներկայացնում են ի հաստատութիւն իրենց շրջանային կոմիտէին: Շրջանային կոմիտէները ճիւղերի հաստատուած նախահաշիւները ուղարկում են կենտրոնական կոմիտէի հաստատման:

6. Տեղական ճիւղերից ստացած եկամուտներից մէկ մասը յատկացում է կենտրոնական կոմիտէի ծախսերի համար, իսկ մնացեալ մասը պահում է ամեն մի ճիւղի գանձարանում՝ ճիւղի ծախսերը հոգալու:

7. Տեղական ճիւղերը ամիսը 1-2 անգամ պարտաւոր են տեղեկացնել կենտրոնական կոմիտէներին իրենց գործունէութեան մասին:

IV

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՃԻՒՂԵՐԸ

1. Իրաքանչիւրի շրջանի տեղական ճիւղերը միանալով կազմում են շրջանային ճիւղ:

2. Շրջանային ճիւղերի օրգաններն են՝ շրջանային համագումարներ եւ շրջանային կոմիտէներ:

3. Շրջանային համագումարները հրաւիրում են ոչ պակաս քան տարին մի անգամ: Պատգամաւորների ներկայացուցչութիւնը շրջանային համագումարներում սահմանում է հետեւեալ կերպով. իրաքանչիւր տեղական ճիւղի կոմիտէն տալիս է մի պատգամաւոր, բացի դրանից մինչեւ 50 անդամ ունեցող ճիւղը եւս մի պատգամաւոր, իսկ այնուհետեւ իրաքանչիւր 100 անդամից մէկը:

4. Շրջանային համագումարը վճռում է շրջանին վերաբերեալ հարցերը, առաջնորդուելով ընդհանուր համագումարի եւ կենտրոնական կոմիտէի տուած հրահանգներով եւ նրանց սահմանած կանոններով եւ իր կողմից տալիս է հրահանգներ իր շրջանի տեղական ճիւղերի կոմիտէների գործունէութեան մասին:

5. Շրջանային համագումարը ընտրում է մի տարի ժամանակով շրջանային կոմիտե, բաղկացած եօթ անդամից, որոնք իրենց միջից ընտրում են մի նախագահ, մի փոխ նախագահ, մի քարտուղար եւ մի գանձապահ:

Ծանօթութիւն. Այն շրջաններում, ուր տեղական ճիւղերը շրջանային համագումար չեն ունեցել եւ չեն ընտրել շրջանային կոմիտէներ, այնտեղ շրջանի գլխաւոր քաղաքի քաղաքային կոմիտէները ժամանակաւորապէս կատարելու են շրջանային կոմիտէների գործերը:

6. Շրջանային կոմիտէները վարում են անմիջապէս շրջանի գործերը եւ ղեկավարում են տեղական ճիւղերի գործունէութիւնը:

V

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆԵՐ

Կենտրոնական կոմիտէին են վերապահվում ընդհանուր ղեկավարութիւնը կուսակցութեան գործունէութեան, հրատարակումը ամենատեսակ ակտերի կուսակցութեան անունից, կարգադրութիւնը կուսակցութեան հրատարակութիւնների վերաբերմամբ, եւ մուտի նախագծի կազմումը եւ կուսակցութեան կենտրոնական գանձարանի կարգադրութիւնը:

Կենտրոնական կոմիտէն ընտրվում է կուսակցութեան ընդհանուր համագումարից մի տարի ժամանակով գաղտնի ձայնատուութեամբ համագումարի անդամների միջից: Կենտրոնական կոմիտէի անդամների թիւը որոշում է համագումարը:

Կենտրոնական կոմիտէին իրաւունք է տրվում լրացնել իր կազմը նոր անդամներով այն կարգով, որ սահմանում են համագումարները:

Կոմիտէի ներքին կազմակերպումը այն կէտերում, որ նախատեսուած չեն համագումարի որոշներով՝ կատարում է նոյն ինքն կոմիտէը:

1. Կենտրոնական կոմիտէներ ընտրում են Հայաստանում եւ այլ երկրներում: Իրաքանչիւր կենտրոնական կոմիտէ վարում է աւտոնոմ հիմունքներով իր երկրի բոլոր կուսակցական-քաղաքական գործերը: Կենտրոնական Կոմիտէների վայր լինելու են մայրաքաղաքները:

2. Կենտրոնական կոմիտէները, բաղկացած եօթ անդամից, ընտրում են երկրների կուսակցական ճիւղերի անդամներից մէկ տարի ժամանակով եւ գաղտնի ձայնատուութեամբ:

